26.611

ՊԵՏՀՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 98—103

№ 98—103

ԹՈՄԱՍ ՄՈՐ
(TOMAS MORUS)

ՈՒՏՈՊԻԱ

335
Մ-92

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1935

ՊԵՏՀՐԱՏԻ ԵԺԱՆԱԳԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

№ 98—103 № 98—103

335
Մ-92

ԹՈՄԱՍ ՄՈՐ
(TOMAS MORUS)

ՈՒՏՈՊԻԱ

ԹԱՐԳՄԱՆԵՑ
ԳՐ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆ 1935

04.07.2013

26611

Տեխ. խմբագիր Տ. Խաչվանքյան
Սրբագրիչ՝ Ս. Շահբազյան

Պետհրատի տպարան
Պատվեր 510, Գլավլիտ 76,
Հրատ. 3306, Տիրաժ 5000

4972
39

ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

Ընթերցողի ուշադրությանն հանձնարարվող «Ուտոպիա»-ի հայերեն այս առաջին հրատարակությունը թարգմանված է գերմաներենից և հիմնականում համեմատված է նաև ռուսերեն թարգմանության հետ:

Ընդհանուր առմամբ մատենագրական նպատակ չհետապնդելով, հրատարակչությունը կամեցել է ընթերցողին ծանոթացնել մեծ ուտոպիստի այս հռչակավոր յերկի մեջ արծարծած գաղափարների հետ:

Թարգմանությունը կատարել է ընկ. Գր. Անդրեասյանը. նա յե գրել նույնպես «Թոմաս Մորը և Ուտոպիան» ակնարկը և կազմել ծանոթագրությունները:

ԳՐ. ԽԱՆԴՐՃԱՍՅԱՆ

ԹՈՄԱՍ ՄՈՐԸ ՅԵՎ «ՈՒՏՈՊԻԱՆ»

1478–1535

Ուտոպիական սոցիալիզմի կարկառուն ներկայացուցիչ Թոմաս Մորը ծնվել է Լոնդոնում՝ 1478 թվականի փետրվարի 7-ին, միջին ազնվական ընտանիքում, որ կապված էր բուրժուական շրջանների հետ: Նրա հայրը՝ Ջոն Մորը, թագավորական գերագույն դատարանի դատավոր էր և ուզում էր որդուն էլ պատրաստել իրավաբանական ասպարեզի համար: Սկզբնական կրթությունը Մորն ստանում է Լոնդոնի ս. Անտոնի դպրոցում, որտեղ գլխավորապես սովորում է լատիներեն, որ անհրաժեշտ էր նրա իրավաբանական ուսման և հետագա գործունեության համար. այնուհետև Մորը դաստիարակվում է Քենտերբերիի արքեպիսկոպոս կարդինալ Մորտոնի — հետագայում Անգլիայի լորդ-կանցլեր—տանը: Մորտոնն իր ժամանակի աչքի ընկնող դեմքերից մեկն էր Անգլիայում և բավական մեծ ազդեցություն ունեցավ պատանի Մորի հետագա զարգացման վրա: Մորը «Ուտոպիա»-յի առաջին գրքում երախտագիտությամբ է

հիշատակում Մորտոնի անունը և գովասանքի տողեր նվիրում նրան։ Պատանի Մորը Մորտոնի միջոցով հնարավորություն է ստանում ծանոթանալ Անգլիայի քաղաքական կյանքին ու դրությանը։ Մորտոնի մոտից Մորն անցնում է Օքսֆորդի համալսարանը (մոտավորապես 1492–93 թ.թ), որ հանդիսանում էր ժամանակի հումանիստների կենտրոն. Օքսֆորդում նա հարում է հումանիստներին։ Ջոն Մորն իմանալով, որ որդին շեղվել է իր նախանշած ասպարեզի համար պատրաստվելուց և նվիրվել կլասիկ գիտություններին, նրա ապագա նյութական վիճակը դրանով վտանգված գտնելով շուտով հեռացնում է նրան համալսարանից և տեղավորում անգլիական իրավունքի դպրոցում։ Այստեղ Մորը մի քանի տարի ուսումնասիրելով անգլիական իրավունքը, բայց, ավելի շատ զբաղվելով նույն կլասիկներով, հաստատվում է Լոնդոնում, որպես քաղաքացիական գործերի իրավաբան։

Մորն սկսել է գրել շատ վաղ, գրել է և՛ լատիներեն և՛ անգլիերեն, հորինել է վոտանավորներ և արձակ, էպիգրամներ և փոքր կոմեդիաներ. Նա թարգմանել է իտալացի հումանիստ Պիկո դե լա Միրանդոլի կենսագրությունը, գրել է Ռիչարդ III–ի պատմությունը, որը շեքսպիրյան դրամաների նյութ էր ծառայում։ Մորը հեղինակն է նաև պոլեմիկական և կրոնական բնույթի աշխատությունների։ Ռիչարդ III–ի պատմությունով Մորը հանդիսանում է անգլիական պրոզայի հիմնադիրներից մեկը։

26 տարեկան հասակում Մորն ընտրվում է պառլա–

մենտի անդամ. դա 1504—1505 թվականների պառլամենտական գումարումն էր, որ հրավիրել էր Հայնրիխ VII հարկային նոր միջոցառումներին օրենքի ուժ տալու համար։ Այդ նոր տուրքերի օրինագիծն արդեն յերկրորդ ընթերցումով անցել էր, յերբ հանդես է գալիս Մորը և խիստ կերպով ընդվզում այդ նոր կողոպուտի դեմ։ Թագավորին զեկուցում են, թե «անբեղ պատանին» խանգարում է նրա դիտավորություններն ու պահանջները։ Հայնրիխ VII բանտարկել է տալիս Մորի հորը և տուգանում 100 Ֆ. ստերլինգով, քանի որ որդին դրամական միջոցներ չուներ։ Մորը հարկադրվում է հեռանալ հասարակական քաղաքական ասպարեզից և վարել մասնավոր կյանք։ Սակայն, Հայնրիխ VII–ի մահից հետո, 1509 թվականին, նա կրկին ասպարեզ է մտնում և նշանակվում Լոնդոնի դատավորի օգնական. այս պաշտոնում նա ձեռք է բերում մեծ ժողովրդականություն, մասնավորապես առևտրականների շրջանում։ Այդ ժողովրդականության շնորհիվ էր, որ նա շուտով Լոնդոնի առևտրականների միջնորդությամբ, որպես նրանց ներկայացուցիչ, յերկու անգամ դեսպանության կարևոր միսիա յե ստանում։ Առաջինը (1515 թ.) դեպի Ֆլանդրիա, որի մասին նա հիշատակում է «Ուտոպիա»–ի առաջին գրքում, յերկրորդը՝ Քալե, հարթելու համար անգլիական և Ֆրանսիական առևտրականների միջև ծագած թյուրիմացությունը։ Այս հանձնարարությունների հաջող յելքի շնորհիվ է, որ Հայնրիխ VIII աշխատում է դեպի պալատ և պետական ծառայություն գրավել Մորին, որից վերջինս սկզբում

համառորեն խուսափում է: Նա մերժում է նաև Հայնրիխ VIII-ի առաջարկած տարեկան կենսաթոշակը. այս առթիվ Մորը գրում է Էրազմ Ռոտտերդամցուն. «Յեթե քաղաքացիների և նորին մեծության միջև վորևէ թյուրիմացություն ծագի՝ նրանց իրավունքների վերաբերյալ, ինչ վոր քիչ անգամ չի պատահում, քաղաքացիները կարող էին անվստահությամբ վերաբերվել ինձ, քանի վոր յես պարտավոր եմ յերախտագետ լինել թագավորին՝ նրա տարեկան կենսաթոշակի համար»:

Հայնրիխ VIII-ի սկզբնական շրջանի քաղաքականությունը սակայն հույս էր ներշնչում Մորին, վոր Հայնրիխը, վորպես «լիբերալ» միապետ, առևտրի և արվեստի հովանավորող ու հումանիզմի բարեկամ, ղեկավարվելու յե փիլիսոփաների խորհրդով և լինելու յե «ժողովրդի հայր»: Նրա դահակալության առթիվ Մորը մինչև իսկ գովասանական պոեմ է գրում, վոր հեգնանքով է հագեցած դեպի նախկին միապետը, իսկ նոր միապետին անվանում է «յերկրի սիրելի»:

Սակայն, շուտով Հայնրիխ VIII պետք է բռներ իր հոր քաղաքականության ուղին. 1512 թվականին նա միացավ, այսպես կոչված, Սրբազան լիգային, վոր ուղղված էր Ֆրանսիայի դեմ և սկսեց վերջինի դեմ վարել ավերիչ պատերազմ, վոր տևեց մինչև 1514 թվականը՝ քամելով Անգլիայի ֆինանսները. Հայնրիխ VIII նաև շռայլ ծախսեր էր կատարում և կառուցում բազմաթիվ պալատներ, վարում էր պալատական շվայտ կյանք:

Իր քաղաքականությամբ Հայնրիխ VIII շուտով ապացուցեց, վոր «ժողովրդի հայր» և «յերկրի սիրելի» չի կարող լինել: «Ուտոպիա»-ի առաջին գրքի մեջ Մորը խարազանում է նման քաղաքականությունը և վեր հանում դրա կործանիչ հետևանքները:

«Ուտոպիա»-ն լույս տեսնելուց (1516թ.) յերկու տարի հետո՝ 1518 թվականին, Մորն արդեն Հայնրիխ VIII-ի պալատումն էր. պետական ծառայություն ստանձնելու այս իրողությունը կարծես հակասում է Մորի անհատական այն դրույթներին, վոր նա զարգացրել է «Ուտոպիա»-ի առաջին գրքում: Սակայն պետք է նկատել, վոր Մորն առևտրական կապիտալի ներկայացուցիչների հավատարմատարն էր: «Ուտոպիա»-ի մեջ Մորի զարգացրած սոցիալական գաղափարները այդ շրջանում յերրորդ դասի համար իրական վտանգ ներկայացնել չէին կարող. այդ շատ լավ հասկանում էր բուրժուազիան. ավելին, Մորի քաղաքական իդեալները՝ «լուսավորված» առաջադեմ միապետի մասին, վորոնք իմաստով նույնիսկ համընկնում էին նորաբողբոջ բուրժուազիայի ձգտումներին:

Այսպիսով, «Ուտոպիա»-ն հարթեց Մորի ճանապարհը դեպի պալատ: Հայնրիխ VIII-ի պալատում Մորն սկզբում վարում էր ընթացիկ դիմումները զեկուցողի պաշտոն և նշանակվեց գաղտնի խորհրդական. մի քանի տարի հետո, 1521 թվականին, նա նշանակվեց պետական գանձարանի կառավարիչ (ֆինանսների մինիստր), իսկ շուտով Լենքեստրի դքսության կանցլեր. վերջին պաշտոնի մեջ նա մնաց

մինչև 1529 թվականը․ այդ պաշտոնում յեղած ժամանակ Մորը բարձրացվեց ասպետության և նրա անվան կցվեց «սըր» տիտղոսը։ 1529 թ. Հայնրիխ VIII նրան նշանակեց լորդ-կանցլեր։ Մորն առաջին աշխարհականն էր, այն էլ վոչ բարձր ծագումով, վոր արժանանում էր թագավորից հետո յերկրորդ տեղը գրավող այդ պատասխանատու պաշտոնին։ Կարճ ժամանակամիջոցում ձեռք բերված քաղաքական փառահեղությունը և առհասարակ պետական բարձր դիրքն ու պալատական կյանքը չեն հրապուրում Մորի պարզ, դյուրամատչելի, դեմոկրատիկ խառնվածքը։ Մորի անձնական կյանքի բնութագրման համար բնորոշ է Էրազմ Ռոտտերդամցու վկայությունը, վոր վերջինս անում է 1519 թվականին գերմանացի հումանիստ Ուլրիխ ֆոն Հուտենին գրած մի նամակում․ «Նա սիրում է պարզությունը, չի հագնում վոչ թավիշ, և վոչ էլ ծիրանի, վոչ էլ վոսկե շղթաներ կրում, չհաշված միայն ծառայության անհրաժեշտության դեպքերում... Մի խոսքով, ով փնտրում է ճշմարիտ բարեկամության տիպար, չի գտնի Մորից ավելի լավը»։

Լորդ-կանցլեր նշանակվելու պաշտոնական ձևականությունների ժամանակ, յերբ գովաբանում են նոր կանցլերի արժանիքները, Մորը պատասխանում է, թե այդ նշանակումն այնքան էլ շատ չի ուրախացնում իրեն․ «Յես այդ աթոռն այն տեղն եմ համարում, վորտեղ լիքն է վտանգներով և դժվարություններով և հեռու յե չափազանց պատվավոր լինելուց։ Ինչքան բարձր է տեղը, այնքան ավելի

ուժեղ է այդտեղից ընկնելը, ինչպես այդ նկատելի յե իմ նախորդի օրինակով»*)․

Հայնրիխ VIII-ի և Մորի միջև առաջին շրջանում յեղած մտերմությունը պայմանավորված էր ի միջի այլոց նաև լութերականության հանդեպ յերկուստեք ունեցած բացասական վերաբերմունքով։

Լութերականության և ռեֆորմացիայի հանդեպ Մորի բացասական վերաբերմունքը բխում էր մեծ մասամբ քաղաքական և տնտեսական նկատառումներից։ Մորը համակրական վերաբերմունք ունենալ չէր կարող լութերականության հանդեպ, մանավորապես այդ շարժման սկզբնական շրջանում, յերբ վերջինս մասսայական բնույթ ուներ։ «Ամեն ինչ ժողովրդի համար, բայց վոչ ժողովրդի միջոցով» սկզբունքը հատկանշական էր նաև Մորի համար։ Պապի անձի մեջ Մորը տեսնում էր միջազգային քաղաքական հեղինակություն․ այս մասին նա արտահայտվել է նաև «Ուտոպիա»-յի մեջ․ Նրա համոզումով, պապը հանդիսանում էր Յեվրոպայի քաղաքական ուժերի հավասարակշռողը, միացման կապը և հաշտարարը։ Մորը օրենքը հարգող և «կարգ ու կանոնը» պաշտպանող քաղաքացի յեր։ Մորի կարծիքով «ավելի լավ է ունենալ վատ ղեկավարներ, քան թե առհասարակ չունենալ։ Դրա համար էլ, ավելի լավ է ռեֆորմներ կատարել պապականության մեջ, քան թե բոլորովին վերացնել այն»։

*) Ակնարկում է նախկին լորդ-կանցլեր Ուլսեյին, վորը զոհ է գնում Հայնրիխ VIII-ի սիրուհու և հետագայում կնոջ՝ Աննա Բոլեյնի ինտրիգներին։

Սակայն, շուտով Մորը ծառանալու յեր նույն Հայնրիխ VIII-ի գլխավորած ռեֆորմացիայի դեմ Անգլիայում և պետք է վերջնականապես հեռանար պետական-քաղաքական ասպարեզից։ Հայնրիխ VIII-ի կաթոլիկ յեկեղեցուց բաժանվելու և ռեֆորմացիայի ձեռնարկումների հետևանքով Անգլիայում ծայր է առնում «ցանկապատելու» նոր շարժում և սոսկահար բազմությունների նոր շարան։ Մորն ընդմիշտ թողեց քաղաքական ասպարեզը։ Սակայն Մորի ընդդիմությունը Հայնրիխ VIII-ի դաժան աբսոլյուտիզմի կողմից հանդուրժվել չէր կարող։

1533 թվականի նոյեմբերին պարլամենտը վորոշեց ճանաչել թագավորին վորպես անգլիական յեկեղեցու պետ և Մորին ել առաջարկեցին հավատարմության յերդում տալ։ Մորը հրաժարվեց յերդում տալուց։ Նրան բանտարկեցին խիստ մեկուսացած պայմաններում, սակայն նրա մերժումն անդրդվելի մնաց։ Նրան մեղադրում են պետական դավաճանության մեջ և մահվան դատապարտում, վորպիսի վճիռը նա ընդունում է սառնարյուն կերպով։ 1535 թվականի հուլիսի 6-ին մահապատիժը կատարվում է Տոուերյում։ Մորն առհասարակ մինչև իր կյանքի վերջին րոպեները պահում է իրեն հատուկ հումորը։ Կախաղանի պատվանդանը վատ եր պատրաստված և ճոճվում եր. Մորը դառնալով իրեն ուղեկցող սպային, ասում է. «Խնդրեմ, օգնեցեք ինձ բարձրանալու, իսկ ցած իջնել՝ ինքս արդեն վորևե կերպ կկարողանամ»։ Նա փորձում է ճառով դիմել հավաքված բազմությանը, սակայն արգելում են։ Այն

ժամանակ, նա զվարթորեն դիմում է դահճին և ասում. «Միայն համարձակ, չվախենաս քո աշխատանքից. իմ վիզը կարճ է, լավ կտրիր, վորպեսզի վնաս չպատճառես»։

***

Մորի գրական ստեղծագործությունների այժմ մեծ մասամբ պատմական նշանակություն ունեն միայն. Նրա գրական ժառանգությունից «Ուտոպիա»-ն է, վոր պահպանում է վորոշ արժեք և վորպես «գրական տիպի սոցիալիզմի» (Մարքս) հանճարեղ գրվածք, պնդում է իր տեղը ուտոպիական սոցիալիզմի մեջ։

«Սոցիալիստական տեսությունների ուտոպիական կողմն այժմ արդեն ամբողջովին անցել է պատմության բնագավառը... Մենք ավելի շուտ դերադասելի յենք համարում ֆանտաստիկ թաղանթի տակից գտնել հանճարեղ գաղափարների սաղմերը, վոր ամենուրեք ցրված են մեծ ուտոպիստների տեսությունների մեջ, բայց աննշմարելի յեն կույր ֆիլիստերների համար» (Ենգելս)։ Այս իմաստով, Թոմաս Մորի «Ուտոպիա»-ն պարունակում է «հանճարեղ գաղափարների սաղմեր», վորոնք դիտելով իր ժամանակի պայմաններում, դարձնում են Մորին վորպես իր ժամանակակիցները գերազանցող կարկառուն դեմք։

Մորի «Ուտոպիա»-ն, մասնավորապես նրա առաջին գիրքը, հանդիսանում է կարևոր վավերագիր՝

15-րդ դարու վերջի և 16-րդ դարու սկզբի Անգլիայի տնտեսական և քաղաքական դրության վերաբերյալ:

14-րդ դարու վերջին՝ բուրդը, որ Անգլիայի արտածման մեջ գերակշռող տեղ էր գրավում, սկսվում է վերամշակվել յերկրի ներսում և արտածվում է որպես անմշակ մահուդ՝ պատրաստված գլխավորապես գյուղական տնայնագործների միջոցով. այդ մահուդը վերամշակվում էր Ֆլանդրիայի և Ֆլորենցիայի մանուֆակտուրաներում և այնտեղից անցնում Յեվրոպայի շուկաները: Բրդեղենի արտադրությունը դառնում էր Անգլիայի հիմնական արդյունաբերությունը և նրա զարգացումն սկսում էր դրվել կապիտալիստական ռելսերի վրա. այս հանգամանքն իր հերթին նոր խթան էր հանդիսանում անգլիական գյուղատնտեսության կապիտալիստական զարգացման: 15-րդ դարու սկզբին կազմակերպվեցին առևտրական ձեռնարկատերերի ընկերություններ. զարգանում էր ազգային արտածման առևտուրը, որ նախապես գտնըվում էր գլխավորապես արտասահմանցիների ձեռքին (Հանզա, Վենետիկ): Նոր ծագող բուրժուազիան կարիք ուներ ուժեղ իշխանության և աշխատավորների շահագործումը խստացնող քաղաքականության. բուրժուազիան՝ ազնվականության հետ միասին, ոժանդակում էր թագավորական աբսոլյուտիզմի ամրապնդման և թագավորի հետ բաժանում էր օգուտների մի մասը, ոժանդակում էր նրան հաղթահարել ֆեո-

դալական առանձին սենյորների քաղաքական սեպարատիզմը՝ ֆեոդալական այն յերկարատև կռվի մեջ, որ հայտնի յե Կարմիր և Սպիտակ վարդերի պատերազմ անունով:

14-րդ դարի սկզբին գյուղացիների ճորտատիրական կախումն Անգլիայում գրեթե չքացել էր, սակայն դեռևս պահպանվում էին հողատիրության ֆեոդալական ձևերը: Այս հանգամանքը մեծ մասամբ պայմանավորված էր դեռևս թույլ զարգացած ապրանքային տնտեսությամբ և դրամական շրջանառությամբ: Դեռևս 15-րդ դարում, ինքնուրույն տնտեսություն վարող գյուղացիներն Անգլիայում կազմում էին ազգաբնակության գերակշռող մասը:

15-րդ դարի վերջին և 16-րդի սկզբին Անգլիայի ագրարային կարգերը յենթարկվեցին խոշոր փոփոխությունների. դրա պատճառներից մեկը, ինչպես արդեն հիշատակվեց, բրդեղենի արդյունաբերության ծաղկումն էր Ֆլանդրիայում և դրանով պայմանավորված բրդի մեծ պահանջը և գնի բարձրացումը. սրա հետևանքով նշանակալի չափով աճում էր նաև հողի պահանջը, այդպիսին արոտատեղիների վերածելու և ոչխարներ բազմացնելու համար:

16-րդ դարի վերջերից ուժեղ թափով ընթանում է կապիտալի նախնական կուտակման պրոցեսն Անգլիայում. այս պրոցեսը «ոչ այլ ինչ է, բայց յեթե արտադրողի ու արտադրամիջոցների անջատման պրոցես... հողագործական արտադրողի՝ գյու-

ղացու, ունեզրկումը հող ու տեղից՝ կազմում է ամբողջ պրոցեսի հիմքը» (Մարքս)։

Միաժամանակ, 15-րդ դարի վերջին քառորդում և 16-րդ դարի սկզբում ֆեոդալական զինախմբերը լուծելու հետևանքով ազատ ձեռքեր շուկա նետվեցին... խոշոր ֆեոդալ իշխանները գյուղացիությունը դուրս շպրտելով հող ու տեղից՝ զավթում էին համայնական հողը։

Համայնական հողերի գրավումը, այսպես կոչված «ցանկապատելը» (incolsure) ուժեղ թափով տեղի յե ունենում 15-րդ դարի վերջերին և վարելահողը վերածում էին արոտավայրերի։ «Ցանկապատման» յենթակա այդ հողերի զավթմանը մասնակցում էին կալվածատերերը (լենդ-լորդերը) և անգլիական գյուղի կուլակային խավերը. այս հանգամանքն առաջ բերեց 16-րդ դարում գյուղի ուժեղ շերտավորում և գյուղացիության չքավոր խավերի հողազրկում՝ Անգլիայում։

Մորը «Ուտոպիա»-յի առաջին գրքում հետևյալ կերպ է նկարագրում գյուղացու ունեզրկման պրոցեսը.

Դժբախտության պատճառներից են «վոչխարների անթիվ հոտերը, վորոնք այժմ ծածկում են ամբողջ Անգլիան։ Ուրիշ ամեն տեղ հեզ ու քչով բավականացող այդ կենդանիները ձեզ մոտ այնքան անկուշտ ու սարսափելի յեն, վոր մինչև իսկ մարդկանց վրա յեն հարձակվում ու հալածում նրանց՝ դաշտերից, տներից, գյուղերից։ Յեվ, ար-

դարև, կայսրության այն բոլոր վայրերում, վորտեղ կարելի յե հավաքել ամենանուրբ և ամենաթանկագին բուրդը, շտապում են ազնիվ մարդիկ, հարուստները և մինչև իսկ պատվարժան կրոնավորները, վորպեսզի խլեն այդ հողամասը... Շրջապատի հազարավոր մղոն տարածությունների հողը նրանք զրկում են մշակումից և վերածում են արոտատեղիների. տներ և գյուղեր հողին են հավասարեցնում, խնայելով միայն յեկեղեցիները, այն էլ իբրև գոմ՝ իրենց վոչխարների համար։ Ամենախիտ բնակված և ամենալավ մշակված վայրերը նրանք ամայի յեն դարձնում... Յեվ, այսպիսով, մի անկուշտ ընչասեր, հազարավոր հողամասեր շրջափակում է ցանկապատով. ազնիվ հողագործներ դուրս են շպրտվում իրենց տներից. մեկին խաբեբայությունով, ուրիշներին զոռով, ամենաբախտավորները ճնշումների և կեղեքումների մի յերկար շարքով, վորով ի վերջո նրանք հարկադրվում են ծախել իրենց ունեցվածքը։ Յեվ այսպես այս ընտանիքները, վորոնք իրենց շնչերի քանակով են հարուստ, քան միջոցներով (վորովհետև հողագործությունը շատ ձեռքեր է պահանջում), քշվում են դաշտերով ու ճանապարհներով... Լացով են թողնում դժբախտներն այն ծածկը, ուր իրենք ծնվել են, այն հողը, վոր կերակրել է նրանց և չեն իմանում, թե վորտեղ մի ապաստան վորոնեն»։

Ֆեոդալական զինախմբերի լուծման և գյուղացիական չքավոր խավերի ունեզրկման հետևանքով

առաջացած վարձու ազատ ձեռքերը, «Թռչունների պես ազատ պրոլետարները» (Մարքս) չէին կարող նույն արագությամբ, ինչպես դուրս էին շպրտվել հողից ու տնից, զբաղմունք գտնել նորաբողբոջ մանուֆակտուրային արտադրության մեջ: «Մի միակ հովիվ,—ասում է Մորը,—բավական է այժմ, վոր հոտն արածացնի մի տարածության վրա, վորի մշակումն առաջ հարյուրավոր ձեռքեր էր պահանջում»:

Ի՞նչ էր մնում անել այս բազմություններին. «Նրանք,—շարունակում է Մորը,—պետք է կամ մուրացկանություն և կամ, յեթե դրա համար քաջություն ունեն, գողություն անեն»: Այդպիսով, այդ բազմությունները հաճախ մասսայորեն դառնում են մուրացիկներ, գողեր և թափառաշրջիկներ: 15-րդ դարի վերջերին և 16-րդ դարում ամբողջ Արևմտյան Յեվրոպայում, մասնավորապես Անգլիայում, դաժան որենքներ են հրատարակվում թափառաշրջիկության և գողության դեմ: Միմիայն Հայնրիխ VIII-ի կառավարման որոք, նման 72 հազար մանր և խոշոր գողեր գլխատվեցին: Մորը «Ուտոպիա»-յի մեջ ընդվզում է այս արյունոտ որենսդրության դեմ: «Սակայն,—գրում է Մորը,—ի՞նչն է նրանց (թափառաշրջիկների, գողերի— Գ.Ա.) վոճրագործությունը. ուրիշ ոչ մի բան, քան այն, վոր չեն կարող գտնել մեկին, վոր իրենց աշխատանք տա, չնայած ամենայեռանդուն կերպով փորձում են այն»: Ակնարկելով գողերի և թափառաշրջիկության

դեմ կիրառվող խիստ որենքները, Մորն ասում է. «Դուք ստեղծել եք գողեր, վորպեսզի նրանց կախելու հաճույքը վայելեք... Սանձահարեցեք հարուստների ընչասեր յեսականությունը. վերցրեք նրանցից հարստությունը դիզելու և մենաշնորհի իրավունքները: Հալածեցեք անգործունեությունը. հողագործությանը տվեք գործելու լայն ասպարեզ. բրդի և արդյունագործության արհեստանոցներ բացեք, վորտեղ ոգտակար զբաղմունք գտնեն մարդկանց այն մասսաները, վորոնց՝ թշվառությունը մինչև այժմ գողեր և թափառաշրջիկներ կամ, ինչ վոր գրեթե նույնն է, սպասավորներ է դարձնում»:

Այս բոլոր մտքերը Մորն արտահայտում է Հիթլոդի բերանով. «Ուտոպիա»-յի մեջ Մորն իրեն վերապահում է լոկ պարզ շարադրումն այն մտքերի ու դեպքերի, վոր «պատմում է» Հիթլոդը. տեղ-տեղ, հիմնական հարցերում, Մորը հանդես է գալիս «ընդդիմախոսի» դերում: Եյականը սակայն այն չէ, թե ինչ է ասում ինքը՝ Մորը անձնապես «Ուտոպիա»-յում, այլ այն, ինչ նա ասել է տալիս Հիթլոդին: Խստորեն քննադատելով արկածախնդրական այն պատերազմները, վոր մղում են թագավորները իրենց շրջապատող «մութ» քաղաքագետների ու մինիստրների խորհրդով, Հիթլոդը (կարդա Մորը) խոսքն ուղղելով այդ «ազդեցիկ պարոններին» ասում է. «Ձեր խորհուրդները պղծելի յեն. դրանք նույնքան վտանգավոր են թագավորի համար, վորքան կործանիչ՝ ժողովրդի համար: Ձեր վեհապետի պատիվն ու

յերջանկությունն ավելի շուտ կազմում են իր հպատակների, քան թե իր սեփական հարստությունը: Մարդիկ թագավորներին ստեղծել են վոչ թե թագավորների, այլ մարդկանց համար: Նրանք իրենց գլխին առաջնորդներ են դրել, վորպեսզի թշնամու ուժից և հարձակումներից հանգիստ ու ապահով լինեն: Թագավորի ամենասրբազան պարտականությունն այն է, վոր նա իր ժողովրդի յերջանկության մասին ավելի մտածի, քան իր անհատական բախտավորության համար»:

Միապետի անձի և նրա առաջնակարգ պարտականության մասին այդ դրույթով Մորը հանդես է գալիս ժամանակի առևտրական բուրժուազիայի շահերի ներկայացուցչի տիպարով: Միապետի անձի և դերի հանդեպ ունեցած ակնածանքով, նրա մեջ խոսում է տիպիկ հումանիստը: Նա, վորպես հումանիստ, հանձին թագավորի պատկերացնում էր գիտունների՝ հումանիստների խորհրդով առաջնորդվող ու գործող «լուսավորված» միապետին:

Վո՞րն է սակայն հասարակական չարիքի աղբյուրը: Մորը շարունակում է. «Ամեն տեղ, ուր սեփականության որենքն է իշխում, վորտեղ ամեն ինչ փողով է չափվում, այնտեղ արդարության ու հասարակական հանգստի մասին յերբեք խոսք լինել չի կարող... Բարիքները հավասար ու արդար բաժանելու և մարդկային յերջանկություն հաստատելու միակ միջոցը սեփականության իրավունքի վերացումն է»:

«Ուտոպիա»-յի յերկրորդ գրքում արդեն՝ Մորը, ի հակադրություն գոյություն ունեցող կարգերի, ձգտում է պոզիտիվ ձևով շարադրել իր ֆանտազիայի արդյունք պետության ու հասարակական կյանքի պատկերը Ուտոպիա կղզում, ուր «հասարակական հարստությունն այնպես է բաշխվում, վոր ամեն վոք կյանքի բոլոր հարմարություններն առատորեն վայելում է»:

Ուտոպիա կղզում սեփականությունը հասարակական է. այնտեղ վոչ վոք իրեն վոչ մի բանի սեփականատեր չի համարում: Ֆիզիկական աշխատանքը պարտադիր է բոլորի համար և տևում է միայն վեց ժամ. վեց ժամյա աշխատանքը լի ու լի բավարարում է բոլոր կարիքները. դա բացատրվում է նրանով, վոր Ուտոպիա կղզում չկան պորտաբույծ տարրեր և բոլորն ոգտակար աշխատանքով են զբաղված: Ֆիզիկական աշխատանքից ազատված է ազգաբնակության մի աննշան մասը միայն՝ գիտնականները, վորոնցից և ընտրում են նաև դեսպաններին, քահանաներին ու իշխաններին: Հողագործությունը միակ զբաղմունքն է, վոր պարտադիր է բոլոր քաղաքացիների՝ թե տղամարդկանց և թե կանանց համար: Բացի հողագործությունից, յուրաքանչյուր քաղաքացի պարտավոր է սովորել մի արհեստ, սովորաբար իր ծնողների արհեստը:

Ուտոպիայում փող գոյություն չունի. ամեն մարդ ստանում է հասարակական շտեմարանից այն բոլորը, ինչ վոր հարկավոր է իրեն. փող գործած-

վում է արտաքին առևտրի համար. վերջինս պետական մենաշնորհ է: Վոսկին Ուտոպիայում արհամարհված է. այնտեղ նրանից պատրաստում են ստրուկների շղթաներ և ստորին գործածության իրեր. վոսկին ծառայում է նաև պատերազմական նպատակների (վարձկան զինվորներին վարձատրելու և թշնամու յերկրում լրտեսներ կաշառելու) համար: Ուսումը պարտադիր է թե տղամարդկանց և թե կանանց համար: Յերեխաները հողագործությունը տեսականորեն սովորում են դպրոցում, իսկ գործնական կերպով՝ քաղաքի մերձակա դաշտերում: Ծանր և վոչ հաճելի աշխատանքները կատարում են ստրուկները. ստրուկի վորդին ազատ է. իր պարտականությունները բարեխղճորեն կատարող ստրուկը վորոշ ժամանակից հետո ազատ քաղաքացի յե դառնում: Ստրուկները կազմվում են պատերազմական այն գերիներից, վորոնք զենքը ձեռքին բռնվում են, ոտարերկրյա վոճրագործներից, վորոնց գնում են արտասահմանում, ինչպես նաև այն արտասահմանցիներից, վորոնք վորոշ ժամանակով և հոժարակամ ստանձնում են այդ աշխատանքները: Ստրուկների մի կատեգորիա էլ կազմվում է տեղական քաղաքացիներից, վորոնք ծանր վոճիրներ են գործել և կամ կրոնական համոզումներով ինքնակամ դառնում են ստրուկներ: Սեփական քաղաքացիների համար սովորական պատիժը ստրկությունն է:

Կանայք ոգտվում են տղամարդկանց հավասար իրավունքներով:

Ուտոպիայում բոլոր տեսակի կրոնները թույլատրելի յեն. արգելված է միայն աթեիզմը:

Տնտեսության, ինչպես նաև պետության ստորին օղակն ընտանիքն է. յուրաքանչյուր յերեսուն ընտանիք ամեն տարի ընտրում է մի կառավարող, վորը սիֆոգրանտ կամ ֆիլարխ է կոչվում. սիֆոգրանտները, յուրաքանչյուր քաղաքում յերկու հարյուր հոգի, գաղտնի քվեարկությամբ ընտրում են իշխանին: Իշխանի կոչումը ցմահ է, վորքան ժամանակ նա ինքնիշխանության ձգտելու մեջ չի կասկածվում: Սիֆոգրանտների գլխավոր պարտականությունն է հետևել, վոր վոչ վոք ծուլություն չանի և ամեն մարդ զբաղվի իր արհեստով: Բացի իշխանից, բոլոր պաշտոնատար անձերն ամեն տարի վերընտրվում են: Յուրաքանչյուր քաղաքից (ընդամեն 54 քաղաք) ընտրում են վորպես ներկայացուցիչներ փորձված ու հմուտ յերեք ծերունիներ. վերջինները կազմում են սենատը: Սենատի առաջնակարգ գործն է հաշվառել կղզու տարբեր մասերի բերքն ու մթերքների պաշարը և, դրա հիման վրա, կատարել մթերքների վերաբաշխում առանձին քաղաքների միջև:

Ուտոպիայում օրենքների թիվը շատ քիչ է, բայց այդ քիչն էլ բավարարում է բոլոր կարգի հարաբերությունները կարգավորելու համար: Ուտոպիայում փաստաբաններ չկան. «այնտեղ գոյություն չունեն ըստ պրոֆեսիայի հռետորներ, վորոնք հատկապես զբաղվում են օրենքները շուռ տալով և մեծ ճարպկությամբ մի գործ գլուխ բերելով»:

Հասարակական կազմակերպության պրիմատը Մորի մոտ արտադրությունն է. Նրա հասարակական սխեման չի պարփակվում մի քաղաքի կամ փոքրիկ տերիտորիայում ամփոփված հասարակությունով. Մորի սխեման, առաջին անգամ լինելով, կարգավորում է բավական ընդարձակ տերիտորիա ունեցող ամբողջ ժողովրդական տնտեսություն:

Արտադրության կազմակերպման ձևն Ուտոպիայում արհեստային է. տվյալ արհեստով զբաղվում է վոչ թե այս կամ այն անհատը, այլ ամբողջ ընտանիքը: Այս տեսակետից Մորն ամբողջովին կանգնած է միջնադարյան տիպի արհեստային արտադրության սկզբունքի վրա. այստեղից էլ, նրա արտադրական հիմնական բջիջը արհեստավորական ընտանիքն է: Մորի հասարակական կյանքի կազմավորման սխեմայում՝ տնտեսությունը ստատիկ է. արտադրողական ուժերի ծավալուն զարգացման գաղափարը հիմնականում դեռևս օտար էր Մորի ժամանակին և իրեն՝ Մորին: Եվ Մորը «Ուտոպիա»-յում չի խոսում արտադրողական ուժերի և տեխնիկայի զարգացման մասին. Ուտոպիա կղզում հասարակական սեփականությունն ու արտադրությունը չի նախադրում և չի պայմանավորում արտադրողական ուժերի ծավալում: Նրա մտահղացած հասարակության մեջ տիրող վեց ժամյա աշխատանքային օրը բավարարում է ըստատիկ տնտեսության ժուժկալ պահանջները:

Մորը կանանց ազատագրման ջատագովներից է: Ուտոպիայում նա բավական մեծ դեր է հատկացնում

կանանց՝ արտադրության պրոցեսների մեջ: Ուսման և կրթության հարցում նրանց հավասարեցնում է տղամարդկանց: Մորը իր մի այլ աշխատության մեջ կանանց մասին գրում է. «Եթե մինչև իսկ կինը ավելի պակաս ձիրքերով է օժտված, քան տղամարդը, հենց ավելի շատ դրա համար էլ պետք է մշակել նաև անբերրի հողը, վորպեսզի ուղղած լինենք բնությունը՝ անդուլ աշխատանքով և գիտական համառ զբաղմունքներով»: Սակայն, հակառակ այս ամենի, Մորը այնուամենայնիվ պատկերում է նահապետական ընտանիքը՝ ընտանիքի ներսում հոր իշխանությամբ:

Մորն առաջին սոցիալիստ-ուտոպիստն է, վոր իր իդեալական հասարակության սխեմայում իրագործում է դեմոկրատական լայն գաղափարներ: «Ուտոպիա»-յում զարգացրած Մորի դեմոկրատիզմը ներկայանում է վորպես սուր հակադրություն իր ժամանակի սոցիալ-քաղաքական պայմանների: Աբսոլյուտիզմին հատուկ պետական բյուրոկրատիկ ապարատի կառուցվածքին, յերբ բոլոր պաշտոնատար անձերը վերևից ներքև նշանակվում են կենտրոնացած ձևով,— Մորը «Ուտոպիա»-յի մեջ սահմանում է լայն դեմոկրատիկ կարգեր, վորտեղ բոլոր պաշտոնատարներն ընտրովի յեն. ավելին, նա, վորոշ դեպքերի համար, սահմանում է մինչև իսկ համաժողովրդական քվեարկություն:

Թոմաս Մորը նոր ժամանակի առաջին սոցիալիստ ուտոպիստն էր, վոր հասարակական կառուց-

վածքի իր ամբողջ սիստեմը հիմնում էր զուտ բանական հիմքի վրա: Միաժամանակ, նրա մոտ պատահում են ռեալիստական բնույթի ակնարկներ: Մորը, օրինակ գտնում է, որ «պետությունը հարուստների և չքավորների դավադրություն է». մի այլ տեղ գրում է. «Վորո՞նք են այն մարդիկ, ովքեր ամենից ավելի հանդուգն են լինում, երբ խոսքը վերաբերում է պետությունը կործանելուն. այդպիսիները միթե նրանք չե՞ն, վորոնք դրանում միայն կարող են շահել, քանի վոր կորցնելու վոչինչ չունեն» և այլն: Մորի ռեալիստական այս արտահայտությունները սակայն մնում են լոկ ակնարկներ և նա դրանցից բխող հետևություններ չի անում:

Յեվ դա հասկանալի յե: Մորի ապրած և գործած դարաշրջանում դեռևս գոյություն չուներ այն սոցիալական ուժը, ժամանակակից պրոլետարիատը և նրա ավանգարդ կուսակցությունը, վոր դասակարգային քաղաքական շարժման ինքնագործունեությամբ իրականացներ այդ իդեալները դասակարգային հեղափոխական կռվի միջոցով: Պրոլետարիատը դեռևս նոր եր ստեղծվելու, հետևապես չկային նաև նրա ազատագրման նյութական պայմաններ, վորպիսի նախադրյալներն ստեղծվելու եյին կապիտալիստական հասարակակարգի սոցիալ-քաղաքական իրականության ներսում: Այս պայմաններում է, վոր կապիտալիստական տնտեսության և կապիտալիզմի զարգացման սկզբնական ժամանակաշրջանում առա–

ջացած՝ հասարակությունը վերակառուցող սխեման պետք է «իր բովանդակությամբ անհրաժեշտաբար լիներ հետադիմական. այդ գրականությունը քարոզում եր մի ընդհանուր ճգնավորություն և գռեհիկ ու անշնորհք հավասարություն» («Կոմունիստական մանիֆեստ»):

***

Ուտոպիայի գրական գլխավոր աղբյուրներից են Պլատոնի աշխատությունները, 16-րդ դարու ճանապարհորդական վեպերը (մասնավորապես Ամերիկո Վեսպուչիի գործերը) և այլն: Սակայն, սխալ կլիներ պնդել, թե «Ուտոպիա»-ն այդ աշխատությունների լոկ հետևությամբ և ազդեցությամբ գրված քաղաքական ռոման է:

«Ուտոպիա»-յում զարգացրած սոցիալ-տնտեսական կառուցվածքի սխեման արդյունք է ժամանակի քաղաքական և տնտեսական հարաբերությունների յուրահատուկ ըմբռնման, նա հանդիսանում է այդ հարաբերությունները վերափոխելու անզոր մի ընդվզում, վորը սակայն իր եյությամբ վերջին հաշվով հակադրվում եր արտադրողական ուժերի զարգացման բնապատմական պրոցեսին և, վորպես այդպիսին, առաջադիմական ճանաչվել չեր կարող:

«Ուտոպիստներն... ուտոպիստներ եյին այն պատճառով, քանի վոր նրանք այլ բան չեյին կարող լինել այն դարաշրջանում, յերբ կապիտալիստական արտադրությունը դեռ այնքան թույլ եր զարգացած:

Նրանք ստիպված էին նոր հասարակության տարրերը հնարել իրենց գլխից, վորովհետև այդ տարրերը հին հասարակության ընդերքում տակավին բոլորի համար տեսանելի չափով հանդես չէին յեկել. Նոր կառուցվածքի պլանը գծելիս, նրանք ստիպված էին սահմանափակվել, դիմելով բանականության, քանի վոր նրանք դեռևս չէին կարող դիմել իրենց ժամանակակից պատմության» (Էնգելս)։

Նոր գոյացող հասարակության զարգացման պրոցեսում արտադրական նոր, ավելի բարձր հարաբերություններ և հիմունքներ նշմարելու փոխարեն, ուտոպիստները հասարակական արտադրական կառուցվածքի հիմքեր վորոնում էին անցյալի մեջ և իրենց հայացքն ուղղում արտադրության մինչկապիտալիստական յեղանակին և այսպիսով հակասության մեջ ընկնում իրենց ժամանակաշրջանի հետ։

Ուտոպիական սոցիալիզմը «քննադատում էր կապիտալիստական հասարակությունը, դատափետում, անիծում նրան, յերազում էր նրա վոչնչացման մասին, ավելի լավ հասարակակարգի ֆանտազիաներ հորինում, համոզում էր հարուստներին՝ շահագործման անբարոյության մասին։ Սակայն ուտոպիական սոցիալիզմը չէր կարող ցույց տալ իրական յելքը։ Նա չէր կարող կապիտալիզմի պայմաններում վարձու ստրկության էությունը վո՛չ բացատրել և վո՛չ էլ հայտագործել նրա զարգացման օրենքները և վոչ էլ գտնել հասարակական այն ուժը, վորն ընդունակ է դառնալ նոր հասարակության ստեղծողը» (Լենին, հատ. 16)։

Այս բոլորի հետ միասին, Մորի «Ուտոպիա»-ն իր մեջ մեծ չափով պարունակելով քննադատական տարրեր ժամանակի տիրող կարգերի դեմ, ամենայն իրավամբ դասվում է գրական այն գործերի շարքում, վորոնք պատմական առումով՝ «արժեքավոր նյութ են հայթհայթել բանվորների լուսավորության գործի» («Կոմունիստական մանիֆեստ»)։

ԹՈՄԱՍ ՄՈՐ

ՈՒՏՈՊԻԱ

Գ Ի Ր Ք   Ա Ռ Ա Ջ Ի Ն

Հայնրիխ VIII[1]), *Անգլիայի անպարտելի թագավորը, հաղվագյուտ և գերազանց մտքի տեր մի իշխող, վերջերս մի նշանակալի միջադեպ ուներ Քաստիլլի իշխան Նորին մեծություն Կառլի*[2]) *հետ։ Այդ գործը կարգավորելու, և թյուրիմացությունն ըստ հնարավորին վերաց-*

---

[1]) *Հայնրիխ* VIII (1491—1547)—*Անգլիայի թագավոր* (1509—1547), *Հայնրիխ* VII-*ի յերկրորդ վորդին։ Նրա օրոք աբսոլյուտիզմն Անգլիայում հասավ իր բարձրագույն կետին։ Հայնրիխ* VIII *իրեն հայտարարեց «անգլիական յեկեղեցու» գերագույն պետ։ Գրավեց վանքապատկան հողերը, մի ռեֆորմ, վորին օժանդակում եր միջին ազնվականությունը։ Այս ռեֆորմը նպաստեց հին ֆեոդալ-հողատեր արիստոկրատիայի վերջնական քայքայմանը և ամրապնդեց թագավորի բացարձակ իշխանությունը։ «Անգլիական յեկեղեցու» Հռոմից բաժանումով մտցվեց ռեֆորմացիա։*

[2] *Քաստիլլի իշխան Կառլը հետագայում գերմանական իմպերատոր Կառլ* V *է* (1519—1555)։

Պատգամավորությունը, վորին մասնակցում եր նաև Մորը (1515 *թ.*), *ուղարկված եր Բրյուգե պարզելու համար ֆլանդրիական առևտրականների հետ տեղի ունեցած թյուրիմացությունը։ Հայնրիխ* VIII *պառլամենտական ակտով արգելել եր բրդի արտահանումը դեպի Հոլանդիա։ Այս արգելքը պայմանավորված եր Կառլի և Հայնրիխ* VIII-*ի միջև առաջացած*

նելու միախայով ինձ, իբրև դեսպան, ուղարկեցին Ֆլանդրիա[3]):

Ինձ ընկեր տվեցին անզուգական Կեթբերտ Տենստալը, որին թագավորն ընդհանուր հա-

---

գժտությամբ (իշխան Կառլը 1506 թ. նշանված էր Հայնրիխ VIII-ի քրոջ հետ, սակայն 1514 թ. Կառլին նշանեցին Ֆրանսիական իշխանուհու հետ)։ Բրդի արտահանման արգելքը երկու երկրների տնտեսական կյանքի վրա վատ էր անդրադառնում և երկու իշխողները շուտով հաշտվելով միմյանց հետ՝ 1515 թվի մայիսի 15-ին Ֆլանդրիա ուղարկվեց հատուկ միսիա, Մորի մասնակցությամբ։ Պատգամավորության կազմում Մորի թեկնածությունն առաջադրել էին Լոնդոնի առևտրականները։ Մորի առաքելությունը հաջողությամբ վերջացավ. այդ պատճառով էլ երկու տարի հետո (1517 թ.) նրան նույնանման միսիայով ուղարկեցին Քալե։

[3] Ֆլանդրիան նախկին կոմսություն էր, որի տերիտորիան այժմ պատկանում է մասամբ Բելգիային (1830 թվից), մասամբ Ֆրանսիային և մի մասն էլ Հոլանդիային։ Բրյուգեն գլխավոր քաղաքներից մեկն էր։ 12-րդ դարից Ֆլանդրիան տնտեսական ընդհանուր շահերով կապված էր Անգլիայի հետ (Անգլիան Ֆլանդրիայի արհեստավորների համար բուրդ էր մատակարարում)։ Տնտեսական տեսակետից Ֆլանդրիան 14—16 դարերում Հյուսիսային և Միջին Եվրոպայի ամենաառաջադեմ երկրներից մեկն էր։ Ֆլանդրիան Կառլ V-ի կայսրության բաժանումով անցավ Իսպանիային։

վանությամբ վստահացել էր Քենտերբերիի արքեպիսկոպոսի կնիքը։ Նրան գովաբանելու համար ես ոչինչ չեմ ասի, և այդ ոչ թե իմ բարեկամին շողոքորթելու մեջ մեղադրվելու երկյուղից, այլ սոսկ այն պատճառով, որ նրա գիտելիքներն ու բարեմասնությունները ամեն գովասանքից բարձր են։ Նրա հռչակն այնքան փայլուն է, որ եթե մեկն ուզենա նրան գովել, կնշանակի արևը լուսավորել լապտերով,— ինչպես ասում է առածը։

Բրյուգեյում[4]), կոնֆերենցիայի համար նշանակված քաղաքում, մենք հանդիպեցինք Կառլ իշխանի դեսպանների հետ—բոլորն էլ հրաշալի մարդիկ։ Բրյուգեյի նահանգապետը գլխավորում էր պատգամավորությանը, իսկ Գեորգ Թամազիան, Մոնկասելի պրեֆեկտը, պատգամավորության հոգին ու լեզուն էր։ Այդ մարդը, որ իր լեզվի ճարտարությունը ոչ այնքան արվեստին, որքան բնությանն էր պարտական, համարվում էր պետական հարցե-

---

[4]) Բրյուգե (Bryges)—Բելգիական Արևմտյան Ֆլանդրիա գավառի գլխավոր քաղաքը. այժմ ունի մոտ 16.000 բնակիչ։ Հիմնված է 7-րդ դարում։ Անցյալում առևտրական առաջնակարգ քաղաք էր. այժմ հայտնի է իր հնություններով և շենքերով։ Բրյուգեն պատկանում էր սպանացիներին, ապա ֆրանսիացիներին. 1814 թվին անցավ Հոլանդիային, 1830 թվից պատկանում է Բելգիային։

րի լավագույն իրավագետը. անհատական ձիրքերը՝ միացած յերկարամյա գործնական աշխատանքի հետ, նրան մի չափազանց հմուտ դիվանագետ եյին դարձրել:

Կոնգրեսն արդեն յերկու նիստ ունեցավ, սակայն բազմաթիվ կետերում չկարողացավ համաձայնության գալ: Այդ ժամանակ Քաստիլի դեսպանները հրաժեշտ առան մեզնից և ուղևորվեցին Բրյուսել՝ այնտեղ իշխանի կամքն իմանալու համար: Այս ազատ ժամանակը յես օգտագործեցի՝ գնալով Անտվերպեն: Այդ քաղաքում յեղածս ժամանակ յես հաճախ ընդունելություններ եյի ունենում, սակայն իմ բոլոր ծանոթներից ամենից ավելի հաճելին Պետր Եգիդն[5] եր, մի շատ բարեհոգի անտվերպենցի: Այդ յերիտասարդ մարդը, վորն իր համաքաղաքացիների մեջ պատվավոր դիրք է վայելում, իր գիտելիքների և բարոյական հատկանիշների շնորհիվ արժանի յե ավելի բարձր հարգանքի, վորովհետև նրա զարգացումն իր հրաշալի նկարագրից վոչնչով յետ չի մնում: Նրա սիրտը բաց է բոլորի համար. իր բարեկամների հանդեպ նա այնքան բարյա-

[5] Իսկական անունն է Պետր Զայլս. Եգիդը նույն անունի (Զայլս) լատինական ձևն է: Պետր Եգիդը (Զայլսը) պատմական անձնավորություն է. Մորը նրան է ուղարկել իր «Ուտոպիա»-ն կարդալու և «ուղղումներ» կատարելու համար (տես հավելվածը):

ցակամություն, սեր, հավատարմություն և նվիրվածություն ունի, վոր, առանց ճշմարտության դեմ մեղանչելու, նրան կարելի յե բարեկամության լավագույն տիպարն անվանել: Համեստ և առանց կեղծիքի, պարզ և խելացի, նա գիտի իմաստալից խոսել ու նրա կատակները վոչ վոքի չեն վշտացնի: Մի խոսքով, շուտով մեր միջև սկսված մտերմությունն այնքան հաճելի և հմայիչ եր, վոր մեղմացրեց իմ հիշողության վիշտը դեպի իմ ծննդավայրը, տունը, կինն ու յերեխաները և մինչև իսկ կարողացավ լռեցնել այն մտահոգությունները, վորոնք զարթնում են ավելի քան չորս ամիս տևող մի բացակայության ժամանակ:

Մի օր յես այցելեցի Notre—Dame. այդ տաճարը վոչ միայն տեղացիների կողմից է շատ պաշտվում, այլև իրենից ներկայացնում է ճարտարապետության գլուխ—գործոցներից մեկը: Ժամերգությունը վերջանալուց հետո, յես ուզում եյի իմ հյուրանոցը վերադառնալ, յերբ հանկարծ տեսա Պետր Եգիդին, վորը խոսում եր տարիքն արդեն առած մի օտարականի հետ: Անծանոթի արևակեզ դեմքը, յերկար միրուքը, վերարկուն, վորն անփութորեն կիսով չափ յետ եր ընկած, տեսքն ու կեցվածքը յենթադրել եյին տալիս, վոր նա նավատեր պետք է լինի:

Հենց վոր Պետրն ինձ նկատեց, առաջացավ դեպի ինձ, բարևեց և իր ուղեկցից, վորն այդ

բոլեյին կարծես ուզում էր առարկել, մի փոքր յետ մնաց·

— Այս պարոնին,— ասաց նա,— հենց նոր մտածում էյի քեզ մոտ բերել:

— Հենց միայն քո սիրուն, բարեկա՛մս, նա ինձ մոտ սրտագին ընդունելության կարժանանար...

— Իսկ յեթե դու նրան ճանաչեյիր, անշուշտ այդ կանեյիր հենց ի՛ր սիրուն: Ուրիշ վոչ վոքից դու չես կարող մարդկանց և անծանոթ յերկրների մասին այնքան ճշգրիտ և հետաքրքրական տեղեկություններ ստանալ, վորքան նրանից: Յես գիտեմ, վոր նման տեղեկությունները քեզ համար արտակարգ շահագրգռություն են ներկայացնում:

— Ուրեմն յես չեմ սխալվել· յես նրան իսկույն նավաստերի տեղ ընդունեցի:

— Շատ ես սխալվում,— ասաց Պետրը— Նա իսկապես նավել է ծովերի վրա, սակայն վոչ վորպես Պալինուր[6])· ավելի շուտ նա խաղում էր Ուլիսսի կամ մինչև իսկ Պլատոնի դերը: Լսի՛ր նրա պատմությունը:

[6]) Պալինուրը Տրոյայի Ենեասի նավի նավավարն էր, վորի ճանապարհորդության նկարագրությունը կազմում է Վիրգիլիոսի «Ենեիդաս» պոեմը: Այս պոեմով Վիրգիլիոսն ուզում էր մրցել Հոմերոսի «Վոդիսական»-ի հետ:

«Ռաֆայել Հիթլոդը[7])— այս անուններից առաջինը նրա ազգանունն է—շատ լավ գիտի լատիներեն և կատարելապես տիրապետում է հունարենին: Փիլիսոփայության ուսումնասիրությունը, վորին նա բացառապես նվիրվել է, դրդել է նրան Աթենքի լեզուն ավելի յուրացնել, քան Հռոմինը, վորովհետև, չե՞ վոր լատիներեն, բացի Սենեկայից և մի քանի բաներ Կիկերոնից, այդ ուղղությամբ շատ բան չի գրված: Նրա հայրենիքը Փորթուգալիան է, դեռ յերիտասարդ տարիքում, նա հայրական ժառանգության իր մասը զիջեց յեղբայրներին և, վորովհետև աշխարհը չափելու իր ցանկությունը չէր կարող հաղթահարել, միացավ Ամերիկո Վեսպուչիի[8]) անձին ու յերջանիկ վերատղին: Չորս ճանապարհորդություններից վերջին յերեքի ընթացքում, վորոնց նկարագրությունն այսոր ամեն տեղ կարդում են, նա վոչ

[7]) Կազմված է հունարեն hytlos —ամպ և daio-ուսումնասիրում եմ բառերից: Այստեղ գործ է ածվում շատ ճանապարհորդած մարդու իմաստով:

[8]) Ամերիկո Վեսպուչի (1451—1512)—իտալացի ծովագնաց և աշխարհագրագետ. ծառայելով սպանական կառավարության մոտ՝ նա Նոր Աշխարհում կատարում է չորս ճանապարհորդություն (1499—1504) և առաջին անգամ ինքն է տալիս Հարավային Ամերիկայի յերկրների ու քարտեզի նկարագրությունը: Նրա անունով Նոր ցամաքամասը կոչվում է Ամերիկա:

մի բույժ չի թողել այդ խոշոր ծովագնացին: Սակայն Ռաֆայելը նրա հետ Յեվրոպա չվերադարձավ. նրա համառ խնդրանքներին ընդառաջելով, Ամերիկոն թույլ տվեց նրան այն «քըսան և չորսից»[9]) մեկը լինել, վորոնք մնացին նրա կողմից հիմնադրված բերդում: Իր ցանկության համաձայն՝ նրան թողեցին այն ափին: Մեր հերոսը չի վախենում օտարության մեջ մեռնելուց, նրան քիչ է հետաքրքրում շքեղ դագաղի մեջ նեխվելու պատիվը և նրանից հաճախ կարելի յե լսել այն ասացվածքը, թե «անթաղ դիակի պատանն ինքը՝ յերկինքն է, իսկ ճանապարհը դեպի աստված կարելի յե ամեն տեղ գտնել»: Արկածախնդիր այդ նկարագիրը թերևս նրան փչացրած լիներ, յեթե նախախնամությունը չպահպաներ նրան: Համենայն դեպս Վեսպուչիի մեկնելուց հետո, նա հինգ կոլոնիստների հետ շրջագայեց շատ յերկրներ, ինչ-վոր հրաշքի շնորհիվ նավով հասավ մինչև Տապրոբանա[10]) և այնտեղից Կալիկուտ[11]), վորտեղ նա պատահեց փորթուգալա-

[9]) Իր չորրորդ ճանապարհորդության ժամանակ (1503—04) Ամերիկո Վեսպուչին Բրազիլիայում թողեց 24 մարդ, վոր ցանկանում եյին բնակություն հաստատել այնտեղ:

[10]) Տապրոբանա—Ցեյլոն կղզու հին անունն է:

[11]) Մի քանի թարգմանությունների մեջ գրված է Կալկաթա (Calcutta), իսկ բնագրում Calichut. Կալ-

կան նավերի, վորոնցից մեկը, հակառակ բոլոր սպասումների, նրան իր հայրենիքը վերադարձրեց»:

Յերբ Պետրը վերջացրեց իր պատմությունը, յես շնորհակալություն հայտնեցի նրան իր սիրալիրության և պարտավորեցնող յեռանդի համար, վորով առիթ տվեց ինձ վայելել մի այդպիսի արտակարգ մարդու ընկերությունը, ապա մոտեցա Ռաֆայելին և, ծանոթություն հաստատելու ժամանակ ընդունված սովորական կոմպլիմենտներից հետո, նրան Պետր Եգիդի հետ առաջնորդեցի իմ բնակարանը: Այնտեղ մենք պարտեզում նստեցինք կանաչազարդ մի նստարանի վրա, և սկսվեց խոսակցությունը:

Ռաֆայելն ամենից առաջ պատմեց ինձ, թե ինչպես նա և իր ընկերները Վեսպուչիի

կաթան լինել չեր կարող, վորովհետև Հնդկաստանի այս քաղաքը Մորի ժամանակ գոյություն չի ունեցել. նա հիմնվել է միայն 17-րդ դարու վերջին: Ռուսերեն թարգմանության ծանոթության մեջ Կալիքուտը Մորի միֆական քաղաք է համարվում. մեր կարծիքով Calichu-ը Հնդկաստանի Մալաբար շրջանի ծովափնյա քաղաք և առևտրական նավահանգիստն է. սա հնդկական առաջին քաղաքն է, ուր այցելել են փորթուգալացիները դեպի Հնդկաստան ծովային ճանապարհը հայտնագործելու ժամանակ (1498). 1792 թվին այս քաղաքն անցավ անգլիացիներին:

մեկնելուց հետո իրենց բարեկամական վերաբերմունքի և զանազան լավ ծառայությունների շնորհիվ վաստակել են բնիկների բարեկամությունը և թե ինչպես նրանց հետ խաղաղ ու լավագույն համերաշխությամբ ապրել են: Նա պատմեց ինձ նույնիսկ մի իշխանի մասին—որի յերկրի և իր անունն այժմ չեմ հիշում—վորն ամենամեծ պատրաստակամությամբ նրանց իր հովանավորության տակ է առել: Այդ առատաձեռն մարդը նրանց տրամադրում է նավ, մակույկներ և ուրիշ անհրաժեշտ ամեն ինչ, վոր հարկավոր եր ճանապարհորդությունը շարունակելու համար: Մի հավատարիմ ուղեկցող հրաման է ստանում ընկերանալ նրանց և ամենահրաշալի հանձնարարականներով ներկայացնել մյուս իշխաններին:

Յերկար ճանապարհորդությունից հետո, նրանք հանդիպում են բնակավայրերի, բարեկարգ քաղաքների, բազմաթիվ ժողովուրդների և զորավոր պետությունների:

Հասարակածի և արևադարձի յերկու կողմերին նրանք տեսնում են անծայր անապատներ, վորոնք մշտապես խանձվում են արևի կիզիչ ճառագայթներով: Այդտեղ ամեն ինչ նրանց ահ ու սարսափով է պատում. անմշակ հողը, բացի վայրի գազաններից, այլանդակ սողուններից և նրանցից ավելի սարսափելի մարդկանցից, ուրիշ բնակիչներ չուներ: Վորքան նրանք հեռանում են հասարակածից, այն-

քան բնությունը հետզհետե ընդունում է ավելի մեղմ տեսք. արևը դառնում է պակաս կիզիչ, գետինը զարդարվում է ծիծաղկոտ կանաչով, կենդանիներն այլևս այնքան վայրենի չեն: Ավելի առաջանալով, նրանք պատահում են այնպիսի ժողովուրդների, յերկրների և քաղաքների, վորտեղ ցամաքային և ծովային աշխույժ առևտուր է կատարվում վոչ միայն յերկրի ներսում և սահմանակից յերկրների, այլև շատ հեռավոր ժողովուրդների հետ: Այս հայտաբերումները բոցավառում են Ռաֆայելի և իր ընկերների յեռանդը. սակայն այդ բոլորից ավելի նրանց ուղեսիրությունը խթանում է այն հանգամանքը, վոր նրանք առանց դժվարության ընդունելություն են գտնում լողալու պատրաստ հենց առաջին նավում՝ անկախ նրա նշանակման վայրից: Նրանց հանդիպած առաջին նավերը տափակ եյին, առագաստները հյուսված եյին ուռենու կեղևներից կամ պապիրուսի թերթերից, իսկ մի քանիսը՝ կաշվից: Հետագայում նրանք տեսնում են սուր քթերով նավեր՝ կանեփից պատրաստված առագաստներով և, վերջապես, ամենից վերջը նրանց հանդիպում են այնպիսի նավեր, վորոնք ամեն ինչով նման եյին մեր նավերին և այդպիսիները վարում եյին ճարպիկ նավաստիներ՝ ծանոթ ծովերին ու յերկնքին, թեև կողմնացույցի մասին դեռևս գաղափար չունեյին:

Այս բարի մարդիկ հիացմունքից հափշտակվեցին և չեյին իմանում ինչպես շնորհակալության հայտնեն, յերբ մեր կոլոնիստները նրանց մագնիսական մի ասեղ ցույց տվին։

Մինչ այդ նրանք ծով եյին դուրս գալիս մեծ մտավախությամբ։ Այժմ կողմնացույցը ձեռքերին, նրանք հպարտ կռվում են փոթորկի դեմ՝ մինչև իսկ ձմրանը. նրանք այժմ ավելի յեն վստահում ծովին, քան պետք է, այնպես վոր, յեթե գործին ավելի աչալուրջ չվերաբերվեն, այն դեպքում այդ հրաշալի գյուտը, վորը նրանց ամենամեծ օգուտներն է խոստանում, իրենց անզգուշության պատճառով կարող է դժբախտ պատահարների աղբյուր դառնալ։

Ինձ շատ հեռուները կտանի, յեթե յես պատմեմ բոլորը, ինչ վոր Ռաֆայելը տեսել է իր ճանապարհորդությունների ժամանակ։ Բացի այդ, այս յերկի նպատակն այդ չէ։ Նրա պատմությունը թերևս յես մի առանձին գրքով լրացնեմ, վորտեղ ավելի հանգամանորեն կանգ կառնեմ դերազանցապես քաղաքակրթված ժողովուրդների բարքերի, սովորույթների և նպատակահարմար հիմնարկությունների վրա, վոր նա այցելել է։

Այս կարևոր նյութի շուրջ մենք հազարավոր հարցերի տարափ տեղացրինք Ռաֆայելի վրա, վորոնց նա մեծ գոհունակությամբ բավարարեց։ Առասպելական ճիվաղների մասին,

վորոնք արդեն կորցրել են նորության արժեքը, մենք նրան հարցեր չտվինք. մարդակերներ և նման սուտ հրաշքներ ու վիժվածքներ կարելի յե ամենուրեք գտնել։ Ավելի հազվադեպ է բանական և միանգամայն նպատակահարմար կազմակերպված մի հասարակություն։

Անկեղծ լինելու համար, խոստովանվեց մեզ Ռաֆայելը, այդ նոր ժողովուրդների մեջ նա հանդիպել է հիմնարկությունների, վորոնք շատ ավելի լավ չեն, քան մեզ մոտ յեղածները։ Մյուս կողմից սակայն, նա գտել է վոչ սակավաթիվ օրենքներ, վորոնք ի վիճակի յեն լուսավորել և վերածնել Հին Ցեվրոպայի քաղաքները, ազգերն ու պետությունները։

Այս բոլոր խնդիրները, յես նորից եմ կրկնում, իմ մի այլ աշխատության նյութն են հանդիսանալու. այս աշխատությունով յես հաղորդելու յեմ միայն այն, ինչ վոր Ռաֆայելը պատմեց մեզ ուտոպիական[12]) ժողովրդի բարքերի և հաստատությունների մասին։ Բայց նախապես թող թույլատրվի ինձ հաղորդել ընթերցողին, թե ինչ յեղանակով մեր զրույցն այս հողի վրա փոխադրվեց։

---

[12]) Ուտոպիա հունարեն բառ է. կազմված է ou — բացասական մասնիկից և topus — տեղ, վայր բառից։ Ուտոպիա նշանակում է գոյություն չունեցող վայր, յերկիր։

Իր պատմության ընթացքում Ռաֆայելը ծանրակշիռ խորհրդածություններ կատարեց: Վորեւե կառավարական ձեւ քննարկելիս, նա, զարմանալի խորաթափանցությամբ, վերլուծում եր մեկի նպատակահարմարն ու ներդաշնակը, իսկ մի ուրիշի վատն ու կեղծը: Զանազան ժողովուրդների բարքերի ու հաստատությունների մասին այս իրազեկ մարդու կշտադատությունները լսելիս, պետք եր կարծել, թե նա իր ամբողջ կյանքն անց ե կացրել այդ յերկրներում, մինչդեռ նա այդպիսիք դիտել ե հարեւանցիորեն:

Պետրը չկարողացավ զսպել իր զարմանքը.

— Արդարեւ,— ասաց նա,— ինձ շատ տարորինակ ե թվում, սիրելի Ռաֆայել, վոր դու մի իշխանի մոտ ծառայություն չես վորոնում. յես խորապես համոզված եմ, վոր դու նրան թե ցանկալի և թե ոգտակար կլինես: Աշխարհագրագետի և մարդաբանի քո համայնապարփակ գիտելիքներով՝ դու նրա ազատ ժամերը շատ հաճելի կդարձնեյիր, իսկ բազմաթիվ դիպուկ որինակները, վոր կարող ես բերել, հիմնական գիտելիքներ և անգնահատելի խորհուրդներ կտային նրան: Միաժամանակ դու հնարավորություն կունենայիր քեզ և ձերոնց համար հրաշալի վիճակ ստեղծել:

—Իմ հարազատների և բարեկամների ճակատագիրը,—առարկեց Հիթլոդը,— ինձ քիչ ե անհանգստացնում: Ինձ թվում— ե, վոր նրանց

նկատմամբ յես իմ պարտականությունները լիովին կատարել եմ: Ուրիշները միայն այն ժամանակ են մտածում հանձնել իրենց գանձը, յերբ մի վոտքով արդեն գերեզմանումն են ու պատրաստվում են յերկրորդ վոտքը դնել, և մինչև իսկ այդ ժամանակ ել չափազանց տհաճությամբ են բաց թողնում այն, ինչ վոր նրանց ուժազուրկ ձեռքն այլեւս պահել չի կարող: Իսկ յես, ընդհակառակը, յերիտասարդության լի ուժերի և ծաղկման շրջանում ամեն ինչ նվիրեցի իմ ազգականներին ու բարեկամներին: Յես կարծում եմ, նրանք չեն մեղադրի իմ եգոիզմը և չեն պահանջի, վոր յես իրենց դրամները լցնելու համար ինձ վորպես ստրուկ առաջարկեմ մի թագավորի:

—Լավ հասկանանք միմյանց,—ասաց Պետրը,—իմ միտքն այն չե, վոր դու մի թագավորի ծառան լինես, այլ ծառայես նրան:

— Թագավորները, բարեկամս, այդ յերկուսի մեջ քիչ կամ վոչ մի զանազանություն չեն դնում. լատիներեն servire և inservire խոսքերը իրարից տարբերվում են միայն վանկերի թվով:

— Անվանի՛ր ինչպես հաճելի յե քեզ,— առարկեց Պետրը,— համենայն դեպս յես դրանում տեսնում եմ քեզ համար լավագույն միջոցը՝ ոգտակար լինելու ինչպես պետության և անհատներին, նույնպես ել քեզ համար ապահովելու յերջանիկ դիրք:

4972
39

— Յերջանիկ, ասում ես դու, ինչպե՞ս կարող է այն, վոր հակառակ է իմ զգացումներին, մտածելակերպին, նկարագրին, նպաստել իմ յերջանկությանը: Այն կյանքը վոր այժմ վարում եմ՝ յես ազատ եմ, անում եմ, ինչ ուզենամ, սակայն խիստ կասկածում եմ, թե շատերը նրանցից, վորոնք ծիրանի յեն հագնում, կարող լինեն նույնն ասել իրենց մասին: Թագի շնորհին ձգտող փառամոլներ ինչքան ուզեք կան. Թագավորներն իմ կամ յերկու-յերեք ինձ նման մտածող ուրիշների բացակայությունը հազիվ թե նշմարեն պալատականների այդ բազմության մեջ:

Այստեղ յես միջամտեցի խոսակցության.

— Ըստ յերևույթին, Ռաֆայել, դու վոչ յերջանկություն և վոչ ել մեծ ազդեցություն ես ձգտում, և յես իմ կողմից դրա համար քեզ հանդեպ պակաս հիացմունք ու հարգանք չունեմ, քան կունենայի, յեթե դու մի պետության գլուխը կանգնած լինեյիր: Բայց և այնպես, ինձ թվում է, թե այդպիսի մի ազնիվ ու խորհող մտքի համար, ինչպիսին քոնն է, միանգամայն վայել է իր ամբողջ տաղանդը նվիրել հասարակական գործերի ղեկավարմանը, թեկուզ դրա համար մինչև իսկ քո անձնական բարեկեցությունը նկատի չունենաս: Դրա լավագույն միջոցը, անվիճելիորեն վորևէ թագավորի խորհրդական լինելն է. և յես համոզված եմ, վոր քո ձայնը կհնչի միայն արդարության և ճըշ-

մարտության ծանուցելու համար. Դու գիտես, վոր իշխանն այն աղբյուրն է, վորից հեղեղի նման դեպի ժողովուրդն է հոսում և՛ բարին և՛ չարը: Դու այնքան գիտելիքներ և տաղանդ ունես, վոր յեթե քեզ պակասի պետական գործերը վարելու փորձը, այնուամենայնիվ դու ադեն թագավորի հիանալի մինիստրը կլինես:

— Դու կրկնակի սխալմունքի մեջ ես ընկնում, Թանկագին Մոր,— պատասխանեց Ռաֆայելը,— դու սխալվում ես ինչպես գործի դրության, այնպես ել իմ անձի գնահատության մեջ: Յես շատ հեռու յեմ այն ընդունակություններն ունենալուց, վոր վերագրում ես ինձ: Սակայն ընդունենք մի րոպե, թե յես այդպիսիք հարյուրապատիկ չափով ավելի ունեմ, բայց և այնպես իմ հանգստության զոհաբերումը հասարակության վոչ մի ոգուտ չեր բերի: Նախ՝ թագավորներն ամենից ավելի իրենց սրտի մոտ են ընդունում պատերազմը (և հենց ռազմական արվեստը մի գիտություն է, վոր յես չեմ իմանում և յերբեք չեմ ել ուզում սովորել), մինչդեռ խաղաղության բարերար արվեստը նրանք արհամարհում են: Յեթե հարցը վերաբերում է իրենց սահմանների ընդարձակմանը, ապա ամեն միջոց արդար է համարվում. վո՛չ հոգևոր և վո՛չ ել աշխարհիկ իշխանությունը, վո՛չ վոճրագործությունը և վո՛չ ել արյունը չի սասանում նրանց վորոշումը: Նրանց շատ ավելի քիչ

է մտահոգում իրենց յենթակա պետությունների լավ կառավարելու հարցը: Իսկ ինչ վերաբերում է թագավորների խորհրդականներին, նրանց բնութագիրը մոտավորապես հետևյալն է.— վոմանք լռում են և դրա համար հիմք ունեն. հարկավոր է, վոր հենց իրենց խորհուրդներ տվեն. ուրիշներն ընդունակ են և հասկանում են այդ. այս վերջինները մշտապես հարում են այն մարդու կարծիքին, վորն ամենից ավելի շնորհ է վայելում թագավորի մոտ. Նրանք վոգևորությամբ ծափահարում են այդպիսի մարդու մինչև իսկ ամենաանհեթեթ դատողությունները: Այդ արհամարհելի հացկատակները միայն մի միակ նպատակ գիտեն— ստոր և հանցավոր շողոքորթությամբ ձեռք բերել թագավորի կողմից նպաստավորվածի հովանավորությունը: Մնացյալներն իրենց ինքնասիրության ստրուկներ են. նրանք ականջ են դնում միայն իրենց սեփական կարծիքին: Դա զարմանալի չէ. բնությունն ամեն մեկին հարկադրում է իր մտքի արգասիքը գեղեցիկ համարել. այսպես է փաղաքշում ագռավն իր ճտերին, կապիկն՝ իր ձագերին: Ի՞նչ է կատարվում սակայն այդ մինիստրությունների ներսում, վորտեղ իշխում է նախանձը, անփութությունն ու ինքնախնդրությունը: Փորձո՞ւմ է արդյոք մեկը մի բանական կարծիք հայտնել՝ հենվելով ուրիշ յերկրների պատմության կամ սովորույթների վրա: Նման դեպքում բոլոր մնացյալնե-

րը կվրդովվեյին, նրանց ինքնասիրությունը վիրավորված կզգար իրեն ճիշտ այնպես, յեթե դատավճիռ արձակեյին իրենց իմաստության վրա և վորպես պակասամիտների անվանարկեյին իրենց: Նրանք այնքան են պրպտում, մինչև մի հակասություն գտնեն և, յեթե իրենց հիշողությունը կամ դատողությունը սխալ ճանապարհի բերի, այն ժամանակ ապաստանում են ռամկական այն ասացվածքին, թե «մեր հայրերը մտածում և գործում եյին այսպես. տա՛ Աստված, վոր մենք մեր իմաստուն հայրերից յետ չմնանք»: Յեվ ապա նստում են ու այնպես փքվում, կարծես թե պատգամ են ծանուցում: Նրանց կարծիքով հասարակության անկումն անխուսափելի կլինի, յեթե գտնվի մեկը, վորն ավելի խելացի կլինի, քան իր նախնիքները: Թեև լավ հաստատությունների հանդեպ, վոր մենք ժառանգել ենք մեր նախահայրերից, բավական անտարբեր ենք, սակայն, չնայած դրան, հենց վոր մի նպատակահարմար նորություն հայտնվի, պինդ կառչում ենք հնին, վորպեսզի առաջադիմությունն արգելակենք: Գրեթե ամեն տեղ յես հանդիպել եմ այդպիսի ինքնահավան, անհամ և մեծամիտ պետական պաշտոնյաների: Մի անգամ յես հանդիպեցի Անգլիայում..

— Ներողություն,— ընդհատեցի յես Ռաֆայելին,— ուրեմն դու Անգլիայո՞ւմ էլ ես յեղել:

— Այո՛, ընդամենը մի քանի ամիս։ Դա, արևմտյան Անգլիայի և Թագավորի միջև տեղի ունեցող քաղաքացիական պատերազմից մի քիչ հետո յեր, մի պատերազմ, վորը վերջացավ ապստամբների սարսափելի ջարդով [13]։ Այդ ժամանակ շատ պատվարժան Յոան Մորտոնը, Քենտերբերիի կարդինալ—արքեպիսկոպոսը և Անգլիայի կանցլերը, ինձ մեծ հովանավորություն ցույց տվեց։ Նա— յես դիմում եմ միայն քեզ, սիրելի Պետր, քանի վոր Մորը նման դասերի կարիք չունի,—մի մարդ եր, վորին իր նկարագրի և բարեմասնությունների համար ավելի պետք ե գնահատել, քան իր բարձր դիրքի պատճառով։ Նրա միջին հասակը չեր կռացել տարիքի ծանրության տակ։ Նրա դեմքը, առանց խիստ լինելու, հարգանք եր հարկա-

13) Ակնարկում ե «Կարմիր և Սպիտակ վարդերի» (Алая и Белая Роза) պատերազմը. կարմիր և սպիտակ վարդն անգլիական թագավորական տան յերկու ճյուղերի (Լանկաստերի և Յորկի) պետնիշներն եյին. սկսած 1452 թվից մինչև 1485 թվականը թագավորական այս յերկու տները միմյանց դեմ կատաղի և անխնա պատերազմ մղեցին։ Յորկի տան կողմն եյին գերազանցապես հարավ-արևելյան առևտրական պրովինցիաները. Լանկաստերները ներկայացնում եյին հյուսիս-արևմտյան կոմսությունները։ Դինաստիական այս պատերազմը թուլացրեց հին ազնվականու-

դրում։ Ուրիշների հանդեպ նա իրեն պահում եր անսեթևեթ, լուրջ և խոհեմ։ Նա սիրում եր իր խնդրարկուներին յերբեմն խիստ խոսքերով հարցաքննել, վորոնք սակայն յերբեք վիրավորական չեյին։ Ընդհակառակը նա հիանում եր՝ հայտաբերելով նրանց մեջ մտքի առկայություն և աշխուժ դատողություններ, վորքան վերջինները հանդգնության չեյին փոխվում։ Այդ յեղանակով նա փորձում եր գտնել արժանիքների մեծությունն ու փոքրությունը և այդպիսիք արժեքավորել ըստ իրենց առանձնահատկության։ Նրա լեզուն պարզ եր և աշխույժ, նրա իրավական գիտելիքները՝ խոր, վճիռը՝ գիտուն, հիշողությունը՝ հրաշալի։ Բնական այդ փայլուն ձիրքերը նա վարժություններով և ուսումնասիրություններով ավելի եր զարգացրել։ Նրա կարծիքը թագավորի

թյան նշանակությունը և վերջին հաշվով ուժեղացրեց թագավորի իշխանությունը (հողի մոտ $^{4}/_{5}$-ը ազնվականներից անցավ թագավորին), վոր իր համար նոր ազնվականություն ստեղծեց. վերջինս անշուշտ չուներ նախկին ֆեոդալ բարոնների ուժը։ 1485 թ. Ռիչարդ III-ի սպանությունից հետո, Լանկաստերների դինաստիայից Հայնրիխը (VII) գահ բարձրացավ և ամուսնացավ Յորկի դինաստիայից Եդուարդ IV-ի աղջկա՝ Ելիզաբեթի հետ։ Սպիտակ և կարմիր վարդի պատերազմը վերջացավ և Հայնրիխ VII իր պետնիշին միացրեց նաև սպիտակ վարդը։

մոտ մեծ կշիռ ուներ. վերջինս նրա մեջ տեսնում եր պետության ամենաամուր հենարաններից մեկին: Շատ յերիտասարդ տարիքում, դպրոցական նստարանից ուղղակի պալատ գալով, իր ամբողջ կյանքն անցկացնելով ամենակարևոր դեպքերի մեջ և ճակատագրի փոթորկոտ ծովում մշտապես տարուբերվելով, նա, միշտ նոր առաջ յեկող դժվարությունների պայմաններում, յուրացրել եր մի արտասովոր թափանցող հայացք և իրեն ժամանակակից դարաշրջանի խոր ծանոթություն, վորն, այսպես ասած, նույնացրել եր իր անձի հետ:

Մի անգամ յես այդ յեկեղեցականի մոտ ճաշի եյի: Դեպքը բերեց, վոր յես այնտեղ հանդիպեցի մի աշխարհականի, վորը սակայն մեծ օրենսգետի համբավ եր վայելում: Այդ մարդը, չեմ իմանում ինչ նպատակով, սկսեց գողերի հանդեպ կիրառվող խիստ արդարադատությունը մեծ գովասանքներով գովատել: Նա մեծ գոհունակությամբ պատմում եր, թե ինչպես գողերին այս կամ այն տեղ քսանով կապում են մեկ և միևնույն կախաղանին: «Բայց և այնպես,— ավելացրեց նա,— ինչպիսի վրդովեցուցիչ յերևույթ. այդ բոլոր սրիկաներից հազիվ յերկու կամ յերեքն են պրծնում պարանից, սակայն Անգլիան բոլոր կողմերից միշտ նորերն ե մատակարարում»:

Կարդինալի տանն ինձ ազատ զգալով, յես առարկեցի.—

— «Դրանում վոչինչ չկա, վորի վրա դուք զարմանաք: Այդ տեսակետից մահապատիժը նույնքան անարդար, վորքան անօգուտ պատիժ ե: Նա շատ դաժան ե գողությունը պատժելու, իսկ շատ թույլ՝ այն արգելելու համար: Սովորական գողության համար արդար չե կախաղանը, ամենասարսափելի պատիժն իսկ չի կարող գողություն անելուց ահաբեկել նրան, վորին միայն այդ միջոցն ե մնում քաղցից չմեռնելու համար: Այս հարցում Անգլիայի և մի քանի ուրիշ յերկրների արդարադատությունը նման ե այն վատ ուսուցչին, վորն իր աշակերտին ավելի հաճույքով ծեծում ե, քան՝ սովորեցնում: Գողերին յենթարկում են ամենասարսափելի տանջանքների: Ավելի լավ չե՞ր լինի հասարակության բոլոր անդամներին ապահովել գոյության միջոցներով, վորպեսզի վոչ վոք իրեն անհրաժեշտության մեջ դրված չզգա՝ նախ գողություն անել և ապա կյանքից զրկվել»:

— «Այդ մասին հասարակությունը հոգացել ե,—առարկեց օրենսգետը,—արդյունագործությունն ու հողագործությունը ժողովրդին ընձեռնում են գոյության շատ միջոցներ, սակայն արարածներ կան, վորոնք վոճրագործությունը գերադասում են աշխատանքից»:

— «Հենց այդ ել յես ուզում եյի լսել,— ասացի յես:— Յես չեմ ուզում խոսել նրանց

մասին,— թեև դրա համար հիմքեր ունեմ— վորոնք վերքերով ծածկված տուն են վերադառնում ներքին և արտաքին պատերազմներից: Վորքա՞ն գինվորներ Կորնուելսի[14] ճակատամարտում և կամ Ֆրանսիայի դեմ արշավանքների ժամանակ չեն կորցրել մարմնի մեկ կամ մի քանի անդամները՝ կռվելով թագավորի և հայրենիքի համար: Այդ դժբախտները շատ եյին տկարացել իրենց հին արհեստը շարունակելու և շատ ծերացել՝ մի նորը սովորելու համար: Բայց թողնենք այդ հարցը, մենք միշտ պատերազմի ժամանակներ չենք ապրում: Մեր հայացքը դարձնենք այն յերևույթի վրա, վոր ամեն որ կատարվում ե մեր շուրջը:

«Հասարակական թշվառության ամենագլխավոր պատճառը «ազնիվ մարդկանց» անչափելի թիվն ե, վորոնք պորտաբույծ ճիաճանճերի նման կերակրվում են իրենց մերձավորների քրտինքով ու աշխատանքով, իրենց հողերը մշակել են տալիս նրանց ու յեկամուտներն ավելացնելու համար ծծում են արենդատորների մինչև անգամ արյունը. նրանք մի այլ տնտեսություն չեն ճանաչում: Սակայն, յեթե հարցը վերաբերի իրենց համար հաճույքներ ստեղծելուն, նրանք խե-

[14]) 1497 թ. Կորնուելսի (Cornwalls) բնակիչներն ապստամբեցին Հայնրիխ VII-ի դեմ և արշավեցին Լոնդոնի վրա, սակայն պարտվեցին:

լացնորության աստիճան վատնող են, յեթե մինչև իսկ այդ պատճառով մուրացիկի ցուպը վերցնելու վիճակին հասնեն: Ավելի նվազ վողբալի չե այն հանգամանքը, վոր նրանք իրենց յետևից քարշ են տալիս պորտաբույծ սպասավորների ամբողջ բազմություններ, վորոնք վոչինչ չեն սովորել, վոր կարողանային ապահովել իրենց գոյությունը:

«Յերբ այս սպասավորների կողմից մեկը հիվանդանում ե և կամ իրենց տերը մեռնում ե, այդ ժամանակ նրանց արձակում են, վորովհետև գերադասում են կերակրել պորտաբույծների, քան թե՝ հիվանդների. հաճախ ել մեռնողի ժառանգն ի վիճակի չի լինում իր ժառանգած բոլոր սպասավորները պահելու:

«Յեվ այդ մարդիկը, յեթե սրտոտ չեն գողություն անելու համար, սովամահության են մատնվում: Արդարև, ի՞նչ ե մնում նրանց անել. մինչև մի նոր ապաստան վորոնեն, նրանց և՛ առողջությունը, և՛ հագուստները կմաշվեն, և յերբ հիվանդությունը նրանց թառամեցնի ու ժամանակը՝ ցնցոտիների մեջ պարուրի, այն ժամանակ մարդ կսարսափի նրանց ծառայություն ընդունելու մտքից իսկ: Մինչև իսկ գյուղացիները չեն անի այդ. նրանք շատ լավ գիտեն, մի մարդ, վոր յերիտասարդ տարիքից ապրել ե ծուլության և հաճույքների մեջ, վոր միայն սուր ու վահան ե կրել, հպարտ աչքով բարձրից ե նայել հա-

ըւանին և վարժվել է արհամարհել ամբողջ աշխարհը— մի այդպիսի մարդ շատ քիչ է ընդունակ բահ ու բրիչ բանեցնել և համեստ վարձով ու չնչին սնունդով հավատարիմ ոգնական լինել հողագործին»:

— «Մարդկանց հենց այդ դասակարգն է,— առարկեց իմ ընդդիմախոսը,— վորին ամենամեծ հոգատարությամբ պետք է պահպանի ու բազմացնի պետությունը: Այդպիսիների մեջ կարելի յե ավելի արիություն և մտավոր ճարպկություն գտնել, քան արհեստավորների և հողագործների մեջ: Նրանք ավելի բարձրահասակ են և ուժեղ ու բանակում՝ ճակատամարտի ժամանակ, հենց ամենից շատ նրանցից կարելի յե բան սպասել»:

— «Ուրիշ խոսքով,— պատասխանեցի յես,— զենքի փառքն ու հաջողությունն ապահովելու համար պետք է շատացնել գողերին, վորովհետև վերջինների համար այդ դատարկապորտները մի անսպառ դպրոց են հանդիսանում: Յեթե գործի վրա նայենք ճշմարիտ լույսով, այն դեպքում գողերը միշտ ամենավատ զինվորները չեն և զինվորները՝ միշտ ամենայերկչոտ գողերը. այս յերկու պրոֆեսիաների մեջ քիչ նմանություններ չկան: Դժբախտաբար միայն Անգլիան չէ, վոր տառապում է հասարակական այս վերքով, դա հատուկ է գրեթե բոլոր ազգերին:

«Դեռ մի ավելի ևս վտանգավոր համա-

ճարակ կրծում է Ֆրանսիայի ներքին կյանքը: Այնտեղ հողի ամեն մի վոտնաչափը ծածկված է զորքով, վորին պետությունը բաժանել է գնդերի և վարձատրում է: Յեվ այս տեղի յե ունենում խաղաղ ժամանակներին, ընդմիջումներին, յեթե կարելի յե այսպես անվանել, վորի ընթացքում պատերազմը հազիվ չունչ է առնում: Այս տխուր սխալմն արդարացնում են նույն հիմքերով, վորոնց համաձայն ձեզ անհրաժեշտ է թվում անգործունյա սպասավորների բազմություններ պահել: Յերկչոտ և մութ վորոշ քաղաքագետներ այն կարծիքին են, թե պետության ապահովությունը պահանջում է բազմամարդ, ուժեղ ու մշտապես զենքի տակ պահվող վետերաններից կազմված մի բանակ: Նրանք նորակոչներին չեն վստահում: Կարելի յե կարծել, վոր նրանք պատերազմը հենց միայն նրա համար են հրահրում, վորպեսզի զինվորներին վարժության առիթ տան է, ինչպես Սալլյուստն[15]) է ասում, մարդկային մեծ սպանդի միջոցով արդելեն մարդու սրտի ու ձեռքի թմրումը:

«Ֆրանսիան ի վնաս իրեն սովորում է այդ տեսակ մսակեր կենդանիներ կերակրելու վտանգը: Նա պետք է աչքն ածեր միայն հռո-

---

15) Սալլյուստ (86—35 մ. թ. ա.)— հռոմեացի նշանավոր պատմաբան. ծագում էր պլեբեյական ընտանիքից:

մեացիների, կարթագենացիների և հին դարի մի շարք այլ ժողովուրդների վրա: Ի՞նչ են շահել նրանք հարվածելու միշտ պատրաստ ու հսկա այդ բանակներից. իրենց յերկրների ամայացումը, քաղաքների կործանումը, իրենց պետության անկումը: Այո՛, յեթե Ֆրանսիացիներին օգներ գոնե այն հանգամանքը, վոր նրանք իրենց զինվորներին հենց իբրև ծծկեր զինավարժեյին. բայց Ֆրանսիացի վետերանները Անգլիայի նորակոչիկների հետ գործ ունեյին, և չգիտեմ, թե արդյոք նրանք կարո՞ղ են պարծենալ, թե հաղթանակը հաճախ տարել են: Սակայն այս հարցի մասին յես ուզում եմ լռել, այլապես կթվա, թե փորձում եմ փաղաքշել իմ ունկնդիրներին:

«Վերադառնանք քո ռազմահմուտ սպասավորներին: Նրանք, ասում եյիր դու, ավելի անվեհեր ու խելացի յեն, քան արհեստավորներն ու գյուղացիները: Ինչ սակայն ինձ է վերաբերում, չեմ կարծում, վոր մի սպասավոր կարողանա շատերին վախ ազդել, բացառելով անշուշտ նրանց, վորոնց մարմնական տկարությունը ջլատել է մտքի ուժը և վորոնց յեռանդը թշվառության պատճառով վոչնչացել է: Սպասավորներն, ասում եյիր դու այնուհետև, ավելի բարձրահասակ են և ուժեղ: Բայց ցավալի յե տեսնել, թե ինչպես ուժեղ և գեղեցիկ մարդիկ (վորովհետև ազնվական մարդիկ իրենց փչացած բարքերի զոհերին խնամքով են

ընտրում) անգործունեյության մեջ մաշվում են և կանացի զբաղմունքներով մեղկանում. մինչդեռ կարելի յեր նրանց աշխատասեր և օգտակար դարձնել, յեթե միայն նրանց մի ազնիվ արհեստի տային ու իրենց ձեռքերի աշխատանքով ապրել վարժեցնեյին:

«Վոր կողմից էլ այդ հարցը դիտես, պարապ մարդկանց այդ անհամար բազմությունն իմ կարծիքով յերկրի համար անօգուտ է մինչև իսկ մի պատերազմի դեպքում, վորից ի միջի այլոց միշտ կարելի յե խուսափել: Խաղաղության ժամանակ այդ բազմությունը շարունակ մի ճշմարիտ չարիք է, և խաղաղությունն էլ արժանի յե, վոր իրենով նույնքան զբաղվեն, վորքան պատերազմով:

«Սակայն տերերը և սպասավորների դասը գողությունների միակ պատճառը չեն, վորից դուք տառապում եք. մի ուրիշ պատճառ էլ կա, վորը հատուկ է բացառապես ձեր կղզուն»:

— «Վո՞րն է այդ»,—հարցրեց Կարդինալը:

— «Վոչխարների անթիվ հոտերը, վորոնք այժմ ծածկում են ամբողջ Անգլիան: Ուրիշ ամեն տեղ հեզ և քչով բավականացող այդ կենդանիները ձեզ մոտ այնքան անկուշտ ու սարսափելի յեն, վոր մինչև իսկ մարդկանց վրա յեն հարձակվում ու հալածում են նրանց դաշտերից, տներից ու գյուղերից: Յեվ արդարև, կայսրության այն բոլոր վայրերում, վորտեղ կարելի յե հավաքել ամենանուրբ և ամենա-

թանկագին բուրդը, շտապում են ազնիվ մարդիկ, հարուստները և մինչև իսկ պատվարժան կրոնավորները, վորպեսզի այդ հողամասը խլեն: Ռենտաները, առանձնաշնորհումները, իրենց հողերի յեկամուտներն այդ խեղճ մարդկանց չեն բավարարում. այդ մարդիկ գոհ չեն նրանով, վոր անգործունեյության և հաճույքների մեջ են ապրում, բեռ են հասարակության և անօգուտ՝ պետության: Շրջապատի հազարավոր մղոն տարածության հողը նրանք զրկում են մշակումից և վերածում են արոտատեղիների, տներ և գյուղեր հողին են հավասարեցնում՝ խնայելով միայն յեկեղեցիները, այն էլ իբրև գոմ՝ իրենց վոչխարների համար: Ամենախիտ բնակված և ամենալավ մշակված վայրերը նրանք ամայի յեն դարձնում: Անկասկած, նրանք վախենում են, վոր պարտեզներ և անտառներ շատ կլինեն և այդպիսով գազաններն առանց արոտավայրի կմնան:

Յեվ այսպես, մի անկուշտ ընչասեր հազարավոր հեկտար հողամասեր շրջափակում է ցանկապատով. ազնիվ հողագործներ դուրս են շպրտվում իրենց տներից, մեկը խաբեբայությունով, ուրիշները՝ զոռով, ամենաբախտավորները՝ ճնշումների և կեղեքումների մի յերկար շարքով, վորով ի վերջո նրանք հարկադրվում են ծախել իրենց սեփականությունը: Յեվ ապա այս ընտանիքները, վորոնք իրենց ոնչերի քանակով են ավելի հարուստ, քան միջոցներով (վորովհետև հողագործությունը շատ ձեռքեր է պահանջում), քշում են դաշտերով ու ճանապարհներով. տղամարդիկ և կանայք, այրիներ և վորբեր, հայրեր և մայրեր՝ ծծկեր յերեխաներով: Դժբախտները լացով են թողնում այն ծածկը, վորի տակ ծնվել են, այն հողը, վորը կերակրել է նրանց և չեն իմանում, թե վորտեղ մի ապաստան վորոնեն: Չնչին գնով նրանք ծախում են իրենց կահկարասիները, վոր կարողացել են միասին վերցնել, բոլոր իրերը, վոր թեև ինքնին մեծ արժեք չունեն, բայց այլ հանգամանքներում կարող էր վորոշ գումար տալ: Յեվ յերբ այդ թույլ աղբյուրն սպառվում է, ի՞նչ է մնում նրանց անել. գողություն և ապա օրենքի ձևականությամբ կախաղան բարձրանալ: Կարող է պատահել, վոր այդ խեղճերը գերադասեն իրենց թշվառությունը քարշ տալ վորպես մուրացիկներ: Սակայն այդ դեպքում նրանց, վորպես թափառաշրջիկների և առանց բնակավայրի մարդկանց, բանտ կնետեն: Սակայն ի՞նչն է նրանց վոճրագործությունը. ուրիշ վոչ մի բան, քան այն, վոր չեն կարող գտնել մեկին, վորն իրենց աշխատանք տա, չնայած ամենայեռանդուն կերպով վորոնում են այն:[16]) *Յեվ ո՞վ էլ կարող է նրանց*

[16]) *Այս պարբերությունը Մարքսը մեջ է բերել «Կապիտալ»-ի մեջ (հմմտ. «Կապիտալ»-ի I հատ. հայերեն թարգմանության 707—708 եջերը (ծանոթություն):*

աշխատանք տալ․ Նրանք ծանոթ են միայն հողագործությանը, իսկ այնտեղ, վորտեղ այլևս վոչ ցանքի և վոչ ել հունձքի մասին են մտածում, ուրեմն և նրանց անելու վոչինչ չկա։ Մի միակ հովիվ բավական ե այժմ, վոր հոտն արածացնի մի տարածության վրա, վորի մշակումն առաջ պահանջում եր հարյուրավոր ձեռքեր։

Այս վատ սիստեմի մի ուրիշ հետևանքն ե՝ ամենուրեք կենսամթերքների շատ բարձր գները[17])։

Բայց սա բոլորը չե։ Արոտավայրերի ընդարձակումից հետո, անասունների մի սարսափելի համաճարակ կոտորեց վոչխարների մի անչափելի քանակ։ Թվում ե, թե յերկինքն ուզեցել ե այս սարսափելի ժանտախտով պատժել հափշտակիչների ընչաքաղցությունը, վոր սակայն ավելի արդար կլիներ յեթե ուղղված լիներ հենց հափշտակիչների դեմ։ Բրդի գինն այնքան ե բարձրացել, վոր չքավոր ջուլհակներն այժմ այլևս գնել չեն կարող։ Յեվ ահա կրկին գործազուրկ մարդկանց մի բազմու-

17) Ակնարկում ե գների բարձրացումը, վոր տեղի ունեցավ 16-րդ դարում՝ ազնիվ մետաղների գների անկման կապակցությամբ և վորի հետևանքով գյուղատնտեսական մթերքների գները 2½—3 անգամ բարձրացան։

թյուն։ Չի կարելի ժխտել, վոր վոչխարների թիվն որական խոշոր համեմատությամբ աճում ե, գինը սակայն վոչնչով չի իջել այն պատճառով, վորովհետև բրդի առևտուրը, թեև պաշտոնապես մենաշնորհ չե, փաստորեն սակայն գտնվում ե բացառապես մի քանի հարուստ մթերողների ձեռքին, վորոնք կարող են սպասել և միայն մեծ ոգուտներով վաճառել։

Անասունների մյուս տեսակների գներն այդ և դեռ ավելի ծանրակշիռ պատճառով նույնպես բարձրացել են։ Այդ անասունների բազմացումը՝ ֆերմաների փոքրացման և հողագործության ավերման հետևանքով, անտես ե արված։ Տերերը խոշոր անասուններին՝ այնքան հոգ չեն տանում, վորքան վոչխարներին։ Նրանք հեռավոր վայրերում համարյա ձրի գնում են նիհար անասուններ և իրենց արոտներում գիրացնելուց հետո, բարձր գնով ծախում են։ Յես վախենում եմ, վոր Անգլիան այս վողբալի չարաշահությունների բոլոր հետևանքները դեռ չի զգացել։ Մինչև այժմ այդ անասնաբույծները միայն այն վայրերում են թանկություն առաջացրել, վորտեղ նրանք վաճառում են։ Սակայն շնորհիվ այն հանգամանքի, վոր նրանք անասուններն իրենց գնած վայրից հեռացնում են, առանց ժամանակ տալու բազմանալու, նրանց թիվը հետզհետե կպակասի և յերկիրն ի վերջո ամենադառը կարիքի մեջ կընկնի։ Այսպես՝ մի բուռը մարդկանց պատճառով,

ա՛յն, վոր ձեր կղզու հարստությունն եր կազմելու, դառնում ե թշվառության աղբյուր:

Կենսամիջոցների թանգացումը յուրաքանչյուրին հարկադրում ե սահմանափակել իր ծախսերն ու սպասավորների թիվը: Իսկ ի՛նչ են անելու արձակվածները. նրանք պետք ե կամ մուրացկանություն, և կամ, յեթե դրա համար քաջություն ունեն, գողություն անեն:

Թշվառության այս պատճառներին դեռ միանում ե շռայլությունն իր խելացնոր ծախսերով: Սպասավորներ, գործավորներ, գյուղացիներ, հասարակության բոլոր խավերը, թե՛ հագուստի և թե՛ ուտելիքի նկատմամբ ցուցաբերում են չլսված շռայլություն: Կարիք կա՞ արդյոք խոսել նաև անբարոյականության վայրերի, հարբեցողության և պոռնկության վորջերի, խաղատների, թղթախաղի ու մնացյալ բոլոր խաղերի մասին, վորոնք կլանում են իրենց յերկրպագուների փողը և սրանք՝ վնասները դարմանելու համար, ուղղակի գողության են դիմում:

Բուժեցեք ձեր կղզին հասարակական այդ ժանտախտից, պոկեցեք վոճրագործության ու թշվառության այդ արմատները. ստիպեցեք ձեր ազնիվ ավերողներին վերաշինել ֆերմաներն ու գյուղերը, վոր քանդել են իրենք և կամ հողը գոնե հանձնեցեք նրանց, ովքեր կցանկանան ավերակները վերաշինել: Սանձահարեցեք հարուստների ընչասեր յեսականությունը,

վերցրեք նրանցից հարստություն դիզելու և մենաշնորհի իրավունքները: Հալածեցեք անգործունեյությունը. հողագործությանը տվեք գործելու լայն ասպարեզ. բրդի և արդյունագործության այլ ճյուղերի արհեստանոցներ բացեք, վորտեղ օգտակար զբաղմունք գտնեն մարդկանց այն մասսաները, վորոնց՝ թշվառությունը մինչև այժմ գողեր և թափառաշրջիկներ կամ, ինչ վոր դրեթե նույնն ե, սպասավորներ եր դարձնում:

Վորքան ժամանակ դուք հիշյալ չարիքների հոսանքը չեք թմբի, մի՛ պարծենաք ձեր արդարադատությունով, վորովհետև դա մի շոշափելի ու անմիտ սնապարծություն կլինի:

Միլիոնավոր յերեխաներ դուք հանձնում եք մի կեղծ ու անբարոյական դաստիարակության կործանարար ազդեցությանը: Այդ մատղաշ տունկերը, վորոնց մեջ կարող եր բարեմասնությունը ծաղկել, թառամում են ձեր աչքերի առաջ, և յերբ չափահաս դառնալով վոճիրներ են գործում, վոր մանկությունից ծլել են նրանց հոգիներում, դուք դժբախտներին մահապատժի եք յենթարկում: Դուք ստեղծել եք գողեր, վորպեսզի նրանց կախելու հաճույքը վայելեք»:

Մինչդեռ յես այսպես խոսում եյի, իմ հակառակորդը՝ իրավախորհրդատու, պատասխանի եր պատրաստվում: Նա բռնեց պաշտոնական ընդդիմախոսի այն հանդիսավոր ճանա-

պարհը, յերբ վոչ այնքան պատասխանում, վորքան կրկնում են և վորտեղ հաղթության ամբողջ պատիվը մնում է ամենից ավելի հիշողություն ունեցողին:

— «Դու շատ լավ խոսեցիր,— ասաց նա,— մանավանդ վոր քեզ, վորպես ոտարականի, այս նյութերը միայն լսելով կարող եյին ծանոթ լինել: Յես քեզ ավելի լավ բաների մասին տեղեկություններ կտամ: Իմ առարկությունների ընթացքը հետևյալ կերպ է լինելու. Նախ պետք է յես բոլորը, ինչ վոր դու ասացիր՝ կարճ կրկնեմ, ապա կհայտաբերեմ սխալները, վոր դու կատարեցիր ճշմարիտ իրադարձությունների ծանոթ չլինելու պատճառով, իսկ վերջում կապացուցեմ քո փաստարկումների վոչ միայն թույլ, այլև դատարկ լինելը: Յես սկսում եմ հենց նոր ցույց տված յեղանակով: Յեթե չեմ սխալվում, դու թվեցիր չորս...

— «Ներեցեք, վոր ձեր խոսքը կտրում եմ,— ընդհատեց նրան կարդինալը՝ վոչ շատ բարեկամական յեղանակով.— ներածականն ինձ յերկյուղ է ներշնչում, վոր քո ճառը մի փոքր յերկար կարող է լինել: Այսոր մենք կազատենք քեզ այդ հոգնությունից, սակայն դրանով չեմ ուզում ասել, վոր յես քեզ ազատում եմ քո ճառից. պահի՛ր այդ մեր հաջորդ հավաքման համար, վորտեղ դու քո հակառա-

կորդ կողմի հետ ներկա կլինես: Յես ցանկանում եմ, վոր վաղը դուք յերկսով կրկին այստեղ լինեք, յեթե դու կամ Ռաֆայելն այլ դիտավորություն չունեք: Իսկ դու, սիրելի Ռաֆայել, ինձ շատ կպարտավորեցնես, յեթե հաղորդես քո հիմքերը, թե ինչու գողությունը մահվան արժանի չե և թե ուրիշ ի՞նչ պատիժով դու կարծում ես, թե կարելի յե ավելի լավ յերաշխավորել հասարակական ապահովությունը: Այն հարցը, վոր գողությունը չի կարելի հանդուրժել, վստահ եմ, քո մեջ կասկածի յենթակա չե: Իսկ յեթե կախաղանն այլևս չգործի, ապա ել ի՞նչով ես ուզում դու սարսափեցնել վոճրագործներին, քանի վոր նրանք վստահ են, վոր չեն զրկվելու իրենց կյանքից: Մի ավելի մեղմ պատիժ է՛լ ավելի չի՞ քաջալերի և չի՞ խթանի վոճրագործությունը. ի՞նչպիսի բավարար ներգործոն ուժ կտայիր դու որենքին»:

— «Յես ապրում եմ այն խոր համոզումով, շատ պատվարժան հայր, վոր անարդարացի յե սպանել մի մարդու, վորովհետև նա փող գողացել. մարդկային կյանքն աշխարհում ամենից թանկագինն է. մարդկային հասարակությունը չի կարելի այնպես կազմակերպել, վոր ամեն մեկին հավասար ունեցվածք ապահովվի: Անկասկած ինձ կառարկեն, վոր հասարակությունը մահապատժի միջոցով արդարության և որենքի վրեժն է լուծում և վոչ

թե միայն լոկ փող գողանալը պատժում: Դրան ես կպատասխանեմ հետևյալ հիմնական մտքով «Summa jus summa injuria» (իրավունքի գերագույն աստիճանը անարդարության գերագույն աստիճանն է): Օրենսդրի կամքն անպայման անսխալական և անսահմանափակ չէ, վոր իր դեկրետների դեմ կատարված ամենափոքր խախտումի համար սուր քաշեն: Օրենքը յերբեք այնքան խիստ ու յերկաթյա չէ, վոր բոլոր ծանր ու թեթև վոճիրները նույն աչքով դիտի և սպանության ու գողության միջև ամենափոքր իսկ տարբերություն չընդունի: Յեթե արդարությունը մի դատարկ խոսք չէ, ապա այդ յերկու վոճիրների միջև անդունդ կա:

«Մի՞թե դա ուժեղ չի: Աստված արգելեց մարդասպանությունը, իսկ մենք ամենափոքր իսկ խղճահարություն չենք զգում և մի քանի դրամի գողության համար սպանում ենք:

Մեկը կամ մյուսը թերևս ասեն. այդ արգելքը վերաբերում է առհասարակ միայն մարդկանց, բայց վոչ թե կառավարության, վոր մահվան դատապարտելով վոճրագործին՝ իրագործում է հասարակության օրենքները: Բայց յեթե այդ այդպես է, ո՞վ է արգելում մարդկանց հնարել ուրիշ, աստծո կանոններին նույնպես հակասող օրենքներ ու գողությունը, ամուսնալուծությունն ու սուտ յերդումը թույլատրելի համարել: Ինչպես... Աստված մեզ

արգելել է վոչ միայն ուրիշներին, այլև մեզ մեր կյանքից զրկել. իսկ մենք կարող եյինք օրենք հրատարակել ու մի քանի իրավական ձևականություններից հետո, սկսել միմյանց կախել: Մեր այդ բարեհամբույր օրենքը դատավորներին ու դահիճներին ավելի բարձր կըդասեր, քան աստվածային արդարադատությունը, իրավունք տալով նրանց այդ սարսափելի օրենքներով մահվան դատապարտվածներին մի ուրիշ աշխարհ ուղարկել:

Դրանից միանգամայն պարզորեն կհետևեր, վոր աստվածային արդարադատության վրա պետք է մարդկային արդարադատությունը օրինականության ու լիազորության կնիք խփի և ամեն հնարավոր դեպքերում մարդիկ վճռեյին, թե յերբ պետք է հետևել աստծո պատվիրաններին և յերբ վոչ:

Մինչև իսկ Մովսեսի օրենքը, սարսափի ու վրեժխնդրության մի օրենք, վորը կազմըված է ստրուկների ու ապականված մարդկանց համար, սովորական գողությունը մահով չի պատժում: Մեզնից թող հեռու լինի մտածել, թե քրիստոնեյական պատվիրանները, սիրո և հեզության պատվիրանները, վորոնց միջոցով աստված վորպես հայր դիմում է, մեզ իրավունք են տալիս ե՛լ ավելի վոչ մարդկային լինել ու ամեն բոպե յեղբոր արյուն թափել:

Սրանք են ահա այն շարժառիթները, վորոնց հիման վրա ինձ անարդարացի յե թվում

գողի ու մարդասպանի նկատմամբ նույն պատժի կիրառումը: Մի քանի խոսք ևս և դու կհամոզվես, թե ինքնին վորքան անմիտ է պատժի այդ սիստեմն ու ինչքան վտանգավոր՝ հասարակական ապահովության համար:

Վոճրագործը տեսնում է, վոր ինքը վախենալու ավելի պատճառ չունի, յեթե գողություն անի, քան թե սպանի. և հասկանալի յե, վոր նա սպանում է այն մարդուն, վորին այլ պայմաններում միայն կկողոպտեր: Նա սպանում է նրան իր անձնական ապահովության համար: Այս յեղանակով, նա ազատվում է իր առաջին մեղադրողից և փորձում է, վորքան հնարավոր է, ծածկել իր վոճիրը: Ահա մի գեղեցիկ հետևանքն այդ անհաշտ արդարադատության. գողին կախաղանով սպառնալով, դուք նրան մարդասպան եք դարձնում: Իսկ այժմ յես անդրադառնում եմ քո հաճախ և աշխույժ կերպով հարուցած հարցի լուծմանը, վո՞րն է պատժի լավագույն սիստեմը:

Իմ կարծիքով ամենից լավն ավելի հեշտ է գտնել, քան՝ ամենավատը. դուք բոլորդ լավ գիտեք հռոմեացիների— պետական իրավունքի գիտության այդ ամենից առաջադեմ ժողովրդի — վորդեգրած պատժական սիստեմը: Մեծ վոճրագործներին նրանք դատապարտում եյին ցմահ ստրկության, հարկադիր աշխատանքների՝ ռազմական ճանապարհների վրա կամ հանքերում: Պատժի այս ձևը, իմ կարծի-

քով, արդարությունը միացնում է հասարակական ոգուտին: Սակայն այս առթիվ իմ կարծիքը քեզ անկեղծորեն ասելու համար, յես չեմ կարող լռել այն մասին, ինչ վոր տեսել եմ պոլիլերիտների՝ պարսիկներին յենթակա մի ժողովրդի մեջ:

Պոլիլերիտների յերկիրը բավական խիտ բնակչություն ունի. նրանց հիմնարկները կազմակերպված են մտածված կերպով: Բացի տարեկան տուրքից, վոր վճարում են Պարսկաստանի թագավորին, նրանք վայելում են լիակատար ազատություն և կառավարվում են սեփական որենքներով: Ծովից հեռու, լեռների մեջ փակված՝ նրանք բավականանում են իրենց պտղաբեր հողի արդյունքներով: Հազվադեպ են գնում արտասահման. շատ սակավ է պատահում, վոր նրանց մոտ ոտարականներ գան: Հավատարիմ իրենց նախահայրերի բարքերին, նրանք չեն ձգտում ընդարձակել իրենց սահմանները և արտաքին աշխարհից վախենալու վոչ մի հիմք չունեն: Իրենց լեռները և տուրքը, վորը նրանք ամեն տարի վճարում են միապետին, պաշտպանում են նրանց ամեն մի թշնամական հարձակումից: Նրանք անդորրության ու առատության մեջ են ապրում, առանց բանակի և ազնվականության, գրաված են միայն իրենց սեփական յերջանկությամբ և քիչ են մտահոգվում սին փառքով, քանի վոր, Ջերե-

իրենց հարևաններին չհաշված, նրանց անունն անծանոթ է մնացյալ աշխարհին:

Յերբ այս ժողովրդի մեջ մեկին գողություն անելիս բռնեն, նախ ստիպում են նրան գողոնը վերադարձնել տիրոջը, բայց վոչ թե իշխաններին, ինչպես ընդունված է ուրիշ տեղ: Պոլիլերիտներն այն կարծիքն ունեն, վոր գողությունը յերբեք չի վերացնում սեփականության իրավունքը: Յեթե գողացված իրը վնասված է կամ կորած, նրա արժեքը վերցնում են մեղավորի ունեցվածքից, մնացյալ ամեն ինչը սակայն թողնելով նրա կնոջն ու յերեխաներին: Իսկ իրեն՝ գողին, դատապարտում են հասարակական աշխատանքների և, յեթե գողությունը ծանր հետևանքներ չունի, դատապարտյալին վոչ բանտ են նետում և վոչ էլ շղթայում. նա աշխատում է ազատ մարմնով, առանց շղթաների:

Ծույլերի ու ըմբոստների դեմ իբրև հարկադիր միջոց մարմնական պատիժը գերադասում են շղթաներից: Նրանք, ովքեր իրենց պարտականությունները բարեխիղճ կերպով կատարում են, յերբեք կոպիտ վերաբերմունքի չեն յենթարկվում: Յերեկոները պահվածներին մեկ առ մեկ անուններով կանչում են ու փակում խցիկներում, ուր նրանք անց են կացնում գիշերը: Ի միջի այլոց, միակ պատիժը, վորը նրանք կրում են՝ անընդհատ աշխատանքն է: Նրանց տրվում է այն բոլորը, ինչ

անհրաժեշտ է ապրուստի համար և վորովհետև հասարակության համար են աշխատում, վերջինս էլ հոգում է նրանց մասին:

Վերջին հանգամանքը պայմանավորված է ըստ վայրի: Վորոշ գավառներում հանցագործներին են տալիս վողորմությունների ու հանգանակությունների արդյունքը: Այս ոժանդակ միջոցը, վոր վոչ վոքի համար պարտադիր չէ, բնակիչների բարեպաշտության շնորհիվ չափազանց լավ արդյունքներ է տալիս: Ուրիշ տեղեր էլ այդ նպատակի համար հատկացվում է պետական յեկամուտների մի մասը, և կամ սահմանվում է անհատական տուրք:

Մինչև իսկ գավառներ կան, վորտեղ դատապարտյալները կապված չեն հասարակական աշխատանքների: Ում գործավոր կամ որավարձվոր է հարկավոր, այդպիսին վարձում է մեկ որով ու այն էլ այնպիսի վարձով, վորը մի փոքր ավելի ցածր է, քան ազատ մարդուն վճարվող վարձքը: Որենքն իրավունք է տալիս տիրոջը՝ ծեծել ծույլերին: Այդ կերպով դատապարտյալները յերբեք առանց աշխատանքի չեն մնում. Նրանք վաստակում են իրենց ապրուստի ու հագուստի միջոցները և որական մի բան ավելացնում են պետական գանձին:

Նրանց կարելի յե հեշտությամբ ճանաչել իրենց զգեստների գույնից: Բոլորը միատեսակ զգեստ են հագնում, և այդ հատուկ է բացա-

ռապես նրանց։ Նրանց գլուխները սափրած չեն, բացի մի փոքր տեղից՝ ականջների վրա, վորոնցից մեկը թեթև կերպով կտրված է։ Նրանց բարեկամները կարող են խմելիք, ուտելիք ու ցանկացած գույնի շորեր տալ, սակայն դրամական նվերը մահապատժի հետևանք կունենա թե՛ տվողի և թե՛ ընդունողի համար։ Ազատ մարդն իրավունք չունի վոչ մի դեպքում փող վերցնել ստրուկից (այդպես են կոչում հանցագործներին). ստրուկը չի կարող ձեռք տալ զենքի. վերջին յերկու հանցանքները յենթակա յեն մահապատժի։

Ամեն գավառ իր ստրուկներին կնքում է հատուկ և տարբեր մի նշանով։ Այդ նշանը ջնջելը, ինչպես նաև սահմանից մի քայլ անցնելը և մի ուրիշ գավառի ստրուկների հետ խոսելը, համարվում է ամենածանր չարագործություն։ Փախչելու սոսկ դիտավորությունը պակաս վտանգավոր չէ, քան հենց փախուստը։ Այդպիսի դավադրության մասնակցող ստրուկը կյանքից կզրկվի, իսկ ազատ մարդը՝ ազատությունից։ Օրենքը մինչև իսկ վարձատրություն է նախատեսում հայտնողին, վորը փող է ստանում, յեթե ազատ մարդ է, իսկ ազատություն՝ յեթե ստրուկ է. ազատվում է պատժվելուց, յեթե մեղսակից է, վորպեսզի դրանով չարագործն ապահով զգա զղջալու, քան թե իր չար դիտավորության վրա համառելու։

Այս է ահա գողության համար պոլիլերիտների պատժական սիստեմը։ Առաջին հայացքով դրանում կգտնեք մեղմություն՝ միացած նշանակալից օգուտների հետ։ Յեթե օրենքը պատժում է, այդ կատարվում է միայն վոճրագործությունը սպանելու համար, բայց մարդկանց խնայում է։ Դատապարտյալի հետ այնքան մեղմ և նպատակահարմար ձևով են վարվում, վոր դա ստիպում է նրան ուղղվել և իր կյանքի մնացյալ մասով հատուցել իր պատճառած վնասները։

Չափազանց հազվադեպ է, վոր դատապարտվածներն իրենց նախկին սխալները կրկնեն։ Այս տեսակետից բնակիչներն ամենաչնչին յերկյուղ իսկ չեն զգում և յերբ նրանք վորևէ ճանապարհորդության են ձեռնարկում, իրենց առաջնորդ են ընտրում նման ստրուկներից, վորոնց և փոփոխում են գավառից-գավառ։ Արդարև ի՞նչից են վախենալու։ Ոչինչ ստրուկի միջից վերացնում է գողություն անելու հնարավորությունն ու մինչև իսկ միտքը։ Նա անզեն է, փողի մեջ տեսնում է միայն մի մեծ չարագործության նախազգուշացում. յեթե նա փող վերցնի, ապա մահն ապահով է, իսկ փախուստն՝ անկարելի։ Ի՞նչպես կարող է նա, վորի հագուստը բոլոր մյուսներից տարբերվում է, համարձակվել աննկատ փախչել։ Մնում է, վոր բոլորովին մերկ գնա, սակայն այդ դեպքում էլ կտրված ականջը կմատնի նրան։

Հենց նույն կերպ էլ ստրուկներին անհնար է պետության դեմ դավադրություն սարքել: Վորպեսզի նման մի ձեռնարկում հաջողություն ունենա, դավադրության պարագլուխները պետք է իրենց կողմն ունենան շատ գավառների ստրուկներ, սակայն դա յերբեք չի հաջողվի նրանց: Մարդիկ, վոր մահապատժից վախենալով վոչ միմյանց մոտ են գալիս և վոչ էլ իրար հետ խոսում, բարև տալիս, բարև առնում — այդպիսիների համար հեշտ չե դավադրություն սարքելը: Ավելին. մինչև իսկ հազիվ կարելի յե մտածել, վոր նրանք իրենց դիտավորությունը համարձակեն վստահել և հայտնել ընկերներին, վորոնք շատ լավ գիտեն լռության վտանգն ու մատնության խոշոր առավելությունները: Մյուս կողմից բոլոր ստրուկներն էլ հույս ունեն՝ հնազանդության և նվիրվածության միջոցով, ապագայի ավելի լավ վերաբերմունք ապահովել և մի օր կրկին ազատություն ձեռք բերել, վորովհետև չի անցնում տարի, վոր ստրուկների մի մեծ թիվ, վորը կատարելապես ուղղվել է, չազատվի ու չվերադառնա իր նախկին դրությանը:

Ինչո՞ւ — ավելացրի յես — չի կարելի պատժական նման սիստեմ կիրառել Անգլիայում: Այդ սիստեմը մեծապես գերադասելի յե այն արդարադատությունից, վորը այնքան շատ բոցավառում է իմ գիտնական հակառակորդի խանդավառությունը»:

— «Այդ տեսակ սիստեմ, — առարկեց հակառակորդս, — յերբեք չի կարելի մտցնել Անգլիայում, առանց կայսրության վերջնական քայքայման ու կործանման»:

Ապա նա շարժեց գլուխը, հավաքեց շրթունքներն ու լռեց:

Բոլոր ներկաները՝ հիացած այս փայլուն պատգամախոսությունից, աշխույժ կերպով ծափահարում եյին մինչև այն րոպեն, յերբ կարդինալը հայտնեց հետևյալ կարծիքը. —

— «Մենք մարգարե չենք, վոր փորձից առաջ իմանալ կարողանանք, թե պոլիլերիտների օրենսդրությունն Անգլիայի համար օգտակար կլինի, թե վոչ: Բայց համենայն դեպս ինձ թվում է, վոր թագավորը մահապատժի վճիռը հայտարարելուց հետո, կարող եր վորոշ ժամանակ սահմանել այս նոր սիստեմը փորձելու համար, վերացնելով միաժամանակ ապաստարան տալու մենաշնորհը[18]): Այն դեպքում, յեթե փորձը նպաստավոր արդյունք տա,

[18]) Ապաստան տալու մենաշնորհ և ապաստանի վայրեր համարվում եյին մասնավորապես միջին դարերում մի քանի տաճարներ, վորտեղ ապաստանողներն ազատվում եյին հետապնդումից: Ապաստանի մենաշնորհը համարվում եր սրբազան. նա իր նշանակությունն աստիճանաբար կորցրեց յեկեղեցու պառակտման ժամանակ և ընդհանրապես վերածնունդի դարաշրջանում՝ յեկեղեցու հեղինակության անկման հետ:

տակ կընդօրինակենք այդ սիստեմը. իսկ յեթե ոչ՝ դատապարտյալները կկրեն մահապատիժը: Գործողության այս յեղանակն արդարադատության վճռի իրագործումը միայն կհետաձգի, իսկ հետաձգման ժամանակամիջոցը վոչ մի վտանգավոր հետևանք չի ունենա: Յես մինչև իսկ ավելի առաջ կգնամ. յես շատ նպատակահարմար եմ գտնում, այդպիսի մեղմ և նույնքան խելացի ձեռնարկումներ կիրառել Թափառաշրջիկության վերացնելու համար: Այս հայրենի դժբախտությունից ազատվելու համար մենք օրենք օրենքի հետևից հնարեցինք, սակայն չարիքն այսօր ավելի յե ուժեղ, քան վորևէ ժամանակ»:

Հազիվ էր կարդինալը վերջին խոսքն արտասանել, յերբ Նորին Պայծառափայլության կողմից հավանություն գտած կարծիքները, վոր այդքան ժամանակ յես մենակ եյի պաշտպանում ու միայն արհամարհանք ու մերժում գտնում, ամեն կողմից ամենաչափազանցված ընդունելության արժանացան: Մասնավորապես մեծ գովասանքի արժանացան Թափառաշրջիկության մասին յեկեղեցական հոր հայացքները:

— «Յես չեմ իմանում, արդյոք լավ չե՞ր լինի խոսակցության մնացյալ մասի վրայով լռությամբ անցնել, վորովհետև բավական ծիծաղելի բաներ խոսվեցին. բայց և այնպես լավ կլինի, վոր դուք այդ էլ իմանաք. հիշատակ-

ված կարծիքները վատ չեյին, բացի այդ, դրանք իմ կողմից արծարծված խնդրի հետ էլ կապ ունեին»:

Սեղանի շուրջ գտնվում էր նաև մեկն այն ձրիակերներից, վորոնք իրենց հատուկ պատիվ և պրոֆեսիա յեն համարում կապիկի դեր խաղալը. ինչ կոնկրետ սրան է վերաբերում, նմանությունն այնքան կատարյալ էր, վոր հեշտությամբ նրան կարելի յեր դնել այն կենդանու տեղը, վորին նա փորձում էր ներկայացնել: Նրա կատակներն այնքան տխմար ու անհամ եյին, վոր ծիծաղն ավելի հաճախ իր անձին էր վերաբերում, քան արած սրամտություններին: Սակայն, չնայած դրան, յերբեմն նրա բերնից փախչում էր բոլորովին խելացի խոսք. նրա մասին կարելի յեր ասել ֆրանսիական հետևյալ առածը. «Ով տխմարության ամենաբարձր աստիճանին է հասնում, հաճախ գտնվում է սրամտության գագաթին»:

Հյուրերից մեկը մի դիտողություն արեց, թե յես ցանկանում եմ բարելավել գողերի, իսկ կարդինալը՝ Թափառաշրջիկների դրությունը. սակայն դժբախտների յերկու դասակարգ ես կան, վորոնց գոյությունը պետք է վոր հասարակությունն ապահովի, վորովհետև նրանք անկարող են սեփական աշխատանքով ապրուստ ձեռք բերել: Նա նկատի ուներ հիվանդներին ու ծերերին:

— «Թույլ տուր ինձ տեղավորել նրանց,— ասաց ծաղրածուն,— այդ մասին յես մի չափազանց խելոք ծրագիր ունեմ: Ճշմարիտ ասած, յես մեծ ցանկություն եմ զգում ազատել ինձ այդ թշվառների հայացքից և նրանց՝ բոլորի աչքից հեռու, մի վանքում արգելափակել: Նրանք ինձ հոգնեցնում են իրենց լացով, հառաչանքներով ու հեծեծանքներով, թեպետ ադի այդ յերաժշտությունը յերբեք չի կարողացել ինձնից մի գրոշ կորզել, վորովհետև ինձ հետ պատահում ե միշտ կամ մեկը և կամ մյուսը: Այսինքն, յերբ կարող եմ տալ, չեմ ուզում տալ, իսկ յեթե ուզում եմ տալ, այն ժամանակ ել տալու վոչինչ չեմ ունենում: Այդ պատճառով ել նրանք այժմ միանգամայն խելացի յեն վարվում. յերբ տեսնում են՝ գալիս եմ, ժամանակ չկորցնելու համար հանգիստ են թողնում ինձ: Նրանք գիտեն, վոր ինձնից այլևս վոչինչ չեն ստանա, ինչպես մի քահանայից: Դրա համար ել յես առաջարկում եմ. բոլոր ծեր և հիվանդ մուրացիկներին պետք ե բաժանել և դասակարգել հետևյալ կերպով. տղամարդիկ, իբրև աշխատավոր յեղբայրներ, կգնան Բենեդիկտյանների[19]) վանքերը, իսկ կանայք՝ կուսանոց: Այդ ե իմ կարծիքը»:

Կարդինալը ժպտաց այս մտքի վրա և,

---

19) Հռոմեական-կաթոլիկ յեկեղեցու ամենահին վանական ուխտը. հիմնվել ե 6-րդ դարում:

վորպես կատակի, հավանություն տվեց դրան, իսկ մնացյալ ներկաները այդ կարծիքն ընդունեցին իբրև լուրջ և ծանրակշիռ խոսք: Մանավորապես մի հոգևորական այդ կարծիքի վրա ամենավարդագույն տրամադրության մեջ ընկավ: Այդ պատվարժան յեղբայրը. մի պահ չքացնելով մռայլ դեմքի կնճիռները, նշանակալից չարամտությամբ զվարճանում եր: Ապա նա դարձավ մեր հացկատակին.

— «Բայց և այնպես մուրացիկների դասը դուք վոչնչացրած չեք լինի, մինչև վոր չմտածեք մեր՝ մուրացիկ վանականներիս գոյությունն ապահովելու մասին»:

— «Պարոն կարդինալը,— պատասխանեց նա,— դրա վրա ևս դարձրեց իր ամենամեծ ուշադրությունը, յերբ նա ասեց, թե թափառաշրջիկներին պետք ե արգելափակել ու աշխատանքի հարկադրել. իսկ մուրացիկ վանականները աշխարհի ամենաառաջին թափառաշրջիկներն են»:

Այս սուր հարձակման վրա, բոլորի հայացքներն ուղղվեցին կարդինալին. վերջինս սակայն վոչ մի անբավականություն չարտահայտեց, և ծաղրածուի խայթոցն ամկալից ծափահարության արժանացավ: Պատվարժան յեղբայրը սակայն կարծես քարացել եր. յերեսը տրված հեգնանքը հանկարծ բոցավառեց նրա զայրույթը. կրակ կտրած, նա վիրավորանքների մի տարափ տեղաց, քնքույշ միմոսին

խարերա անվանեց, զրպարտող, լիրբ սատանայի որդի և իր կշտամբանքի քարոզը համեմեց սուրբ գրքի ամենասարսափելի սպառնալիքներով:

Այդ ժամանակ մեր ծաղրածուն սկսեց ամբողջ լրջությամբ խեղկատակել և այդ նրան հեշտությամբ հաջողվեց:

— «Զոգևորվենք, շատ թանկագին յեղբայր: Գրված է. «Յերանի համբերողներին, վորովհետև նրանցն է յերկնքի արքայությունը»:

Աստվածաբանը չուշացրեց պատասխանը. նա բառացի ասաց.

— «Փչացա՛ծ, յես չեմ տաքանում, կամ առնվազն յես դրանում չեմ մեղանչում, վորովհետև սաղմոսասացն ասում է. «վոգևորվեցեք, բայց մի՛ մեղանչեք»:

Կարդինալը մեղմ տոնով սաստեց յեղբորը չափավորել իր հույզերը:

— «Վո՛չ, սրբազան,— ասաց նա,— վո՛չ, չեմ կարող, չպետք է լռեմ: Սա մի աստվածային յեռանդ է, վոր ինձ բոցավառում է, և մինչև իսկ սուրբ հայրերի մոտ էլ մենք հանդիպում ենք այս սրբազան ցասումի պոռթկումին: Դրա համար է գրված. «Քո տան յեռանդը լափում է ինձ»: Մի՞թե յեկեղեցում չեն յերգում. «Ճաղատ Յեղիսեյի վրա ծիծաղողները»... և այլն:

Միևնույն պատժին պիտի արժանանա այս ծաղրողը, անմիտը, այս անառակը»:

— «Անտարակույս,— ասաց կարդինալը,— քո դիտավորությունը շատ լավ է. սակայն ինձ թվում է, յեթե դու չես կարող սուրբ կերպով վերաբերվել, համենայն դեպս գոնե խելացի վերաբերմունք պետք է ունենայիր, թե վոր ուզում եյիր խուսափել մի հիմարի հետ ծիծաղելի վիճաբանություն սկսելուց»:

— «Արդարև, սրբազան հայր, յես չկարողացա իմ վերաբերմունքը ավելի խելացի կերպով արտահայտել: Սողոմոն իմաստունն ասել է՝ հիմարին պատասխանիր իր հիմարությամբ: Այժմ յես անում եմ այդ: Յես նրան ցույց եմ տալիս այն վիհը, վորի մեջ նա կգլորվի, յեթե չզգուշանա: Նրանք, ովքեր ծաղրում եյին Յեղիսեյին՝ թվով շատ եյին, բայց բոլորն էլ պատժվեցին՝ մի միակ մարդու ճաղատ գլուխը ծաղրած լինելու համար: Ի՜նչքան խոշոր կլինի մի մարդու պատիժը, վորը համարձակվում է հեգնել յեղբայրների մի մեծ բազմություն, վորի մեջ բազմաթիվ ճաղատ գլուխներ կան: Սակայն դողալու մի այլ հիմք ևս ունի նա. մենք պապի մի որենքն ունենք, վորի համաձայն մեզ վրա ծիծաղողները յեկեղեցու նզովքին կարժանանան»:

Կարդինալը միջադեպը նրանով հարթեց, վոր մի նշանով ծաղրածուին առաջարկեց հեռանալ ու խոսակցության այլ ուղղություն

տվեց: Ապա, իսկույն վեր կացավ սեղանից՝ խնդրարկուներին ընդունելու համար և հրաժեշտ տվեց հյուրերին:

— Սիրելի Մոր, այս բավական յերկար պատմությունով յես հոգնեցրի քեզ: Անշուշտ յես կամաչեյի այդքան յերկար ձգձգած լինելու համար, յեթե այդ կատարված չլիներ քո խնդրով: Այն ուշադրությունը, վորը դու հանդես բերիր բոլոր մանրամասնությունների հանդեպ՝ ինձ պարտավորեցրին ամենափոքր դեպքն իսկ բաց չթողնել: Յես կարող եյի ավելի կարճ պատմել, բայց ուզում եյի հյուրերի հոգին ու նկարագիրը քո առաջ ցուցադրել: Ինչքան ժամանակ, քանի դեռ յես իմ տեսակետները մենակ եյի զարգացնում, իմ խոսքերը հավանություն չեյին գտնում: Բայց հենց վոր կարդինալն ինձ հետ համաձայնեց՝ մերժումը փոխարինվեց ընդհանուր հավանությունով: Նրանց քծնող շողոքորթությունն այնքան հեռու գնաց, վոր մինչև իսկ հացկատակի տխմարությունները, վորոնց կարդինալը սոսկ իբր թեթևամիտ կատակի ժպտում եր, իմաստուն ու հրաշալի համարեցին:

— Այժմ ել դու նո՞րից այն կարծիքին ես, վոր իմ անձն ու խորհուրդները պալատականների մոտ մեծ կշիռ կգտնեն:

— Քո պատմությունը,— պատասխանեցի յես,— ինձ մեծ հաճույք պատճառեց: Այդ

պատմության մեջ շահագրգռությունն ու հըրապույրը ներհյուսվում եյին խորաթափանց մտքերի արդյունքի հետ: Յերբ յես լսում եյի քեզ, ինձ թվում եր, թե Անգլիայում եմ, վորովհետև յես դաստիարակվել եմ այդ բարեհոգի կարդինալի պալատում, վորպես հարազատ վորդի և նրա մասին պատմված հիշողությունները ինձ փոխադրեցին իմ վաղ մանկությունը: Յես արդեն հենց սկզբից դեպի քեզ բարեկամության զգացմունք տածեյի, բայց այժմ, այն բոլորից հետո, ինչ վոր պատմեցիր բարեպաշտ կարդինալի մասին, դու իմ սրտին ավելի մոտեցար: Ի միջի այլոց, յես պնդում եմ քո նկատմամբ իմ կարծիքը. յես համոզված եմ, վոր քո խորհուրդները հասարակության համար շատ խոշոր ոգուտ կունենան, հենց վոր դու կարողանաս թագավորների և արքունիքների հանդեպ ունեցած քո հակակրանքը հաղթահարել: Ամեն մի լավ քաղաքացու, նշանակում է և քո, պարտականությունն է իր անհատական հակակրանքները զոհել հասարակական ընդհանուր շահերին: Պլատոնն ասում է. «Մարդկությունն այն ժամանակ յերջանիկ կըլինի, յերբ փիլիսոփաները թագավոր կամ թագավորները փիլիսոփա կդառնան»: Ա՜խ, վորքան հեռու յե մեզնից այդ յերջանկությունը, մանավանդ, յերբ փիլիսոփաներն իրենց արժանիքներից ցածր են համարում վորպես խորհրդականներ ոգնել թագավորներին:

—Դու անարդարացի յես մտածողների հանդեպ,— առարկեց Ռաֆայելը,— նրանք այնքան յեսասեր չեն ճշմարտությունը թաքցնելու համար. շատերը շարադրել են ճշմարտությունը իրենց գրվածքներում. յեթե աշխարհի տերերը հակամետ լինեն լուսավորվելու, նրանք կարող եյին բոլորը տեսնել ու հասկանալ: Տարաբախտաբար մի դժբախտ քող ծածկում է նրանց աչքերը— նախապաշարումների և կեղծ սկզբունքների շղարշն այդ գաղափարները ներարկում է նրանց ամենավաղ մանկության որերին: Պլատոնը շատ լավ գիտեր այդ: Նա գիտակցում եր նույնպես, վոր թագավորները յերբեք չեն հետևելու փիլիսոփաների խորհուրդներին, յեթե իրենք փիլիսոփաներ չեն: Այս տխուր փորձառությունը նա ձեռք բերեց Դիոնեսիոս բռնակալի պալատում: Ընդունենք մի րոպե, վոր յես վորևե թագավորի մինիստրն եմ. յես նրան առաջարկում եմ ամենանպատակահարմար որենքները, բոլոր ուժերով ճգնում եմ արմատահան անել նրա սրտից և պետությունից բոլոր չարիքները: Չե՞ս կարծում, վոր նա ինձ իր արքունիքից դուրս կանի և կամ պալատականների ծաղրին կմատնի:

Ընդունենք, որինակի համար, թե յես Ֆրանսիայի թագավորի մինիստրն եմ. յես ներկա յեմ խորհրդին, իսկ ինքը՝ միապետը իր պալատի ներսում նախագահում է թագա-

վորության ամենահմուտ քաղաքագետների խորհրդակցություններին:

Այդ բարձրաստիճան ու մեծ արժեք ունեցող պարոնները գլուխները ջարդում են այն հարցի վրա, թե ի՛նչ ինտրիգների և խորամանկությունների միջոցով թագավորը, իրենց վեհապետը, կարող է պահել Միլանը, վերագրավել նրանից նորից խլված Նեապոլի թագավորությունը, վոչնչացնել Վենետիկի հանրապետությունը և նվաճել ամբողջ Իտալիան. Թե վերջապես, ինչպես նա կարող է իր թագին միացնել Ֆլանդրիան, Բրաբանտ[20], ամբողջ Բուրգունդիան և հարևան պետությունները, վոր նրա փառասիրությունը մտովին վաղուց արդեն նվաճել ու իրեն եր դցել:

Խորհրդակցության մասնակցողներից մեկն առաջարկում է Վենետիկցիների հետ դաշն կընքել, վորն այնքան ժամանակ պետք է ուժի մեջ մնա, մինչև վոր դրա խզումն այլևս վնաս չներկայացնի: «Վորպեսզի նրանց թերահավատությունն ամբողջովին վերանա» ավելացնում է նա, «մենք կարող ենք հաղորդել նրանց մեր քաղաքականության առաջին բառերը. ի՛նչու

---

20) Բրաբանտ (Brabant)—Բելգիայի և Հոլանդիայի պատմական յերկրամաս, վորը գրավում եր Շելդ և Մաաս գետերի հոսանքներում գտնվող տարածությունը: Միջին դարերում հարուստ դքսություն եր:

չե, մենք նրանց մինչև իսկ ավարից մաս կտանք, վորը ծրագրի ամբողջական իրականացումից հետո, քիչ ճիգով կրկին յետ կվերցնենք»:

Մի ուրիշը խորհուրդ է տալիս գերմանացիների հետ դաշնակցել. յերրորդը՝ փողով կաշառել շվեյցարացիներին: Այս վերջինն այն կարծիքին է, թե պետք է սիրաշահել կայսերական աստծուն[21] և նրան, իբրև քավության զոհ, վոսկի մատուցել: Մեկն էլ ավելի հարմար է գտնում համաձայնության գալ Արագոնի[22] թագավորի հետ ու իբր խաղաղության յերաշխիք, նրան զիջել Նավարրայի[23] թագավորությունը,

---

21) Ակնարկում է Հռոմի պապին:

22) Արագոն (Aradon)—պատմական յերկրամաս Սպանիայում. Ֆեոդալիզմի դարաշրջանում անկախ թագավորություն եր: 1479 թվին միացավ Կաստիլի հետ, վորով դրվեց Սպանիայի հիմքը: Այժմ ունի մոտ 1·060 հազ. բնակիչ. հողագործական և անասնապահական շրջան է:

23) Նավարրա—նախկին թագավորություն, վորը գրավում եր Պիրենյան լեռների յերկու կողմի տերիտորիան: Կազմված եր յերկու մասից (Վերին և Ներքին Նավարրա). առաջինը գտնվում եր հիշյալ լեռների հարավային, իսկ յերկրորդը՝ հյուսիսային մասում: Ներքին Նավարրան այժմ պատկանում է Ֆրանսիային (1607 թվից), իսկ Վերին Նավարրան կազմում է Սպանիայի այժմյան Նավարրա պրովինցը: Նավարրան

վորը թեև Ֆրանսիային չի պատկանում: Մի ուրիշն ուզում է Կաստիլի իշխանին մերձեցման հույս տալով մոլորեցնել և պետական մի քանի ազդեցիկ մարդկանց մեծ գումարներ կաշառք տալով նրա արքունիքում գաղտնի հարաբերություններ ստեղծել:

Ապա հասնում են այն դժվար հարցին, վորի պատասխանը վոչ վոք չի իմանում, և վորը, ավելի քան ուրիշ վորևէ հարց, կազմում է քաղաքական «գորդյան հանգույցը»: Դա Անգլիայի խնդիրն է: Վորպեսզի նրա նկատմամբ ամեն տեսակ աննախատեսելի պատահականություններից ապահով լինեն, նրանք ընդունում են հետևյալ վորոշումը.

Այդ պետության հետ հաշտության պայմանների մասին պետք է բանակցել և դաշնակցության մշտապես յերերուն կապը լարված պահել՝ Անգլիային պաշտոնապես պիտի անվանել Ֆրանսիայի լավագույն բարեկամը, փաստորեն սակայն պետք է թերահավատությամբ վերաբերվել նրան, վորպես ամենավատթար թշնամու:

Շոտլանդացիներին, վորոնց ականջներից ամենամեղմ շշնջյունն անգամ չի փախչում, պետք է վորպես առաջապահ պահակների, միշտ պատրաստ պահել, վորպեսզի Անգլիա-

---

հիմնված է 10-րդ դարում. 1234 թ. գլխավորվում եր Ֆրանսական Շամպան դինաստիայի կողմից:

չե, մենք նրանց մինչև իսկ ավարից մաս կտանք, վորը ծրագրի ամբողջական իրականացումից հետո, քիչ ճիգով կրկին յետ կվերցնենք»:

Մի ուրիշը խորհուրդ է տալիս գերմանացիների հետ դաշնակցել. յերրորդը՝ փողով կաշառել շվեյցարացիներին: Այս վերջինն այն կարծիքին է, թե պետք է սիրաշահել կայսերական աստծուն[21] և նրան, իբրև քավության զոհ, վոսկի մատուցել: Մեկն էլ ավելի հարմար է գտնում համաձայնություն գալ Արագոնի[22] թագավորի հետ ու երբ խաղաղության յերաշխիք, նրան զիջել Նավարրայի[23] թագավորությունը,

---

[21]) Ակնարկում է Հռոմի պապին:

[22]) Արագոն (Aradon)—պատմական յերկրամաս Սպանիայում. Ֆեոդալիզմի դարաշրջանում անկախ թագավորություն էր: 1479 թվին միացավ Քաստիլի հետ, վորով դրվեց Սպանիայի հիմքը: Այժմ ունի մոտ 1·060 հազ. բնակիչ. հողագործական և անասնապահական շրջան է:

[23]) Նավարրա—նախկին թագավորություն, վորը գրավում եր Պիրենյան լեռների յերկու կողմի տերիտորիան: Կազմված եր յերկու մասից (Վերին և Ներքին Նավարրա). առաջինը գտնվում եր հիշյալ լեռների հարավային, իսկ յերկրորդը՝ հյուսիսային մասում: Ներքին Նավարրան այժմ պատկանում է Ֆրանսիային (1607 թվից), իսկ Վերին Նավարրան կազմում է Սպանիայի այժմյան Նավարրա պրովինցը: Նավարրան

վորը թեև Ֆրանսիային չի պատկանում: Մի ուրիշն ուզում է Քաստիլի իշխանին մերձեցման հույս տալով մոլորեցնել և պետական մի քանի ազդեցիկ մարդկանց մեծ գումարներ կաշառք տալով նրա արքունիքում գաղտնի հարաբերություններ ստեղծել:

Ապա հասնում են այն դժվար հարցին, վորի պատասխանը վոչ վոք չի իմանում, և վորը, ավելի քան ուրիշ վորևէ հարց, կազմում է քաղաքական «գորդյան հանգույցը»: Դա Անգլիայի խնդիրն է: Վորպեսզի նրա նկատմամբ այդ տեսակ աննախատեսելի պատահականություններից ապահով լինեն, նրանք ընդունում են հետևյալ վորոշումը.

Այդ պետության հետ հաշտության պայմանների մասին պետք է բանակցել և դաշնակցության միշտապես յերերուն կապը լարված պահել՝ Անգլիային պաշտոնապես պիտի անվանել Ֆրանսիայի լավագույն բարեկամը, փաստորեն սակայն պետք է թերահավատությամբ վերաբերվել նրան, վորպես ամենավատթար թշնամու:

Շոտլանդացիներին, վորոնց ականջներից ամենամեղմ շշնջյունն անգամ չի փախչում, վորպես առաջապահ պահակների, պետք է միշտ պատրաստ պահել, վորպեսզի Անգլիա-

---

հիմնված է 10-րդ դարում. 1234 թ. գլխավորվում եր Ֆրանսական Շամպան դինաստիայի կողմից:

յում նկատված մի խլրտումի առաջին իսկ նըշանի դեպքում՝ նրանց, իբրև մեր բանակի առաջավոր ջոկատներ, դեպի այնտեղ շարժել:

Հարկավոր է գաղտնի կերպով — քանի վոր պայմանագրերը թույլ չեն տալիս բացահայտ հանդես գալու— որևէ բարձրաստիճան մարդու ոժանդակել աքսորում և դրդել նրան՝ Անգլիայի թագի նկատմամբ պահանջներ առաջադրել ու այդպիսով կառավարող թագավորին սպառնալ, հենց վոր նա վտանգի առիթ դառնա:

Իսկ ի՞նչ կասեն թագավորական այդ խորհրդում, ուր այնքան շատ և այդքան խոշոր շահերի մասին են խոսում, յերբ այդ խորաթափանց քաղաքագետների ներկայությամբ, վորոնք բոլորն էլ պատերազմի կողմնակից են— յես մի մարդ, առանց մեծ նշանակության, հանկարծ վեր կենամ՝ շուռ տալու համար իրենց կոմբինացիաներն ու հաշիվները, և ասեմ.

«Իտալիան հանգիստ թողնենք և բավականանք մեր Ֆրանսիայով. Ֆրանսիան առանց այն էլ այնքան մեծ է, վոր մի միակ մարդու կամքով կկառավարվի. Թագավորը չպետք է մտածի սահմաններն ընդարձակելու մասին: Լսեցե՛ք, պարոններ, թե ինչ պատահեց ճիշտ նույն հանգամանքներում ախորիացիներին[24] ու

[24]) Հուն. chora —յերկիր, a —բացասական մասնիկ. achoria —բառացի նշանակում է յերկրագնդում տեղ չունեցող յերկիր. հոմանիշ է ուտոպիային:

նրանք ինչպիսի վորոշում ընդունեցին:

Այս ժողովուրդն ապրում է Եվրոնոտայի ափերին՝ Ուտոպիա կղզու դիմաց. մի անգամ նրանք վորոշեցին պատերազմ հայտարարել, քանի վոր իրենց թագավորը՝ հին ազգակցական կապերի հիման վրա, կարծում եր, թե իրավունքներ ունի մի հարևան թագավորության նկատմամբ: Նրանք այդ յերկիրը նվաճեցին, սակայն շուտով համոզվեցին, վոր նվաճածը պահելը շատ ավելի դժվար ու ծանր է, քան նվաճելը: Ամեն րոպե հարկավոր է լինում յերկրի ներսում ճնշել մի ապստամբություն կամ զորքը ուղարկել նվաճած յերկիրը: Մշտապես անհրաժեշտ եր պաշտպանել գրաված յերկիրը և կամ սանձահարել նոր հպատակներին: Այս պատճառով բանակը միշտ զենքի տակ եր. քաղաքացիները տնքում եյին ծանր հարկերի բեռան տակ, փողը գնում եր արտասահման, արյունը հոսում եր հեղեղի նման՝ բավարարելու համար մի միակ մարդու սնափառությունը: Խաղաղության կարճ պահերը պատերազմից ավելի պակաս ավերիչ չեյին: Պատերազմական բարքերի սանձարձակությունը կործանիչ ազդեցություն ունեցավ բարոյականության վրա. զինվորն իր հայրենի ոջախն եր վերադառնում ավազակության հակումով ու մարդասպանի հանդգնությամբ — պատերազմի դաշտի ըսպանդների արդյունք:

Այդ խառնակությունը, օրենքների ընդհանուր արհամահումն առաջ էր գալիս նրանից, վոր թագավորն իր ուշադրությունն ու հոգացողությունը բաժանելով յերկու թագավորությունների միջև, բավարար չափով չէր կարողանում կառավարել վոչ մեկը և վոչ էլ մյուսը: Ախորեացիներն ուզում էին այս բոլոր չարիքներին վերջ դնել. Նրանք ժողովրդական ժողով գումարեցին և խոնարհաբար առաջարկեցին վեհապետին յերկու պետություններից մեկն ընտրել, միաժամանակ բացատրելով նրան, վոր այսուհետև նա չի կարող յերկու թագ կրել և ինչ անհեթեթություն է, վոր մի մեծ ժողովուրդ կես թագավորով է կառավարվում, յերբ մինչև իսկ մի մարդ չի վարձի մի իշապան, վորը միաժամանակ մի ուրիշ տիրոջ էլ է ծառայում: Բարի թագավորը կտրուկ վորոշում տվեց. իր նոր թագավորությունը նա զիջեց բարեկամներից մեկին, վորին կարճ ժամանակից հետո այնտեղից քշեցին, իսկ ինքը բավականացավ իր նախկին սահմաններով»:

Յես վերադառնում եմ իմ մեկնակետին: Յեթե յես ավելի առաջ գնամ և դառնալով իրեն՝ միապետին, հասկացնեմ նրան, վոր պատերազմի այդ կիրքը, վորն իր կամքով ցնցում է ժողովուրդներին, սպառում է ֆինանսները, քայքայում իր ժողովրդին և հենց դրա համար էլ Ֆրանսիայի համար դժբախտ հետևանքներ կունենա. յեթե յես նրան ասեմ. «Տե՛ր, օգտա-

գործեցեք խաղաղությունը, վորը Ձեզ յերջանիկ ապագա յե ընձեռում, ամեն ուղղությունով զարգացրեք Ձեր հայրերի թագավորությունը, ծաղկեցրեք յերջանկությունը, հարստությունն ու ուժը. սիրեցեք Ձեր հպատակներին և գոհ յեղեք նրանցից սիրվելով. ապրեք նրանց մեջ իբր հայր և մի՛ իշխեք վորպես բռնակալ. մի՛ մտահոգվեք օտար պետություններով. այն, ինչ վոր Ձեզ ժառանգություն է հասել, միանգամայն բավական է Ձեզ»: Ասա՛ ինձ, սիրելի Մոր, ինչպիսի ընդունելություն կը գտնի մի այսպիսի ճառ:

—Շատ վատ,— պատասխանեցի յես:

—Բայց դա դեռ բոլորը չէ,— շարունակեց Ռաֆայելը,— մինչև այժմ մենք լուսաբանում էինք Ֆրանսիայի մինիստրների միայն արտաքին քաղաքականությունը. գործը վերաբերում էր միայն իշխողի փառքին: Այժմ հարցը փոխվում է փողին: Մի պահ կանգ առնենք այն հիմնական սկզբունքների վրա, վորոնցով կառավարությունն ու արդարադատությունը ղեկավարվում են. մեկն առաջարկում է բարձրացնել դրամի արժեքը, յեթե պետք է փոխառություն ստանալ և ընդհակառակը՝ ուժեղ չափով իջեցնել այն, հենց վոր գալիս է վճարման ժամկետը: Այս կրկնակի միջոցներով թագավորն ազատվում է խոշոր պարտքերից և քիչ ճիգով ապահովում է ֆինանսական չափազանց մեծ հունձք:

Մի ուրիշը խորհուրդ է տալիս մոտալուտ պատերազմի լուրեր տարածել: Այդ առիթը կարդարացնի նոր տուրքերի սահմանումը. անհրաժեշտ գումարները հավաքելուց հետո թագավորը միանգամից հաշտություն կկնքի և կհրամայի այդ յերջանիկ դեպքը տոնել յեկեղեցիներում գովաբանական աղոթքներով և ամեն տեսակ կրոնական արարողություններով: Ժողովուրդը կշլանա և հասարակական յերախտագիտությունը կգովաբանի թագավորի առաքինությունները, վորը մինչև ամպերը մարդկայնորեն ու խնայողաբար է վարվում իր հպատակների արյունի հետ:

Մի յերրորդը բավականություն է գտնում առաջարկելով մեջտեղ հանել հին, վորդերի կողմից արդեն կրծոտված և վաղուց հնացած որենքներ: Յեվ վորովհետև այդ որենքները վոչ վոքի հայտնի չեն, այդ պատճառով էլ բոլորի կողմից կխախտվեն: Խախտումները պատժելու համար որենքով նախատեսնված դրամական տուգանքները նորոգվում են և այսպիսով վոչ միայն շատ առատ, այլ մինչև իսկ շատ պատվավոր յեկամտի աղբյուր է ստեղծում... Չե՞ վոր այդ դեպքում գործում են արդարադատության անունով: Մի ուրիշը նորից պակաս շահավետ չի գտնում հրատարակել մի շարք արգելքներ, մեծ մասամբ հոգուտ ժողովրդի և այդ որենքների խախտումները պատժել դրամական մեծ տուգանքներով:

Թագավորը սակայն մեծ գումարներով այդ որենքները հաշվի չառնելու իրավունքը կվաճառի այն մարդկանց, վորոնց անհատական շահերը վտանգվում են այդ արգելումներով: Այս կերպով թագավորը ժողովրդի մեծ յերախտագիտության կարժանանա և միաժամանակ կրկնակի յեկամուտ կստանա. մի կողմից որենքները խախտողներից, մեկ էլ՝ առանձնաշնորհյալներից: Այս գործը նրանով ավելի նպատակահարմար կլինի, վոր Նորին Մեծությունը նույն չափ ավելի հարգանքի ու պատվի կարժանանա, ինչ չափով վոր որենքների խախտումների համար նախատեսվող պատժի գինը բարձր սահմանի: Տեսնո՞ւմ եք, կասեն վո՛րպիսի հարկադրանք է գործ դնում իր վրա այս մարդասեր թագավորը, վոր իր ժողովրդին վնասելու իրավունքն այդքան թանկ է վաճառում[25]):

Վերջապես մեկն էլ խորհուրդ է տալիս միապետին՝ հատուկ դատավորներ նշանակել, վորոնք ամեն դեպքում պատրաստ լինեն պաշտպանել թագի իրավունքները: «Ձերդ մեծու-

[25]) Մորն այս դեպքում հավանաբար նկատի ունի այն խիստ որենքները, վոր Հայնրիխ VII-ի ժամանակ հրատարակվեցին և վորոնցով խիստ պատժվում էր գյուղացիների էքսպրոպրիացիան. կալվածատերերն այդ որենքները խախտելու համար հարկադրված էյին դրամական մեծ տուգանքներ վճարել թագավորին:

թյուն» ավելացնում է նա, «նրանց կկանչեք Ձեր պալատը և կստիպեք Ձեր ներկայությամբ քննեն Ձեր սեփական գործերը: Ինչպիսի վատ գործ էլ ուզում է լինի, միշտ կգտնվի մի դատավոր, որը հակառակ համոզում ունենա, լինի դա հակաճառելու ցանկությունից, նորության սիրուց թե չփոթությունից և կամ վերջապես միապետին հաճելի յերեվալու նախանձախնդրությունից: Բազմազան և տարբեր կարծիքների շատությունն ինքնին մի շատ պարզ հարց կխճողի, ճշմարտությունը կասկածի կենթարկվի: Ձերդ մեծությունը կորսաը լավագույն րոպեն ու բոլոր դժվարությունները կվերացնեք նրանով, որ օրենքը կմեկնաբանեք հօգուտ Ձեզ: Հակառակ համոզում ունեցողները, յերկյուղից թե ամոթից, իսկույն կմիանան Ձեր կարծիքին, ու բոլոր պատշաճությունները կկայացվի համապատասխան վճիռը: Միթե խելքը գլխին մարդիկ կհամարձակվե՞ն հակաճառել մի դատավորի, որը հօգուտ թագավորի յե վճռում: Միթե նա իր յետևում չունի՞ օրենքի բնագիրն ուզած ձևով մեկնաբանելու ազատությունը և, ինչ որ ամենագլխավորն է, թագավորի օգուտը, որն ամեն մի բարեխիղճ և ճշմարիտ դատավոր բոլոր օրենքներից բարձր է դասելու»:

Լսեցեք քաղաքական բարոյականության հիմնական սկզբունքները, որ բարձր ժողովի անդամներն ընդունում են.

Այն թագավորը, որը մի բանակ է կերակրում, շատ փող չի ունենա:

Թագավորն անիրավություն չի կարող գործել, յեթե մինչև իսկ ուզենա:

Նա իր բոլոր հպատակների անձի և գույքի անսահմանափակ և միահեծան սեփականատերն է: Հպատակներն իրենց գույքն օգտագործում են այնքան ժամանակ, որքան այդ հարմար է թագավորին:

Ժողովրդի թշվառությունը միապետության հենարանն է:

Հարստությունն ու ազատությունը առաջ են բերում անհնազանդություն և արհամարհանք իշխանության հանդեպ. ազատ և հարուստ մարդն անարդար ու բռնակալ կառավարությունը չի հանդուրժի:

Կարիքն ու թշվառությունը խեղճացնում են ամենահանդուգն մարդկանց իսկ, բթացնում են մտքերը, վարժեցնում են համբերության և ստրկության ու մշտական ճնշումով նրանցից խլում են այն յեռանդը, որն անհրաժեշտ է լուծը թոթափելու համար:

Ի՞նչ կպատահի, յեթե յես նորից վեր կենամ և այդ ազդեցիկ պարոններին ասեմ.

«Ձեր խորհուրդները գզվելի յեն, դրանք նույնքան վիրավորական են թագավորի համար, վորքան կործանիչ՝ ժողովրդի համար: Ձեր վեհապետի պատիվն ու յերջանկությունն ավելի շուտ կազմում են իր հպատակների, քան

թե իր սեփական հարստությունը: Մարդիկ թագավորներին ստեղծել են վոչ թե թագավորների, այլ մարդկանց համար: Նրանք իրենց գլխին առաջնորդներ են դրել, վորպեսզի թշնամու ուժից և հարձակումներից հանգիստ ու ապահով լինեն: Թագավորի ամենասրբազան պարտականությունն այն է, վոր իր ժողովրդի յերջանկության մասին ավելի մտածի, քան իր անհատական բախտավորության համար: Իբրև հավատարիմ հովիվ, նա պետք է իր անձը զոհի իր հոտի համար ու նրան տանի ամենահյութալի արոտավայրերը:

Պնդել, թե հասարակական թշվառությունը միապետության լավագույն պահապանն է, նշանակում է խոշոր և ակնհայտ սխալ գործել: Վո՞րտեղ կարելի յե գտնել ավելի չար կռիվ ու արյունոտ գլուխներ, յեթե վոչ մուրացիկների մեջ:

Վորո՞նք են այն մարդիկ, վորո՞նք ամենից ավելի աշխուժ կերպով հեղափոխության են ձգտում: Այդպիսիները միթե նրանք չե՞ն, վորոնք վողորմալի վիճակ ունեն: Վորո՞նք են այն մարդիկ, ովքեր ամենից ավելի հանդուգն են լինում, յեթե խոսքը վերաբերում է պետության կործանելուն: Այդպիսիները միթե նրանք չե՞ն, վորոնք դրանում միայն կարող են շահել, քանի վոր կորցնելու վոչինչ չունեն:

Մի թագավոր, վորը քաղաքացիների ատելությունն ու արհամարհանքն է վաստակել,

և միայն ճնշումով, կողոպտելով ու ժողովրդի լիակատար աղքատացումով է, վոր կանգնած է կառավարության գլուխը— նա պետք է գահից իջնի և գայիսոնը ցած դնի: Այդ բռնակալ միջոցների գործադրումով թերևս նա պահի թագավորի անունը, սակայն անշուշտ կորցնում է թագավորի արիությունն ու մեծությունը: Թագավորական արժանիքն այն է, վոր նա իշխի վոչ թե մուրացիկների, այլ հարուստ և յերջանիկ մարդկանց վրա:

Ֆաբրիցիուսը, այդ մեծ մարդը, ամբողջովին համակված էր այն վսեմ ճշմարտությամբ, յերբ ասում էր. «Ավելի սիրով կուզեմ հարուստ մարդկանց վրա իշխել, քան ինքս հարուստ լինել»: Յեվ իսկապես, ժողովրդի տառապանքների ու հեծեծանքների մեջ իրեն ցոփության տալ և հաճույքներով հագենալ չի նշանակում մի թագավորություն կառավարել, այլ նշանակում է հսկել մի բանտի վրա:

Յեթե մի բժիշկ իր հաճախորդների հիվանդությունն այնպես է բժշկում, վոր դրանց փոխարեն ավելի վտանգավոր բնույթի հիվանդություններով է վարակում, ապա նա մի տգետ փինաչի յե: Խոստովանեցեք ուրեմն, վոր դուք կարող եք միայն քաղաքացիների կյանքի կենսական պահանջներն ու հարմարությունները խլելով կառավարել. խոստովանեցեք, վոր դուք ինչքան անարժան, նույնքան էլ անընդունակ եք իշխել ազատ մարդկանց վրա:

Այլապես՝ վերացրեք ձեր ազնվությունը, հպարտությունը և ձեր մեղկությունը, վորովհետև այդ պակասություններն են, վոր միապետի հանդեպ ատելություն և արհամարհանք են առաջացնում: Ապրեցեք, ինչպես արդար է, ձեր կալվածքներով: Ավելի մի՛ ծախսեք, քան ստանում եք. Թմբեցեք անարդարությունների հոսանքը, հիմնեցեք բարեգործական հաստատություններ, վորոնք չարիքը կանխեն ու իր բնում խեղդեն, փոխանակ պատժական միջոցներ սահմանելու դժբախտների դեմ, վորոնց մի հնացած և բարբարոսական օրենսդրություն նախ վոճրագործության, իսկ ապա՝ կախաղանի յե դատապարտում:

Մի՛ մոռացեք հնացած և վորդերի կրծոտած օրենքները նորոգելու մասին. դրանով ձեր հպատակների առաջ գայթակղության քարեր մի նետեք: Այդ օրենքներն այլևս ժամանակին չեն պատշաճում և վաղուց մոռացված են: Օրենքի դեմ կատարված խախտումի համար այդքան բարձր տուգանքներ մի՛ սահմանեք, վոր մինչև իսկ դատավորն անհատական խոսակցության ժամանակ այդ տուգանքներն իբրև անարդարացի ու ամոթալի, հրապարակով պարսավի: Մշտապես հետևեցեք մակարեացիների[26] գեղեցիկ օրինակին:

Ուտոպիայի հարևան այդ ժողովուրդը մի

26) Հուն.—յերջանիկ:

լավ սովորույթ ունի. Թագավորը գահ բարձրանալու օրն աստվածության զոհ է մատուցում ու սրբազան յերդում տալիս, վոր իր գանձարանում 3000 ֆունտ վոսկուց, կամ դրան համասար դրամական գումարից, ավել չպետք է լինի: Այդ սովորույթը սահմանել է մի իշխան, վորի սրտին ավելի մոտ եր պետության բարեկեցությունը, քան միլիոններ դիզելը: Դրանով նա ուզում եր հաջորդների ագահությունը սանձահարել և արգելել նրանց՝ հպատակների հաշվին հարստանալ: Հազար ֆունտ վոսկին նա մի գումար եր համարում, վորը կբավարարի արտաքին կամ ներքին պատերազմի դեպքում և ընդհակառակը շատ քիչ կլինի՝ ժողովրդի կարողությունը կլանելու համար: Վերջին պատճառն եր մասնավորապես դրդել նրան հրատարակելու այդ օրենքը: Բացի այդ, Թագավորը դրանով յերկու նպատակ ել եր հետապնդում.— նախ քաղաքացիների ամենօրյա առևտրի շրջանառության համար պահեստի անհրաժեշտ դրամ ունենալ, և յերկրորդ՝ սահմանափակել հարկերի ու ծախսերի չափը, վորպեսզի Թագավորը օրենքով նախատեսված չափից ավելին չարաշահ ու անիրավ նպատակների համար չգործադրի: Սրա նման մի Թագավոր չարերի սարսափն է, իսկ ազնիվների՝ սիրելին»:

—Այժմ ասացեք ինձ, սիրելի Մոր, մեկը,

վոր այսպիսի բարոյականության քարոզ կարդա մարդկանց, վորոնք չահախնդրությունից և հաշիվներից դրդված դրանց ուղղակի հակառակ սկզբունքներ ունեն, միթե նրա քարոզն ուղղված չի՞ լինի խուլ ականջների:

— Յեվ այն էլ միանգամայն խուլերի,— պատասխանեցի յես,— սակայն այդ չի զարմացնում ինձ. իսկ յեթե իմ կարծիքն ես ուզում իմանալ, յես միանգամայն անօգուտ եմ գտնում խորհուրդներ տալ, յերբ խորապես համոզված ես, վոր այդ խորհուրդները թե՛ ձևով և թե՛ եյությամբ մերժվելու յեն: Ժամանակակից մինիստրներն ու քաղաքագետները համակված են մոլորություններով և կանխակալ կարծիքներով. ինչպե՞ս ես դու ուզում նրանց տեսակետները զոռով շրջել և ճշմարտությունն ու արդարադատությունը միանգամից մեխել նրանց գլխում ու սրտում: Այդ սխոլաստիկ փիլիսոփայությունը տեղին է բարեկամների միջև կատարվող մտերիմ խոսակցության ժամանակ, բայց վոչ յերբեք՝ թագավորի պետական խորհրդում, վորտեղ մեծ խնդիրները քննարկվում են մեծ հեղինակությամբ և վորտեղ վորոշումները խոշոր նշանակություն ունեն:

— Հենց այդ եր վոր յես նոր ասում եյի,— նկատեց Ռաֆայելը,— փիլիսոփայությունը իշխողների պալատը մուտք չունի:

— Իրավացի յես, յեթե նկատի ունես

դպրոցական այն փիլիսոփայությունը, վոր կուրորեն սկսում ե ամեն տեղ, առանց հաշվի առնելու վայրը, ժամանակն ու անձնավորությունները: Սակայն կա նաև իր եյությամբ ավելի պակաս կոպիտ փիլիսոփայություն, վորը ճանաչում ե իր բեմը և իր դերը խաղում հաջող ու ներդաշնակ: Այդ փիլիսոփայությունն ե, վոր դու պետք ե կիրառես:

Ընդունենք թե Պլավտոսի[27] մի կատակերգության ներկայացման ժամանակ, այն պահին, յերբ ստրուկները բարձր տրամադրության մեջ են, դու փիլիսոփայի պատմուճան հագած բեմ խոյանաս և արտասանես Օկտավիայի այն մասը, վորտեղ Սենեկան Ներոնին խարազանում ե և բարոյականության քարոզ կարդում.— յես շատ եմ կասկածում, թե քեզ ծափահարեն: Անշուշտ դու ավելի լավ կանեյիր, սահմանափակվելով մի համր մարդու դերով, քան թե հասարակությանը տայիր նման մի տրագի-կոմիքական դրամա: Այդպիսի վատ ներդաշնակված մի խառնուրդ ամ-

27) Պլավտոս (մոտ 254—184 մ. թ. ա.)— հռոմեացի պոետ. գրել ե բազմաթիվ կոմեդիաներ, վորոնց տիպերը մեծ մասամբ վերցրել ե հռոմեական հասարակության շահագործվող դասակարգերից (պլեբեյներից, ստրուկներից): Վորպես կենդանի դիալոգի վարպետ, Պլավտոսը հանդիսանում ե յեվրոպական կոմեդիայի հայրը:

բողջ խաղը կփչացներ, յեթե մինչև իսկ քո ասած խոսքերը հարյուրապատիկ ավելի արժեքավոր լինեյին, քան ինքը՝ թատերգությունը: Լավ դերասանն իր ամբողջ տաղանդը կգործադրի իր դերերի վրա, անկախ այդ դերերի լավ կամ վատ լինելուց: Ամբողջականությունը նա չի խանգարի, թեկուզ նրա քմահաճույքը ուզի մի վորևե սքանչելի և դյութիչ վոտանավոր ասել: Այս կերպ պետք ե վարվել, յերբ թագավորական խորհրդում պետական խնդիրներ են քննարկվում: Յեթե մինչև իսկ չհաջողի արմատախիլ անել հակառակ ծայրահեղությունները և կամ վերացնել անբարոյական սովորությունները, այնուամենայնիվ դրանք հիմք չեն տալիս թողնել հասարակական գործը: Նավավարը փոթորկի ժամանակ նավը չի թողնում այն պատճառով, վորովհետև զսպել չի կարող քամուն:

Դու խոսում ես այնպիսի մարդկանց հետ, վորոնց հիմնական սկզբունքները քո կարծիքներին հակառակն են. ինչպիսի ընդունելություն կգտնեն քո խոսքերը, յերբ դու ուղղակի հակաճառես նրանց: Խոտոր ճանապարհ ընտրիր, վերջինս քեզ ավելի ապահով կհասցնի նպատակին: Դու պետք ե կարողանաս ճշմարտությունը ճարպկորեն ու իր ժամանակին ասել և յեթե քո ճիգերը լավ արդյունքներ չտան, առնվազն նրանք կնպաստեն չարի խստության թուլացման. վոչինչ չի կարող լավ և կատարյալ լինել, մինչև վոր մարդիկ իրենք լավ ու կատարյալ չլինեն, իսկ մինչ այդ՝ դարեր կըսահին:

Ռաֆայելը պատասխանեց.

— Գիտե՞ս, թե ինչ դուրս կգա ինձնից՝ գործողության այդպիսի յեղանակով առաջնորդվելիս: Ջգտելով ուրիշների հիմարությունը բուժել, յես ինքս նրանց հետ հիմար կդառնամ: Ստած կլինեմ, յեթե ուզենամ ուրիշ բան խոսել, քան այն, ինչ վոր քեզ ասացի: Վորոշ փիլիսոփաների համար ստելը թերևս թույլատրելի յե, ինձ համար սակայն այդ անտանելի յե: Յես գիտեմ, վոր իմ ճառը թագավորների խորհրդականներին կոպիտ և խիստ ե թվալու. դրա նորությունը սակայն ինձ համար այնքան տարորինակ չե, վոր յես այդ ճառը անհեթեթ համարեյի: Յեթե յես Պլատոնի հանրապետության տեսությունների կամ այժմ ուտոպիացիների մեջ գործող սովորույթների մասին իրազեկ դարձնեյի — հրաշալի բաներ, վորոնց հանդեպ մեր գաղափարներն ու բարքերը ամենահեռավոր նմանություն անգամ չունեն — կարելի յեր կարծել, թե յես գալիս եմ մի ուրիշ աշխարհից, վորովհետև այստեղ ամեն վոք սեփականության իրավունք ե վայելում, մինչդեռ այնտեղ սեփականությունը հասարակական ե: Բայց յես ինչ այնպիսի բան ասացի, վոր հնարավոր ե

մինչև իսկ պետք չլինի հրապարակել: Իմ մորալը մատնանշում ե վտանգը. բանական մարդը թող զգուշանա դրանից. այդ մորալը վերաբերում ե միայն հիմարներին, վորոնք անհույս կերպով անդունդն են գլորում իրենց:

Վախկոտություն կամ կեղծ ամոթխածություն ե լռել այն ճշմարտության մասին, վորը դատապարտում ե մարդկային նեխվածությունը: Պնդում են, վոր այդ ճշմարտությունները, վորպես հնացած նորույթներ կամ անիրագործելի ցնորքներ, վատ ընդունելություն կգտնեն: Այլապես պետք եր ավետարանի վրա մի քող ձգել և քրիստոնյաներից վերցնել Հիսուսի վարդապետությունը: Սակայն Հիսուսը արգելում եր իր աշակերտներին լռել ու ծածկամիտ լինել. նա հաճախ եր կրկնում նրանց, «ինչ վոր յես ձեզ ցած, գաղտնի յեմ ասում, այդ բոլորը դուք բարձր և հրապարակով կտուրներից քարոզեցեք»: Քրիստոսի մորալը սակայն այս աշխարհի բարքերին ավելի յե հակասում, քան մեր խոսակցության ընթացքում արտահայտած կարծիքները:

Առաքյալներն իբրև փորձված մարդիկ, քայլում եյին այն խոտոր ճանապարհներով, վորոնք դու նոր հիշատակեցիր. յերբ նրանք տեսան, վոր մարդիկ դեմ են իրենց վատ բարքերը քրիստոնեյական ուսմունքի հիմունքներով փոխելուն, նրանք ավետարանն արճճի ձողի նման ծռեցին՝ մարդկային բարքերին

հարմարեցնելու համար: Սակայն ո՞ւր հասցրեց գործողության այդ յեղանակը. մոլություններին տվեց առաքինության անդորրն ու ապահովությունը :

Իսկ յես, յես ել թագավորների խորհրդում ավելի լավ արդյունքի չեյի հասնի, քանի վոր իմ կարծիքները կամ ընդհանուր տեսակետներին բոլորովին հակառակ են—և այդ դեպքում ավելի լավ կլիներ յերբեք չարտահայտվել,— և կամ դրանք մեծամասնության տեսակետների հետ զուգահեռ կգնային, ինչ վոր կնշանակեր «կատաղածների հետ կատաղել»,— ինչպես Տերենցիան ասել ե տալիս Միցիոնին: Յեվ այսպիսով, յես չեմ տեսնում, թե ո՞ւր ե առաջնորդում քո խոտոր ճանապարհը: Դու ասում ես՝ յեթե չես կարող կատարյալը ձեռք բերել, պետք ե առնվազն մեղմել չարը: Սակայն այստեղ խեղաթյուրումն անկարելի յե, իսկ զիջողությունը՝ վոճիր, քանի վոր պետք ե ամենագարշելի խորհուրդներին հավանություն և դեկրետներին ել համաձայնություն տալ, վորոնք ժանտախտից ավելի վտանգավոր են: Ով այդ ամոթալի վորոշումներին լավագույն համոզումով հավանություն տա, արժանի յե լրտեսի և դավաճանի անվան:

Այդ իսկ պատճառով ել պետության այդ բարձր վոլորտներում ոգտակար լինելու

հնար չկա: Այնտեղ չնչածդ ոգը կփչացնի քո անհատական առաքինությունները: Քեզ շրջապատողները շատ հեռու կլինեն քեզ օրինակելի մարդ համարելուց. ընդհակառակը, իրենց նեխվածության չփումներով և ազդեցությամբ կվարակեն քեզ. իսկ հակառակ սպասումի, յեթե քո հոգին մաքուր ու անբիծ պահես, այն դեպքում դու նրանց անբարոյության և հիմարությունների ծածկոց կծառայես: Այսպիսով, քեզ վոչ մի հույս չի մնում քո խոտոր ճանապարհով չարը բարու վերածել:

Այդ պատճառով էլ աստվածային Պլատոնը իմաստուններին խորհուրդ է տալիս հասարակական գործերի ղեկավարությունից հեռու պահել իրենց, և նա իր խորհուրդը հենում է հետևյալ գեղեցիկ համեմատության վրա.

«Յերբ խելացի մարդիկ ուժեղ և չդադարող անձրևի ժամանակ փողոցներն ու հրապարակները մարդկանց բազմությամբ լցված են տեսնում, գոչում են այդ հիմար բազմության, վոր տուն գնա և ծածկի տակ մտնի: Իսկ յեթե նրանց խոսքերն ուշադրության չարժանանան, նրանք, այդ ամբոխի նման, փողոց դուրս չեն գա թրջվելու համար. տանը կմնան և գոհ կլինեն, վոր յեթե չկարողացան

ուրիշների հիմարությունը բուժել, գոնե իրենք պաշտպանվեցին վատ յեղանակից»:

Այժմ, թանկագին Մոր, յես ուզում եմ քեզ բաց անել իմ սրտի խորքերը և իմ ամենածածուկ մտքերը հայտնել քեզ: Ամեն տեղ, ուր սեփականության իրավունքն է իշխում, վորտեղ ամեն ինչ փողով է չափվում, այնտեղ արդարության և հասարակական հանդստի մասին յերբեք խոսք լինել չի կարող, վորովհետև դու պետք է արդար համարես այն, վոր ամենաթանկագին գանձերը գտնվեն ամենաանարժան ձեռքերում, դու պետք է մի պետություն կատարելապես յերջանիկ անվանես, ուր հասարակական հարստությունը մի բուռն անհատների ավարը լինի, վորոնք վայելքի մեջ անկուշտ են, յերբ մասսան թշվառության կուլ է գնում:

Յերբ յես Ուտոպիայի հաստատությունները համեմատում եմ այլ յերկրների հիմնարկների հետ, մի կողմից յես չեմ կարող չհիանալ առաջինների բավական իմաստության և մարդկայնության վրա, իսկ ընդհակառակը, մյուս կողմից չողբալ ուրիշ յերկրներին նույն հաստատությունների անբնականության ու բարբարոսության վրա: Ուտոպիայում օրենքների թիվը շատ քիչ է. կառավարությունն իր բարեգործությունը տարածում է բոլոր դասակարգերի քաղաքացիների

վրա: Այնտեղ արժանիքն ստանում է իր վարձատրությունը և դրա հետ մեկտեղ հասարակական հարստությունն այնպես հավասար է բաշխվում, վոր ամեն վոք կյանքի բոլոր հարմարություններն առատորեն վայելում է:

Ուրիշ յերկրներում «իմ ու քո»-յի սկըզբունքը հաստատված է մի կազմակերպությամբ, վորի մեխանիզմն ինչքան խճողված, նույնքան և պակասավոր է: Մենք գտնում ենք հազարավոր օրենքներ, վորոնց թիվն այնուամենայնիվ սահմանափակ է, վոր ամեն մարդ կարողանա սեփականություն ձեռք բերել, պահպանել և այդպիսին մյուսների ունեցվածքից զատել: Դրան վորպես ապացույց՝ այն բազմաթիվ դատական գործերը, վոր օրական յերևան են գալիս ու յերբեք չեն վերանում:

Յերբ յես այս կշռադատություններն անում եմ, միշտ ստիպված եմ կատարյալ իրավունք տալ Պլատոնին և ինձ յերբեք չի զարմացնում այն հանգամանքը, վոր նա մերժում եր օրենքներ գրել այն ժողովուրդների համար, վորոնք գույքերի հանրայնությունը չեյին ընդունում: Այդ մեծ մտածողը պարզ նախատեսել եր, վոր հասարակական յերջանկության հաստատելու միակ միջոցը հավասարության սկզբունքի կիրառումն է: Հավասարությունը սակայն, իմ կարծիքով, անհնար է մի պետության մեջ, վորտեղ սեփականությունն անհատական իրավունք է և անսահմանափակ, վորով

ամեն վոք ձգտում է զանազան պատրվակների և իրավունքների օժանդակությամբ, կարողացածի չափ շատ սեփականացնել ու հասարակական հարստությունը, վաղ թե ուշ ի վերջո փոքրաթիվ անհատների սեփականությունը կլինի, մինչդեռ մնացյալները կարիքի և թշվառության կմատնվեն:

Հաճախ հարստի վիճակը պետք է վոր բաժին ընկներ աղքատին: Միթե չկա՞ն ժլատ, անբարոյական և վոչ մի օգտակարություն չունեցող հարուստներ, իսկ դրա փոխարեն համեստ, վոչ պահանջկոտ աղքատներ, վորոնց աշխատասիրությունն ու գործունեությունը օգուտ է բերում պետությանը, վորոնք սակայն դրա փոխարեն վոչինչ չեն ստանում:

Հենց այս է, վոր ինձ հաստատ համոզում է, վոր բարիքները հավասար ու արդար բաժանելու և մարդկային յերջանկությունը հաստատելու միակ միջոցը սեփականության իրավունքի վերացումն է: Ինչքան ժամանակ սեփականությունը հասարակական շենքի պատվանդանն է, ամենաբազմամարդ ու ամենագնահատելի դասակարգին բաժին կընկնեն միայն կարիքը, վիշտն ու հուսահատությունը:

Յես գիտեմ՝ կան միջոցներ, վորոնք կարող են այդ չարիքը մեղմել, սակայն այն ամբողջովին վերացնելու համար դրանք շատ թույլ են: Որինակի համար.

Սահմանել անհատական սեփականության համար հողի և փողի մաքսիմում:

Ապահովել իրեն խիստ օրենքներով բռնակալության և անարխիայի դեմ:

Խարազանել և պատժել ինքնասիրությունն ու ենտրիգները:

Չվաճառել կառավարական պաշտոնները:

Վերացնել բարձրագույն պաշտոնատարների պաշտոնական շքեղությունը, վորպեսզի պաշտոնյան իր դիրքին համապատասխանելու համար խաբեբայության ու հարստահարությունների տեղիք չտա և կամ, վորպեսզի կարիք չլինի պաշտոններ շնորհել ամենահարուստներին, յերբ դրանք պետք է տալ ամենից ավելի արժանավորներին:

Այս միջոցները, յես կրկնում յեմ այդ, միանգամայն ի վիճակի յեն ցավը մեղմելու ու հասարակության օրգանիզմի վերքերը փակելու համար. սակայն հույս մի՛ ունենանք, թե դրանք կարող են հասարակությանը վերադարձնել նրա ուժն ու առողջությունը, քանի դեռ յուրաքանչյուրն իր ունեցածի անհատական և միակ տերն է: Դուք կդաղեք միայն մի վերքը, իսկ մնացյալները կբորբոքեք. կբժշկեք մի հիվանդի, իսկ կսպանեք մի կատարելապես առողջի, քանի վոր այն, ինչ ավելացնում եք մի անհատի ունեցածին, այդ վերցնում եք մի ուրիշից:

Այդ առթիվ յես պատասխանեցի Ռաֆայելին.

— Յես շատ հեռու յեմ քո համոզումը բաժանելուց, ընդհակառակն այն կարծիքն ունեմ, վոր այն պետությունը, ուր սեփականության համայնացնում կսահմանվի, բոլոր յերկրներից ամենադժբախտը կլինի: Յեվ իսկապես, այդպիսի մի պետություն ամենաանհրաժեշտ կարիքների բավարարումի պակասությամբ չի՞ տառապելու: Ամեն մարդ կխուսափի աշխատանքից և իր գոյության հոգսերը կաշխատի դնել ուրիշների վզին: Յեթե մինչև իսկ ընդունենք, թե կարիքը ծույլերին կխթանի, ապա, քանի վոր օրենքը սեփականությունը վոչ վոքի բացառիկ իրավունքը չի համարում, տրտունջն ու դժգոհությունը վերջ չեն ունենա և սպանություն սպանության հետևից արյունով կծածկի ձեր հանրապետությունը:

Ի՞նչպիսի արդելակներ եք ուզում դնել անարխիայի դեմ. ձեր իշխանությունն անունով միայն հեղինակություն ունի. այդ իշխանությունը զուրկ է այն բոլորից, ինչ վոր սարսափ և հարգանք է ներշնչում: Այո՛, նման մի հավասարեցրված ժողովրդի մեջ, վորը իրենից բարձր ամեն տեսակ իշխանություն մերժում է, յես առհասարակ վորևէ կառավարություն անհնար եմ համարում:

— Քո հայացքներն ինձ չեն զարմացնում, — պատասխանեց Ռաֆայելը: — Նման մի հանրա-

պետություն դու կամ ընդհանրապես չես պատկերացնում և կամ սխալ ես պատկերացնում: Յեթե Ուտոպիայում յեղած լինեյիր և տեսած այդ յերկրի հաստատությունները ու բարքերը, ինչպես յես, վոր հինգ տարի ապրել եմ այնտեղ և այնտեղից հեռացել եմ միայն այն նպատակով, վոր հին աշխարհի հայացքը դեպի այդ նոր յերկիրը դարձնեմ — այն ժամանակ դու կխոստովանեյիր, վոր ուրիշ վոչ մի տեղ ավելի կատարյալ կազմակերպված հասարակություն չկա:

Պետր Եգիդը դառնալով Ռաֆայելին, պատասխանեց.

— Դու յերբեք չես կարող ինձ համոզել, վոր այդ նոր աշխարհում ավելի լավ սահմանադրություն ունեցող ժողովրդներ լինեն, քան մեզ մոտ: Մեզ մոտ ել բնությունը նվազ կարգի մտքեր չի ստեղծում: Այնուհետև մենք ունենք ավելի հին քաղաքակրթություն և բազմաթիվ գյուտեր, ել չհիշատակենք պատահաբար արված գյուտերը, վորոնք մինչև անգամ ամենանրբամիտ հանճարների մտքով իսկ չեն անցնի:

— Տարիքի հարցը, — առարկեց Ռաֆայելը, — դու կարող եյիր ավելի լավ հետազոտել, յեթե այդ նոր աշխարհի տարեգրությունները կարդացած լինեյիր: Ըստ այդ տարեգրությունների, այնտեղ ավելի վաղ քաղաքներ են յեղել, քան այստեղ՝ մարդիկ: Իսկ ինչ վերաբերում է այն գյուտերին, վորոնք պարտական ենք հան-

ճարներին կամ պատահմունքին, դրանք կարող են նույն ձևով բոլոր աշխարհամասերում ել կատարվել: Յես ընդունում եմ, վոր մենք գիտությունների բնագավառում այդ ժողովրդներին գերազանցում ենք. սակայն արհեստագործության և արդյունագործության գծով շատ յետ ենք նրանցից: Յես ուզում եմ ձեզ այդ առթիվ մի ապացույց բերել.

Նրանց տարեգրություններից պարզվում է, վոր նրանք մինչև մեր այնտեղ գնալը մեր աշխարհի մասին վոչինչ չեյին լսել. միայն մոտ 200 տարի առաջ փոթորկից ջախջախված մի նավ խորտակվել է Ուտոպիա կղզու մերձակայքում: Ալիքները ափ են նետել յեգիպտացիներ և հռոմեացիներ, վորոնք չեն ցանկացել այլևս հեռանալ կղզուց: Ուտոպիացիներն այդ դեպքից մեծ ոգուտ են քաղել. նավաբեկներից նրանք սովորել են այն ամենը, ինչ վոր յեկվորներն իմացել են հռոմեական կայսրության մեջ տարածված գիտությունների ու արվեստների մասին: Այդ առաջին սաղմերը հետզհետե զարգացել են և այն քիչը, վոր սովորել են ուտոպիացիները, նրանց հնարավորություն է տվել գտնել մնացածը: Այսպիսով, հին աշխարհի հետ մի միակ շփումը նրանց հաղորդել է այդ աշխարհի արդյունագործությունն ու վոգին:

Կարող է պատահել, վոր այդ նավաբեկությունից առաջ ել մերոնցից մի քանիսը նույն

ճակատագրով Ուտոպիա ընկած լինեն. սակայն այդ հիշողությունն ամբողջապես ջնջվել է: Թերևս կզգում իմ բնակությունն էլ ապագա դարերում մոռացվի, թեև այդ բնակությունը տեղացիների համար անթիվ առավելություններ ուներ, վորովհետև դա նրանց առիթ ծառայեց յուրացնելու Յեվրոպայի ամենագեղեցիկ գյուտերը:

Սակայն մենք շատ դարերի կարիք ունենք, մինչև կարողանանք նրանց հաստատությունների ամենալավագույնը փոխ առնել: Այն, ինչ վոր տնտեսական և սոցիալական բարեկեցության տեսակետից մեզնից բարձր է — թեև գիտելիքներն ու հարստությունը յերկսի մոտ էլ հավասար են — դա մտավոր այն գործունեյությունն է, վորը նրանց անդադար դրդում է ոգտակար յերևույթներն ուսումնասիրել, կատարելագործել և կիրառել:

— Լա՛վ, ուրեմն,— ասացի յես Ռաֆայելին,— նկարագրիր մեզ այդ զարմանքի արժանի կղզին: Հատկապես խնդրում եմ քեզ բաց չթողնել վորևէ մանրամասնություն: Նկարագրիր մեզ՝ դաշտերը, գետերը, քաղաքները, մարդիկ, բարքերը, հաստատությունները, որենքները, կարճ ասած՝ բոլորը, ինչ վոր դու կարծում ես, թե կցանկանանք իմանալ: Հավատա ինձ, այս ցանկությունը բովանդակում է այն ամենը, ինչ վոր մենք չենք իմանում:

— Մեծ սիրով,—ասաց Ռաֆայելը,—այդ

բոլորն իմ հիշողության մեջ միշտ վառ են: Սակայն այդ պատմությունը շատ յերկար ժամանակ կպահանջի:

— Այդ դեպքում,— ասացի յես,— նախ ճաշենք. այնուհետև մենք կունենանք պահանջվող ժամանակը:

— Համաձայն եմ դրան,— նկատեց Ռաֆայելը:

Մենք տուն մտանք ճաշելու. ապա կրկին պարտեզ վերադարձանք և նստեցինք նույն նստարանի վրա: Ծառաներին հրամայեցի կողմնակի մարդկանց ներս չթողնել ու միացա Պետրին, վոր խնդրում էր Ռաֆայելին կատարել իր խոստումը: Վերջինս տեսնելով մեր լարված ուշադրությունն ու իմացության տենչը, ամփոփեց իր մտքերն ու ապա սկսեց պատմել հետևյալը:—

ԳԻՐՔ ՑԵՐԿՐՈՐԴ

Ուտոպիա կղզու ամենամեծ լայնությունը հասնում է յերկու հարյուր հազար քայլի: Այդ լայնությունը գտնվում է կղզու մեջտեղում և այդտեղից սկսում է աստիճանաբար և համաչափ կերպով մինչև յերկու ծայրերը նվազել այնքան, վոր ամբողջ կղզին հինգ հարյուր մղոն տարածությամբ մի կիսաշրջան է կազմում ու քառորդ լուսնի կերպարանք ընդունում, վորի յեղջյուրները միմյանցից մոտ տասնևմեկ հազար քայլ հեռավորություն ունեն:

Այդ հսկա ավազանը լցվում է ծովով․ ավազանն ամփիթատրոնի ձևով շրջապատող յերկրները մեղմում են քամու կատաղությունը, հանդարտեցնում են ալիքները և ջրային այդ խոշոր զանգվածին տալիս են խաղաղ ջրի տեսք: Կղզու այդ գոգավոր մասը նման է մի միակ, բավական ընդարձակ ու բոլոր կողմերից մատչելի նավահանգստի:

Ծովախորշի մուտքը, մի կողմից ավազա-

կույտերի, իսկ մյուս կողմից խութերի պատճառով, վտանգավոր ե: Մեջտեղը բարձրանում ե մի ժայռ, վորը նշանակալի հեռավորությունից տեսանելի յե և դրա համար ել միանգամայն անվտանգ ե: Ուտոպիացիներն այդ ժայռի վրա կառուցել են մի բերդ, վորը պաշտպանվում ե լավ պահակազորով: Ուրիշ, ջրի տակ ծածկված ժայռեր, նավորդներին պատճառում են անհաղթելի արգելքներ: Միայն տեղացիները գիտեն նավարկելի վայրերը և այդ պատճառով իրավամբ այն ժամանակ կարելի յե մտնել այդ ծովախորշը, յեթե նավի վրա ուտոպիացի մի նավավար կա: Սակայն նախազգուշական այդ միջոցառումներն ել բավական չեյին լինի, յեթե ափին՝ վորոշ հեռավորությունների վրա, փարոսներ չըդրանըվեյին, վորոնք նշում են ճիշտ ուղղությունը: Այդ փարոսների սոսկ տեղաշարժը բավական կլիներ վոչնչացնելու համար թշնամու ամենամեծ նավատորմիղն իսկ՝ տալով նրան այլ ուղղություն:

Կղզու հակառակ կողմը գտնվում են բանուկ նավահանգիստները· ափերը բնական և արհեստական կերպով այնքան լավ են ամրացված, վոր մի բուռ մարդիկ ել կարող են արգելել մի մեծ բանակի ցամաք դուրս գալը:

Ավանդությունների համաձայն, վոր ի միջի այլոց ամբողջովին հաստատվում ե յերկրի աշխարհագրական դիրքով, այդ յերկիրը

միշտ կղզի չի յեղել: Նախապես նա կոչվել ե Աբրաքսա և միացած ե յեղել մայր ցամաքի հետ· Ուտոպը, վորը նվաճել ե այդ յերկիրը, նրան կոչել ե իր անունով:

Այդ նվաճողը մի հանճարեղ գլուխ եր: Նա կարողացավ ընտանեցնել մի կոշտ և բարբարոս ազգաբնակություն ու նրանից կազմակերպեց մի ժողովուրդ, վորի քաղաքակրթության աստիճանն այժմ գերազանցում ե մյուս բոլոր ժողովուրդներին: Ուտոպն հաղթանակից հետո յերկրի տերը դառնալով տասն հինգ հազար քայլ յերկարությամբ մի պարանոց քանդել տվեց, վորը յերկիրը միացնում եր մայր ցամաքի հետ: Այսպիսով Աբրաքսա յերկիրը վերածվեց Ուտոպիա կղզու: Այդ հսկա գործի իրականացման համար Ուտոպն աշխատեցրեց վոչ միայն տեղացիներին, այլ և իր բանակի զինվորներին, վորպեսզի առաջինները հաղթողների կողմից իրենց վրա դրված աշխատանքը նվաստացում ու նախատինք չը համարեն: Այդ յեղանակով հազարավոր ձեռքեր շարժման մեջ դրվեցին և շուտով հաջողությամբ պսակվեց ձեռնարկումը: Հարևան ժողովուրդներն սկզբում հեգնում եյին այդ գործը, վորպես մի դատարկ և ցնորական ձեռնարկում, իսկ յերբ հաջողությամբ վերջացավ՝ նրանց զարմանքը հասնում եր սարսափի:

Ուտոպիա կղզին ունի հիսուն չորս ընդարձակ ու շքեղ քաղաքներ։ Լեզուն, բարքերը, հիմնարկներն ու որենքները բոլոր քաղաքներում ամբողջովին նույնն են։ Հիսուն չորս քաղաքներն էլ շինված են միևնույն հատակագծով. Նրանք ունեն նույն հաստատություններն ու հասարակական շենքերը, վորոնք միայն մի փոքր հարմարեցրած են յուրաքանչյուր վայրի պահանջներին։ Քաղաքների միջև գտնվող ամենամեծ տարածությունը հասնում է քսան չորս մղոնի, իսկ ամենամեծ հեռավորությունը՝ վոտքով մի որվա ճանապարհ է։

Յուրաքանչյուր քաղաքից ամեն տարի իբրև ներկայացուցիչներ ընտրվում են յերեք փորձառու և հմուտ ծերունիներ. վերջինները հավաքվում են Ամաուրոտում, վորտեղ քննարկում են յերկրի գործերը։ Ամաուրոտը կղզու գլխավոր քաղաքն է։ Այդ քաղաքն իր միջին դիրքի շնորհիվ բոլոր պատգամավորների հավաքման ամենանպաստավոր վայրն է։

Յուրաքանչյուր քաղաքին հատկացված է առնվազն քսան հազար քայլ տարածություն շենքերի կառուցման ու կենսամթերքների մշակման համար։

Այդ հողամասի տարածությունն ընդհանուր առմամբ համապատասխանում է քաղաքների հեռավորությանը։ Քաղաքների յերջանիկ բնակիչները յերբեք չեն ձգտում որենքով նախատեսված սահմաններն ընդարձակելու։

Նրանք հողի սեփականատերեր չեն համարում իրենց, այլ ավելի շուտ՝ վարձակալներ։

Դաշտերի մեջ գտնվում են հարմար կառուցված տներ՝ հողագործական ամեն տեսակի գործիքներով։ Այդ տները ծառայում են վորպես բնակարան գործավորների այն խմբերի համար, վորոնք քաղաքից վորոշ ժամկետներում դաշտ են ուղարկվում։ Յուրաքանչյուր հողագործական ընտանիք բաղկացած է առնվազն քառասուն հոգուց, տղամարդիկ և կանայք, ինչպես նաև յերկու ստրուկներից։ Նրանք կառավարվում են ընտանիքի մի հոր և մոր կողմից, վորոնք լուրջ ու բանիմաց մարդիկ են։

Յերեսուն ընտանիք կառավարվում են մի Ֆիլարխի միջոցով։

Ամեն տարի յուրաքանչյուր ընտանիքից քաղաք են վերադառնում քսան հողագործ, վորոնք իրենց յերկու տարվա հողագործական ծառայությունը վերջացրել են։ Ուրիշ քսան հոգի փոխարինում են նրանց, վորոնց ծառայության ժամանակը նոր է սկսում։ Նորեկները հրահանգ ստանում են նրանցից, վոր արդեն մի տարի աշխատել են դաշտում, իսկ հաջորդ տարի վարժեցնելու հերթը հասնում է իրենց։ Այսպիսով հողագործները յերբեք բոլորը միաժամանակ անգետ ու նորեկ չեն, և հասարակությունը վոչ մի յերկյուղ չի կրում իրեն

պարենով ապահովող մարդկանց անփորձությունից:

Տարեկան այդ հերթափոխությունը մի այլ նպատակ էլ ունի: Դրա շնորհիվ քաղաքացիները չափազանց յերկար ժամանակ ֆիզիկական ծանր աշխատանքի յենթակա չեն լինում: Բնականորեն պատահում ե սակայն, վոր վոմանց սրտին շատ մոտ ե լինում հողագործական աշխատանքը. այդպիսիներին սիրով թույլատրվում ե մի քանի տարի անցկացնել դաշտում:

Հողագործները մշակում են դաշտը, խնամում են անասուններին, փայտ են հավաքում և իրենց պարենները ջրային կամ ցամաքային ճանապարհով փոխադրում են հարևան քաղաքը: Նրանք չափազանց հետաքրքրական յեղանակով ստանում են բազմաթիվ հավի ճտեր. Նրանք հավերին թուխս չեն նստեցնում, այլ դրա համար օգտագործում են պահանջվող աստիճանի արհեստական ջերմություն: Հենց վոր հավձագը ձվի կճեպից ազատվում ե, մարդն ե, վոր գրավում ե թխսամոր տեղը և հսկում նրան: Ուտոպիայում շատ քիչ ձիեր են պահում և հենց այդ քչերն էլ շատ կրակոտ են ու գլխավորապես ծառայում են յերիտասարդներին ճարպկության վարժեցնելու գործին: Յեզներն օգտագործում են բացառապես հողագործության և տրանսպորտի համար: Յեզը, ասում են Ուտոպիացիք, չունի

ձիու արագությունը, սակայն համբերատարությամբ և ուժով գերազանցում ե վերջինին. Նա ավելի քիչ ե յենթակա հիվանդությունների, նրան ավելի եժան ե կերակրելը, իսկ յերբ այլևս աշխատանքի պիտանի չե, ծառայում ե վորպես սննդամիջոց:

Ուտոպիացիները ցորենը հացի յեն վերածում. Նրանք խմում են խաղողի, խնձորի ու տանձի հյութը. Ջուրը խմում են կամ առանց խառնուրդի և կամ յեփում են մեղրով ու քաղցըր արմատներով, վոր նրանց մոտ առատորեն աճում են:

Յուրաքանչյուր քաղաքի ու շրջակայքի համար անհրաժեշտ կենսամթերքների քանակը խիստ ճշգրիտ կերպով վորոշված ե: Չնայած դրան, բնակիչները այդ պահանջից շատ ավելի կենդանիներ են բազմացնում ու հացահատիկ մշակում: Ավելցուկը պահում են հաջորդ տարիների համար կամ բաշխում են հարևանների միջև:

Ինչ վերաբերում ե կահկարասիներին, տնային իրերին և ուրիշ առարկաներին, վոր քաղաքից դուրս հնարավոր չե գտնել, այդպիսիք հողագործներն իրենց հետ վերցնում են քաղաքից: Դրա համար նրանք դիմում են քաղաքային վարչությանը, վորը նրանց անմիջապես ու անվճար տալիս ե: Ամեն ամիս նրանք հավաքվում են ու կատարում ընդհանուր տոն:

Հենց վոր հունձքի ժամանակը գալիս է, հողագործ-ընտանիքների Ֆիլարխները քաղաքային վարչություններին հայտնում են իրենց անհրաժեշտ ոժանդակ գործավորների թիվը: Նշանակված որը հնձվորների խմբերը գալիս են և յեթե յեղանակը նպաստավոր է, ամբողջ հունձքը կատարվում է համարյա մի որում:

ՈՒՏՈՊԻԱՅԻ ՔԱՂԱՔՆԵՐԻ, ԻՍԿ ՄԱՍՆԱՎՈՐԱՊԵՍ ԱՄԱՈՒՐՈՏ ՔԱՂԱՔԻ ՄԱՍԻՆ

Ով ծանոթ է Ուտոպիայի քաղաքներից մեկին, ուրեմն նա ճանաչում է բոլորը, քանի վոր նրանք բոլորովին իրար նման են, ինչքան այդ թույլ է տալիս տեղի բնական դիրքը: Այդ պատճառով յես կարող եյի ձեզ նրանցից վորևե մեկը նկարագրել. բայց քանի վոր Ամաուրոտը, վորպես կառավարության և սենատի կենտրոն, մյուս բոլոր քաղաքների հանդեպ նախապատվություն է վայելում, ուստի յես գլխավորապես կանգ կառնեմ այդ քաղաքի վրա:

Ամաուրոտը գտնվում է թեք բարձրացող մի բլուրի զառիթափի վրա: Քաղաքն ըստ ձևի համարյա կազմում է մի քառակուսի. նրա ամենալայն մասն սկսվում է բլուրի գագաթից մի քիչ ներքև, ապա մոտ 2000 քայլ ձգվում է Անիդեր գետի ափերով և վորքան գնում ենք

գետափով դեպի ցած, այնքան էլ մեծանում է քաղաքի լայնությունը [28]):

Անիդերի ակունքը թույլ է. նա գտնվում է Ամաուրոտից դեպի վեր 80.000 քայլի վրա: Իր ընթացքի ժամանակ գետն աստիճանաբար աճում է բազմաթիվ վտակներից հավաքվող ջրերով, վորից յերկուսը միջին մեծություն ունեն: Ամաուրոտի առաջ Անիդերի լայնությունը հասնում է 500 քայլի. այնուհետև մշտապես մեծանում է, մինչև վոր վերջապես 60 մղոն յերկարությամբ հոսելով՝ թափվում է ծովը:

Քաղաքի և ծովի միջև գտնվող ամբողջ տարածության վրա, ինչպես նաև քաղաքից մի քանի մղոն վերև, մակընթացությունն ու տեղատվությունը, վոր որական 6 ժամ են տևում, նշանակալի չափով կասեցնում են գետի ընթացքը: Մակընթացության ժամանակ ովկիանոսը Անիդերի անկողինը 30 մղոն յերկարությամբ լցնում է իր ալիքներով և յետ է մղում նրան դեպի իր ակունքները: Աղի ջուրը գետին հաղորդում է իր դառնությունը. բայց

[28]) Ամաուրոտ—հուն.—մութ, մշուշապատ: Ամաուրոտ քաղաքի նկարագրությունը հիմնականում համապատասխանում է Լոնդոնին (Անիդեր գետ Թայմզն է, վորի յերկու ափերը միմյանց հետ միացած են կամրջով և այլն): Անհասարակ Ուտոպիա կղզու և Բրիտանիայի անալոգիան կասկածից դուրս է համարվում:

Հենց որ սկսում է տեղատվությունը, գետը հետզհետե կրկին մաքրվում է և քաղաքն ըստանում է քաղցր ու ըմպելի ջուր, որ մինչև գետի խառնարանի մոտ մաքուր է մնում: Անիդերի յերկու ափերը քարե մի կամուրջով միանում են իրար: Այդ կամուրջը, որ կազմըված է հրաշալի աղեղնաձև կամարներով, գտնվում է քաղաքի ծովից ունեցած ամենից հեռու ծայրին, որպեսզի նավերը կարողանան մոտենալ ափի ուզած տեղին:

Ամառուստը դեռևս մի յերկրորդ գետով էլ է կտրվում, որը թեև փոքր, բայց գեղեցիկ է և հանդարտ. այդ գետն սկիզբ է առնում քաղաքից փոքր հեռավորություն ունեցող մի բլուրից, և քաղաքը յերկու մասի բաժանելով, միանում է Անիդերի հետ: Ամառուստի բնակիչներն այդ գետի ակունքը շրջապատել են պարիսպներով, որ ձգվում են մինչև քաղաքի արվարձանները: Այսպիսով՝ պաշարման դեպքում, թշնամին չի կարող գետը վոչ թունավորել և վոչ էլ կասեցնել նրա ընթացքը կամ փոխել տալ նրա հունը: Ամենաբարձր կետերից, բոլոր ուղղություններով դեպի ցած են իջնում կղմինդրե խողովակներ, վորոնք ջուրը հասցնում են քաղաքի ավելի ներքևում գտնվող մասերը. այնտեղ, վորտեղ այս միջոցն անգործադրելի յե, բնակիչների համար անհրաժեշտ ջուրը հավաքում են մեծ ցիստեռներների մեջ:

Ամբողջ քաղաքը շրջապատված է բարձր ու հաստ պարսպների մի գոտիով, իսկ շատ փոքր տարածությունների վրա բարձրանում են աշտարակներ ու ամրություններ: Պատնեշները յերեք կողմից շրջապատված են խրամներով, վորոնք թեև մշտապես չոր են, սակայն լայն են ու խոր և ծածկված են փշերով ու ծակող մացառներով: Չորրորդ կողմից գետն ինքն է փոխարինում խրամին:

Փողոցներն ու հրապարակները շատ հարմար են յերթևեկության ու փոխադրությունների համար և լավ պաշտպանված են քամուց:

Շենքերը շատ հարմարություններ ունեն. նրանք աչքի յեն ընկնում շքեղությամբ և մաքրությամբ ու խիտ շարքերով ձգվում են փողոցների յերկու կողմի յերկարությամբ. փողոցների լայնությունը հասնում է 20 վոտնաչափի:

Տների յետևում գտնվում են ընդարձակ պարտեզներ. յուրաքանչյուր տուն մի դուռ ունի փողոցի վրա և մի հատ էլ՝ պարտեզի կողմը: Այդ դռները բացվում են ձեռքի մի թեթև ճնշումով ու ներս են թողնում առաջին պատահածին: Այս դեպքում ուտոպիացիները ղեկավարվում են հասարակական սեփականության սկզբունքով: Անհատական և առանձնահատուկ սեփականության ամեն մի գաղափարն իսկ կանխելու համար, ամեն

տասը տարին մի անգամ նրանք վերճակով փոխում են իրենց տները:

Քաղաքների բնակիչները հաճույքով խնամում են պարտեզները. նրանք մշակում են խաղող, միրգ, ծաղիկ ու ամեն տեսակի բույսեր: Միաժամանակ նրանք ցուցաբերում են այնքան հասկացողություն և ճաշակ, վոր յես ուրիշ վոչ մի տեղ ավելի մեծ պտղավորություն ու առատություն չեմ տեսել միացած գեղեցկության հետ: Հաճույքը միակ պատճառը չէ, վոր նրանց դրդում է պարտիզպանություն անել. քաղաքի տարբեր մասերի միջև գոյություն ունի մշտական մրցակցություն. նրանք մրցում են միմյանց հետ, թե ում պարտեզը ամենից լավ մշակված կլինի: Արդարև, դժվար է մի այլ բան պատկերացնել, վորը ավելի հաճելի և ոգտակար լինի, քան պարտիզպանությունը: Պետության հիմնադիրը լավ է հասկացել այդ և դրա համար ել ամեն կերպ աշխատել է քաղաքացիների մտքերին այդ ուղղությունը տալ:

Ուտոպիացիներն իրենց քաղաքների ընդհանուր պլանի կազմումը վերագրում են Ուտոպին: Այդ մեծ որենսդրի ժամանակը չի բավականացել իր նախագծած շինությունների ու գեղեցկությունների իրագործելու համար: Դրա համար հարկավոր է մի քանի սերունդ. ուստի նա հաջորդներին է թողել իր գործը շարունակելու և կատարելագործելու հոգսը:

Ուտոպիայի տարեգրությունները, վոր կղզու նվաճման որից բարեխղճորեն տարվում են, ընդգրկում են 1760 տարվա պատմություն: Այդ տարեգրությունների համաձայն, սկզբում տները յեղել են փայտե շատ ցածր խրճիթներ, ցեխի պատերով ու հարդե սրածայր կտուրներով. իսկ այժմ տները յեռահարկանի փառահեղ շենքեր են. արտաքին պատերը շինված են քարից կամ աղյուսից, իսկ ներսինները՝ գիպսից: Կտուրները հարթ են ու ծածկված են մանրացրած և չայրվող նյութով, վորը շատ եժան է ու արճճից էլ ավելի լավ է պաշտպանում վատ յեղանակից: Ապակե լուսամուտներ պաշտպանում են քամուց. ապակին կղզում շատ գործածություններ ունի: Ապակու փոխարեն յերբեմն ոգտագործում են մի չափազանց նուրբ հյուսվածք, վորը ամպրայով կամ յուղով հագեցնում են ու այդպիսով, շատ լավ անց է կացնում լույսը և պաշտպանում քամուց:

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Յերեսուն ընտանիքից ամեն տարի ընտրում են մի կառավարող, վորը տեղական հին բարբառով «սիֆոգրանտ», իսկ նոր լեզվով «ֆիլարխ» է կոչվում:

Տաս սիֆոգրանտներ և նրանց 300 ընտանիքները յենթարկվում են մի «պրոտոֆիլար-

վիլ» կամ, ինչպես հին լեզվով էյին ասում՝ «տրանիբորի»:

Սիֆոգրանտները վերջապես, թվով 200, կատարում են վերջին ընտրությունը: Նրանք նախ յերդվում են, վոր իրենց ձայնը տալու յեն ամենալավ ու ամենից ընդունակ քաղաքացուն. ապա անցնում են գաղտնի քվեարկության և ժողովրդի առաջարկած չորս քաղաքացիներից մեկին իշխան են հայտարարում: Վորովհետև քաղաքը բաժանված է չորս մասերի, յուրաքանչյուր քաղաքամաս սենատին առաջադրում է իր ընտրելին:

Իշխանի պաշտոնը ցմահ է, պայմանով, վոր նա ինքն իշխանության ձգտելու մեջ չկասկածվի:

Տրանիբորներն ամեն տարի ընտրվում են, սակայն առանց ծանրակշիռ հիմքերի չե, վոր փոխում են նրանց: Մնացյալ պաշտոնատարներն ամեն տարի փոխարինվում են նորերով:

Ամեն յերեք որը, ըստ կարիքի ավելի հաճախ, տրանիբորներն իշխանի հետ նիստի յեն հավաքվում՝ պետության գործերի մասին խորհրդակցելու և առանձին անհատների միջև յեղած դատերին ամենաարագ լուծում տալու համար. ի միջի այլոց այդպիսի իրավական վեճեր շատ հազվադեպ են:

Սենատի յուրաքանչյուր նիստին մասնակցում են յերկու սիֆոգրանտներ. ժողովրդի

այս ներկայացուցիչները փոխվում են ամեն մի նիստին:

Որենքը նախատեսում է, վոր նախ քան ընդհանուր շահագրգռություն ներկայացնող հարցեր քվեարկելն ու առաջարկն որենքի վերածվելը, յերեք որ առաջ քննարկվեն սենատում:

Սենատից ու ժողովրդական խորհրդից դուրս հասարակական խնդիրների մասին խորհրդակցելը վոճիր է համարվում ու յենթակա յե մահապատժի:

Այս վորոշումներով ուտոպիացիները ձգտում են խափանել իշխանի և տրանիբորների միացումը՝ ազատության դեմ դավեր նյութելու, ժողովրդին բռնակալ որենքներով ճնշելու ու կառավարության ձևը փոխելու համար: Այս տեսակետից սահմանադրությունն այնքան զգոն է, վոր առաջնակարգ կարևորություն ունեցող հարցերը քննարկվում են սիֆոգրանտների ժողովներում. սիֆոգրանտներն այդ մասին տեղեկացնում են իրենց ընտանիքներին: Այդպիսի հարցերն ապա քննվում են ժողովրդական մի հավաքույթում ու վերջապես սիֆոգրանտներն իրենք հիմնովին քննարկելով գործը, իրենց կարծիքն ու ժողովրդի կամքը հայտնում են սենատին: Յերբեմն մինչև անգամ ամբողջ կղզու կարծիքն են հարցնում:

Սենատի կանոններից հիշատակության

արժանի յե հետևյալը. յերբ մի առաջարկ է արվում, այդպիսին հենց նույն որը չի քննարկվում, այլ հետաձգվում է մինչև հաջորդ նիստը: Այսպիսով, վոչ վոք վտանգի չի յենթարկվում, առանց խորը մտածելու ասել մտքովն անցած առաջին կարծիքը, վորն այնուհետև ստիպված կլինի պնդել ինքնասիրությունից ու արժանապատվությունից դրդված, միանգամայն աչքաթող անելով հասարակական բարորությունը: Յեվ ահա մի այդպիսի շտապողականության վտանգը կանխելու համար՝ սենատորներին մտածելու բավական ժամանակ է տրվում:

ԱՐՎԵՍՏՆԵՐԻ ՅԵՎ ԱՐՀԵՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Մի զբաղմունք կա, վորը բոլոր ուտոպիացիների՝ տղամարդկանց և կանանց, ընդհանուր է և վորից վոչ վոք չի կարող հրաժարվել. դա հողագործությունն է: Յերեխաները տեսականորեն այն սովորում են դպրոցներում, իսկ գործնական կերպով՝ քաղաքին կից դաշտերում, վորտեղ նրանց զբոսնելու յեն տանում: Նրանք այնտեղ տեսնում են, թե ինչպես է մշակվում հողը, այնտեղ յերեխաներն իրենք աշխատում են, և այս վարժությունը միաժամանակ զարգացնում է նրանց ֆիզիկական ուժերը:

Բացի հողագործությունից, վորը, կրկնում եմ, բոլորի պարտականությունն է, յուրաքանչյուր ուտոպիացու համար սահմանվում է նաև մի արհեստ: Վոմանք բուրդ են հյուսում կամ կտավ գործում, ուրիշները քարտաշ են կամ բրուտ. վոմանք ել աշխատում են փայտի կամ մետաղի գործերում: Սրանք ամենաառաջնակարգ արհեստներն են:

Կղզու բոլոր բնակիչների հագուստները միևնույն ձևն ունեն, վորն անփոփոխ է: Տարբեր ձև թույլատրվում է միայն տղամարդկանց և կանանց, ամուրիների ու ամուսնացածների համար: Հագուստները գեղեցիկ են և վայելուչ ու հնարավորություն են տալիս մարմնին կատարել ամեն տեսակի շարժումներ, պաշտպանում են ամրան շոգից և ձմրան ցրտից: Յուրաքանչյուր ընտանիք ինքն է կարում իր հագուստները:

Բոլորը, տղամարդիկ և կանայք, առանց բացառության պարտավոր են սովորել վերոհիշյալ արհեստներից մեկն ու մեկը: Քանի վոր կանայք ավելի թույլ են, այդ պատճառով ել նրանք մեծ մասամբ բրդի ու կտավի վրա յեն աշխատում. ավելի ծանր և ուժ պահանջող զբաղմունքներն ընկնում են տղամարդկանց վրա:

Ամեն մեկն ընդհանրապես սովորում է իր ծնողների արհեստը, վորովհետև ազդեցության ու որինակի միջոցով յերեխաների մեջ սովորաբար զարգանում է այդ գործի և՛ ճաշակը և՛ կարողությունը: Սակայն յեթե

մի յերեխա իր մեջ ավելի ճարտարություն ու հակումն է զգում դեպի մի ուրիշ արհեստ, այդ դեպքում նրան փոխադրել են տալիս համապատասխան այդ արհեստով զբաղվող ընտանիքում, և նման դեպքերում վոչ միայն յերեխայի հայրը, այլ և կառավարությունը հոգում է, վոր յերեխան սովորելու մտնի պատվավոր ու ազնիվ ընտանիք:

Մեկը, վոր արդեն մի արհեստ գիտի և ցանկանում է մի ուրիշն էլ սովորել, կարող է այդ անել միևնույն հիմունքներով: Նրան են թողնում ընտրելու յերկուսից մեկը, վորն իրեն ամենից ավելի յե հետաքրքրում ու սրտին մոտ է, և կամ քաղաքն է այդ վորոշում, նկատի առնելով հասարակական պահանջները:

Սիֆոգրանտների ամենաառաջնակարգ ու գրեթե բացառիկ գործունեությունն այն է, վոր հետևեն, վոր վոչ վոք ծուլության չանի և ամեն մարդ անխոնջ կերպով զբաղվի իր արհեստով: Դրանից սակայն չպետք է յեզրակացնել, թե ուտոպիացիները գրաստների նման վաղ առավոտից մինչև ուշ գիշեր աշխատանքի յեն լծված: Մտքի ու մարմնի համար հավասարապես վնասակար այդպիսի կյանքն ավելի դաժան կլիներ, քան տանջանքն ու ստրկությունը: Ցեվ չե՞ վոր ուրիշ ամեն տեղ այդ է գործավորների տխուր վիճակը:

Ուտոպիացիները ցերեկն ու գիշերը բա—

ժանում են 24 հավասար ժամերի. դրանից 6 ժամը գնում է ֆիզիկական աշխատանքի: Հարաբերությունը հետևյալն է. յերեք ժամ աշխատանք կեսօրից առաջ, ապա ճաշ. կեսօրից հետո յերկու ժամ հանգիստ, յերեք ժամ նորից աշխատանք, վորին հաջորդում է ընթրիքը:

Ցերբ մեզ մոտ կեսօր է, նրանց հաշվով ժամը մեկը կլինի: Ժամը 8-ին նրանք պառկում են և քնելուն հատկացնում են 8 ժամ:

Աշխատանքի, ուտելու և քնելու միջև յեղած ժամանակամիջոցն ամեն վոք օգտագործում է ըստ իր ցանկության: Ուտոպիացուն շատ հեռու յե այդ ազատ ժամերը հիմարությամբ ու ծուլությամբ վատնելու միտքը. նրանք այդ ժամերին ավելի շուտ աշխատում են փոփոխություն մտցնել իրենց առօրյա զբաղմունքների ու աշխատանքների մեջ և դրանով թարմանալ, և դա հաջողում է նրանց, շնորհիվ հետևյալ, իսկապես հրաշալի հաստատության.—

Ամեն առավոտ արևածագից առաջ բացվում են հասարակական սրահները: Միայն նրանք պարտավոր են հաճախել այդ դահլիճները, վորոնք իրենց բացառապես գիտություններին են նվիրել. բայց և այնպես բոլորն էլ այնտեղ մտնելու իրավունք ունեն՝ կանայք և տղամարդիկ, ինչպիսի զբաղմունք էլ նրանք ունենան: Ժողովուրդը մասսայորեն

հաճախում է այդ սրահները. այնտեղ ամեն մեկն զբաղում է գիտության այն ճյուղով, վորն իր գործին ու ճաշակին ամենից ավելի համապատասխանում է:

Վոմանք ազատ ժամերը գերազանցապես անց են կացնում իրենց արհեստի վարժություններով. այդպիսիները մեծ մասամբ նրանք են, վորոնց միտքը չի գրավում վերացական մտածությունը: Նրանց վոչ միայն չեն արգելում այդ, այլ գովում են, վորովհետև նրանք համառորեն ցանկանում են ոգտակար լինել իրենց համաքաղաքացիներին:

Ցերեկոյան՝ ընթրիքից հետո, ուտոպիացիները մի ժամ անց են կացնում զրույցով, ամառը՝ պարտեզներում, ձմեռը՝ հասարակական ճաշարաններում: Նրանք զբաղում են յերաժշտությամբ կամ զրույցով: Ուտոպիացիք վոչ թղթախաղ են իմանում և վոչ էլ վորևէ մեկն այն խաղերից, վորոնք նույնքան անհամ են, վորքան և վտանգավոր: Դրա փոխարեն, այնտեղ գոյություն ունի յերկու տեսակի խաղ, վոր մի քանի կողմերով հիշեցնում են մեր շախմատը. մեկը կոչվում է «թվաբանական ճակատամարտ», վորի ժամանակ զորքը ջարդում է զորքին, իսկ մյուսին «մոլությունների ու առաքինությունների կռիվ» անունն են տալիս: Վերջինը ցայտուն կերպով ցույց է տալիս բոլոր մոլությունների անարխիան և այն ատելությունը, վորը նրանց

միմյանցից բաժանում է. դրա հետ մեկտեղ և կատարյալ համերաշխությունը, յեթե այդ վերաբերում է առաքինության դեմ կատարելիք վորևէ հարձակման: Խաղն այնուհետև ցույց է տալիս, թե վորոնք են առանձին առաքինություններին հակադրվող մոլությունները և ինչպիսին են նրանք գործում—ուժով թե բացարձակ, խորամանկությամբ՝ թե կողմնակի ճանապարհներով: Ինչպես առաքինությունը մոլության հարձակումները յետ է մղում, տապալում է և նրա ուժերի լարումն անպտուղ դարձնում. ինչ կերպով վերջապես հաղթանակը տանում է այս կամ այն կողմը:

Յես յենթակա յեմ լուրջ բնույթի մի առարկության, դրա համար էլ շտապում եմ կանխել այն:

Թերևս ասեն, թե որական վեցժամյա աշխատանքը բավական չէ հասարակական կարիքն ապահովելու համար, Ուտոպիան պետք է մի շատ դժբախտ յերկիր լինի:

Իրականում սակայն հակառակն է. վեցժամյա աշխատանքը լի ու լի բավարարում է կյանքի բոլոր պահանջներին ու հաճույքներին և, բացի այդ, կենսամթերքների ավելցուկ էլ է տալիս:

Այդ հանգամանքը դուք հեշտությամբ կըմբռնեք, յեթե միայն հիշեք մյուս ժողովուրդների պորտաբույծ մարդկանց խոշոր թիվը: Նախ գրեթե բոլոր կանայք, վորոնք

յերկրագնդի ազգաբնակության կեսն են կազմում, ապա այն բոլոր յերկրների տղամարդիկ, վորտեղ ամբողջ աշխատանքը կանայք են կատարում. այնուհետև քահանաների ու յեկեղեցական այլ պարազիտների հսկայական մասսան. այս ամենին ավելացրեք բոլոր հարուստ կալվածատերերին, վորոնք մի բառով «ազնվականներ» են կոչվում. հաշվեցեք դեռ նրանց սպասավորների շարանները, համազգեստ հագած անպետքների այդ բազմությունը, ինչպես նաև ուժեղ ու կատարելապես առողջ մուրացիկների հեղեղը, վորոնք իրենց ծուլությունը մարմնական կեղծ պակասություններով ծածկում են. վորպես արդյունք դուք կտեսնաք այն, վոր իրենց աշխատանքով մարդկային սեռի կարիքները հոգացողների թիվը շատ ավելի քիչ է, քան սովորաբար կարծում են: Հաշվի առեք նույնպես, թե գործավորներից վորքան քիչ մարդիկ զբաղվում են իսկապես անհրաժեշտ և օգտակար գոծերով. փողի այս դարում, յերբ վերջինը աստվածություն և ունիվերսալ չափանիշ է, մի շարք դատարկ և անպետք արվեստներ սպասարկում են միմիայն շռայլության ու զեղխությանը: Բայց յեթե գործավորների այդ ամբողջ մասսան բացառապես օգտակար աշխատանքով զբաղեր ու ամեն ինչ մինչև իսկ կարիքից ավելի պատրաստեյին, այդ դեպքում պատրաստված իրերի

գներն այն աստիճան կընկնեյին, վոր գործավորն այլևս իր վարձքով ապրելու հնարավորություն չեր ունենա:

Ընդունենք, վոր օգտակար աշխատանքի մեջ ենք ներգրավում ինչպես նրանց, վորոնք միմիայն պերճանքի առարկաներ են պատրաստում, այնպես էլ այն մարդկանց, վորոնք վոչինչ չեն անում, սակայն նրանցից ամեն մեկը յերկու իսկական գործավորի աշխատանքն ու վարձն է սպառում. այդ դեպքում հեշտ է ըմբռնել, վոր այդ մարդիկ ավելի շատ ժամանակ կունենան, քան անհրաժեշտ է՝ հոգալու համար կյանքի կարիքները, հարմարությունները և մինչև իսկ հաճույքները: Այդ հաճույքների տակ յես նկատի ունեմ միմիայն այնպիսիները, վորոնք միանգամայն բնական են ու ճշմարիտ:

Այն, ինչ վոր յես այժմ այստեղ միայն նախադրում եմ, այդ բոլորը գործնականում իրականացված է Ուտոպիայում: Այնտեղ մի քաղաքի ու նրա շրջակայքի ամբողջ տարածության վրա հազիվ հինգ հարյուր հոգի կլինի,— աշխատանքի համար պահանջող տարիքն և ուժերն ունեցող տղամարդիկ ու կանայք,— վորոնք օրենքով ազատված են աշխատանքից: Վերջինների թվին են պատկանում սիֆոգրանտները. բայց, չնայած դրան, այդ պաշտոնատար անձերն էլ մյուս

քաղաքացիների նման աշխատում են, վորպեսզի իրենց օրինակով քաջալերեն նրանց: Այդ առանձնաշնորհումը տարածվում է նաև այն յերիտասարդների վրա, վորոնց՝ ժողովուրդը քահանաների հանձնարարությամբ և սիֆոգրանտների գաղտնի քվեարկությամբ, սահմանում է արվեստների և գիտությունների համար: Հենց վոր ընտրվածներից մեկը չի արդարացնում հասարակական հույսերը, այդպիսին յետ է փոխադրվում գործավորների դասակարգը: Յեվ ընդհակառակը,— նման դեպքեր հաճախ են պատահում, յերբ մի գործավոր իր ազատ ժամերը մտավոր աշխատանքի նվիրելով բավարար զարգացում է ձեռք բերում, այդպիսին ազատվում է ֆիզիկական աշխատանքից ու բարձրացվում է գիտնականների դասակարգին:

Գիտնականների դասակարգից են ընտրում դեսպաններին, քահանաներին, տրանիբորներին ու իշխանին: Վերջինն առաջ կոչվում եր «բարզամ» այժմ նրան անվանում են «ադեմ»: Մնացյալ բնակչությունն անընդհատ զբաղվում է միայն օգտակար արհեստներով ու կարճ ժամանակամիջոցում արտադրում է ամեն տեսակի հրաշալի պատրաստված իրերի զգալի մասը:

Աշխատանքի կրճատմանը նույնպես նպաստում է այն հանգամանքը, վոր պատրաստված իրերը լավ են օգտագործում

և խնամքով պահպանում: Այդ իսկ պատճառով էլ Ուտոպիայում անելու շատ ավելի քիչ բան կա, քան մեզ մոտ:

Ուրիշ տեղեր մի շենքի կառուցումը և պահպանումը պահանջում է մշտական աշխատանք: Դրա պատճառը պարզ է: Հայրը մեծ ծախսերով կառուցում է ու իր կարողությունը թողնում է անփույթ ու վատնող վորդուն, վերջինս աստիճանաբար ամեն ինչ փչացնում է, այնպես վոր նրա ժառանգը առանց հսկայական ծախսերի չի կարող վերանորոգում կատարել: Հաճախ պատահում է, վոր ժառանգին դուր չի գալիս հայրական տունը և ավելի մեծ ծախսեր կատարելով մի այլ հողամասի վրա նոր շենք է կառուցել տալիս, մինչդեռ իր հոր տունն ավերակ է դառնում:

Այդ բոլորն Ուտոպիայում այնպես հիմնովին կշռադատված ու կազմակերպված է, վոր հազվադեպ է կարիք լինում նոր հողամասերում կառուցել: Տեղի ունեցող վնասվածքներն անմիջապես նորոգում են, իսկ գործը սպառնալից վնասների յերբեք չի հասնում: Այսպիսով, շենքերը չնչին ծախսով ու աշխատանքով պահպանվում են: Գործավորները սովորաբար նյութերն իրենց տանն են պատրաստում, հղկում են փայտը, քարը տաշում. յերբ նրանք վորևե շինարարության են կանչվում, նյութերն ամբողջովին արդեն պատրաստ են և գործը շուտով վերջանում է:

Այժմ յես ձեզ կհայտնեմ, թե ուտոպիացիներին վորքան եժան է նստում իրենց հագուստեղենը: Աշխատանքի ժամանակ նրանք հագնում են կաշի կամ մորթի. այդպիսի մի զգեստը կարող է լրիվ յոթ տարի դիմանալ: Փողոց դուրս գալիս նրանք իրենց վրա գցում են մի տեսակ վերարկու կամ պլինջակ, վորը ծածկում է աշխատանքի հագուստը: Այդ վերնազգեստի գույնը բնական է և բոլոր բնակիչների համար միևնույնը. դա բրդի գույնն է. այդ պատճառով էլ նրանք շատ ավելի քիչ կտոր են սպառում, քան ուրիշ վորևէ տեղ: Բացի այդ, այդ կտորը նրանց շատ եժան է նստում: Վորովհետև կտավը քիչ աշխատանք է պահանջում, դրա համար էլ շատ է գործածվում: Կտավի մեջ նրանք գնահատում են կտավի սպիտակությունը, իսկ մահուդի՝ հարթությունն ու ամրությունը, առանց հյուսվածքի նրբության ու բարակության վրա ուշադրություն դարձնելու: Մի հագուստը նրանց սովորաբար բավարարում է յերկու տարի, մինչդեռ ուրիշ տեղ մարդիկ կարիք ունեն տարբեր գույնի չորս կամ հինգ բրդի հագուստի ու նույնքան էլ մետաքսե շորերի. նրբաձևության իսկական հետևողը պետք է առնվազն տասը ձեռք զգեստ ունենա: Ուտոպիացիներն այդպիսի հանդերձարան պահելու վոչ մի հիմք չունեն, քանի վոր այդ նրանց վոչ ցրտից ավելի լավ պաշտպանել կկարողանա և վոչ էլ կնպաստի նրանց շքեղ հագնվելուն:

Այսպես, Ուտոպիայում բոլորն զբաղված են իսկապես ոգտակար արվեստներով ու արհեստներով: Ֆիզիկական աշխատանքն այնտեղ կարճ է տևում, բայց չնայած դրան այդ կարճ ժամանակամիջոցում աշխատանքն արտադրում է ամեն բարիք և այն էլ՝ առատությամբ: Յերբ արտադրանքների ավելցուկը շատանում է, այն ժամանակ դադարեցնում են որական աշխատանքները, և բնակչությունը մասսայորեն զբաղվում է վնասված ճանապարհները նորոգելով: Սովորական և արտակարգ աշխատանքների կատարյալ բացակայության դեպքում, դեկրետով կրճատվում է աշխատանքի ժամանակը. կառավարությունը յերբեք չի ձգտում անոգուտ աշխատանքներով հոգնեցնել քաղաքացիներին:

Սոցիալական հաստատությունների նպատակն Ուտոպիայում այն է, վոր նախ ամբողջովին ապահովեն հասարակական ու անհատական սպառման կարիքները, ապա յուրաքանչյուր քաղաքացու ըստ հնարավորին, շատ ազատ ժամանակ տրամադրվի՝ արվեստների ու գիտությունների ուսումնասիրման միջոցով միտքն ազատորեն զարգացնելու համար:

Միմիայն այս բազմակողմանի զարգացման մեջ են ուտոպիացիք գտնում ճշմարիտ յերջանկությունը:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Այժմ յես ձեզ կպատմեմ քաղաքացիների փոխադարձ հարաբերությունների, նրանց առևտրի այն յեղանակի մասին, վորով կենսական անհրաժեշտ իրերը բաշխվում են:

Քաղաքը բաղկացած է ընտանիքներից, վորոնց մեծ մասն ազգակցական կապերով միացած են միմյանց: Հենց վոր մի աղջիկ հասուն է դառնում, նրան ամուսնացնում են ու այնուհետև նրանք միասին են ապրում: Տղամարդիկ, վորդիներն ու թոռները մնում են իրենց ընտանիքներում: Ընտանիքի ամենատարիքավոր անդամը միաժամանակ ընտանիքի գլուխն է և, յերբ տարիները նրա մտավոր ուժը թուլացնում են, նրան փոխարինում է տարիքով հաջորդը: Հետևյալ վորոշումները պահպանում են ազգաբնակության հավասարակշռությունը և արգելում, վոր բնակչության թիվը մի քանի կետերում նոսրանա, իսկ ուրիշ տեղերում խտանա:

Ամեն քաղաք պետք է ունենա վեց հազար ընտանիք, իսկ յուրաքանչյուր ընտանիք կարող է միայն 10–12 հասուն տարիքի տղամարդիկ ունենալ: Յերեխաների թիվն որենքով նախատեսված չէ:

Յերբ մի ընտանիք վերոհիշյալ թվից ավելանում է, հավելյալ անդամներն անցնում են

մի ուրիշ ընտանիք, վորը թվով ավելի պակաս է: Յեթե քաղաքի բնակիչների թիվն այնտեղ ապրելու համար սահմանված նորման գերազանցում է, այդ դեպքում, հավելյալ քանակը լրացնում է ավելի նոսր բնակված քաղաքների պակասը:

Վերջապես, յերբ ամբողջ կղզին է գերբնակվում, այդպիսի դեպքերի համար նախատեսված է մասսայական արտագաղթ: Արտագաղթողները գաղութ են հիմնում մոտակա այն ցամաքամասում, վորտեղ հողի ավելցուկ կա:

Գաղութը կառավարվում է ուտոպիական որենքներով և իր մոտ է հրավիրում տեղացի այն հողագործներին, վորոնք կցանկանան նրանց աշխատանքի ու ապրելու յեղանակն ունենալ:

Յերբ կոլոնիստները մի ժողովրդի յեն հանդիպում, վորն ընդունում է ուտոպիացիների հաստատություններն ու բարքերը, այդ դեպքում նրանք միասին կազմում են մի համայնք: Այդ միացումը ձեռնտու յե յերկու կողմի համար էլ, վորովհետև բոլորն ապրելով ուտոպիական որենքների համաձայն, կկարողանան մի միակ ժողովրդի դժվարությամբ կերակրող հողն այնպես մշակել, վոր իր պտղաբերությամբ կբավականացնի միաժամանակ յերկուսին էլ:

Իսկ յեթե կոլոնիստները մի ժողովրդի

հանդիպեն, վորը դիմադրի ուտոպիական որենքներին, այդ դեպքում նրանք այդ ժողովրդին յերկրից այնքան են դուրս մղում, վորքան հողամաս հարկավոր է իրենց. պահանջի դեպքում նրանք գործադրում են նաև զենքի ուժ: Նրանց հիմնական սկզբունքների համաձայն, ամենաարդար ու ամենահիմնավորված պատերազմը մի ժողովրդի դեմ այն է, վորն անմշակ հողերի խոշոր տարածություններ ունի, վորոնք վոչ մի միտք և ոգուտ չունեն. մանավանդ յեթե այդ ժողովուրդը հրաժարում է այդ հողամասերը տրամադրել այնպիսի մարդկանց, վոր ուզում են ոգտագործել այն ու ըստ բնության հավիտենական որենքների կերակրվել:

Յեթե մի քաղաքի ազգաբնակությունն այն աստիճան նվազում է,— և այդպիսի դեպք յերկու անգամ տեղի յե ունեցել սարսափելի համաճարակ հիվանդությունների պատճառով — վոր հնարավոր չէ, առանց կղզու մյուս մասերի հավասարակշռությունն ու կարգը խանգարելու, լրացնել այն — այդ դեպքում կոլոնիաները պարտավոր են վերադառնալ Ուտոպիա: Մեր կղզեցիներն ավելի շուտ կհրաժարվեն բոլոր գաղութներից, քան թե թույլ կտան, վոր իրենց մայր յերկրի թեկուզ մի քաղաքը պակասի:

Յես վերադառնում եմ համաքաղաքացիների փոխադարձ հարաբերության խնդրին:

Ամենատարիքավորը, ինչպես արդեն ասվեց, ընտանիքի գլխավորն է: Կանայք հնազանդում են իրենց ամուսիններին, յերեխաները՝ իրենց հորն ու մորը, իսկ իրար մեջ՝ կրտսերն ավագին:

Ամբողջ քաղաքը բաժանված է չորս հավասար քաղաքամասերի. յուրաքանչյուր քաղաքամասի մեջտեղը գտնվում է կենսամթերքների շուկան: Այդտեղ են բերում բոլոր ընտանիքների աշխատանքի տարբեր արտադրանքները, վոր նախ դրվում են պահեստներում ու ապա տեսակավորելով՝ պահում են համապատասխան մագազիններում:

Յուրաքանչյուր ընտանիքի հայր շուկայում ընտրում է այն, ինչ վոր հարկավոր է իրեն և յուրայիններին: Առանց դրամական կամ վորևէ այլ հատուցումի, նա ստանում է ամեն անհրաժեշտ բան: Ընտանիքի հայրերին յերբեք վոչ մի բան չեն մերժում և, վորովհետև ամեն ինչ առատ է, դրա համար էլ վախենալու հիմք չկա, թե մեկը կարող է իր կարիքից ավելի վերցնել: Արդարև, յեթե մեկը վստահ է, վոր յերբեք վորևէ բանի պակաս չի զգալու, ինչո՞ւ պիտի ուզենա այդ բոլեյլ իր պահանջից ավելին վերցնել: Կենդանի էակների ագահության ու անկշտության պատճառը ապագա քաղցածության վախն է: Մասնավորապես մարդու ընչաքաղցությունը մի այլ հիմք ևս ունի՝ սնափառությունը, վորը դըր-

դում է նրան հարստությամբ գերազանցել իր նմանին և իր ունեցածը ցուցադրելով՝ շլացնել նրան: Ուտոպիական հիմնարկությունները սակայն այդ անմտությունն անկարելի յեն դարձնում:

Այդ շուկաների մի մասը, վորոնց մասին յես հենց նոր խոսում եյի, հատկացված է ուտելեղենի. այդտեղ բերում են բանջարեղեն, միրգ, հաց, ձու, թռչուններ ու անասուններ:

Քաղաքից դուրս գտնվում են սպանդանոցներ, վորտեղ մորթում են ուտելու համար սահմանված կենդանիներին: Սպանդանոցները շատ մաքուր են պահում. արյունը, կեղտն ու մնացորդները փոքրիկ կանալներով դուրս են բերվում հեռու: Ստրուկները մաքրում ու կտորում են միսը, վորից հետո բերում են շուկա. օրենքն արգելում է քաղաքացիներին միս մորթելով զբաղվելը՝ յերկյուղ կրելով, վոր սպանդի սովորությունը կարող է նրանց մեջ աստիճանաբար վոչնչացնել կարեկցությունը — մարդկային սրտի ամենաազնիվ հույզը: Սպանդանոցները քաղաքից դուրս տեղավորելը մի այլ նպատակ ել է հետապնդում, դրանով ուզում են քաղաքացիներին խնայել անհաճո տեսարանից և քաղաքն ազատել կենդանական նյութերի մնացորդներից ու կեղտից, վոր նեխվելով, կարող են հիվանդություններ առաջացնել:

Յուրաքանչյուր փողոցում՝ հավասար հեռավորության վրա, գտնվում են ընդարձակ շենքեր, վորոնք տարբեր անուններով զանազանվում են իրարից: Այնտեղ բնակվում են սիֆոգրանտները. վերջինների 30 ընտանիքներն ապրում են յերկու կողմերին, տասնհինգը դեպի աջ, իսկ տասնհինգը՝ ձախ. սիֆոգրանտների շենքում նրանք բոլորը միասին են ճաշում:

Յուրաքանչյուր ընտանիքի տնտեսները վորոշված ժամին հավաքվում են շուկայում և ճաշողների թվի համապատասխան քանակով կենսամթերք են պահանջում: Միշտ ամենից առաջ հոգում են հիվանդներին, վոր խնամվում են հասարակական հիվանդանոցներում:

Այդ հիվանդանոցները, թվով 4 հատ, գտնվում են քաղաքի շրջակայքում՝ պարիսպներից վորոշ հեռավորության վրա: Նրանք այնքան ընդարձակ են, վոր հեշտությամբ կարելի յե ավանի տեղ ընդունել: Դրանով ուտոպիացիները խուսափում են հիվանդների կուտակումից ու խտացումից, վոր կդանդաղեցնի նրանց ապաքինումը: Բացի այդ, դրանով հնարավոր է լինում վարակիչ հիվանդություն ունեցողին բոլորովին առանձնացնել: Հիվանդանոցներն առատորեն ապահովված են բոլոր տեսակի բուժիչ միջոցներով և այն ամենով, ինչ պահանջվում է առողջությունը վերականգնելու համար: Հիվանդներին խնա-

մում են ամենասիրալիր և անխոնջ հոգացողությամբ ու ամենափորձված բժիշկների ղեկավարությամբ: Ոչ մեկին չեն ստիպում անպայման հիվանդանոցում բժշկվել. սակայն հազիվ թե լինի մեկը, վորը հիվանդության դեպքում տնային խնամքը հիվանդանոցայինից նախամեծար համարի:

Յերբ հիվանդանոցի տնտեսները՝ բժշկական կարգադրության համաձայն, պահանջվածն ստանում են, շուկայում յեղած մնացյալ ամեն ինչն առանց խտրության ճաշողների թվի համեմատությամբ բաժանվում է բոլոր ճաշարանների միջև: Միաժամանակ սպասարկում են իշխանի, կրոնապետի, տրանիբորների, դեսպանների և— յեթե այդպիսիք լինում են, ինչ վոր շատ հազվադեպ է— օտարականների սեղանները: Վերջինները մի քաղաք ժամանելիս իրենց համար պատրաստ գտնում են հատուկ բնակարաններ, վորոնք անհրաժեշտ ամեն ինչով ապահովված են:

Թմբուկը ծանուցում է ճաշի ժամը: Ամբողջ սիֆոգրանտիան, բացառությամբ նրանց, վորոնք տանը կամ հիվանդանոցում հիվանդ պառկած են, գնում են սիֆոգրանտի շենքը և այնտեղ բոլորը միասին ճաշում կամ ընթրում են: Անհատական կարիքի համար թույլատրվում է շուկայից վերցնել կենսամթերք, սակայն միմիայն այն ժամանակ, յերբ

հասարակական պահանջն ամբողջովին բավարարված է:

Ուտոպիացիները սակայն առանց կարևոր հիմքեր ունենալու չեն օգտվում այդ իրավունքից. քանի վոր վոչ վոքի արգելված չէ տանը ճաշել, վոչ մեկն էլ այդ անելու մեջ հաճույք չի գտնում: Անմտություն կլիներ չարչարանքով մի վատ ճաշ պատրաստել, յերբ այդպիսին շատ ավելի լավ ու առանց վորևէ նեղության կարելի յե ստանալ տնից մի քանի քայլ հեռավորության վրա:

Խոհանոցային ամենակեղտոտ ու ամենից ծանր աշխատանքները դրվում են ստրուկների վրա: Կանայք յեփում են կերակուրները, համեմում, դնում են սեղանների վրա ու ապա ամանները հավաքում: Այս աշխատանքներում նրանք հերթափոխում են ըստ ընտանիքների:

Նայած հյուրերի թվին, բաց են անում յերեք կամ ավելի սեղան: Տղամարդիկ նստում են պատի կողմը, կանայք՝ նրանց դիմաց, վորպեսզի մի հանկարծական դեպք պատահելիս — ինչ վոր հղի կանանց հետ յերբեմն պատահում է — նրանք առանց վորևէ մեկին խանգարելու կարողանան դուրս գնալ և քաշվել ծծմայրերի հատուկ սենյակը:

Ծծմայրերի սենյակում մշտապես լինում է տաք ջուր, այնտեղ պահվում է կրակ, կան օրորոցներ, վորտեղ կարելի յե դնել յերեխաներին և յեթե հարկավոր է, չորացնել խան-

ձարուրները, մինչդեռ յերեխաներն զբաղվում են խաղով: Այս բոլորը մասնավորապես կարեվոր ե կանանց համար, քանի վոր յուրաքանչյուր մայր ինքն ե կերակրում իր յերեխային. միայն մահը կամ հիվանդությունը կարող են նրան արգելել այդ: Վերջին յերկու դեպքերում սիֆոգրանտների կանայք շտապ վորոնում են մի ծծմայր, վորպիսին հեշտությամբ կարելի յե գտնել: Այդ ծառայության ի վիճակի յեղող կանայք մեծ հաճույքով և պատրաստակամությամբ տրամադրում են իրենց: Բացի դրանից, դա ամենապատվավոր պարտավորությունն ե և յերեխան հետագայում ծծմորը վերաբերում ե հարազատ մոր նման:

Ծծմայրերի սենյակում գտնվում են նաև հինգ տարեկանից ցածր յերեխաները: Պատանիներ և աղջիկներ սպասարկում են ճաշի ժամանակ: Այն տղաներն ու աղջիկները, վորոնք այդ ծառայության համար պահանջվող ուժը դեռևս չունեն, լուռ կանգնած են մնում: Նրանք ուտում են այն, ինչ վոր նստողները տալիս են նրանց և դրանից դուրս ուրիշ տեղ յերբեք ծածուկ չեն ուտում:

Սիֆոգրանտն ու նրա կինը նստում են առաջին սեղանի մեջտեղը. այդ սեղանը գտնվում ե դահլիճի վերին ծայրում և այդտեղից մի հայացքով կարելի յե ընդգրկել բոլոր սեղանակիցներին: Ամենատարիքավորների և ամենից ավելի հարգվածների միջից յերկու ծե-

րունի նստում են սիֆոգրանտների մոտ. մնացյալ հյուրերն ել, կրկին չորսական հոգի, ճաշում են միասին: Յեթե սիֆոգրանտիայում յեկեղեցի կա, այդ դեպքում այդ յերկու ծերունիների տեղը նստում են քահանան և նրա կինը:

Դահլիճի յերկու կողմերին մեջընդմեջ նստում են յերկու յերիտասարդ և յերկու տարիքավոր մարդիկ: Այս կարգը համախմբում ե միևնույն տարիքի մարդկանց և միաժամանակ խառնում բոլոր տարիքները: Բացի այդ, դրանով իրականացվում ե բարոյական մի նպատակ: Յեվ վորովհետև վոչինչ չի կարող պատահել ու խոսվել, վոր հարևանը նկատել չկարողնա, այդ պատճառով ել ծերության ներշնչող լրջությունն ու պատկառանքը սանձահարում են յերիտասարդության անզսպությունը և թույլ չեն տալիս նրան անպատշաճ խոսքեր կամ վերաբերմունք արտահայտել:

Սիֆոգրանտի սեղանն ամենից առաջ են սպասարկում, ապա հերթով մյուս սեղանները: Ամենալավ կտորները մատուցում են ընտանիքի ավագներին, վորոնք նստում են աչքի ընկնող տեղեր. մնացյալ բոլորին սպասարկում են միանգամայն հավասար: Ծերունիները կարող են իրենց բաժնից ըստ հայեցողության մաս հանել մոտիկ հարևաններին: Այսպիսով, տարիքին մատուցում են պատշաճ պա-

տիվ, վորը միաժամանակ ծառայում ե բոլորի բարորությանը:

Ճաշն ու ընթրիքն սկսում են բարոյական բովանդակությամբ մի գրքի ընթերցանությունով: Վորպեսզի այդ ընթերցումը ձանձրալի չլինի, այդ պատճառով ել սովորաբար կարճ ե տևում: Ընթերցումը վերջանալուց հետո, տարիքավորներն սկսում են խելացի խոսակցություններ, ընդ վորում սրամտությունն ել անպակաս չե լինում: Չցանկանալով բացառապես տիրել խոսակցությանը, տարիքավորներն ընդհակառակը սիրով լսում են նաև յերիտասարդներին. Նրանք վերջիններին հաճախ առիթ են տալիս ու դրդում ազատորեն և առանց քաշվելու արտահայտվել, վորպեսզի դրանով նրանց նկարագրի ու մտքի մասին յեզրակացություն անեն: Հասկանալի յե, վոր նման ազատ ու անբռնազբոս վերաբերմունքի շնորհիվ յերիտասարդները հեշտությամբ հայտաբերում են իրենց:

Ճաշը կարճ ե տևվում, ընթրիքը սակայն յերկար, վորովհետև առաջինից հետո աշխատում են, իսկ ընթրիքից հետո՝ քնում: Ուտոպիացիներն այն կարծիքին են, վոր քունը մարսողության ավելի նպաստավոր ե, քան աշխատանքը: Ընթրիքի ժամանակ յերաժշտությունն և առատ ու համեղ աղանդերներն անպակաս են լինում: Հյուրերի հանգստավետությունն ու վայելքը բարձրացնելու համար չեն

խնայում վոչ համեմունքներ և վոչ ել անուշահոտ բուրմունքներ: Թերևս ուտոպիացիներին մեղադրեն դեպի հաճույքն այդքան չափազանց հակումն ունենալու մեջ. սակայն, նրանց կարծիքով մի հաճույք, վոր իր մեջ վատ բան չի պարունակում, միանգամայն թույլատրելի յե: Այսպես ե ընթանում կյանքն ուտոպիական քաղաքներում: Դաշտում աշխատողները միմյանցից շատ հեռու լինելով՝ չեն կարող միասին ճաշել. այդ պատճառով ել նրանք տանն են ճաշում: Ի միջի այլոց, հողագործ ընտանիքներն ապահովված են ավելի լավ և բազմազան սննդով. Նրանք վոչ մի բանի կարիք չունեն, և չե՞ վոր հենց նրանք են քաղաքները կերակրողները:

ՈՒՏՈՊԻԱՑԻՆԵՐԻ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Յերբ քաղաքացիներից մեկը ցանկանում ե մի ուրիշ քաղաքում ապրող բարեկամի այցելել և կամ սոսկ հաճույքի համար ուզում ե ճանապարհորդել, նման դեպքերում սիֆոգրանտներն ու տրանիբորները սիրով համաձայնություն են տալիս, յեթե նշանակալի արգելիչ հանգամանք չկա:

Ուղևորները միանում են, վորպեսզի միասին ճանապարհորդեն: Նրանք իշխանից անցագիր են ստանում, վորը վավերացնում ե ճանապարհորդելու թույլտվությունը և նշանա-

կում վերադարձի օրը։ Ճամբորդներին տրամադրում են փոխադրական միջոց և մի ստրուկ, վորը խնամում է լծկաններին ու վարում է սայլակը։ Յեթե ուղևորների հետ կանայք չեն լինում, նրանք սովորաբար հրաժարում են փոխադրական միջոցից, քանի վոր այդ կարող է նրանց միայն խանգարել։ Ճանապարհի համար վոչ մի կենսամթերք չեն վերցնում. Նրանց վոչինչ չի էլ կարող պատահել, վորովհետև ամեն տեղ իրենց սեփական տան նման են զգում։

Յերբ մի ճամբորդ մի տեղ մեկ որից ավելի յե մնում, այնտեղ նա զբաղում է իր արհեստով ու արժանանում իր արհեստակիցների սրտագին ընդունելությանը։ Ով անցնում է իր գավառի սահմանները, առանց դրա համար պահանջվող թույլտվությունն ունենալու, համարվում է վոճրագործ։ Յեթե նրան առանց իշխանի կողմից տրված անցագիր ունենալու բռնում են, յետ են դարձնում ու խիստ պատժում։ Կրկնության դեպքում այդպիսին կորցնում է ազատությունը։

Յեթե մի քաղաքացի ցանկանում է պտույտ կատարել իր ապրած քաղաքի շրջակայքում, նա կարող է անել այդ իր կնոջ ու ընտանիքի հոր համաձայնությամբ. սակայն նա իր գնացած տեղում պարտավոր է ճաշից և ընթրիքից առաջ այդտեղ ապրողների հետ հավասար աշխատել։ Այս պայմանով յուրաքանչյուր վոք կարող է հեռանալ քաղաքից և ման

գալ շրջակայքում, քանի վոր ամեն մեկը քաղաքից դուրս նույնքան օգտակար է լինում, վորքան քաղաքի ներսում։

Այսպիսով դուք տեսնում եք, վոր Ուտոպիայում ծուլությունն ու դատարկ ման գալն անհնարին է։ Այնտեղ չի կարելի գտնել վոչ գինետներ, վոչ անբարոյության վայրեր և վոչ էլ ցոփ կյանքը նպաստավորող առիթներ. վոչ գողության բույներ և վոչ էլ գաղտնի հավաքույթներ։ Վորովհետև այնտեղ ամեն մարդ շարունակ բոլորի աչքի առաջ է գտնըվում, այդ պատճառով էլ յերջանիկ անհրաժեշտության մեջ է դրված աշխատել ու հանգըստանալ համաձայն յերկրի օրենքների և սովորույթների։ Ամեն ինչի առատությունը այս մաքուր և գործունյա կյանքի արդյունքն է։ Բարեկեցությունը հավասարապես տարածվում է այս զարմանքի արժանի հասարակության բոլոր անդամների վրա։ Աղքատությունն ու թշվառությունը Ուտոպիայում բոլորովին անծանոթ են։

Յես արդեն հիշատակեցի, վոր Ուտոպիայի յուրաքանչյուր քաղաք յերեք պատգամավոր է ուղարկում Ամաուրոտի Սենատը։ Սենատի առաջին նիստերը հատկացվում են կղզու տարբեր մասերի տնտեսական վիճակագրությունը ճշտելուն։ Հենց վոր հայտաբերում են, վոր մի տեղ «չափազանց շատ», իսկ մի այլ կետում «վոչ բավարար» է, հավասարակշռությունը վե-

բավանդնում են նրանով, որ դժբախտ քաղաքների դատարկ պահեստները լրացվում են ի հաշիվ ավելի առատ քաղաքների վոչ անհրաժեշտ ավելցուկի: Այդ գլխումը կատարվում է առանց հատուցման. ոգնություն ցույց տվող քաղաքը դրա համար մյուսից վոչ մի վարձատրություն չի ստանում, և, ընդհակառակը, վերջինս էլ իր հերթին ուրիշ ժամանակ մի այլ քաղաքից, վորին վոչինչ չի տվել, առանց հատուցման ստանում է:

Այսպիսով ամբողջ ուտոպիական պետությունը կազմում է նույն մեկ և մի ընտանիք:

Հետևյալ տարվա հունձքի լավ կամ վատ լինելու անորոշության պատճառով կղզին մշտապես ապահովում է իրեն յերկու տարվա պաշարով:

Ավելցուկն արտահանում են արտասահման: Արտածում են՝ հացահատիկ, մեղր, բուրդ, վուշ, փայտ, ներկատու նյութեր, մորթի, մոմ, ճարպ և անասուն: Արտահանված ապրանքների մեկ յոթերորդական մասը բաշխվում է ներմուծող յերկրի աղքատների միջև. մնացյալը վաճառում են չափավոր գներով: Այս առևտրի շնորհիվ Ուտոպիան ստանում է վոչ միայն անհրաժեշտ իրեր, ինչպես որինակ՝ յերկաթ, այլ և մեծ քանակությամբ վոսկի ու արծաթ:

Այն ժամանակից, ինչ ուտոպիացիները կատարում են այս առևտուրը, նրանք դիզել են

անհավատալի հարստություն: Այդ պատճառով էլ այժմ նրանց առանձնապես չի հետաքրքրում այն հանգամանքը, թե վաճառքի գումարը կանխիկ են ստանում, թե՞ մաս-մաս: Իբրև վճարման միջոց նրանք սովորաբար ընդունում են մուրհակներ, սակայն մասնավոր անձերի ստորագրությունը նրանք բավարար չեն համարում: Մուրհակները պետք է գրված լինեն օրենքի սահմանած ձևով և այն քաղաքը, վորտեղ վաճառում են՝ իր կնիքով պետք է յերաշխավորի վճարումը: Մուրհակի ժամկետի օրը այն քաղաքը, վորը յերաշխավորել է, առաջարկում է կոնկրետ պարտապանին վճարել: Փողը հանձնում են պետական գանձարան ու այնտեղից բավարարում ուտոպիական պարտատերերին:

Ուտոպիացիները ամբողջ պարտքի մարումը յերբեք միանվագ չեն պահանջում. նրանք անարդար են համարում մեկից վերցնել այն, վորին նա կարիք ունի, յերբ իրենք առանց դրան էլ կարող են բավարարվել: Յերբեմն սակայն դեպքեր են լինում, յերբ նրանք ամբողջ հասանելիքն են պահանջում: Վերջինը այն ժամանակ է պատահում, յերբ նկատում են, վոր իրենց փողն ուզում են ոգտագործել հարևան մի ժողովրդի հետ սպեկուլյացիա անելու և կամ պատերազմ մղելու համար: Վերջին դեպքում ուտոպիացիները հավաքում են իրենց ամբողջ հարստությունը՝ նրանից այսպես ա-

սած չտալ և չնախատեսնված վտանգի դեմ մի մետաղե պատնեշ ստեղծելու համար: Այդ հարստությունները սահմանված են ոտար գնդեր հավաքագրելու ու նրանց առատորեն վարձատրելու համար, վորովհետև ուտոպիական կառավարությունն ավելի շուտ մահվան կմատնի ոտարներին, քան թե իր քաղաքացիներին: Նա գիտի նույնպես, վոր մինչև իսկ ամենակատաղի թշնամուն էլ կարելի յե գնել, յեթե գնման գինը համապատասխանում է նրա ընչասիրությանը: Նրանք գիտեն, վոր փողն առհասարակ պատերազմի հոգին է, լինի դա դավաճաններ կաշառելու և կամ թե բաց կռվի համար: Այդ նպատակների համար, ուտոպիացիները մշտապես իրենց տրամադրության տակ անհաշիվ գանձեր ունեն, սակայն այնուհանդերձ նրանք շատ հեռու յեն փողն աստվածացնելուց, ինչպես այդ անում են ուրիշ ժողովուրդներ: Յես շատ վախենում եմ, վոր յեթե ձեզ պատմեմ, թե նրանք ինչպես են վարվում փողի հետ, դուք ինձ չհավատաք, վորովհետև անկեղծ ասած, յես ինքս էլ յերբեք չեյի հավատա դրան, յեթե անձամբ ականատես յեղած չլինեյի: Յեվ դա հասկանալի յե. ինչքան վոր ոտարերկրյա սովորույթները հակադրվում են մեր սովորույթներին, նույնքան քիչ ենք մենք հավատում դրանց: Սակայն ամեն մի խելացի մարդ, վորը գիտի թե ուտոպիացիներն այս

խնդրում իրենց նկատառումներն ու սովորույթներն ունեն, նա յերբեք չի զարմանա, վոր նրանց մոտ վոսկին և արծաթը բոլորովին այլ գործադրություն ունի քան մեզ մոտ:

Ուտոպիայում առևտրական փոխադարձ հարաբերությունները կատարվում են առանց դրամի. փողը նրանք պահում են սև որվա համար, վորը թեև անհավանական, բայց և այնպես հնարավոր է: Վոսկին և արծաթն այդ յերկրում ավելի մեծ արժեք չունեն, քան այն, վոր բնությունը տվել է դրանց. այդ յերկու մետաղները շատ ավելի ցած են գնահատում, քան յերկաթը, վորը մարդկանց նույնքան անհրաժեշտ է, վորքան ջուրն ու կրակը: Արդարև վոսկին և արծաթը չունեն վորևէ վորակ, վոչ մի հատկություն, վորի բացակայությունը մարդկային կյանքի համար բնական ու իսկական չարիք լիներ: Միայն մարդկային հիմարությունն է, վոր այդ մետաղների հազվագյուտ լինելու պատճառով, դրանց այդքան բարձր է գնահատում: Բնությունը, ինչպես աքանչելի մայր, այդ անպետք և ունայն բարիքները շատ խորն է թաղել, մինչդեռ ոդը, ջուրը, հողը և այն բոլորը, վոր լավ են ու իսկապես ոգտակար, բաց ընկած են և բոլորին մատչելի յեն:

Ուտոպիացիներն իրենց գանձերը չեն փակում աշտարակներում կամ ամրացված ու անմատչելի ուրիշ շենքերում. այդ դեպքում ու-

վորական մարդը կարող է միամիտ չարամըտությամբ կասկած անուցել, թե իշխանն ու սենատը խաբում են ժողովրդին և նրան կողոպտելով ուզում են հարստանալ: Ուտոպիացիները վոսկուց և արծաթից վոչ ամաններ են ձուլում և վոչ էլ արհեստական իրեր պատրաստում, վորպեսզի պատերազմի դեպքում, յերբ բանակի պահպանման փողը չբավականացնի, ստիպված չլինեն զրկել ժողովրդին նրա վարժըված ճոխությունից ու զարդերից, վորոնց բացակայությունը նրան մեծ զրկանք կթվա:

Այդ դժբախտությունը կանխելու համար, ուտոպիացիները հղացել են մի միտք, վորը նրանց մյուս հաստատություններին ամբողջովին համապատասխանում է. սակայն դրա փոխարեն հակասում է մեր հասկացողություններին, քանի վոր մեզ մոտ վոսկին ու արծաթը աստվածային պատիվների յեն արժանանում: Նրանք ուտում և խմում են կավի կամ ապակյա ամաններով, վորոնք ճաշակավոր և գեղեցիկ ձև, բայց չնչին արժեք ունեն: Վոսկին ու արծաթը սահմանված են ամենաստոր գործածության իրերի համար. նրանցից պատրաստում են մինչև իսկ միզարաններ՝ վոչ միայն հասարակական շենքերի, այլև առանձին տների համար, կամ կռում են ստրուկների շղթաներ ու կապանքներ և պատվազրկված վոճրագործների համար տարբերող նշաններ: Պատվազրկված չարագործները կրում են մատանիներ և ականջի օղեր. վզին՝ վոսկե թել, իսկ գլխին՝ վոսկե շրջանակներ:

Այսպիսով նրանք կիրառում են ամեն միջոց, վորպեսզի վոսկին ու արծաթը արհամարհանքի մեջ գտնվեն: Ուրիշ ժողովուրդներ հարստության կորուստը համարում են ամենամեծ աղետը. սակայն յեթե ուտոպիացիներից վերցնեն նրանց խոշոր հարստությունները, դրանից վոչ մեկը մի գրոշ չի կորցնի:

Ուտոպիացիները ծովափում հավաքում են մարգարիտներ, ժայռերից՝ ադամանդներ ու այլ թանկագին քարեր: Առանձնապես հետամուտ չլինելով այդ հազվագյուտ իրերին, նրանք այնուամենայնիվ հաճույքով վերամշակում են և դրանցով զարդարում են փոքր յերեխաներին: Վերջիններն այդ զարդարանքներով սկզբում շատ հպարտանում են, սակայն հետզհետե մեծանալով՝ սկսում են հասկանալ ու գիտակցել, վոր նման զվարճությունները թույլատրելի յեն միայն փոքր յերեխաներին: Առանց սպասելու ծնողների ցուցմունքներին, նրանք ինքնակամ իրենց վրայից հանում են բոլոր զարդարանքները: Այդպես էլ մեզ մոտ յերեխաներն են, վոր մեծանալով հետզհետե դեն են գցում իրենց տիկնիկներն ու խաղալիքները:

Այս կարգերը խստորեն տարբերվում են ուրիշ ժողովուրդների կարգերից ու հիմնարկներից, և ուտոպիացիների սրտում դրոշմում

են այնպիսի զգացում ու համոզում, որ միանգամայն հակադիր են մեզ: Այդ տարբերությունն ինձ մասնավորապես անակնկալի բերեց, երբ տեսա թե նրանք ինչպես դիմավորեցին անեմոլիան[29]) դեսպանությանը:

Անեմոլիայի դեսպաններն Ամաուրոտ յեկան այն ժամանակ, երբ յես գտնվում եյի այնտեղ: Որովհետև նրանք առաջնակարգ կարևորություն ներկայացնող հարց պետք է քննարկեյին, այդ պատճառով էլ սենատը (այսինքն յուրաքանչյուր քաղաքից յերեք հոգի) հավաքվեց մայրաքաղաք և այնտեղ սպասում եր նրանց: Մինչ այդ, յերբ հարևան ժողովուրդների դեսպաններ գալիս եյին Ուտոպիա, յերևում եյին պարզ և համեստ հագուստներով, որովհետև լավ ծանոթ եյին ուտոպիական բարքերին: Նրանք գիտեյին, որ այնտեղ ճոխ զարդարանքին ոչ մի նշանակություն չեն տալիս, մետաքսն արհամարհում են, իսկ ոսկին դատապարտված է անպատիվ գործածությունների:

Անեմոլացիները սակայն կղզուց շատ հեռու ապրելով՝ Ուտոպիայի հետ շատ քիչ հարաբերություն ունեյին: Յերբ նրանք իմացան, որ կղզու բնակիչները շատ հասարակ և միաժամանակ միատեսակ են հագնվում, այդ հանգամանքը նրանք վերագրեցին ուտոպիացինե-

29) Հունարեն քամի բառից:

րի անսովոր աղքատությանը: Այդ պատճառով էլ նրանք ավելի սնափառությունից, քան խելացիությունից դրդված՝ վորոշեցին հանդես գալ իրենց ամբողջ փայլով, ինչպես աստվածներ: Դրանով նրանք ուզում եյին շլացնել աղքատ կղզեցիներին:

Յերեք մինիստրները, վորոնք Անեմոլիայում շատ յերևելի և բարձրաստիճան մարդիկ եյին, հարյուր հոգուց բաղկացած շքախմբով, բոլորը տարբեր գույնի մետաքսե շորեր հագած, հանդիսավոր կերպով մուտք գործեցին քաղաք: Իրենք՝ դեսպանները, հագած եյին ճոխ և հրաշալի զգեստներ՝ հյուսված վոսկե թելերով: Վզերին կրում եյին վոսկե շղթաներ, մատանիներ և ողեր. գլխարկների վրա՝ ժապավեններ, վոր փայլում եյին թանկագին քարերով: Մի խոսքով, դեսպաններն իրենց ծածկել եյին այն ամենով, ինչ վոր Ուտոպիայում համարվում եր անպատվության նշան, ստրուկների պատիժ և փոքր յերեխաների խաղալիք:

Դեսպանների ու նրանց շքախմբի հպարտ ինքնաբավականությունը,— վորոնք իրենց պետության ճոխությունը համեմատում եյին մասսայորեն իրենց դիմավորող ուտոպիական ժողովրդի պարզ ու հասարակ հագուստեղենի հետ,— առաջիններին պատճառում եր մեծ հաճույք, իսկ վերջինների ծիծաղն եր շարժում: Մյուս կողմից, պակաս տարօրինակ չեր

ոտարականների հիասթափությունը, քանի վոր ամենևին իրենց վրա չհրավիրեցին բնակիչների վոչ հարգանքը և վոչ էլ մեծարանքը:

Չհաշված ուտոպիացիների մի փոքրիկ թիվ, վոր զանազան գործերով յեղել եր արտասահմանում, մնացյալ բոլորը ոտարականների հանդիսավոր յերթը դիտում եյին ուսերի շարժումով: Նրանք վողջունում եյին ոտարականների ստրուկներին, վերջիններին համարելով դեսպաններ և, ընդհակառակը, վոչ մի ուշադրություն չեյին դարձնում դեսպանների վրա՝ նրանց ստրուկների տեղ ընդունելով, քանի վոր նրանք զարդարված և ծանրաբեռնված եյին վոսկով, ինչպես ուտոպիական ստրուկները:

Այն յերեխաները, վորոնք իրենց ադամանդներն ու մարգարիտները արդեն հանել եյին, բոթում եյին իրենց մայրերին, յերբ դեսպանների գլխարկների վրա տեսան այդ զարդերը:

— Մի տես, մա՛յրիկ, այդ մեծ խեղկատակին,— ասում եյին նրանք,— վոր դեռ զարդեր ե կրում, կարծես յերեխա լինի: Իսկ մայրերը լրջորեն պատասխանեցին. «Լռիր, զավակս, հավանաբար դա պատգամավորության ծաղրածուներից ե»:

Վոմանք դատողություններ եյին անում վոսկե շղթաների մասին. «Դրանք չափազանց թույլ են, կարող են հեշտությամբ փշրել. բա-

ցի այդ, պինդ ձգված չեն, ստրուկը, յեթե ուզի՝ կարող ե ազատվել դրանցից ու փախչել»:

Ամաուրոտում իրենց հանդիսավոր մուտքից յերկու օր հետո՝ դեսպաններն իմացան, վոր վոսկին Ուտոպիայում նույնքան արհամարհում են, ինչքան այն իրենց յերկրում գնահատում են: Նրանք առիթ եյին ունեցել մի ստրուկի վրա այնքան վոսկի և արծաթ տեսնելու, վորքան չուներ իրենց ամբողջ շքախումբը: Այդ հանգամանքը ընկճեց նրանց հպարտությունը: Նրանք հասկացան, վոր իրենց հիմարների տեղ են ընդունել և շուտով, ամոթահար թողեցին փառահեղությունը, վոր դեռ վոչ շատ առաջ հպարտությամբ կրում եյին: Սերտ հարաբերությունները, վոր այնուհետև նրանք ունեցան ուտոպիացիների հետ, նրանց հարկադրեցին ավելի մոտից ճանաչել բնակիչների հայացքներն ու բարքերը:

Ուտոպիացիներին չափազանց տարօրինակ ե թվում, վոր բանական եյակներ կարող են աստվածացնել մի մարգարտի կամ քարի չնչին և կասկածելի փայլը, մինչդեռ նրանք պետք ե իրենց ուշադրությունը հառեն աստղերին և արևին: Նրանք տխմարի տեղ են դնում այն մարդուն, վորն իրեն ավելի ազնիվ ու հարգանքի արժանի յե համարում միայն այն պատճառով, վորովհետև ծածկված ե նուրբ բրդով. իսկ չե՞ վոր այդ բուրդը խուզված ե վոչխարի

մեջքից և նախապես յղել է այդ կենդանու հագուստը: Նրանց զարմացնում է այն հանգամանքը, որ ոսկին, ինքնին միանգամայն անպետք մի իր, արհեստական խոշոր արժեք է ստացել և մինչև իսկ ավելի բարձր է գնահատվում, քան մարդը, չնայած որ մարդն է այդ արժեքը տվել ոսկուն և ըստ քմահաճույքի օգտագործում է զանազան նպատակների համար:

Բացի այդ, ուտոպիացիները չեն կարողանում ըմբռնել, թե ինչպես մի հարուստ, առանց որևէ գիտելիքի, հիմար, ինչպես փայտի կոճղը և նույնքան զազիր, ինչքան և անբարոյական, իրենից կախման մեջ է պահում բանական ու առաքինի մարդկանց մի բազմություն միմիայն այն պատճառով, որ նրանց մի քանի դրամ է տալիս: Ցերջանկությունը սակայն, ասում են ուտոպիացիները, կարող է նրանց դավաճանել, իսկ օրենքը (որ ճիշտ այնպես, ինչպես յերջանկությունը, հաճախ գագաթից փոշու մեջ է շպրտում), կարող է նրանից խլել փողերը և գցել իր ամենից ավելի արհամարհված ծառաների ձեռքը: Նման դեպքում այդ միևնույն հարուստն իրեն շատ յերջանիկ կհամարի, յեթե հաջողի իր փողերով միասին, որպես շուկայի ապրանք, ծառայության մտնել իր նախկին ստրուկի մոտ:

Մի ուրիշ հիմարություն էլ կա, որ ուտոպիացիներին ավելի յե նողկանք պատճառում և գրեթե բոլորովին անհասկանալի յե նրանց: Վերջինս այն է, որ մի մարդու իր հարստության պատճառով համարյա աստվածային պատիվներ են տալիս, թեև այդ յերկրպագուները վերջինիս ոչ պարտապանն են և ոչ էլ որևէ կախումն ունեն նրանից: Այդ հիմարները շատ էլ լավ գիտեն, թե զզվելի ժլատը ինչ տեսակի անձնասեր Կրեսոս է: Նրանք շատ լավ են իմանում, որ իրենք նրա ամբողջ գանձից յերբեք մի գրոշ չեն ստանալու:

Այս տեսակետները մեր կղզեցիները քաղում են մասամբ գիտություններն ուսումնասիրելով, մասամբ էլ այն դաստիարակության շնորհիվ, որ նրանք ստանում են մի պետությունից, որի հաստատությունները մեր բոլոր անհեթեթությունների հետ հակասության մեջ են գտնվում: Ճշմարիտ է, որ շատ սակավաթիվ մարդիկ են ազատված ֆիզիկական աշխատանքից և բացառապես նվիրված են մտքի զարգացմանը: Այդ, ինչպես արդեն ասացի, նրանք են, որոնք մանկությունից հայտաբերել են յերջանիկ ունակություններ, թափանցող միտք ու գիտական հակում: Բայց, չնայած դրան, բոլոր յերեխաներին տրվում է լավ դաստիարակություն. բացի այդ, քաղաքացիների խոշոր մեծամասնու-

թյունը—տղամարդիկ և կանայք—իրենց ամբողջ ազատ ժամերը նվիրում են մտավոր պարապմունքին:

Ուտոպիացիները գիտություններն ուսումնասիրում են իրենց մայրենի լեզվով: Այդ լեզուն հարուստ է, ներդաշնակ և մտքի հավատարիմ թարգման: Ավել կամ պակաս փոփոխություններով՝ այդ լեզուն տարածված է այդ յերկրամասի նշանակալի տարածության վրա:

Ուտոպիացիները մինչև մեր ժամանումը վոչինչ չեյին լսել մեր աշխարհի նշանավոր փիլիսոփաների մասին, մինչդեռ յերաժշտության, դիալեկտիկայի, թվաբանության և յերկրաչափության բնագավառում նրանք արել եյին միևնույն հայտաբերումները, ինչ վոր մենք: Յեթե նրանք համարյա ամեն բանում հավասար են մեր նախնիքների հետ, մի բնագավառում սակայն, ընդհակառակը, մեծ չափով յետ են մնում—դա ժամանակակից դիալեկտիկան է:

Դեռևս նրանք չեն հնարել սեղմ վոճի, ճապաղության ու փոխաբերության այն նուրբ կանոններից և վոչ մեկը, վորոնց մասին տրամաբանության պրոֆեսորները մեր յերիտասարդությանը դասավանդում են լսարաններում «Perva Logicalia»-ի (տրամաբանության սկզբնական հիմունքները) դասագրքով: Նրանք դեռևս չեն հասել վերացության:

Իսկ ինչ վերաբերում է մարդուն, նրա ընդհանուր եյության, կամ՝ մետաֆիզիկների արտահայտությամբ՝ ունիվերսալ մարդուն, այդ ամենահսկաներից ամենահսկային, վորին մենք առհասարակ հասել ենք, Ուտոպիայում մինչև իսկ չեն նկատել: Դրա փոխարեն ուտոպիացիները չափազանց ճշգրտորեն գիտեն համաստեղության ընթացքն ու յերկնային մարմինների շարժումը: Նրանք հատուկ մեքենաներ են հնարել, վոր շատ մանրամասն արտացոլում են արևի, լուսնի և հորիզոնում տեսանելի աստղերի փոխադարձ հարաբերությունները: Ինչ վերաբերում է մոլորակների ու աստղային յերկնքի հմայությունների բոլոր խաբեբայական տեսակներին, այդ մասին նրանց մտքով անգամ չի անցնում. յերկար դիտողությունների վրա հիմնված նշաններով նրանք գուշակում են անձրևը, քամին ու յեղանակի այլ փոփոխությունները: Բնական յերևույթների՝ մակընթացության և տեղատվության, ծովի աղիության, յերկնքի ու յերկրի ծագման և կառուցվածքի բացատրման համար նրանք բացի բնապատմական յենթադրություններից, այլ յենթադրություններ չեն անում: Նրանց տեսությունները վորոշ կետերով հիշեցնում են հին դարի փիլիսոփայության տեսակետները. բայց յերբեմն հեռանում են նրանցից.

սակայն նորագույն՝ իրենց կողմից կառուցված տեսություններում այնպես, ինչպես և մեզ մոտ, գոյություն ունեն տարակարծություններ:

Բարոյափիլիսոփայության մեջ նրանք քննարկում են միևնույն հարցերը, ինչ որ մեր փիլիսոփաները: Մարդու հոգու, նրա մարմնի ու արտաքին աշխարհի մեջ նրանք որոնում են այն, ինչ որ կարող է նպաստել մարդու յերջանկացմանը: Նրանք իրենց հարց են տալիս, թե «լավ» ածականը անխտիր նյութական և մտավոր յերջանկության բոլո՞ր տարրերին է վերաբերում, թե բացառապես հոգեկան կարողությունների զարգացմանը: Նրանք հետազոտում են առաքինությունն ու հաճույքը, սակայն եյական և ամենաազնիվ հետազոտությունը նրանց մոտ համարվում է մարդկային յերջանկության պայմանի կամ տարբեր պայմանների հայտաբերումը:

Կարող է պատահել, որ եպիկուրականության[30]) հանդեպ մեծ հակում ունենալու մեջ

[30]) Փիլիսոփայական ուսմունք. հիմնադիրն է Եպիկուրը (Epukuros), որ ապրել է 341—270 թ. թ. (մ. թ. ա.): Եպիկուրը հին դարի նշանավոր հույն փիլիսոփա-մատերիալիստն է. ծագումով աղքատ ուսուցչի որդի: Եպիկուրը թողել է մոտ 300 յերկասիրություններ, որոնց թվում նաև իր կյանքի գործը՝ «բնության մասին», կազմված 37 գրքից, որից մեզ

նրանց մեղադրեն, քանի որ ուտոպիացիների հասկացողությամբ վայելքը թեև յերջանկության ոչ միակ, բայց և այնպես ամենաեյական տարրն է կազմում: Սակայն տարօրինակն այն է, որ նրանք մոլի հաճույքի այդ բարոյականությունը հիմնում են մի լուրջ և խիստ կրոնի վրա: Նրանց հիմնական սկզբունքն է յերբեք չվիճել «բարիի» կամ «չարի» մասին, առանց յելակետ ունենալու կրոնի ու փիլիսոփայության աքսիոմաները, այլապես նրանք իրենց տրամաբանական հետևությունները կառուցած կլինեյին թերի և կեղծ տեսությունների վրա:

Նրանց կրոնական կատեխիզմը հետևյալն է. հոգին անմահ է. աստված ինքը բարի լինելով՝ ստեղծել է հոգին, որպեսզի այն յերջանիկ լինի: Առաքինությունը մահից հետո վար-

հասել են միայն 26-րդ գրքի կտորները: Եպիկուրը հանդիսանում է նաև հին դարի խոշոր աթեիստը: Նրա այն թեզը, թե շարժման պատճառը հենց մատերիան է, փաստորեն նշանակում էր աստվածների վերացում և աշխարհի գործերում նրանց միջամտության ժխտում: Մարքսն Եպիկուրին անվանում է հին դարի ռադիկալ լուսավորիչ: Լենինը նկատում է, որ Եպիկուրի փիլիսոփայությունը բովանդակում է մի շարք «հանճարեղ կռահումներ» և տալիս է «գիտության ճանապարհի ցուցմունքը»: Եպիկուրի փիլիսոփայության յելակետը մատերիայի ընդունումն է: Ատոմա-

ճատրվում է. վոճրագործությունը խիստ պատժվում է:

Այս դոգմաները թեև կրոնին են վերաբերում, բայց և այնպես, ուտոպիացիները կարծում են, վոր բանականությունը միայն բավական է դրանց հավատալու և այդպիսիններն արդարացնելու համար: Նրանք, առանց տատանվելու հայտարարում են, թե անխելք է այն մարդը, վորը բոլոր թույլատրելի և անթույլատրելի միջոցներով չի ձգտում հաճույք ըստեղծել: Այդ դեպքում առաքինությունը միմիայն այն կլինի, վորպեսզի յերկու հաճույքներից ընտրի ամենահաճելին և, ընդհակառակը, խուսափի այն տհաճություններից, վորոնց ա-

կան իր տեսության հիման վրա, նա փորձում է կառուցել նաև բանական հաճույքների ուսմունքը: Գերագույն բարիքը—դա յերջանկությունն է, ամեն տեսակ տառապանքների բացակայությունը, հաճույքը, սակայն վոչ րոպեյական, անցողիկ, այլ յերկարատև հաճույքը: Եպիկուրը պնդում է, վոր պետք է ազատագրվել այն բոլորից, վոր խանգարում և արգելակում է հաճույքը: Նա փորձում է ապացուցել, թե մահվան սարսափը դատարկ նախապաշարում է, թե մահից հետո վոչինչ չկա և դրա համար էլ կարիք չկա վախենալու, քանի վոր հոգին ինքը մահկանացու յե: Մյուս մոմենտը, վորն արգելակում է յերջանկություն ձեռք բերելուն, նրա կարծիքով, աստվածային ուժից վախենալն է:

ղետալի հետևանքն ավելի մեծ է, քան ձեռք բերվելիք հաճույքը:

Սակայն խիստ և ծանր առաքինությունների վարժվելը, կյանքի հաճույքներից հրաժարվելը, ինքնակամ կերպով ցավին յենթարկվելն ու մահից հետո յերկրային կյանքի համար վոչ մի վարձատրություն չակնկալելը—դա մեր կղզեցիների աչքում բոլոր հիմարությունների գագաթնակետն է:

Յերջանկությունն, ասում են նրանք, ամեն տեսակ բավականության մեջ չի գտնվում. միայն լավ ու պարկեշտ բավականություններն են ընձեռնում այն: Այդ հաճույքներն են ահա, դեպի վորոնց ամեն ինչ, մինչև իսկ առաքինությունը, անհաղթելիորեն մղում է մեր բնությունը: Այդպիսի հաճույքներն են, վորոնք հիմնավորում են ճշմարիտ յերջանկությունը: Նրանք առաքինություն են համարում այն կյանքը, վորը համատեղելի յե բնության օրենքների հետ: Աստված յերբ մարդուն ստեղծեց, նա նրա համար այլ կոչում չսահմանեց:

Այն մարդը, վոր հետևում է բնության մղումներին, իր տարերային հակակրանքների ու համակրանքների ժամանակ ականջ է դնում միայն բանականության ձայնին: Բանականությունը սակայն բոլոր մահկանացուներին ամենից առաջ սեր և հարգանք է ներշնչում դեպի աստվածային մեծությունը, վորին մենք բո-

լորըս պարտական ենք կյանքն ու բարեկեցությունը։ Այնուհետև բանականությունը մեզ սովորեցնում է ուրախ և անվիշտ ապրել ու ձգտել նույնն ստեղծել նաև մեր մերձավորի, մեր յեղբոր համար։

Արդարև, յեթե առաքինության խավար և ֆանատիկ ջատագովը՝ վայելքի վոխերիմ թըշնամին հանձնարարում է ընդորինակել իր գործերը, իր գիշերային հսկումները, ինքնախարազանումները, նա նույնպես իր բոլոր ուժերով ձգտում է մեղմել մերձավորի վիշտն ու դժբախտությունը։ Այդպիսի խիստ մորալիստը չի պարծենում նրանով, վոր մխիթարում և օգնում է մերձավորին. նա մտածում է, վոր մարդկային լավագույն առաքինությունը կայանում է մերձավորի վիշտն ամոքելու, նրան հուսահատությունից և հոգսերից ազատելու կամ ուրիշ խոսքով, նրան կյանքի հաճույքներին մասնակից անելու մեջ։

Յեվ ի՞նչու բնությունը բոլորիս չպետք է ներշնչի մեզ համար էլ ստեղծել միևնույն բարիքը, ինչ վոր ուրիշների համար։ Չե՞ վոր յերկու դրույթներից մեկն է իշխող լինելու. հաճելի գոյությունը, այսինքն ուրախ կյանքը պիտի լինի կամ բարի և կամ չար։ Յեթե այն չարիք է, այդ դեպքում մենք վոչ միայն չպետք է օժանդակենք մեր յեղբայրակիցներին ճաշակել այն, այլ պետք է դրանից ազատենք նրանց, վորպես մի վտանգավոր և չարագործ բանից։

Իսկ յեթե այն բարի յե, այն ժամանակ պետք է ձեռք բերենք այն ինչպես ուրիշների, այնպես էլ մեզ համար։ Ինչո՞ւ մենք մեր նկատմամբ պետք է ավելի պակաս նպաստավոր տրամադրված լինենք, քան ուրիշների հանդեպ։ Բնությունը մեզ կարեկցություն ներշնչելով մեր յեղբայրների հանդեպ, չի հրամայում մեր նկատմամբ դաժան և անկարեկից լինել։

Ահա թե ինչն է դրդում ուտոպիացիներին այն կարծիքն ունենալ, վոր կատարյալ հաճելի կյանքը, այսինքն ուրախությունը, մեր բոլոր գործողությունների նպատակը դարձնելու ձգտումը հենց բնության պահանջն է, և առաքինությունը բնության կամքին հետևելն է։

Բնությունը, ասում են նրանք այնուհետև, կոչ է անում բոլոր մարդկանց օգնել միմյանց և միասնաբար կատարել կյանքի ուրախության տոնը։ Այս կանոնն արդարացի յե. վոչ մի անհատ չկա, վոր մնացյալ մարդկանցից այնքան բարձր կանգնած լինի, վոր նրա մասին միայն բնությունը հոգ տանի։ Բնությունը բոլորին էլ միևնույն կերպարանքն է տվել. նա բոլորին միատեսակ է տաքացնում, նա ամենքին միևնույն սիրով է շրջապատում. ինչ վոր նա դատապարտում է, դա ի հաշիվ ուրիշների՝ սեփական բարեկեցության ավելացումն է։

Այդ պատճառով էլ ուտոպիացիները կարծում են, վոր պետք է ուշադրություն դարձնել վոչ միայն քաղաքացիների միջև կայացած

համաձայնության, այլ և հասարակական օրենքներին, վոր կարգավորում են բավականությունների բաշխումը. ուրիշ խոսքով, հարկավոր ե կյանքի ուրախությունը բաշխել հատուկ օրենքներով, վոր գործիք են հանդիսանում արդար իշխանի ձեռքին և հավանություն են ստանում ժողովրդից, այնպես վոր այդ օրենքները չի կարելի վոչ բռնակալությամբ ճնշել և վոչ ել խորամանկությամբ շրջանցել:

Յերջանկության ձգտել, առանց օրենքները խախտելու—իմաստություն ե. գործել ընդհանուր օգուտի համար—դա կրոն ե. վոտնակոխ անել մերձավորի յերջանկությունը, աչքի առաջ ունենալով միայն սեփական բախտավորությունը,— վոճրագործություն ե:

Դրա հակառակ, զրկել իրեն մի հաճույքից՝ դրան ուրիշին ևս մասնակից անելու նպատակով, ազնիվ և զգայուն սրտի նշան ե, վոր ի դեպ առատորեն հատուցվում ե ամենից առաջ փոխադարձ ծառայություններով, ապա յերախտագիտություն և լավ հիշողություն ե առաջացնում այն անձնավորության մեջ, վորի հանդեպ ցուցաբերվում ե հաճոյակատարությունը. իսկ նա, ով իրեն զրկում ե վորոշ ուրախությունից՝ ավելի մեծ բավականություն ե ստանում, քան թե ինքնազրկումի պատճառած տխրությունը: Վերջապես այն մարդը, վորը կրոնի ճշմարտություններին հավատում ե, համոզված պետք ե լինի, վոր աստված մի

անցողիկ և փոքրիկ հաճույքի ինքնազրկումը անպատմելի ու հավիտենական վայելքով կվարձատրի: Այսպիսով, ուտոպիացիները մեր բոլոր գործողությունների և մինչև իսկ բոլոր առաքինությունների ամենաբարձր և վերջնական նպատակը հանգեցնում են ուրախություն ձեռք բերելուն:

Նրանք բավականություն են անվանում հոգու և մարմնի այն ամեն դրությունն ու շարժումը, վորի ժամանակ մարդ մի բնական ներքին բավականություն ե զգում: Առանց հիմքի չե, վոր նրանք ավելացնում են «բնական» բառը. վորովհետև վոչ միայն զգայականությունը, այլև բանականությունը մղում են մեզ այնպիսի գործողությունների, վորոնք ինքնին հաճույք են պատճառում. հաճույք ասելով պետք ե հասկանալ այն բավականությունները, վորոնց կարելի յե ձգտել առանց անարդարությունների և այդպիսիք ձեռք բերելու համար մարդ ստիպված չե ավելի բարձր վայելքներից հրաժարվել, և վորոնք վատ հետևանքներ չունեն:

Կան բաներ, վորոնց մարդիկ, բոլորովին հակառակ բնության, հաճույք են համարում լոկ միմիանց միջև կայացած անհեթեթ համաձայնության պատճառով, կարծես թե իրենցից կախված լիներ հեշտությամբ փոխել ինչպես գործի եյությունը, այնպես ել նրա վորոշումը:

Դրանք ինքնին շատ հեռու լինելով հաճույք

պատճառելուց, միաժամանակ խոշոր խոչընդոտ են հանդիսանում յերջանկություն ձեռք բերելու համար: Այդպիսիք թույլ չեն տալիս դրանց ձգտող անձնավորություններին մաքուր և ճշմարիտ հաճույք վայելել. դրանք փչացնում են ճաշակը՝ հրապուրելով զբաղվել մի յերևակայական հաճույքի պատկերացումով: Արդարև, կան բազմաթիվ բաներ, վորոնց՝ բնությունը հրաժարվել է վորևէ հրապույր տալուց և ընդհակառակը դրանց խառնել է վորոշ դառնություն. բայց չնայած դրան, մարդիկ հենց դրանց մեջ են տեսնում գերագույն և մինչև իսկ վորոշ չափով կյանքի համար անհրաժեշտ վայելքներ, թեև իրենց էությամբ դրանք վատ են և ընդունակ մարդկանց միայն ստորին հակումները գրգռելու:

Ուտոպիացիները կեղծ վայելքների շարքին են դասում այն մարդկանց սնապարծությունը, վորոնք, ինչպես արդեն հիշատակեցի, իրենց ուրիշներից լավ են համարում, վորովհետև ավելի գեղեցիկ զգեստներ են կրում: Այս անմիտների սնապարծությունը ծիծաղելի յե յերկու պատճառներով: Նախ, այդպիսիները իրենց զգեստն ավելի բարձր են գնահատում, քան իրենց անձը. ճիշտն ասած, ի՞նչով է տարբերվում նուրբ բուրդը կոպիտից: Սակայն և այնպես անմիտները հագնում են այդ, կարծես թե իրենք ուրիշներից զանազանվում են անհատական վորևէ հատկանիշով, և վոչ թե հիմար

վարմունքով: Նրանք իրենց զգեստների շքեղությամբ և գեղեցկությամբ այնպիսի հարգանք են պահանջում, վորպիսին չեյին սպասի՝ սովորական և հասարակ շորեր հագած լինելու դեպքում. Նրանք չարանում են, յերբ իրենց արդ ու զարդի վրա ուշադրություն դարձնող չի լինում:

Յերկրորդ, նման մարդիկ պակաս պարզամտություն չեն ցուցաբերում՝ այնպիսի առանձին նշանակություն տալով մեծարանքներին, վոր արժանի չեն այդ անունին և վոչ վոքի օգուտ չեն բերում: Մի՞թե բնական և ճշմարիտ է այն բավականությունը, վորը մարդ զգում է կեղծավորի հանդեպ, յերբ վերջինս բաց է անում գլուխը ու ծունկը խոնարհաբար իջեցնում: Մի՞թե ծնրադրումը կարող է մեկին տենդից, հոդացավից կամ գլխացավից բժշկել:

Հաճույքի մասին վոչ ճիշտ պատկերացումով հափշտակվողների թվին են պատկանում նաև ազնվականները, վորոնք հպարտությամբ և հաճույքով են մտածում իրենց ազնվականության մասին: Յեվ ի՞նչին են վերագրում նրանք յերջանկությունը. այն պատահմունքին, վոր սերում են մի յերկար շարք նախնիքներից և մասնավորապես հարուստ կալվածատերերից (քանի վոր այժմյան ազնվականությունն ստեղծվում է հարստությամբ): Յեվ չնայած բոլորին, այդ հիմարները մազաչափ անգամ չեն հրաժարում ազնվականության հպարտու-

թյունից, յեթե մինչև իսկ իրենց հայրերից վոչինչ ժառանգած չլինեն և կամ կարողությունն ամբողջովին վատնած լինեն:

Ուտոպիացիներն ազնիվ քարերի սիրահարներին դասում են այն մարդկանց շարքը, վորոնք կառչում են իրենց ազնվականությանը: Նրանք, ովքեր անձնատուր են լինում այդ կրքերին, փոքրիկ աստվածներ են համարում իրենց, հենց վոր մի գեղեցիկ կամ հազվադյուտ քար են գտնում, վորը առանձնապես գնահատվում է իրենց ժամանակակիցներից և համաքաղաքացիներից: Այդ քարը վոչ ամեն տեղ և վո՛չ միշտ պահպանում է իր արժեքը: Գոհարների սիրահարն այդպիսիները գնում է մերկ և առանց շրջանակների. նա այնքան զգույշ է, վոր քարի կեղծ չլինելու մասին վաճառողից յերաշխավորություն է պահանջում և մինչև իսկ յերդումով արված հավաստիացում. նրա վախն այնտեղ է հասնում, թե իր աչքերը կարող են խաբվել և կեղծված քարը իսկականի տեղ ընդունել: Ի՞նչ առանձին հաճույք կա դիտել բնական կամ կեղծ ադամանդը, յերբ աչքը չի կարողանալու նրանց մեջ իսկականը կեղծից տարբերել: Ճիշտն ասած, վոչ մեկը և վոչ էլ մյուսը տեսողություն ունեցողի համար ավելի արժեք չունեն, վորքան և կույրի համար:

Ի՞նչ կասեյիք այն ժլատի մասին, վորը փող փողի վրա յե դիզում, առանց դրանք օգտագործելու և միայն բավականանում է դի-

տելով մետաղե այդ խոշոր կույտը: Միթե վորմելի հարստի այդպիսի բավականությունը լոկ ցնորական չէ՞: Մի՞թե ավելի յերջանիկ է այն մարդը, վորն իր փողերը ուրիշ, ավելի միամիտ պատճառներով հորում է. այդպիսին չի էլ տեսնում իր գանձը՝ նրան կորցնելու վախից, և իսկապես կորցնում է այն: Իր փողերը հորելը արդյոք չի՞ նշանակում դրանք ծածկել և՛ իրենից և՛ ուրիշներից: Ժլատը սակայն հանգիստ է, թռչկոտում է ուրախությունից՝ մտաբերելով իր խորը թաղած գանձը: Այժմ յենթադրենք, վոր մեկը տիրանում է հողին վստահված այդ գանձին, իսկ մեր ժլատն իր ավերումից հետո դեռևս տաս տարի ապրում է առանց իմանալու իսկ այդ մասին. յես հարց եմ տալիս ձեզ. ի՞նչպես կարող եր նա այդ տասը տարվա ընթացքում զգալ իր գանձի պահված կամ կորած լինելը. թաղված թե գողացված, այդ նրա համար հավասարապես վոչ մի օգուտ չուներ:

Ուտոպիացիները յերևակայական հաճույքներ են համարում նույնպես վորսն ու բախտախաղերը, բայց վորովհետև նրանց մոտ վերջինները գոյություն չունեն, այդ պատճառով էլ դրանք միայն անունով են հայտնի նրանց: Ի՞նչ հաճույք կարելի յե ստանալ, ասում են նրանք, խաղասեղանի վրա մի վոսկորի կտոր գցելով. յեթե մինչև իսկ դրանում վորոշ բա-

վականություն ել լինի, այդպիսին շատ շուտով ձանձրալի և ինքնին անհամ կթվա:

Ցեվ կամ մի՞թե կարելի յե բավականություն զգալ շան հաչոցից, վոր յերբեմն մի քանի ժամ անընդհատ լսվում ե: Մի՞թե ավելի հետաքրքիր ե տեսնել, թե ինչպես շունը հալածում ե նապաստակին կամ վազում մի այլ շան յետևից: Չե՞ վոր յերկու դեպքում ել վազքը միևնույնն ե և հազիվ թե առանձնապես հաճելի: Վորսի ժամանակ մի՞թե գլխավոր և միակ հաճույքը սպանելու հույսը, արյուն թափելու կիրքը չե՞: Ավելի լավ չե՞ արդյոք հոգին բաց անել կարեկցության համար: Ինչպես նողկանք չզգալ այդպիսի սպանդի հանդեպ, յերբ ուժեղ, հանդուգն և սարսափելի շունը պատառոտում ե թույլ, վախկոտ ու արագավազ նապաստակին:

Այդ պատճառով ել մեր կղզեցիներն ազատ մարդկանց արգելում են վորսը, վորպես նրանց անարժան զբաղմունք. վորսը նրանք թույլատրում են միայն սպանդագործներին: Նրանց կարծիքով, վորսորդությունն իրենից ներկայացնում ե կենդանիներ սպանելու արվեստի ամենաստոր տեսակը. այս արհեստի մյուս տեսակներն ավելի մեծ հարգ են վայելում, վորովհետև դրանք ավելի յեն ոգուտ բերում: Վերջին դեպքում կենդանիներին սպանում են միմիայն անհրաժեշտությունից դրդված, մինչդեռ վորսորդն արյունի և սպանդի մեջ

սոսկ հաճույք ե վորոնում: Բացի այդ, ուտոպիացիները կարծում են, վոր սպանելու այդ կիրքը, թեկուզ գազաններ սպանելու այդ սերը, արդեն վայրենացած հակում ե և կամ մի այնպիսի հոգու արտահայտություն, վորն հետամուտ լինելով այդ բարբարոսական հաճույքի, բոլորովին կվայրենանա:

Ուտոպիացիները խորշում են բոլոր այդ հաճույքներից ու դրանց նման դեռ անհաշիվ ուրիշներից, վորոնց սովորական մարդը գնահատում ե իբրև բարձրագույն բարիք, թեպետ այդ պատկերացումը վոչնչով չի հիմնավորված: Մինչև իսկ յեթե այդ բավականություններն ամենահաճելի արբեցումի զգացմունք առաջ բերեյին (վորը հաճույքի բնական հետևանքն ե համարվում), այդ դեպքում դրանք միայն կհաստատեյին, վոր ճշմարիտ ուրախության հետ ընդհանուր վոչինչ չունեն. վորովհետև, ասում են ուտոպիացիները, զգայական այդ հաճույքները չեն բղխում առարկայի եյությունից, այլ ավելի շուտ արդյունք են վատ սովորությունների, վորոնք դառը քաղցր են համարել տալիս: Այդպես են հղի կանայք, վորոնց ճաշակելիքը փչացած ե և վորոնք ձեթն ու ճրագուն մեղրից քաղցր են գտնում. բայց չե՞ վոր հաճույք չե, յեթե մեկը հիվանդության կամ հիմար սովորության պատճառով մի հակաբնական հաճույք ե ըղձում:

Ուտոպիացիները ճշմարիտ հաճույքների յերկու տեսակ են զանազանում. մեկը վերաբերում է մարմնին, իսկ մյուսը՝ հոգուն:

Հոգեկան հաճույքները գտնվում են մտավոր ուժերի և մաքուր ուրախությունների զարգացման մեջ, այդ հաճույքներին ուղեկցում են ճշմարտության վորոնումները: Մեր կղզեցիները դրանց միացնում են նաև անբիծ կյանքի գիտակցությունն ու յերջանիկ անմահության վորոշ հույսը:

Մարմնական հաճույքները նրանք բաժանում են յերկու կարգի:

Առաջին կատեգորիան ընդգրկում է այն բոլոր հաճույքները, վորոնք զգացմունքի վրա իրական, բացահայտ ազդեցություն են թողնում, և վորոնց պատճառը ներքին ջերմությունով հոգնած որգանների թարմացումն է: Այդ տպավորությունն առաջ է գալիս մասամբ խմելու և ուտելու գործողությունից, վոր վերականգնում է սպառած ուժերը, իսկ մյուս կողմից էլ՝ անասնական տարբեր ֆունկցիաներից, վորոնք մարմնից վանում են ավելորդ նյութերը: Վերջինների մեջ են մտնում միզելը, կղկղանքի արտաթորումը, սեռական հարաբերությունը և քոր յեկող տեղի քորելը կամ շփելը:

Յերբեմն զգայական հաճույքները չեն ծագում անասնական ֆունկցիաներից, վորոնք հոգնած անդամները թարմացնում են և կամ

անհաճո ավելորդ նյութերից ազատում են. նման դեպքում դա մի ներքին և անբացատրելի ուժի ազդեցությունն է, վոր գրգռում, հրապուրում ու իրեն է ձգում. այդ տեսակ հաճույքների թվին է պատկանում յերաժշտությունը:

Զգայական հաճույքների յերկրորդ տեսակը մշտական ու անպայման առողջությունն է: Արդարև, այն մարդը, վոր վոչ մի ցավ չունի, զգում է հանդստավետության վորոշ տեսակի բավականություն, թեև ընդհանրապես նրա արտաքին որգանների վրա դա առանձնապես հաճելի վոչինչ չի ներգործում: Ճիշտ է, այդ տեսակի հաճույքը չի գրգռում ու արբեցնում զգացմունքը, ինչպես որինակ համեղ կերակուրը կամ խմիչքը, բայց և այնպես շատերն այդ հաճույքը մյուս բոլորից գերադասում են, և համարյա բոլոր ուտոպիացիները համամիտ են, վոր առողջությունը յերջանկության անկյունաքարն է: Վորովհետև, ասում են նրանք, միայն կատարյալ առողջության դեպքում կյանքը կարող է խաղաղ և ցանկալի ընթանալ. առանց առողջության վոչ մի հաճույք հնարավոր չէ. առանց նրան մինչև իսկ ցավի բացակայությունն այլևս վորպես բարիք չի ներկայանում, այլ միայն՝ մարմնի անզգայություն:

Այս առթիվ Ուտոպիայում մի անգամ աշ-

խում վեճ բարձրացավ: Վոմանք պնդում եյին, թե մշտական ու անխռով առողջությունը հաճույքների թվին չի պատկանում, քանի վոր նա, մյուս զգայական բավականությունների նման, իսկական, առանձին վայելք չի պատճառում: Այժմ սակայն, քիչ բացառությամբ, բոլորը համաձայն են, վոր առողջությունն եյական հաճույք ե:

Նրանց կարծիքով՝ ցավը, վորն ուղեկցում ե հիվանդության, վայելքի անհաշտ թշնամի յե. հիվանդությունն ել հավասարապես առողջության թշնամին ե: Ինչո՞ւ ուրեմն առողջության մեջ վայելք չպետք ե լինի, յեթե հիվանդությունն իր հետ դժբախտություն ե բերում: Այդ պատճառով ել միևնույն ե, թե հիվանդությունը ցավի հետևանքն ե, թե ընդհակառակը, քանի վոր յերկու դեպքում ել արդյունքը նույնն ե: Այսպիսով, այն հարցը, թե առողջությունն ինքնին հաճո՞ւյք ե, թե լոկ նրա հետևանք, ինչպես կրակը տաքության անհրաժեշտ պատճառն ե — դա միևնույնն ե. այն մարդը, վորը շարունակ առողջ ե, պետք ե վոր վորոշ բավականություն զգա:

Յերբ մենք ուտում ենք, ասում են ուտոպիացիները, միթե դրանով չե՞նք վերականգնում մեր առողջությունը, վոր քաղցից սկսում ե թուլանալ: Հայտնվում են սննդի միջոցները, վորոնք յետ են մղում սպառնացող թշնամուն ու բավականություն են պատճառում մարդուն՝

միաժամանակ վերականգնելով նրա նորմալ ուժերը: Բայց մի՞թե առողջությունը, վորը պայքարի մեջ այդքան բավարարություն ե գտնում, չպետք ե ուրախանա իր հաղթանակով: Չե՞ վոր առողջությունն այդ կռվի մեջ վորոնում ե իր նախկին ուժերը և հնարավո՞ր ե արդյոք, վոր նա ձեռք բերելով այդ արդյունքը, բութ անզգայության մեջ ընկներ՝ առանց իր յերջանկությունն զգալու և կամ սիրելու: Այդ պատճառով ել ուտոպիացիներն անպայմանորեն դատապարտում են այն կարծիքը, թե իբր առողջ մարդը չի զգում իր վիճակը: Նրանց կարծիքով հիվանդ կամ քնած պետք ե լինել՝ չհասկանալու համար, թե վորքան լավ ես զգում քեզ: Պետք ե քարացած լինել կամ մահաքուն մտած լինել՝ չուրախանալու համար իր առողջության վրա, վորպեսզի նրա մեջ չը տեսնել հաճույքի աղբյուրը: Իսկ ի՞նչ ե հանգըստավետության և ֆիզիկական հավասարակշռության այդ զգացմունքը, յեթե վոչ՝ բավականություն:

Ուտոպիացիներն ամբողջովին անձնատուր են լինում հոգեվոր հաճույքներին, վոր համարում են ամենաազնիվ ու ամենից եյական հաճույքները: Նրանք ամենամաքուր ու ամենից ցանկալի բավականությունների թվին են դասում առաքինության կենսագործումն ու անբիծ կյանքի գիտակցությունը: Ֆիզիկական հաճույքներից նախապատվությունը նրանք

տալիս են առողջության, վորովհետև, յեթե պետք ե լավ ճաշի ու կենդանական մյուս վայելքների բավարարմանը ձգտել, ապա նրանց կարծիքով այդ կատարվում ե լոկ առողջությունը պահպանելու համար, քանի վոր դրանք վոչ թե ինքնին, այլ միմիայն այն պատճառով են հաճելի, վոր դիմադրում են հիվանդության ծածուկ հարձակումներին:

Բանական մարդն ավելի շուտ ցանկացումը կկանխի, քան թե հետո դրամական փոխառությունների կապավինի. ավելի շուտ ցավից կխուսափի, քան թե հույսը դեղորայքի վրա կդնի: Այդ պատճառով ուտոպիացիներն ոգտագործում են այն բոլոր բավականությունները, վորոնցից զրկվելը նրանց կհարկադրի դիմել բուժիչ միջոցների: Սակայն ուտոպիացիներն իրենց ամբողջ յերջանկությունն այդ բավականությունների վրա չեն հիմնում. այլապես մշտական քաղցն ու ծարավը մարդկային բախտավորության գագաթնակետը կը համարվեր, քանի վոր անհրաժեշտ կլիներ անընդհատ ուտել ու խմել: Հասկանալի յե, վոր այդպիսի կյանքը նույնքան վողորմելի կլիներ, վորքան և արգահատելի:

Կենդանական հաճույքները—դրանք ամենաստոր հաճույքներն են, ամենից անմաքուրները, վորոնց միշտ վիշտն ե ուղեկցում: Մի՞թե կշտանալու հաճույքի հետ քաղցը չի՞ մեռնում, և այն ել չափազանց անհավասար

համեմատությամբ: Քաղցի զգացումն արդարև ամենաուժգինն ե, նա միաժամանակ ամենից յերկարատևն ե, քանի վոր սկսում ե բավարարման զգացումից առաջ և վերջանում ե միայն նրա հետ:

Այդ համոզումներով համակված՝ ուտոպիացիները կարծում են, վոր մարմնական հաճույքները կարելի յե այնքան ժամանակ միայն գնահատել, վորքան նրանք ոգտակար ու անհրաժեշտ են: Չնայած այդ բոլորին, նրանք այնուամենայնիվ սիրով անձնատուր են լինում դրանց և շնորհակալ են բնությունից, վոր մայրական քնքշությամբ հոգ ե տանում մարդկային կարիքների մասին՝ կյանքի անհրաժեշտ ֆունկցիան զուգակցելով հաճելի զգացողություններով:

Վորքան տխուր կլիներ մեր ճակատագիրը, յեթե հարկադրված լինեյինք քաղցն ու ծարավն ամեն որ թույնով ու դառը դեղորայքով վանել, ինչպես այդ անում են՝ հիվանդությունների ժամանակ:

Ուտոպիացիները հաճույքով խնամում են իրենց գեղեցկությունը, ուժն ու մարմնի ճկունությունը—բնության այդ լավագույն պարգևները: Նրանք նույնպես ախորժում են այն հաճույքներից, վոր վայելում են տեսողության, լսողության և հոտառության որգանների ոժանդակությամբ — բավականու-

թյուններ, վոր բնությունն ստեղծել ե բացառապես մարդու համար և վորոնք կազմում են կյանքի աղն ու հրապույրը: Չե՞ վոր կենդանին իր հայացքը չի ածում բնության գեղեցկության, տիեզերքի ներդաշնակության և կարգ-կանոնի վրա: Նա հոտոտում է, վորպեսզի զանազանի իր սնունդը, սակայն բուրմունքի գրգիռը չի զգում: Նա չի իմանում ձայների փոխհարաբերությունը և դիսսոնանսը չի կարող տարբերել ներդաշնակությունից:

Ի միջի այլոց, ուտոպիացիներն ամեն տեսակի զգայական պահանջները բավարարելիս յերբեք չեն մոռանում գործնական կանոնը, այսինքն՝ խուսափել այն բավականությունից, վորը բացառում ե մի ուրիշ, ավելի մեծ հաճույք և իրենից հետո վորևե ցավ ե թողնում: Նրանց կարծիքով, ցավը յուրաքանչյուր վոչ մաքուր բավականության անխուսափելի հետևանք ե:

Նրանց սկզբունքներից մեկը հետևյալն ե. արհամարհել մարմնի գեղեցկությունը, թուլացնել նրա ուժերը, բթացնել ճկուն անդամները, ծոմապահությամբ և ժուժկալությամբ փոխել իր տեմպերամենտը, փչացնել իր առողջությունը, կարճ, հրաժարվել բնության բոլոր պարգևներից միմիայն այն հույսով, վոր աստված գալիք կյանքում կվարձատրի — նշանակում ե մոռանալ իր անձը

և կատարել կրոնական պարտքը: Սակայն, մարմինը խարազանել, անձը զոհել սին պատրանքի և կամ նրա համար, վորպեսզի վարժվի ապագա տառապանքներին, վորոնց գուցե յերբեք յենթակա չի լինելու — ցույց ե տալիս համառ հիմարություն, վախկոտ խստություն իրեն նկատմամբ և ամբարտավան յերախտամոռություն բնության հանդեպ. դա նշանակում ե վոտնակոխ անել արարչի բարերարությունը՝ վորպես թե արհամարհելով դրանք:

Առաքինության և հաճույքի հարցում ահա այդ ե ուտոպիացիների տեսությունը: Ինչքան ժամանակ, քանի դեռ մարդիկ չեն արժանանա աստվածային հայտնությանը, վորը նրանց ավելի նպատակահարմարն ե սովորեցնում, նրանք կարծում են, վոր մարդկային բանականությունն ի վիճակի չե վոչինչ ավելի լավ բան հորինել: Այս բարոյականությունը լավ ե թե վատ, այդ մասին յես դատողություն անել չեմ ուզում: Դրա համար ինձ չի բավականացնի ժամանակը և, բացի այդ, իմ նպատակի համար անհրաժեշտ ել չե: Յես հանձն առա պատմել, վոչ թե գովասանքներ շռայլել: Բայց այնուամենայնիվ յես հաստատապես համոզված եմ, վոր ուտոպիացիները, շնորհիվ այդ հիմնարկների, աշխարհի առաջին ժողովուրդն են և ուրիշ վոչ

մի տեղ ավելի յերջանիկ պետություն գոյություն չունի։

Ուտոպիացին ճարպիկ է և նյարդային. առանց բարձրահասակ լինելու, նա ավելի ուժեղ է, քան իր արտաքինը թույլ է տալիս յենթադրել։ Կղզին վոչ ամեն տեղ միատեսակ արգավանդ է։ Ոդը վոչ ամենուրեք հավասարապես մաքուր և առողջ. բնակիչները միջավայրի վնասակար ազդեցությունների դեմ կռվում են ժուժկալության միջոցով։ Հողը նրանք լավացնում են հրաշալի մշակումով, այնպես վոր ուրիշ վոչ մի տեղ չեք հանդիպի ավելի լավ անասունների և առատ բերքի։ Վոչ մի տեղ մարդու կյանքն ավելի յերկարատև չե և հիվանդությունների թիվն այնքան չնչին։

Հողագործ քաղաքացիները չեն միայն, վոր մեծ կատարելությամբ աշխատում են բնությունից անշնորհակալ հողն արգավանդ դարձնելու աշխատանքի վրա։ Յերբեմն ամբողջ ժողովուրդը մասսայական կերպով հավաքվում է արմատահան հանելու համար ամբողջ անտառներ, վորոնք արգելում են հաղորդակցությունը, և դրա փոխարեն տնկում են ծովի և գետերի ափերին կամ քաղաքի շրջակայքում, վորովհետև հողի բոլոր արտադրանքներից փայտն ամենից դժվարն է ցամաքով տեղափոխելը։

Ուտոպիայի ժողովուրդը բանիմաց է, սիրալիր և աշխատասեր. նա աշխատում է դանդաղ, բայց ուշադիր, իսկ յեթե գործն անհրաժեշտ է, այն դեպքում ընդունակ է ծավալել խոշոր գործունեյություն. նրանց ամենաազնիվ կիրքը մտավոր ուժերի վարժեցումն ու զարգացումն է։

Կղզու վրա մեր բնակության ընթացքում մենք բնակիչներին Հունաստանի արվեստների և գիտությունների մասին մի քանի բաներ հայտնեցինք։ Իսկապես վոր զարմանալի յեր տեսնել, թե ինչպես այդ բարի կղզեցիները թախանձագին խնդրում եյին մեզ բացատրել հույն հեղինակները։ Լատինականների մասին մենք նրանց հետ չխոսեցինք, քանի վոր կարծում եյինք, վոր վերջինների մեջ նրանք միայն պատմագիրներին ու բանաստեղծներին են գնահատելու։ Վերջապես մենք սախպված յեղանք տեղի տալ նրանց խնդրանքներին։ Մեր կողմից դա, խոստովանում եմ ձեզ, լոկ հաճոյակատարություն. մի արտահայտություն եր, վորից մենք վոչ մի հետևանք չեյինք ակնկալում։ Սակայն մի քանի դասախոսություններից հետո մենք հիմք ունեցանք շնորհավորելու մեզ մեր ձեռնարկումի հաջողության համար, վորովհետև մեր աշակերտներն աշչեցուցիչ առաջադիմություն կատարեցին և մեծ յեռանդ հայտաբերեցին։ Մենք ապշած եյինք այն արագաշարժության վրա, վորով նրանք տառերի ձևը ճիշտ ընդօրինակում եյին, ինչպես և նրանց արտասանության, հիշողության ճըշգրտության, թարգմանության հարազատու–

թյան վրա։ Նրանցից շատերը, վոր սկզբում ինքնակամ և գովելի յեռանդով նվիրվեցին այդ գործին, հետագայում, սենատի հրատարակած մի վորոշման հիման վրա, պարտավորվում եյին շարունակել այն։ Նրանք բոլորը գիտնականների դասակարգից լավագույններն եյին, բոլորն էլ հասուն տարիքի մարդիկ։ Այսպիսով, ավելի պակաս, քան յերեք տարում կլասիկ հեղինակների ստեղծագործություններից վոչինչ չմնաց, վոր նրանք ընթերցելիս չհասկանային (բացառությամբ անշուշտ գրչի սխալների պատճառով աղավաղված մասերի)։

Իմ կարծիքով, այն մեծ դյուրությունը, վորով նրանք սովորեցին հունարենը, ապացուցում է, վոր այդ լեզուն նրանց ամենևին օտար չեր։ Ծագումով յես նրանց հույներ եմ համարում, թեպետ նրանց բնիկ լեզուն (գավառական լեզուն) կրում է պարսկական ազդեցության կնիք. սակայն քաղաքների և պաշտոնատար անձերի անվանումների մեջ նկատելի յեն հունական լեզվի մի քանի հետքեր։

Իմ դեպի Ուտոպիա չորրորդ ճանապարհորդության ժամանակ, ապրանքների փոխարեն ինձ հետ վերցրել եյի մի մեծ կապոց գիրք և հաստատ վորոշել եյի, վորքան հնարավոր է ուշ վերադառնալ Յեվրոպա։ Յերբ յես ուտոպիացիներից բաժանվում եյի, իմ գրադարանը թողեցի նրանց. այսպիսով, նրանք ինձնից ստացան Պլատոնի բոլոր գործերը, Արիստո-

տելից մի նշանակալի թիվ, և Թեոֆրաստի գիրքը բույսերի մասին, վորը դժբախտաբար շատ տեղերում պատռված եր։ Ճանապարհին յես այդ գրքի մասին շատ քիչ հոգ տարա. դժբախտաբար մի կապիկ գտավ այն և այդ փուչն առանձին հաճույք զգաց թերթիկներ պոկել մեկ այստեղից, մեկ այնտեղից։ Բոլոր քերականագետներից յես կարողացա մեր կղզեցիներին տալ միայն Լասկարիսը, վորովհետև Թեոդորը յես ինձ հետ չեյի վերցրել։ Բառարաններից նրանք ունեն Հազիխիուսը և Դիոսկորիտը։

Պլուտարքը[31]) նրանց սիրած գրողն է։ Լուկիանի զվարթությունն ու աշխուժությունը

---

[31]) Պլուտարք (50—120 մ. թ. ա)— հույն գրող. ունի բազմաթիվ աշխատություններ կրոնի, փիլիսոփայության և պատմության վերաբերյալ։ Ամենից ավելի հռչակ ստացան նրա «Համեմատական կենսագրությունները», վոր բովանդակում է 46 նշանավոր մարդկանց կենսագրություններ։ Պլուտարքը ծագում եր հունական միջին հողատերերի շարքերից։ «Առաքինությունը» նա համարում եր պատմական պրոցեսի շարժիչ ուժը։ Նրա քաղաքական իդեալն եր Հռոմի համաշխարհային կայսրությունը՝ ուժեղ անձնավորությունների կառավարությամբ և հունական ինտելիգենցիայի ներգրավումով։ Նրա գլխավոր աշխատությունը վենետիկյան Մխիթարյանները թարգմանել են հայերեն («Զուգակշիռք»)։

զմայլեցնում է նրանց. բանաստեղծներից նրանք ունեն Արիստոֆանը[32]), Հոմերոսը, Եվրիպիդեսը և Ալդուսի՝ Սոֆոկլեսի փոքր հրատարակությունը: Պատմագիրներից յես նրանց թողեցի Թուկիդիդեսը, Հերոդոտը և Հերոդիան:

Բժշկականության բնագավառից նրանք ունեն Հիպոկրատի մի քանի գործերը և Գալիանի միկրոտեխնիկան, վորը իմ ճանապարհի ընկեր Թրիցիուս Ապինատ հետն եր վերցրել: Վերջին յերկու գրքերը նրանց մոտ մեծ հարգանք են վայելում. թեև բժշկությունը վոչ մի յերկրում այնքան նվազ պետք չէ, ինչպես Ուտոպիայում, բայց և այնպես թվում է թե այստեղ նրան ավելի յեն հարգում: Ուտոպիացիները բժշկականությունը դասում են բնափիլիսոփայության ամենաօգտակար և ամենից ազնիվ բնագավառ–

[32]) Արիստոֆան (մոտ 450—385 մ. թ. ա.)—հին հունական դրամատիկական գրող. գրել է կոմեդիաներ: Արիստոֆանը, սրամտությամբ և ֆանտազիայով հարուստ իր կոմեդիաներում, ծաղրում եր Աթենքի հասարակության բոլոր նորությունները պետական և հասարակական կենցաղում, դեմոկրատիան և դեմոկրատական դատարանը: Հասարակական–քաղաքական կոնսերվատիզմի իդեոլոգ եր՝ կապված հողային արիստոկրատիայի հետ, վոր իշխանությունից յետ մղվեց առևտրական կապիտալի ներկայացուցիչների կողմից:

ների շարքը: Բժիշկը, ասում են նրանք, վոր ձիգ է գործ դնում թափանցել կյանքի գաղտնիքների մեջ, այդ ուսումնասիրությունից վոչ միայն անպատմելի հաճույք է ստանում, այլ և իրեն դարձնում է կյանքի փնտռված ստեղծագործողը: Ուտոպիացիների հայացքների համաձայն, արարիչը՝ յերկրային վարպետի նման, աշխարհի մեխանիզմը բաց է անում մարդուն— միակ եյակին, վորը կարող է ըմբռնել նրա վսեմ անխախտանությունը: Աստված սիրով ցած է նայում այն մարդու վրա, ով սքանչանում է այս մեծ գործով և ձգտում է հայտագործել նրա շարժումներն ու որենքները. իսկ նրան, ով անբան անասունի նման այս հիասքանչ տեսարանի հանդեպ սառն ու անզգա յե մնում՝ աստված կարեկցաբար է նայում:

Այժմ հասկանալի կլինի, թե ինչու ուտոպիացիները, վորոնց միտքը մշտապես զարգանում է գիտությունների ու գրականության ուսումնասիրությունով, կյանքի բարօրության նպաստող արվեստներն ու գյուտերը յուրացնելու հիանալի ընդունակությամբ են օժտված: Տպագրության և թղթի պատրաստման արվեստը նրանք պարտական են մեզ. բայց և այնպես նրանց սրաթափանց միտքն այս գործում ավելի օգուտ բերեց, քան մեր տված տեղեկությունները, վորովհետև մենք այս յերկու

արվեստներից և ոչ մեկը հիմնավոր կերպով
չգիտեյինք: Այսպիսով, մենք սահմանափակ-
վեցինք միայն նրանով, որ նրանց ցույց տը-
վինք Ալտուսի տպագրությունը և, որքան
կարող եյինք, բացատրեցինք թղթի պատ-
րաստման ու տպագրության համար օգտա-
գործվող նյութերը և այդ գործի մի քանի յե-
ղանակները: Նրանք շուտով կռահեցին այն,
որի մասին մենք միայն ակնարկել եյինք: Նա-
խապես նրանք գրում եյին կաշվի, ծառի կե-
ղևների և յեղեգի տերևների վրա: Նրանք իս-
կույն փորձեցին թուղթ պատրաստել ու տպա-
գրել: Այդ առաջին փորձերը վատ արդյունք
տվեցին, սակայն հազար անգամ կրկնելով
այն, նրանք կատարյալ հաջողության հասան,
և յեթե ձեռքի տակ ունենային հունական բո-
լոր ձեռագրերը, դրանից կկարողանային բազ-
մաթիվ հրատարակություններ արտատպել:
Բացի այն գրքերից, որ յես թողել եմ նրանց,
այժմ նրանք ուրիշ գրքեր չունեն, սակայն այդ
գրքերն արդեն հազարավոր օրինակներով բազ-
մացրել են:

Յերբ մի օտարական Ուտոպիա յե գալիս,
նա հրաշալի ընդունելություն ե գտնում, մաս-
նավորապես, յեթե որևե ծառայությամբ ար-
ժանի յե դրան կամ յեթե յերկարատև ճամ-
բորդության միջոցով ճշգրիտ տեղեկություն-
ներ ե ձեռք բերել մարդկանց ու մարդ-
կային հարաբերությունների մասին: Հա-

վանաբար վերջին պատճառին պետք ե
վերագրել այն, որ մեզ այնքան լավ ընդու-
նեցին այդ յերկրում, որտեղ չափազանց հա-
ճույքով լսում են այն բոլորի մասին, որ կա-
տարվում ե դրսի աշխարհում: Առևտրական
նպատակներով այնտեղ շատ քիչ արտասահ-
մանցիներ են գալիս և իսկապես ի՞նչի կարիք
ունեն ուտոպիացիները, բացի յերկաթից:
Ոսկի՞ կամ արծա՞թ.— սակայն արտասահ-
մանցիներն անկասկած հարկադրված կլինեյին
թե մեկը և թե մյուսը իրենց հետ կրկին յետ
տանել: Ինչ վերաբերվում ե արտահանման ա-
ռևտրին, ուտոպիացիներն այդպիսին իրենք են
կատարում և դրանով հետապնդում են յերկու
նպատակ. նախ՝ մշտապես իմանալ, թե ինչ ե
կատարվում արտաքին աշխարհում և ապա՝
պահպանել և կատարելագործել իրենց նա-
վագնացությունը:

ՍՏՐՈՒԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Պատերազմական ոչ բոլոր գերիներն են
ստրուկներ դառնում, այլ միայն նրանք, որ
զենքը ձեռքին գերի յեն ընկնում: Ստրուկի
որդին ազատ ե. օտար ստրուկը նույնպես ա-
զատվում ե, հենց որ ոտք ե դնում Ուտոպի-
այի հողի վրա:

Մասնավորապես այն քաղաքացիներն են
յենթարկվում ստրկության, որոնք ծանր
ոճիր են գործում, ինչպես նաև այն ո-

տարերկրացիները, վոր մահվան են դատապարտված. վերջին դասակարգի ստրուկներն Ուտոպիայում շատ են. ուտոպիացիներն այդպիսիներին ձեռք են բերում արտասահմանում չնչին գնով, իսկ հաճախ էլ՝ ձրի յեն ստանում:

Բոլոր այս ստրուկները հարկադիր աշխատանքի յեն դատապարտվում և կրում են շղթաներ: Սակայն ուտոպիացիները տեղացի ստրուկների հետ ավելի մեծ խստությամբ են վարվում. վերջիններին նրանք համարում են դարշելի չարագործներ և արժանի՝ բարոյական պատվազրկությամբ որինակ ծառայել ուրիշներին: Արդարև, դաստիարակվելիս նրանց մեջ ցանել են առաքինության բոլոր սաղմերը. նրանք հնարավորություն ունեյին լավ և յերջանիկ լինել, բայց չնայած դրան, չեն կարողացել հեռու մնալ վոճրագործությունից:

Ստրուկների մի դասակարգ էլ կազմվում է հարևան յերկրների աղքատ որավարձվորներից, վորոնք գալիս և ինքնակամ առաջարկում են իրենց ծառայությունները: Վերջինների հետ սովորաբար այնպես են վարվում, ինչպես սեփական քաղաքացիների հետ, միայն թե նկատի առնելով, վոր նրանք սովոր են ավելի մեծ լարվածության՝ մի փոքր ավելի յեն աշխատեցնում: Նրանք ազատ են յետ վերադառնալու, յերբ ուզենան (վոր ի միջի այլոց հազ-

վադեպ է լինում), և ուտոպիացիները նրանց յերբեք դատարկաձեռն բաց չեն թողնում:

Արդեն հիշատակեցի, թե ուտոպիացիներն ինչպես հոգածու խնամք են տանում հիվանդներին. նրանց չեն զլանում վորևե բան, վոր կարող է նպաստել նրանց ապաքինմանը, լինեն դրանք դեղորայք թե սննդամիջոցներ:

Այն դժբախտները, վորոնք անբուժելի հիվանդություններով են տառապում, ստանում են ամեն տեսակ մխիթարություն. նրանց շրջապատում են լավագույն խնամքով և ձգտում են ամեն հնարավոր ֆիզիկական ու բարոյական թեթևացում պատճառել նրանց, վորպեսզի այդպիսիների կյանքը կարելի չափով տանելի դարձնեն:

Իսկ յեթե անբուժելի հիվանդության միանում են նաև անտանելի ցավեր, վոր չի կարելի վոչ մի բանով վոչ հեռացնել և վոչ էլ մեղմել, այդ դեպքում քահանաներն ու պաշտոնական անձերն այցելում են հիվանդին և խորհուրդ տալիս նրան անել այն, ինչ տվյալ պայմաններում ամենից հարմարն է թվում:

Նրանք բացատրում են նման հիվանդին, վոր նա զրկված է կյանքի բարիքներից ու գործառնություններից և վերապրում է իր սեփական մահը ու դրանով բեռ բառնում թե իրենց և թե ուրիշներին:

Նրանք համոզում են հիվանդին՝ չերկա-

րացնել իր տառապանքները և արիաբար մեռնել, քանի որ նրա համար կյանքը միայն տանջանքների մի շարան է:

«Քաջասիրտ յեղի՛ր,— ասում են նրանք,— փշրի՛ր քեզ կաշկանդող շղթաներն ու հոժար կամքով թո՛ղ կյանքի բանտը և կամ թույլ տուր, որ ուրիշներն ազատեն քեզ նրանից. քո մահը չի ներկայանում որպես անմիտ հրաժարումն կյանքի բարիքներից, այն կլինի միայն անտանելի տառապանքների վախճանը»: Այդ դեպքում քահանայի ձայնին հետևելը, որն աստվածության կամքի արտահայտողն է, նշանակում է կրոնական և սրբազան գործ կատարել:

Նրանք, որ համոզվում են, հոժարակամ վերջ են տալիս իրենց կյանքին. նրանց թմրեցնում են քնաբեր խմիչքով, այնպես որ առանց զգալու փոխադրվում են մյուս կյանքը: Իսկ նրանք, որ չեն համաձայնվում մեռնել, դրա համար չեն դադարում մնալ ամենահոգածու ուշադրության և խնամքի առարկա. իսկ յերբ մեռնում են, հասարակական կարծիքը նրանց հիշատակը նույնպես հարգում է:

Այն մարդը, որ առանց իշխանության կամ քահանայի կողմից հավանության արժանացած պատճառի ինքնասպանություն է գործում, անարժան է համարվում հողին ու կրակին. նրա մարմինը չեն թաղում, այլ անարգելով նետում են տիղմի մեջ:

Աղջիկները տասնութ, իսկ տղաները քսան յերկու տարեկան լինելուց առաջ չեն կարող ամուսնանալ:

Յերկու սեռի մարդիկ, որոնք նախքան ամուսնությունը սեռական հաճույքով մոլորվում են, յենթարկվում են ծանր պատիժների. նրանց ընդմիշտ արգելվում է ամուսնանալ, յեթե միայն իշխանը նրանց մեղքը չների: Այն ընտանիքի հայրն ու մայրը, որի մեջ տեղի յե ունեցել այդ դեպքը, պատվազրկված են համարվում, որովհետև բավարար հոգածությամբ չեն հսկել իրենց յերեխաների ընթացքին:

Այս օրենքը թերևս ձեզ չափազանց խիստ թվա. սակայն Ուտոպիայում նման վարմունքի համար այդքան խիստ են վերաբերվում այն պատճառով, որովհետև կարծում են, թե յերկու անձերի ամուսնական սերը, որոնք պետք է ամբողջ կյանքը միասին ապրեն և այդ կենակցության ժամանակ հազարավոր տհաճություններ կրեն, շատ շուտով կսառի, յեթե նրանցից մեկի հանցագործ սերը հանդուրժելի ու անպատիժ մնա:

Ի միջի այլոց ուտոպիացիները կուրորեն չեն ամուսնանում. որպեսզի լավագույն կին ընտրեն, նրանք հետևում են մի սովորույթի, որը սկզբում մեզ բացարձակ ծիծաղելի և անհեթեթ կթվա, սակայն նրանք սառնարյուն

և իսկապես զարմանալի լրջությամբ կատարում են:

Պատվավոր ու հասուն տարիքի մի կին փեսացուին ցույց է տալիս նրա հարսնացուին կատարելապես մերկ վիճակում՝ լինի նա աղջիկ կամ այրի. իսկ ազնվությամբ փորձված մի տղամարդ՝ յերիտասարդ կնոջը մերկ ներկայացնում է նրա փեսացուին: Այդ տարօրինակ սովորույթը մեզ սրտանց ծիծաղելու առիթ տվեց, և մենք սկզբում բավական տխմար համարեցինք այդ: Սակայն մեր բոլոր հեգնանքներին ուտոպիացիները պատասխանում էին, որ իրենք էլ իրենց հերթին ուրիշ յերկրների բնակիչների հիմարությունների վրա չեն կարող պակաս չզարմանալ: Յերբ — ասում էին նրանք,— ձեզ մոտ մի ծեր յաբու յեն գնում, որը միայն մի քանի տասնյակ ռուբլի արժի, այդ ժամանակ հայտաբերում են արտակարգ զգուշություն: Կենդանին գրեթե ամբողջովին մերկ է, բայց և այնպես վերցնում են նրա թամբն ու սարքը՝ վախենալով, որ այդ չնչին պատյանները կարող են որևէ հնացած վերք ծածկել: Իսկ յերբ գործը վերաբերում է ամուսնու ընտրության, մի ընտրություն, որ հետագա ամբողջ կյանքի վրա ազդեցություն է գործում և որից կարող է հաճույք կամ տանջանք առաջ գալ, այդ դեպքում գործի յեն անցնում առանց որևէ զգուշության:

Ի՞նչպես կարելի յե անքակտելի կապերով միանալ մի մարմնի հետ, որն ամբողջովին շորերով է ծածկված և մարդու մասին մնում է դատել միմիայն դեմքից, նրա մարմնի համեմատաբար փոքր մասից. նրանք չեն վախենում շուտով մի ծածկված այլանդակություն գտնելուց, որ նրանց հարկադրում է ամբողջ կյանքի ընթացքում անիծել այդ չափազանց շտապ կնքված ամուսնությունը:

Ուտոպիացիները որոշ չափով իրավունք ունեյին այդպես խոսելու. չէ՞ որ բոլոր մարդիկ բավական փիլիսոփա չեն, որ կնոջ մեջ միմիայն միտքն ու սիրտը գնահատեն: Մինչև իսկ փիլիսոփան էլ անբավական չի լինի, յերբ մարմնական գեղեցկությունը զուգորդվում է մտավոր կարողությունների հետ: Կասկածից վեր է, որ փայլուն զարդարանքը կարող է ծածկել յետ վանող տգեղությունը. դժբախտ ամուսնու ինչպես սիրտը, այնպես էլ զգացմունքը կվրդովվեն և նա կսկսի անիծել իր կնոջը, որի հետ ամուսնալուծությունն անկարելի յե, որովհետև խաբեբայությունը, յերբ այն՝ ամուսնությունից հետո յե միայն հայտաբերվում՝ չի վերացնում ամուսնությունը: Հետևապես տղամարդուն ոչինչ չի մնում, քան այն, որ ինքն իր մեջ կրծոտի զայրույթը: Այդ պատճառով էլ, նման որոգայթներից խուսափելու համար օրենքներին է մնում մարդուն տրամադրել մի վստահելի միջոց,

մասնավորապես Ուտոպիայում, վորտեղ բաղմակնությունը խիստ արգելված ե և ամուսնությունը սովորաբար լուծվում ե միայն մահվան պատճառով, բացի այն դեպքից, յերբ ամուսնական անհավատարմություն ե տեղի ունենում, կամ մի կողմի ընթացքն անհանդուրժելի յե:

Այս յերկու պարագաներում սենատը վիրավորված ամուսնուն իրավունք ե տալիս կրկին ամուսնանալ. մյուս կողմը դատապարտվում ե մշտական ամուրիության և ժուժկալ կյանքի:

Վոչ մի պատրվակով չի թույլատրվում ամուսնական անբիծ վարք ունեցող կնոջն հակառակ իր կամքի թողնել այն պատճառով, վոր նա մարմնական վորևե վնասվածք ե ըստացել: Ով այս յեղանակով լքում ե իր կնոջն այն մոմենտին, յերբ վերջինս ամենից ավելի ոգնության կարիք ունի, այդպիսին մեր կղզեցիների կարծիքով անարգ դաժանություն ե գործում: Ծերության տարիքում նա խլում ե ապագայի ամեն մի հույս և դրժում յերդումով տրված հավատարմության յուրաքանչյուր վստահությունը: Զե՞ վոր տարիքը հիվանդության մայրն ե, նա ինքն հենց հիվանդություն ե:

Ուտոպիայում յերբեմն պատահում ե, վոր բնավորության մեծ տարբերությունների պատճառով ամուսինները միմյանց չեն ներ-

դաշնակում և նոր կապեր են վորոնում, վոր նրանց ավելի յերջանիկ ու հաճելի կյանք են խոստանում: Ամուսնալուծության դիմումները ներկայացվում են սենատի անդամներին, վորոնք իրենց կանանց հետ գործը հանգամանորեն քննելուց հետո, բաժանումը կամ թույլ են տալիս և կամ ամուսնությունն անլուծելի հայտարարում: Առաջին դեպքում յերկու կողմերն ել փոխադարձ համաձայնությամբ բաժանվում միմյանցից և կարող են կրկին ամուսնանալ: Ամուսնալուծությունը հազվադեպ ե թույլատրվում. ուտոպիացիները գիտեն, վոր հեշտությամբ կրկին ամուսնանալու հույսը չի կարող բավարար չափով ամրապնդել ամուսնությունը:

Ամուսնական հավատարմությունը խախտողները դատապարտվում են ամենախիստ ստրկության: Յեթե մեղավորները յերկուսով ել ամուսնացած են, տուժած ամուսիններից ամեն մեկն իրավունք ունի թողնել մյուսին. նրանք կարող են ըստ ցանկության միմյանց հետ ամուսնանալ և կամ նոր ամուսին ընտրել: Իսկ յեթե վիրավորված կողմը, լինի նա այր թե կին, շարունակում ե սիրել իր անհավատարիմ կեսին, այդ դեպքում ամուսնությունը չի լուծվում, սակայն պայմանով, վոր նա հետևի մեղավոր կողմին այն վայրը, վորտեղ նրան աշխատանքի յեն դատապարտում: Մեկի զղջումը, իսկ մյուսի սիրալիր անձնազոհու-

թյունը իշխանի մեջ յերբեմն կարեկցություն են առաջ բերում, և վերջինս յերկսին էլ ազատություն է շնորհում:

Ամուսնական անհավատարմության կրկնությունը մահով է պատժվում:

Այլ հանցանքների համար պատիժներ օրենքով նախատեսնված չեն· դրանք սահմանում է սենատը՝ նայած հանցանքի կարևորության:

Այրերը պատժում են իրենց կանանց, հայրերն ու մայրերն իրենց յերեխաներին: Դատարանին դիմում են միայն հատուկ կարևորություն ներկայացնող հանցանքի դեպքում:

Ստրկական պատիժը, մինչև իսկ ամենամեծ վոճիրների համար՝ ստրկությունն է: Ուտոպիացիները կարծում են, վոր ստրկությունը հանցավորի համար պակաս սարսափելի չէ, քան մահը և բացի դրանից, դա պետության ավելի յե օգուտ բերում:

Աշխատող մարդը, ասում են նրանք, դիակից ավելի օգտակար է: Անդադար պատժի օրինակն ավելի տեվականորեն է յետ պահում վոճրագործությունից, քան թե օրինական սպանությունը, վորը մի րոպեյում վերացնում է հանցավորին: Յերբ ստրկության դատապարտվածներն ապստամբում են, նրանց սպանում են վայրի գազանների նման, քանի վոր շղթաները նրանց համար այլևս բավա-

կան ծանր չեն: Սակայն իրենց ճակատագիրը համբերատարությամբ կրողները լավագույն վիճակի հույսից չեն զրկվում: Այդ դժբախտների մեջ գտնվում են այնպիսի մարդիկ, վոր տառապանքների և ժամանակի ընթացքում մեղմանալով, անկեղծ զղջում են հայտաբերում ու ապացուցում, վոր հանցագործությունն իրենց ավելի յե ճնշում, քան պատիժը:

Իշխանի խոսքը կամ ժողովրդի ձայնն այդ դեպքում թեթևացնում է նրանց պատիժը և յերբեմն կատարյալ ազատություն է շնորհում նրանց:

Որենքի խախտման փորձությունն իսկ առաջ է բերում նույն պատիժը, ինչ վոր հենց գործողությունը:

Ընդհանրապես քրեական ամեն տեսակ հանցանքի սոսկ դիտավորությունն անգամ նույն կերպ է հետապնդվում, ինչպես և հենց վոճիրը: Այն արգելքները, վոր խափանում են վատ դիտավորության իրագործումը, յերբեք չեն կարող արդարացնել այն, վոր հանցագործը չէր կատարի չար միտքը, յեթե դրա համար հնարավորություն ունենար:

Ծաղրածուներն ուտոպիացիներին զվարճություն են պատճառում: Նրանց վիրավորելը ստորություն է համարվում· բայց մյուս կողմից անթույլատրելի չէ նաև ուրիշի հիմարության վրա ուրախանալը: Ուտոպիացիները, զվարճանալով իրենց ծաղրածուների վրա,

Նրանց ցույց չեն տալիս այն մռայլ թախծոտներին, վորոնց մինչև իսկ ամենածիծաղելի խոսքերն ու գործողությունները ի վիճակի չեն զվարթացնել: Նրանք վախենում են, վոր այդպիսի լուրջ պարոնները առանց հոգացողության և ուշադրության կվերաբերվեն ծաղրածուին, վորը չի կարող նրանց դեմքին մինչև իսկ մի ժպիտ առաջացնել, մինչդեռ դա միակ տաղանդն է, վոր բնությունը պարգևել է նրան:

Նրանք նույնպես ամոթալի յեն համարում տգեղությունն ու մարմնական պակասությունները ծաղրելը· ով հաշմանդամին յերեսով է տալիս նրա ֆիզիկական թերությունը, վորի համար նա մեղավոր չէ, այդպիսին, վորպես չարամիտ հիմար, արհամարհվում է: Բնական գեղեցկության հանդեպ անփույթ վերաբերմունքն այս յերկրում դիտում են վորպես աններելի թափթփվածություն: Դեմքի զանազան ներկեր, ինչպես նաև ուրիշ արհեստական միջոցներ գործածելն այնտեղ ամոթալի անպատկառություն է համարվում: Մեր կզգեցինները փորձից գիտեն, վոր կինն իր ամուսնու սերը վոչ այնքան մարմնական առավելություններով է գրավում, վորքան մաքուր բարքի, քաղցրաբարոյության և հարգանքի արժանիքներով: Շատերը հրապուրվում են գեղեցկությամբ, սակայն վոչ վոք իր կնոջ հավատարիմ չի մնում, յեթե արտաքինի կող-

քին միաժամանակ ներքին հրապույր ու առաքինություն չի գտնում: Ուտոպիացիները ձգտում են վոչ միայն պատժական որենքներով յետ պահել վոճրագործություններից, այլև պատիվներով և վարձատրությամբ քաջալերում են առաքինությունը: Հանճարեղ և առհասարակ պետության փայլուն ծառայություններ մատուցող մարդկանց համար նրանք հասարակական հրապարակներում հուշարձաններ են կառուցում:

Այս յեղանակով հավերժացվում է մեծ գործերի հիշատակը, և նախնիքների հռչակը խրախուսում է հաջորդ սերունդներին՝ մշտապես ձգտելու դեպի լավը:

Ով շատ անհագ կերպով հետամուտ է լինում վարչական կարևոր պաշտոնի, նա կորցնում է յերբևիցե առհասարակ վորևէ պաշտոն զբաղեցնելու ամբողջ հույսը:

Ուտոպիացիները բոլորը միասին ապրում են ինչպես մի ընտանիք: Կառավարող անձերը վոչ խիստ են և վոչ ել հպարտ· Նրանց անվանում են հայրեր և արդարև նրանք կատարում են միայն արդարություն ու բարիք: Նրանք պարզությամբ ընդունում են այն մեծարանքները, վոր արժանացնում են իրենց գործունեությանը և այն ել առանց վորևէ հարկադրանքի: Մինչև իսկ իշխանը մասսայից չի տարբերվում վոչ ծիրանիով և վոչ ել թագով, այլ՝ միմիայն մի փունջ հաս-

կով, վորը նա բռնում է ձեռքին: Քահանայապետի պատվանշանն է մի մեղրամոմ, վորը տանում են նրա առաջից:

Ուտոպիայում օրենքների թիվը շատ քիչ է, բայց և այնպես դրանք բավական են բոլոր հիմնարկների համար: Ուտոպիացիներին մանավորապես դուր չի գալիս ուրիշ ժողովուրդների գրավոր օրենքների, դեկրետների և կոմենտարիաների անվերջ քանակը, վորը, չնայած դրան, շատ հեռու յե բավարարելու հասարակական անդորրությանը: Նրանք ամենամեծ անարդարությունն են համարում մարդկանց յերկաթյա օրենքներով շղթայելը, վորոնք չափազանց շատ են, վորպեսզի հնարավոր լինի կարդալ դրանք և յերբեմն էլ չափազանց խրթին, վոր կարելի լինի հասկանալ:

Այդ պատճառով էլ Ուտոպիայում փաստաբաններ չկան: Այնտեղ գոյություն չունեն ըստ պրոֆեսիայի հռետորներ, վոր հատկապես զբաղվում են օրենքները շուռ տալով և մեծ ճարպկությամբ մի գործ գլուխ բերելով: Ուտոպիացիները նախամեծար են համարում, վոր յուրաքանչյուրն ինքը պաշտպանի իր գործը և անմիջորեն դատավորին վստահի այն, ինչ վոր մեզ մոտ հանձնարարում են փաստաբանին:

Այս կերպով ավելի քիչ յերկմտություն և խառնաշփոթություն է տեղի ունենում ու

ճշմարտությունն ավելի հեշտ է հայտաբերվում: Կողմերն իրենց գործը հասարակ ձևով պատմում են, քանի վոր փաստաբաններ չկան, վոր կարողանան զանազան յերկդիմի ճանապարհներ և ինտրիգներ սովորեցնել: Դատավորն առողջ դատողությամբ ու գիտակ կշռադատում է կողմերի հիմքերը. նա պաշտպանում է ուղիղ մարդու անկեղծությունը՝ խաբեբայի կեղծ պնդումների դեմ:

Արդարադատության նման յեղանակը շատ դժվար կլիներ կիրառել ուրիշ յերկրներում, վորտեղ արդարադատությունը օրենքների մի դեզով թաղված է հակասությունների և յերկդիմությունների մեջ: Ուտոպիայում ի միջի այլոց ամեն վոք «իրավագիտության դոկտոր» է, քանի վոր օրենքների թիվն այնտեղ—յես կրկնում եմ այդ — չափազանց սահմանափակ է, և դրանց ամենահասարակ մեկնաբանումը համարվում է ամենից ավելի հիմնավորն ու արդարը:

Օրենքները, ասում են ուտոպիացիք, դրված են բացառապես նրա համար, վորպեսզի ամեն մարդ իմանա իր իրավունքներն ու պարտականությունները: Մեր կոմենտարիաների նրբությունը միայն շատ քչերին մատչելի կլիներ և կարիք կզգացվեր այդ կոմենտարիաները գիտուն մասնագետների օգնությամբ պարզաբանել. մինչդեռ այնքան պարզ շարադրված օրենքը, վորի իմաստը

յերկդիմի չե և հեշտ ըմբռնելի յե, միանգամայն մատչելի կլինի ամեն մեկին: Մասսայի, այսինքն հասարակության ամենից ավելի բազմամարդ ու ամենից ավելի ոգնության կարիք ունեցող դասակարգի համար միևնույն չե՞, թե բնավ որենքներ չեն լինի և կամ դրանք այնքան նուրբ շարադրված կլինեն, վոր դրանց իմաստը պարզաբանելու համար կարիք կլինի յերկար հետազոտության և ուսումնասիրության: Սովորական մարդու դատողության ուժը բավական մետաֆիզիկ չե, վոր կարողանա թափանցել այդ բոլոր նրբությունների մեջ. բացի այդ, մարդկային մի կյանքը, վորը հետամուտ ե լինում որական հացի անընդհատ աշխատանքին, բավական չեր լինի այդպիսի պարապմունքների համար:

Հարևան ժողովուրդները նախանձում են այս յերջանիկ կղզուն՝ նրա կառավարության համար. ուտոպիական հաստատությունների իմաստությունը և բնակիչների առաքինությունը հրապուրում ե նրանց: Ազատ ազգերը, ինչպես նաև նրանք, վոր ոգտվում են ինքնավարությամբ (նրանցից շատերին մի ժամանակ ուտոպիացիներն ազատագրել են բռնակալությունից) գալիս են Ուտոպիա, նրանցից մեկ կամ հինգ տարով կառավարողներ խնդրելու համար: Պաշտոնավարության ժամկետը լրանալուց հետո այդ անձնավորությունները բոլոր արժանի պատիվներով վե-

րադառնում են հայրենիք ու նրանց փոխարեն ուրիշներն են ուղարկվում: Այն ազգերը, վորոնք այդպես են գործում, անշուշտ այդ անում են յելնելով իրենց շահերից: Չե՞ վոր մի յերկրի բարորությունը կամ անկումը կախված ե այն մարդկանց բարքերից, վորոնք կառավարում են այդ ժողովուրդը:

Այն ժողովրդներին, վոր ուտոպիացիների միջից ընտրում են իրենց կառավարողներին, մեր կղզեցիները տալիս են քաղաքական գործունեյության բանիմաց մարդիկ: Ուտոպիացին իրեն թույլ չի տա հրապուրվել հարըստությամբ, ինչքան ել այդ փայլուն լինի. չե՞ վոր շուտով նա ի վիճակի չի լինելու դրանից ամենաչնչին ոգուտն իսկ ստանալ, քանի վոր մի քանի տարուց կամ ամսից հետո պետք ե վերադառնա իր հայրենիքը. նա չի կարող նույնպես կողմնապահություն անել, վորովհետև բոլորովին չի ճանաչում իր հպատակներին: Դժբախտ ե այն յերկիրը, վորտեղ դատավորի աթոռի վրա իշխում ե անհատական շահերի հետապնդումը: Այդտեղ խոսք անգամ լինել չի կարող արդարության՝ պետության այդ լավագույն հենարանի մասին:

Այն յերկրները, վորտեղ կառավարում են Ուտոպիայի քաղաքացիները, ուտոպիական հանրապետությունը դրանց համարում ե իր դաշնակիցները, իսկ նրանց, ովքեր իրեն

վորեւ բանով պարտական են՝ իր բարեկամները։

Ինչ վերաբերում ե պաշտոնական պայմանագրերին, վոր մյուս ժողովուրդներն այնքան հաճախ կնքում են իրար հետ միմիայն նրա համար, վորպեսզի մի տարի հետո խախտեն ու ապա կրկին նորոգեն— ուտոպիացիները յերբեք պայմանագրեր չեն կնքում։ Ի՞նչի յեն պետք այդպիսի պայմանագրերը,— հարցնում են ուտոպիացիները.—մի՞թե բնությունը մարդկանց ամուր կապերով չի միացրել միմյանց։ Նա, ով խախտում ե այդ ուժեղ և սրբազան կապերը, մի՞թե կտատանվի գրավոր պայմանագրերը վոտնակոխ անելիս։

Ինչ վոր նրանց այդ համոզումն ավելի յե ամրապնդում, այն հանգամանքն ե, վոր Նոր Աշխարհի յերկրներում իշխողների միջև կնքված համաձայնությունները շատ թույլ են պահպանվում։ Յեվրոպայում և մասնավորապես քրիստոնյա յերկրներում պայմանագրերի լրջությունն ամեն տեղ համարվում ե սրբազան և անձեռնմխելի։ Այս հանգամանքը հիմնավորված ե մասամբ միապետի ազնվությամբ, մասամբ էլ այն վախով ու հարգանքով, վոր ներշնչում ե նրանց բարձրը հոգեվորականությունը։ Ձե՞ վոր պապերը վոչ մի այնպիսի բան չեն խոստանում, վոր կատարել չկարողանան. և այդ պատճառով էլ նրանք մյուս միապետներին ըս-

տիպում են հավատարմորեն կատարել իրենց խոստումները. ընդ վորում, վորպես հարկադրական միջոցներ ոգտագործում են յեկեղեցական պատիժներն ու բանադրանքը։ Պապերն իրավացիորեն մտածում են, վոր քրիստոնեյության համար անպատվաբեր ե պայմանագրերի խախտում հանդուրժել նրանց կողմից, ովքեր բոլորի առաջ իրենց «հավատացյալ» են անվանում։ Մինչդեռ Նոր Աշխարհում, վորը մեր աշխարհից տարբերվում ե վոչ այնքան հասարակածով, վորքան սովորույթներով ու բարքերով, պայմանագրերին վոչ մի հավատ չեն ընծայում։

Խաղաղության ամենահանդիսավոր վըստահացումներին սովորաբար հաջորդում են արագ խզումներ, թեպետ պայմանագրերը կնքվում են ամենահանդիսավոր սրբազան արարողություններով։ Ձե՞ վոր շատ հեշտ ե պայմանագրերի տեքստում ենտրիգի նյութ գտնել, քանի վոր կողմերը պայմանագիր կնքելիս վերջինի մեջ սովորաբար սողոսկեցնում են յերկդիմություններ, վորպեսզի իշխանը վոչնչով կաշկանդված չլինի և միշտ կարողանա իրեն համար գաղտնի յելք գտնել, վորի միջոցով հարմար կլինի խուսափել պարտավորությունների կատարումից։ Իսկ մինիստրը, վորն իրեն պարծանք ե համարում պայմանագիր կնքելիս հոգուտ իր տիրոջ

կեղծիք կատարել, յեթե նման խորամանկություններ հայտաբերի յերկու մասնավոր մարդկանց միջև կնքված պայմանագրում, այդ միևնույն դիվանագետն իր արդարամտության գիտակցությամբ ճակատը կկնճռոտեր ու խաբեյությունը կպատժեր, վորպես կախաղանի արժանի վոճիր:

Այս բոլորից չի՞ կարելի հանգել այն յեզրակացության, վոր արդարությունը ստոր և անարգ առաքինություն է, վորի տեղը թագից շատ ցած է: Այդ դեպքում պետք է տարբերել յերկու տեսակի արդարություն. մեկը՝ նվաստավոր ժողովրդի համար, վոտաղնաց և գլխակոր, սեղմված բազմաթիվ կապանքներով ու փակված անելանելի նեղ շղթաներում. իսկ մյուսը՝ թագավորների համար, շատ ավելի վսեմ ու պատկառելի, քան առաջինը, շատ ավելի ազատ, վորին չեն արգելում անել այն, ինչ վոր ուզում է:

Ցես հակված եմ մտածելու, վոր մեղանից հեռու այդ վայրերում իշխանների անհավատարմությունն է գլխավոր պատճառը, վոր ուտոպիացիները դիվանագիտական վոչ մի հարաբերություն չեն սկսում: Սակայն ուտոպիացիները պայմանագրեր կնքելն ընդհանրապես չարիք են համարում մինչև իսկ այն դեպքում, յերբ այդպիսիները բարեխիղճ կերպով կատարվում են: Ցեվրոպայում թե-

րևս նրանց տեսակետները փոխվեյին: Այդ սովորույթը հասցնում է այնտեղ, վոր մարդիկ վարժվում են միմյանց փոխադարձ թշնամիներ համարել և պետք է իրար վոչնչացնեն, յեթե նրանց միջև հատուկ պայմանավոր չկա. կարծես թե յերկու ազգերի միջև այլևս արդեն գոյություն չունի վոչ մի բնական կապ, հենց վոր մի սար կամ անտառ նրանց բաժանում է:

Թե վոր դաշնադրություններն ապահովեյին դաշնակիցների բարեկամությունը, բայց չե՞ վոր պայմանագրերը յերբեք չեն հեռացնում խզման, հետևապես և կողոպուտի ու պատերազմի առիթը, քանի վոր դիվանագետներն անխորհուրդ կերպով պայմանագրի զանազան կետեր են սահմանում: Հազվադեպ է, վոր լիազորներն իրենց վորոշումների և արգելքների մեջ նախատեսեն բոլոր հնարավոր դեպքերը. հազվադեպ է, վոր նրանք միանգամայն ուղիղ ու պարզ արտահայտվեն:

Ուտոպիացիներն սկզբունքով միայն նրան են թշնամի համարում, ով մեղավոր է ճանաչվում անարդարության և բռնության մեջ: Մեկ և միևնույն բնության ընդհանրությունը նրանք ավելի ամուր կապ են համարում, քան աշխարհի բոլոր պայմանագրերը: Մարդը,

ասում են նրանք, իր յեղբայրների հետ ավելի սերտ է կապված սրտով ու մարդասիրությամբ, քան ամեն տեսակի խոսքերով ու ֆորմուլներով:

ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՄԱՍԻՆ

Ուտոպիացիների համար պատերազմը մի սարսափ է. այդ նրանք համարում են անասնական կոպտության մնացորդ, վորին սակայն մարդն ավելի կողմնակից է յերևում, քան վայրի գազանների վորևէ մի տեսակը:

Հակառակ համարյա մյուս բոլոր ազգերի բարքերին, Ուտոպիայում ամենախայտառակ գործն է համարվում ռազմադաշտերի դափնիներին ձգտելը: Սակայն չպետք է մտածել, թե ուտոպիացիներն այդ պատճառով աշխուժ կերպով չեն վարժվում ռազմական դիսցիպլինայի. մինչև իսկ կանայք էլ՝ տղամարդկանց համահավասար, յենթակա յեն դրան:

Վարժությունների համար սահմանված են վորոշ օրեր, վորպեսզի վճռական րոպեյին վոչ վոք կռվի համար անպատրաստ չլինի: Բայց ուտոպիացիներն առանց ծանրակշիռ շարժառիթների յերբեք պատերազմ չեն ձեռնարկում: Նրանք այդ պատճառների թվին են դասում իրենց և դաշնակիցների սահմանները հարձակումներից պաշտպանելը, ինչպես և հարևան ժողովրդին ազատագրելը՝ բռնապետությունից ու բռնակալի լծից: Այդ անելիս նրանք բոլորովին նկատի չեն առնում իրենց սեփական շահերը, այլ աչքի առաջ ունեն միայն մարդկության բարօրությունը: Ուտոպիայի պետությունն իր բարեկամին օգնության է շտապում առանց վորևէ պայմանի ու խոստումների և այն էլ վոչ միայն թշնամական հարձակման դեպքում, այլ յերբեմն էլ վրեժ լուծելու ու բավարարություն պահանջելու համար: Սակայն պետությունն այդ կերպ վարվում է միայն այն ժամանակ, յերբ նախքան պատերազմ հայտարարելը իր հետ խորհրդակցում են: Վերջին դեպքում գործի էությունը լրջորեն հետազոտվում է և, յեթե մեղավոր կողմը չի ցանկանում հատուցել պատճառած վնասները, այն ժամանակ նրան համարում են պատերազմի հեղինակ և նրա բոլոր հետևանքների պատասխանատու: Ուտոպիացիներն այդպիսի անդրդելի վորոշում ընդունում են ամեն անգամ, յերբ կողոպուտի նպատակով զինված հարձակում է կատարվում: Նրանց զայրույթն առանձնապես գրգռվում է, յերբ բարեկամ ազգերի վաճառականությունն օտարության մեջ հանուն վոչ ճիշտ օրենքների և կամ դրանց սխալ մեկնաբանության, անարդարացի նեղություններ են կրում: Այդպես էր այն պատերազմի առիթը, վորը նրանք ներկա սերնդից վոչ շատ

ժամանակ առաջ հայտարարեցին ալաոպոլիտների դեմ՝ հօգուտ նեֆելոգետների[33]):

Ըստ նեֆելոգետների հավաստիացումների, ալաոպոլիտներն արդարադատության պատրվակով նրանց մի քանի վաճառականներին նշանակալի վնասներ պատճառեցին: Այդ բողոքն իրավացի յեր թե վոչ, բայց նա սարսափելի պատերազմի առիթ հանդիսացավ: Յերկու գլխավոր թշնամիների ատելությանը և ուժին միացան հարևան ժողովրդների շահերն ու միջամտությունը: Զորավոր ազգերը ցնցվեցին, մյուսները ջարդվեցին: Չարիքների այս տխուր շղթան վերջացավ ալաոպոլիտների կատարյալ պարտությամբ ու նվաճումով, ուտոպիացիները (նկատի առնելով, վոր պատերազմն իրենց չեր վերաբերում) ալաոպոլիտներին յենթարկեցին նեֆելոգետների տիրապետության: Սակայն և այնպես, վերջինները շատ հեռու եյին ալաոպոլիտների ծաղկյալ դրությանը հասնելուց: Մեր կղզեցիներն այս կերպով են հետապնդում իրենց բարեկամներին պատճառված անարդարությունը, յեթե գործը մինչև իսկ միայն փողին ել վերաբերի:

[33]) Ալաոպոլիտներ նշանակում է «գոյություն չունեցող տեղերի ժողովուրդ», նեֆելոգետներ— մշուշից ծնվածներ: Մորը հավանաբար նկատի ունի անգլիացիներին:

Նրանք շատ ավելի քիչ յեռանդ են ցուցաբերում իրենց սեփական շահերի համար: Յեթե պատահի, վոր ուտոպիացի վաճառականը խաբեբայության զոհ դառնա կամ կողոպտվի, այդ դեպքում, յեթե անձի վրա բռնություն բոլորովին չի գործադրված, նրանք միայն դադարեցնում են ամեն մի հարաբերություն այդ ժողովրդի հետ, մինչև վերջինիս գոհացում տալը: Դրա պատճառն այն չե, վոր դաշնակիցների շահերը նրանց համար ավելի թանգ են, քան իրենց սեփական քաղաքացիների շահերը: Դաշնակիցների կրած նյութական վնասը նրանց ավելի յե վրդովում, քանի վոր ոտար վաճառականը նման դեպքերում կորցնում ե իր անհատական կարողության մի մասը, վոր նրա համար ավելի մեծ դժբախտություն ե: Մինչդեռ ուտոպիացին կորցնում ե հասարակական հարստության մի մասը միայն, ավելի ճիշտ իր յերկրի ավելցուկի մի մասը, քանի վոր արտահանումը միայն այդ պայմանով ե թույլատրվում: Հենց այդ ե պատճառը, վոր Ուտոպիայում փողի կորուստը շատ քիչ ե վերաբերում առանձին անհատին: Դրա համար ել նրանք իրավամբ շատ դաժան են համարում բազմաթիվ մարդկանց կյանքի գնով վրեժ առնել մի վնասի համար, վորն ինքնին չի սպառնում իրենց համաքաղաքացիների վոչ կյանքին և վոչ ել բարորությանը: Ի միջի այլոց, յեթե պատա-

հի, որ մի ուտոպիացի անարդարացի պահանջների յենթարկվի կամ սպանվի, լինի դա հասարակական նախաձեռնությամբ թե անհատական, այդ դեպքում պետությունը լիազորում է իր դեսպանին հետազոտել գործի հանգամանքները: Նա պահանջում հանձնել մեղավորներին և մերժման դեպքում անհապաղ պատերազմ է հայտարարում: Իսկ հակառակ պարագայում վոճիրի հեղինակները մահվան կամ ստրկության են դատապարտվում:

Ուտոպիացիները վոչ մի բանի վրա այնքան չեն վողբում, վորքան արյունոտ պատերազմի դափնիների վրա: Նրանք մինչև իսկ ամաչում են դրանից, քանի վոր անհեթեթություն են համարում մարդկային արյան գնով մինչև իսկ ամենափայլուն հաջողություններ ձեռք բերել: Նրանք մեծագույն արժանիք են համարում թշնամուն ճարպկությամբ ու խորամանկությամբ շրջանցելը: Այդպիսի դեպքերում նրանք կազմակերպում են հաղթական ցնծություն և կանգնեցնում են հուշարձաններ՝ ճիշտ այնպես, ինչպես այդ անում են հերոսական գործեր կատարելուց հետո: Նրանք մարդկային ու հերոսավայել վարմունք են համարում, յերբ հաղթանակը ձեռք է բերվում բացառապես շնորհիվ իրենց խելացիության, վորին բոլոր կենդանի եյակներից միայն մարդն է ի վիճակի հասնել:

Առյուծն, ասում են նրանք, արջը, վարազը, գայլը, շունը և մյուս գիշատիչ գազանները կռվի մեջ կարող են ոգտագործել միայն ֆիզիկական ուժը: Նրանց մեծամասնությունը մեզ գերազանցում է ուժով և հանդգնությամբ: Սակայն այնուամենայնիվ նրանք ստիպված են հպատակվել մեր բանականության և գիտելիքների կարողությանը:

Ուտոպիացիները յերբ պատերազմ են սկսում, դրանով հետապնդում են մի միակ նպատակ. ձեռք բերել այն ինչ վոր հարկադրել է նրանց պատերազմ հայտարարելու. յեթե գոհացումն անկարելի յե, այդ դեպքում նրանք պատերազմը հրահրողներից այնպես են վրեժ լուծում, վոր հետագայում ուրիշներին հրապուրիչ չլինի ձեռնարկել նման արկածներ: Այս է ուտոպիացիների նպատակը՝ իրենց ծրագրերն իրականացնելիս, մի նպատակ, վորին նրանք ձգտում են հնարավորության չափ շուտ հասնել, ընդվորում ավելի սիրով խուսափում են վտանգից, քան թե սին փառքի յետևից ընկնում:

Պատերազմ հայտարարելուց անմիջապես հետո, նրանք հոգ են տանում, հենց նույն որը գաղտնի կերպով թշնամու յերկրի աչքի ընկնող տեղերում պետական կնիքով կնքված հայտարարություններ կպցնել: Այդ հայտարարություններով նրանք շլացուցիչ վարձատրություն են խոստանում իշխանին սպանո-

ղին։ Ավելի պակաս — սակայն այնուամենայնիվ բավական խոշոր — վարձատրություն ել խոստանում են մի շարք մարդկանց գլուխների համար, վորոնց անունները գրված է մահվան այդ դատավճռի մեջ։ Այսպիսով, ուտոպիացիները գնահատում են խորհրդականների և մինիստրների գլուխները, վորոնք իշխանից հետո վեճի գլխավոր հրահրողներն են։ Սպանողին խոստացված վարձը կրկնապատկվում է, յեթե մահվան դատապարտվածին կենդանի յեն հանձնում։ Մինչև իսկ նրանց, վորոնց գլուխներն արդեն գնահատված են, նման վարձով և պատժից ազատելու խոստումով կոչ են անում մատնել իրենց մեղսակիցներին։ Այս միջոցառումները հակառակորդ կողմի պարագլուխների միջև շուտով առաջացնում է փոխադարձ անվստահություն։ Նրանց միջև այլևս չի տիրում վոչ փոխադարձ վստահություն և վոչ ել համաձայնություն։ Մեկը վախենում է մյուսից՝ և այդ յերկյուղը յերբեք անհիմն չէ։ Հազվադեպ չէ, վոր հաճախ շատերը, և դրանց մեջ մասնավորապես ինքը՝ իշխանը, մատնվում են հենց այն անձնավորությունների կողմից, վորոնց վրա ամենամեծ հույսն են դրած լինում։ Այդքան մեծ է փողի զորությունը՝ վոճրագործության հանդեպ։ Ուտոպիացիները նման պարագաներում յերբեք չեն խնայում փողը։ Նրանք ամենայերախտագետ առատաձեռնությամբ վարձատրում են նրան, ով հրա-

պուրվում է դավաճանության բոլոր վտանգներով։ Նրանք վոսկով են վարձատրում նրան՝ մեծ վտանգի համար։

Այդ նպատակով նրանք դավաճաններին վոչ միայն հսկայական գումար են խոստանում, այլև մշտական յեկամուտ ունեցող ընդարձակ կալվածներ, վոր գտնվում են իրենց դաշնակիցների յերկրներում։ Ուտոպիացիներն իրենց խոստումները կատարում են հավատարմորեն։

Թշնամիների գլուխները գնահատելու միջոցով նրանց իսկ դեմ կռվելու այդ սովորույթն ուրիշ ամեն տեղ պախարակվում է իբրև խիստ վախկոտություն՝ հատուկ այլասերված հոգիների։ Ուտոպիացիները սակայն փառաբանում են այդ, վորպես խելացիության հատուկ միջոցառում, վորն առանց կռվի վճռում է ամենասարսափելի պատերազմները։ Նրանք հպարտանում են դրանով, վորպես քաջագործություն, մարդասիրություն և վողորմածություն. վորովհետև այդ դեպքում մի քանի մեղավորների մահով խնայվում է կյանքը հազարավոր անմեղների, վորոնք այլապես պետք է մեռնեյին ճակատամարտի դաշտում։ Եյականն այն է, վոր ուտոպիացիներն ափսոսում են վոչ միայն իրենց, այլև ոտար զինվորներին։ Նրանք գիտեն, վոր զինվորը իր սեփական ցանկությամբ չէ վոր պատերազմի յե դուրս գալիս, այլ այդ բանին հարկադրում են նրան ա-

ըյունաբրու առաջնորդները: Յեթե վերահիշյալ միջոցառումները նպատակին չեն հասնում, այն ժամանակ մեր կղզեցիները թշնամու յերկրում անմիաբանության ու յերկպառակության սերմեր են ցանում: Իշխանի յեղբորը կամ մի այլ ազնվական անձնավորության նրանք գահը բարձրանալու օգնություն են առաջարկում: Յերբ ներքին անհաշտությունները նպատակին չեն հասնում, այն ժամանակ փորձում են հարևան ժողովրդներին ապստամբեցնել թշնամու դեմ և այդպիսով նրանց ել վորևե պատրվակով, վորը շատ հեշտ ե գտնել, քաշում են կռվի մեջ: Ուտոպիացիները միաժամանակ այդ նոր դաշնակցին օգնություն են խոստանում, գաղտնի փող են մատակարարում նրան, ավելացնում են նրա ուժերը, բայց այնուամենայնիվ խնայում են իրենց քաղաքացիներին: Ուտոպիայում քաղաքացիներն ամենաարժեքավոր և ամենից թանկագին գանձն են: Ակնածելի հարգանքը, վորը կղզու բնակիչները տածում են միմյանց հանդեպ, այնքան մեծ ե, վոր նրանք միայն դժկամակությամբ կհամաձայնվեն իրենցից մեկին փոխանակել թշնամի իշխանի հետ: Նրանք առանց ափսոսանքի շռայլում են վոսկին, վորովհետև այն գործադրում են ամենաստոր նպատակների համար, վորոնց մասին յես արդեն հիշատակեցի: Նրանցից վոչ վոք չի զրկվի դյուրանկյաց կյանքից, յեթե նրանք մինչև իսկ հարկադրվեն ծախսել վերջին գրոշը:

Չհաշված կղզու հարստությունները, նրանք, ինչպես յես արդեն ասացի, պարտատեր են բազմաթիվ պետություններում, վոր նրանց խոշոր գումարներ պարտք ունեն: Այդ դրամի մի մասով նրանք հավաքագրում են վարձկան զինվորներ, գլխավորապես ցապոլետների [34] յերկրից, վորը գտնվում ե Ուտոպիայից դեպի արևելք հինգ հարյուր հազար քայլ հեռավորության վրա: Ցապոլետները՝ բարբարոս, կոշտ ու վայրենի մի ժողովուրդ, ապրում են միայն անտառներում և ժայռերի մեջ, վորտեղ նրանք ծնվում ու մեծանում են: Նրանք բրտացած են և համբերությամբ տանում են ցուրտը, շոգն ու այլ զրկանքներ: Փարթամ կյանքը նրանց անծանոթ ե, նրանք արհամարհում են հողագործությունը, չեն իմանում վոչ վայելուչ ապրել և վոչ ել տանելի հագնվել: Նրանց սնունդի միակ միջոցն անասնապահությունն ե, իսկ յեկամտի գլխավոր աղբյուրը՝ վորսն ու կողոպուտը:

Ծնված լինելով միմիայն պատերազմի համար, ցապոլետները վորոնում են և ագահու-

---

34) Ցապոլետներ (zapoletes)—այս անվան տակ Մորն անկասկած նկատի ունի շվեյցարացիներին, վորոնք այդ շրջանին վորպես վարձկան զինվորներ իրենց ծառայություններն առաջարկում եյին այն պետության, վոր ամենից շատ եր վարձատրում:

թյամբ ձեռք մեկնում յուրաքանչյուր առիթի, որը նրանց ջարդելու հնարավորություն է տալիս: Նրանք հազարներով ցած են իջնում իրենց լեռներից և չնչին գնով իրենց ծառայությունը վաճառում են իրենց կարիքն ունեցող առաջին հանդիպած պետությանը: Միակ արհեստը, որ նրանք գիտեն՝ սպանությունն է և նրանք կատարում են քաջաբար ու անկաշառելի հավատարմությամբ հօգուտ նրանց, որոնց վաճառել են իրենց: Ցապոլետները յերբեք որոշ ժամանակով չեն կապվում, այլ միշտ միայն այն պայմանով, որ հաջորդ օրն իսկ անցնեն թշնամու կողմը, յեթե նա ավելի յե առաջարկում ու ապա կրկին վերադառնում են այն դրոշի տակ, հենց որ այնտեղ վարձի մի թեթև բարձրացում են ստանում:

Այդ յերկրներում հազվադեպ է տեղի ունենում մի պատերազմ, որի ժամանակ յերկու կողմից ցապոլետներ չկռվեն: Այսպիսով, ամեն որ կարելի կլինի տեսնել շատ մոտ ազգականներ, բարեկամներ, որոնք ծառայելով մի բանակում միմյանց հանդեպ ցուցաբերում են քնքուշ սեր, բայց հետո խիստ կատաղությամբ կռվում են միմյանց դեմ, հենց որ դիպվածը նրանց բաժանում է ու յերկու թշնամի բանակների շարքերը բերում: Նրանք մոռանում են ընտանիքի և բարեկամության կապերի մասին: Նրանք միմյանց սպանում են սարսափելի կատաղությամբ և միայն այն պատճառով, որ յերկու թշնամի թագավորներ այդ արյունի ու կատաղության համար նրանց մի քանի չնչին դրամով վարձատրում են: Փողի տենչը նրանց մոտ այնքան ուժեղ է, որ բավական է որական վարձի վրա մի դրոշի ավելացում, որպեսզի նրանք փոխեն իրենց դրոշը: Այդ կիրքը ցապոլետների մեջ անսանձ ընչասիրության է այլասերվել, որը նրանց այնուամենայնիվ ոչ մի օգուտ չի բերում, քանի որ ցապոլետը, ինչ որ իր արյան գնով վաստակում է, նա այնտեղ էլ վատնում է ամենաստոր շռայլությունների մեջ:

Այդ ժողովուրդն ուտոպիացիների համար պատրաստ է կռիվ մղել ամբողջ աշխարհի դեմ, որովհետև նա ուրիշ ոչ մի տեղ ավելի լավ վարձատրություն չի ստանում: Մյուս կողմից, իրենք՝ ուտոպիացիները, որ միշտ պատրաստ են ընդունել քաջ մարդկանց՝ նրանց ծառայություններն օգտագործելու համար, ուրախությամբ հավաքագրում են այդ ռազմասերներին՝ ցանկանալով ոչնչացնել այդ ցեղը: Դրա համար էլ, յերբ նրանք ցապոլետների կարիք են ունենում, աշխատում են փայլուն խոստումներով հրապուրել նրանց և դնել ամենավտանգավոր պոստերում: Ցապոլետների մեծագույն մասն սպանվում է և հետևապես յերբեք յետ չի գալիս՝ խոստացվածը պահանջելու համար: Կենդանի մնացածները սակայն ճշտորեն ստանում են որոշված գինը և

խոստումն հարգելու տեսակետից այս խիստ ճըշ
տապահությունը քաջալերում է նրանց՝ հետագա
դեպքերում էլ նույնքան խիզախությամբ ար-
համարհել վտանգը: Ուտոպիացիներին շատ քիչ
է մտահոգում այն հանգամանքը, թե ո՛րքան
այդպիսի վարձկան զինվորներ են կորցնում:
Նրանք համոզված են, որ մարդկության մեծ
ծառայություն կմատուցեն, յեթե կարողա-
նան աշխարհը յերբևիցե մաքրել այդ անպա-
տիվ ավազակների ցեղից:

Բացի ցապոլետներից, ուտոպիացիները
պատերազմի ժամանակ օգտագործում են նաև
այն յերկրների զորքերը, վորոնք գտնվում են
իրենց պաշտպանության տակ, ապա օժանդակ
զորքեր վերցնում են նաև իրենց դաշնակիցնե-
րից, իսկ ամենից վերջն ուղարկում են սեփա-
կան քաղաքացիներին, վորոնցից նրանք ընտ-
րում են մի տաղանդավոր և խիզախ առաջ-
նորդ: Զինվորական այդ պետին յենթարկվում
են յերկու օգնականներ, վորոնք ամենափոքր
իսկ իշխանություն չունեն, ինչքան վոր պետն
ի վիճակի յե հրամանատարությունը վարելու:
Բայց առաջնորդի մահվան կամ գերի ընկնելու
դեպքում, նրան անմիջապես փոխարինում է
օգնականներից մեկը, իսկ վերջինիս էլ, ըստ
անհրաժեշտության, մյուսը: Այս կերպով,
զորապետի կյանքի անձնական վտանգը, վորը
մյուս ամեն մեկի նման յենթակա յէ պատերազ-
մի բոլոր պատահարներին, յերբեք չի անդրա-

դառնում զորքի վրա: Յուրաքանչյուր քաղաք
զորքը հավաքագրում է կամավորներից ու
վարժեցնում է նրանց: Վոչ վոքի, հակառակ
իր կամքի, չեն ստիպում մասնակցել հեռավոր
արշավանքների այն հասարակ պատճառով,
վոր յերկչոտ զինվորը կարող է իր վախկոտու-
թյամբ վարակել նաև ընկերներին: Բայց և
այնպես թշնամական հարձակումների դեպքում
կամ ներքին կռիվների ժամանակ օգտագոր-
ծում են բոլոր առողջ վախկոտներին, ընդվո-
րում նրանց տեղավորում են փորձված զինվոր-
ների մեջ՝ ռազմական նավերում կամ բերդերի
պահակախմբերում: Այդտեղ փախուստի մա-
սին մտքով իսկ չի կարելի անցկացնել, նրանք
թշնամու հանդեպ դեմ առ դեմ են և ընկերներն
էլ հետևում են: Վտանգավոր դիրքը բթացնում
է սարսափը, ու գագաթնակետին հասած
վտանգը հաճախ վախկոտին դարձնում է իս-
կական առյուծ:

Յեթե օրենքը վոչ վոքի չի ստիպում հա-
կառակ իր ցանկության յերկրի սահմաններից
դուրս գալ, ապա դրա հակառակ, նա թույ-
լատրում է կանանց՝ բանակում ընկերանալ ի-
րենց ամուսիններին: Փոխանակ արգելքներ
դնելու, նրանք դրդում են կանանց անել այդ,
և նման քայլը մեծ պատիվ է բերում նրանց:
Կռվի ժամանակ ամուսինները միևնույն պատի
վրա յեն դրվում՝ շրջապատված յերեխաներով

և մոտ ազգականներով, որ բնականորեն միմյանց օգնելու ու պաշտպանելու հակումն ունեն: Ամոթ է սպասում այն տղամարդուն, որը վերադառնում է առանց իր կնոջ, այն որդուն, որը կորցրել է հորը: Դրա համար էլ, յերբ ուտոպիացիները պետք է հարձակում գործեն, և թշնամին համառորեն դիմադրում է, այդ ժամանակ կռիվը վերածվում է ոչ թե հանուն կյանքի, այլ՝ մահվան: Նրանք բոլոր ուժերով ձգտում են, որ իրենք կռվի չմտնեն և այդպիսին վերջացնեն վարձկանների օգնությամբ: Բայց յեթե արդեն կռվի մեջ են մտնում, այդ ժամանակ նրանց քաջությունը յետ չի մնում այն խորամանկությունից, որով նրանք, ինչքան հնարավոր է, աշխատում էին խուսափել կռվից:

Առաջին հարձակման ժամանակ նրանք չեն սպառում իրենց ուժերը: Դիմադրությունն ու կռվի տևողությունը հետզհետե բարձրացնում է նրանց արիությունը, այնպես որ նրանք ավելի շուտ կմեռնեն, քան թե կնահանջեն: Նրանց առանձին առնականություն է ներշնչում այն վստահությունը, որ տանը նրանք այնքան կգտնեն, որ կկարողանան հանգիստ ապրել: Բացի այդ, նրանք կարիք չունեն իրենց ընտանիքի մասին անհանգստանալու: Այդ անհանգստությունն ուրիշ ամեն մի տեղ մինչև իսկ լավագույն հերոսներին էլ զրկում է հոգեկան համասարակշռությունից: Դեպի հաղթանակն

ունեցած հավատը նրանց մեջ մեծանում է ռազմական գործի արտակարգ հմտության, ինչպես և գլխավորապես այն հրաշալի դաստիարակության շնորհիվ, որ նրանք ամենավաղ մանկությունից ստանում են պետության դպրոցում և ուսումնական հիմնարկներում: Նրանք վաղ տարիքում սովորում են կյանքը ոչ այնքան արհամարհել, որպեսզի անխոհեմ կերպով ռիսկի յենթարկեն այն, բայց և ոչ այնքան էլ սիրել, որպեսզի անամոթաբար խնայեն, յերբ պատիվը պահանջում է զոհել անձը: Կռվի ամենատաք միջոցին ընտիր տղամարդկանց մի խումբ, որը մահվան յերդումն է տվել, մինչև ամենավերջին հնարավորությունը հետապնդում է թշնամու զորապետին: Վերջինիս նրանք բռնում են կամ խորամանկությամբ և կամ անմիջական բաց կռվում: Այդ ոչ մեծ ջոկատը, մի յերկար սեպ կազմած, ոչ հանգիստ գիտի և ոչ էլ դադար: Այդ խումբն աստիճանաբար ուժեղացվում է թարմ մարդկանցով, որոնք փոխարինում են հոգնած ռազմիկներին. Հազվադեպ է, որ նրանք չհաջողեն սպանել կամ գերի բռնել առաջնորդին, յեթե միայն վերջինս փախուստ տալով չպրծնի:

Ուտոպիացիները հաղթանակից հետո յերբեք անօգուտ ջարդ չեն կատարում: Փախչողներին փոխանակ սպանելու, ավելի շուտ գերի յեն վերցնում ու միաժամանակ առանց

ապահովելու կանոնավոր նահանջը, վոչ վոքի չեն հետապնդում, բացառությամբ այն դեպքերի, յերբ առաջին շարքերն սպանված են և հետապնդումը պայմանավորում ե հաղթանակը: Նրանք նախամեծար են համարում թողնել, վոր թշնամին փախուստ տա, քան թե նրա յետևից ընկնում, քանի վոր վերջին դեպքում զինվորը կարող ե խառնակել իր շարքերը: Ուտոպիացիները լավ են հիշում, վոր իրենց փրկությունը մեկից ավելի անգամներ պարտական եյին նման տակտիկային:

Արդարև, թշնամին հաճախ բանակի գլխավոր ուժը ջախջախելուց հետո՝ հաղթանակով արբեցած, հետապնդում ե փախչողներին ու դրանով ջլատում իր շարքերը: Նման դեպքերում մի աննշան ջոկատ կարող ե հարմար մոմենտին կռվին բոլորովին այլ ուղղություն տալ, այսինքն աննկատելի կերպով հարձակվել թշնամու վրա, վորը՝ վստահ լինելով հաղթանակին, չի նախատեսել վոչ մի պատահականություն: Այսպիսով մի անգամ չե, վոր հաջողվել ե թշնամու հաղթանակը վիճելի դարձնել. պարտվածները խփել են հաղթողներին ու խլել հաղթանակը:

Դժվար ե պնդել, թե արդյո՞ք ուտոպիացիներն ավելի հաջողությամբ իրե՞նք վորոգայթներ կլարեն, թե դրանցից կարող են խուսափել: Այնպես ե թվում, թե նրանք նախապատրաստվում են փախուստի, մինչ-

դեռ նրանք ճիշտ հակառակն են մտածում. յեթե իսկապես փախչելու դիտավորություն ունենային, ապա նրանք կարող եյին այդ վարպետորեն թաքցնել: Յեթե նրանք թե դիրքի և թե թվական տեսակետից իրենց շատ թույլ են զգում, ապա գիշերը՝ խոր լռությունով վերցնում են բանակը, կամ պատերազմական այլ խորամանկությամբ խուսափում են վտանգից: Յերբեմն նրանք որըցերեկով յետ են քաշվում, սակայն այնպես կանոնավոր, վոր այդպիսի նահանջի ժամանակ նրանց վրա հարձակվելը նըվազ վտանգավոր չե, քան այն դեպքում, յերբ նրանք իրենք են ճակատամարտի հրավիրում: Առանձին հոգատարությամբ նրանք իրենց բանակատեղին շրջապատում են լայն ու խոր փոսերով. փորված հողը կուտակում են ներսում: Այս աշխատանքները կատարում են վոչ թե որավարձվորները, այլ իրենք՝ զինվորները: Այդ գործով զբաղվում ե ամբողջ բանակը, բացառությամբ պահակների, վոր զենքը ձեռքին շրջապատում են բանակատեղին՝ մի հավանական անակնկալ հարձակում ի դերև հանելու համար: Գործավորների այդպիսի թվով միանգամայն արագ սարքում են ուժեղ ամրություններ, վոր նշանակալի տարածություն են բռնում:

Ուտոպիացիների զենքերը շատ մասնիվ

են և միաժամանակ հարմարեցրած են ամեն տեսակի շարժման, այնպես վոր լողանալիս էլ չեն խանգարում զինվորին: Զինվորական առաջին վարժություններից մեկը, վոր սովորեցնում են ուտոպիական զինվորին, այն է, վոր նա զինված լողանա: Նրանք կռվում են տեգով, վորն ուժով և ապահով ձեռքով նետում են ինչպես հեծելազորը, այնպես էլ հետևակները: Ձեռնամերձ կռվում նրանք սրի փոխարեն խփում են կացիններով, վոր անմիջական մահ են պատճառում՝ ուր վոր էլ ուղղված լինի հարվածը: Ռազմական մեքենաներ պատրաստելու գործում նրանք առանձին սրամտություն են ցուցաբերում. այդ մեքենաների կառուցվածքը գաղտնի յե պահվում մինչև այն ժամանակ, քանի դեռ պետք չի լինում դրանք գործադրել: Ուտոպիացիները վախենում են, վոր յեթե դրանց մասին ավելի վաղ իմանան, այն ժամանակ դրանք ավելի շուտ անոգուտ խաղալիքներ կլինեն, քան թե իրական ծառայություն կմատուցեն: Այդ մեքենաների պատրաստման ժամանակ նրանք գլխավոր ուշադրությունը դարձնում են նրանց տեղափոխման հեշտության և ամեն տեսակի գործածության հարմարեցնելու վրա:

Ուտոպիացիները ժամանակավոր զինադադարն այնքան բարեխղճորեն են պահպանում, վոր չեն խախտում այն մինչև իսկ այն

դեպքում, յերբ նրանց դրդում են անել այդ: Նրանք նվաճած յերկրի դաշտերը չեն ամայացնում, հունձը չեն այրում. մինչև իսկ, վորքան հնարավոր է, արգելում են, վոր հունձքը զորքի կողմից չկոխոտվի, քանի վոր իրենք յերբևիցե դրա կարիքը կունենան:

Անզենի հետ նրանք յերբեք անգթաբար չեն վարվում, յեթե միայն նա լրտես չէ: Անձնատուր յեղած քաղաքացիներին նրանք խնայում են ու նվաճվածներին կողոպուտի չեն յենթարկում: Նրանք սպանում են միայն ամենայերևելի պետերին, վոր վայրերի հանձնումը ձգձգել են. մյուսներին, վոր դիմադրություն են ցույց տվել, դատապարտում են ստրկության: Ինչ վերաբերվում է անտարբեր և խաղաղ մասսային, այդպիսին ամենափոքր խստության իսկ չի յենթարկվում: Յերբ ուտոպիացիներն իմանում են, վոր պաշարվածներից վոմանք առաջարկել են անձնատուր լինել, այդպիսիներին նրանք վարձատրում են ստրկության դատապարտվածների ունեցվածքի մի մասով, իսկ մյուս մասը հատկացվում է դաշնակիցների զորքին: Ուտոպիացիներն ավարից իրենց համար վոչինչ չեն վերցնում:

Պատերազմը վերջանալուց հետո նրա ծախքերն ընկնում են պարտվածների և վոչ թե դաշնակիցների վրա, վորոնց ոգտին մղվել է կռիվը: Այս սկզբունքի հիման վրա,

ուտոպիացիները ամենից առաջ փող են պահանջում, վորը նրանք ապագա մի պատերազմի դեպքում օգտագործում են ծանոթ նպատակների համար. այնուհետև պահանջում են զիջել նշանակալի տարածությամբ հողամասեր, վորոնք պետության զգալի յեկամուտ են ապահովում:

Պետությունն այժմ նման տեսակի անչափելի յեկամուտներ ունի, վոր քիչ-քիչ հավաքվել են զանազան առիթներով և պետական գանձարանին տարեկան տալիս են յոթ հարյուր հազար վոսկի: Պետությունն այդ կալվածքները քաղաքացիներ է ուղարկում, վոր կոչվում են քվեստորներ: Վերջիններն ապրում են իշխանաբար, ունեն մեծ շքախումբ և պետական գանձարանին ուղարկում են դրամական նշանակալի գումարներ: Ուտոպիացիները յերբեմն այդ յեկամուտները փոխ են տալիս միևնույն յերկրի բնակիչներին, քանի դեռ իրենք դրա կարիքը չունեն: Հազվադեպ է, վոր նրանք ամբողջ վճարումը միանվագ պահանջեն: Այդ կալվածների մի մասը տրվում է նրան, ով չի կարող փորձության դիմադրել և խորհուրդ է տալիս անձնատուր լինել, վորի մասին յես արդեն ասացի ձեզ:

Հենց վոր մի թագավոր Ուտոպիայի դեմ զենք է վերցնում ու շարժվում է կղզու հովանավորության տակ գտնվող մի յերկիր

նվաճելու նպատակով, ուտոպիացիներն անմիջապես հավաքում են սարսափելի բանակ և ուղարկում թշնամու յերկիրը: Միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում են կղզեցիները պատերազմ վարում իրենց յերկրում և այն ժամանակ աշխարհում վոչ մի ուժ չի կարող ստիպել նրանց թույլ տալ, վոր ոտար զորքը վոտք դնի կղզու վրա:

ՈՒՏՈՊԻԱՅԻ ԿՐՈՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ուտոպիայում կրոնները տարբեր են վոչ միայն զանազան գավառներում, այլև մինչև իսկ ամեն մի առանձին քաղաքի պարիսպների ներսում: Վոմանք պաշտում են արևը, ուրիշներ՝ լուսինը կամ վորևէ այլ լուսատու: Վոմանք, վորպես գերագույն աստվածություն, ընդունում են մարդու հիշատակը, վորի հռչակն ու առաքինությունը չեն ունեցել իրենց նմանը:

Բնակիչների մեծամասնությունը սակայն, վորը միաժամանակ ամենախելացի մասն է կազմում, պախարակում է այդ կռապաշտությունը և հավատում է մի միակ, հավիտենական, անհասանելի, անհայտ, անբացատրելի, մարդկային մտքի բոլոր գաղափարներից բարձր մի աստծո, վորը լցնում է ամբողջ աշխարհն իր ամենազորությամբ և վոչ թե իր մարմնական տարածականությամբ: Նրանք այդ աստծուն անվանում են հայր, նր-

րան են վերագրում. ամեն բանի ծագումը, աճումը, առաջադիմությունները, կերպարանափոխություններն ու վախճանը: Միայն նրան են մատուցում նրանք աստվածային պատիվներ:

Ի միջի այլոց, հակառակ իրենց կրոնական համոզումների տարբերության, բոլոր ուտոպիացիները համաձայն են այն բանին, վոր գոյություն ունի մի էյակ, վորը միաժամանակ համարվում է և՛ Արարիչ և՛ Նախախնամություն: Այդ էյակը համայնական անունով կոչվում է Միտրա: Տարակարծությունների հիմքն այն է, վոր Միտրան վոչ բոլորի համար միևնույնն է: Սակայն անկախ այն յեղանակից, վոր յուրաքանչյուրը պաշտում է յուր աստծուն, բոլորը նրա մեջ պաշտում են բնության վեհությունն ու ամենազորությունը և ժողովրդների ընդհանուր համաձայնությամբ նրան են վերագրում աշխարհի բոլոր գործերի անսահման տիրապետությունը: Սնոտիապաշտական կարծիքների ամեն մի տարբերություն սկսում է հետզհետե նվազել և լուծվել մի միակ կրոնի մեջ, վորն ավելի բանական է թվում: Մինչև իսկ հավանական է, վոր այդ ձուլումը կատարվել է անգիտակցաբար, համենայն դեպս այդ փոփոխության չհաջորդեցին դժբախտություններ, վոր սովորաբար նոր հավատադարձի ուղեկցողներ են համարվում, և վորը

միշտ ունենում է հակառակորդներ: Փոխանակ այս կարգի յերևույթները պատահականության վերագրելու, ուտոպիացիների մեծ մասն իր սնոտիական սարսափով այդ բացատրում է վորպես աստվածային զայրույթի և վրեժի ներգործություն, վորով աստվածությունը հետապնդում է իրենից յերես դարձնողներին:

Սակայն, յերբ նրանք մեզնից իմացան Քրիստոսի մասին, նրա ուսմունքի, կյանքի, նրա հրաշքների, նրա արտակարգ համբերատարության ու տանջանքների, այլև այն մասին, թե ինչպես փրկչի ինքնակամ թափած արյունը ավետարանի որենքին յենթարկեց աշխարհի գրեթե բոլոր ժողովրդներին, — դուք հազիվ կարող եք պատկերացնել, թե նրանք այդ հայտարարումով վորքան հափշտակվեցին: Ո՛վ գիտի, թե աստված ծածուկ բույն չեր դրել նրանց սրտում, կամ կարող է պատահել, վոր քրիստոնեական կրոնը իսկապես վոր համապատասխանում է այն իդեալին, վորը նրանց մեջ ամենամեծ հարգանքն է վայելում: Ինչ վոր ամենից ավելի ոժանդակեց նրանց այդ նպաստավոր տպավորությունը ներշնչելուն, իմ կարծիքով առաքյալների համայնական կյանքի մասին մեր պատմածն եր, վորպիսի կյանքը Հիսուս Քրիստոս կտակեց նրանց, և վորը տակավին այժմ ել սովորույթ է ճշմարիտ և կատարյալ քրիստո-

նյաների համայնքներում: Ինչ էլ լինի, նրանցից շատերն արտահայտվեցին հօգուտ մեր կրոնի և օծվեցին մկրտության սրբազան ջրով. դժբախտաբար, մեր չորսի մեջ (քանի վոր մեր յերկու ընկերների մահը մեզ այդ թվին հասցրեց) քահանա չկար: Այդ պատճառով էլ, թեև նրանք իրազեկ եյին մեր ուսմունքին, բայց չկարողացան ընդունել սրբազան խորհուրդը, վոր մեզ մոտ կարող են միայն քահանաները տալ: Բայց և այնպես այդ խորհրդի մասին նրանց պատկերացումն այնքան կենդանի յե, վոր յես հաճախ այն հարցն եյի լսում, թե չի՞ կարող արդյոք նրանց ընտրած քաղաքացիներից մեկը ստանձնել քահանայի դերը: Մինչև իմ մեկնելը նրանք տակավին վոչ վոքի չեյին ընտրել, բայց, ըստ յերևույթին, հաստատ վորոշել եյին անել այդ:

Կղզու այն բնակիչները, վոր չեն հավատում քրիստոնեական կրոնին, նրա տարածմանը վոչ մի արգելք չեն հարուցում և նորադարձներին ճնշումների չեն յենթարկում: Նրանցից մեկն իմ ներկայությամբ ձերբակալվեց, վորը հենց նոր միայն մկրտված, հակառակ մեր նախազգուշացումների, սկսեց քարոզել ավելի շատ կրքով, քան խելացիությամբ: Կրքով հափշտակված, նա չբավականացավ նրանով, վոր քրիստոնեական կրոնը դասեց առաջին տեղը, այլ և սկսեց առանց

այլևայլության անիծել բոլոր մյուսները, հարձակվել նրանց ուսմունքի վրա, այդպիսիները պիղծ անվանել, իսկ ուրիշ աղանդների հետևորդներին՝ դժոխքի արժանի անխիղճ սրբապիղծներ: Այս նորադարձն իր յերկար ճառից հետո մեղադրվեց, վոչ թե նրա համար, վոր հարձակվել եր այս կամ այն աստվածապաշտության վրա, այլ, վորովհետև ժողովրդի մեջ վորոշ գրգռության առիթ եր տվել. նրան դատեցին ու աքսորի դատապարտեցին:

Ուտոպիացիների ամենահին վորոշումների թվին է պատկանում արգելքը՝ վորևե մեկին իր դավանած կրոնի համար վիրավորել: Պետության հիմնադրման ժամանակ Ուտոպն իմացել եր, վոր իր գալուց առաջ բնիկները կրոնական անվերջ պատերազմներ են մղել: Բացի այդ, նա նկատել եր, վոր յերկրի այդ դրությունը նշանակալի չափով հեշտացնում է նրա նվաճումը, վորովհետև թշնամի աղանդները փոխանակ միանալու և միասին կռվելու, ամեն մեկն առանձին է կռվում: Հենց վոր նա հաղթեց և տեր դարձավ, շտապեց կրոնի կատարյալ ազատություն շնորհել: Սակայն ի միջի այլոց նա վոչ մի կերպ չարգելեց միսիոներական գործունեությունը, վորը մեղմությամբ և համեստությամբ, ապացույցներով տարածում է իր հավատը, և յեթե քարոզը հաջողություն

չի գտնում՝ չի ձգտում կոպիտ ուժով վոչընչացնել մի ուրիշ կրոն: Սակայն անհանդուրժողությունը և ֆանատիզմը պատժվում են աքսորով կամ ստրկությամբ:

Երբ Ուտոպը կրոնական ազատություն սահմանեց, այդ անելիս նա աչքի առաջ ուներ վոչ միայն խաղաղության պահպանումը, վորը դեռ նոր եր խանգարվել անվերջ պատերազմներով և անհաշտ ատելությամբ, այլև, նրան թվում եր, վոր հենց կրոնի շահերն են պահանջում նման միջոցառում: Նա յերբեք չհամարձակվեց կրոնի հարցում վորևե որենք հրատարակել, ի վիճակի չլինելով վճռել, թե արդյոք ինքը՝ աստված, չի՞ ներշնչել մարդկանց զանազան հավատի ուսմունքներ, ապա և այն պատճառով, վոր ցանկացավ փորձել աստվածապաշտության բազմաթիվ յեղանակները: Ինչ վերաբերում է մեկին մի այլ հավատի բռնադատելու համար սպառնալիքներ գործադրելուն, այդ նրան վորքան դաժան, նույնքան ել անմիտ եր թվում: Նա նախատեսնում եր, վոր յեթե բոլոր կրոնները, բացի մեկից, կեղծ լինեն, կգա ժամանակը, յերբ ճշմարտությունն ինքը՝ բանականության և հեզության ոգնությամբ, հանդիսավորապես կհայտնվի մոլորության խավարի միջից. իսկ յեթե, ընդհակառակը, զենքը ձեռքին կռվեն, այն ժամանակ,—քանի վոր հայտնի յե, վոր վատ մարդիկը ամենից ավելի

համառ կլինեն— լավագույն և սրբազան կրոնները կթաղվեն սնոտիապաշտական նախապաշարումների ծովում, ինչպես լավ հունձը՝ տատասկների և մացառների մեջ: Այդ պատճառով ել, Ուտոպը հավատքի և մտածողության կատարյալ ազատություն տվեց բոլորին: Սակայն և այնպես, նա, հանուն բարոյականության, խստորեն պատժում եր նրան, ով իր բնության արժանիքն ստորացնում եր այն վարդապետությունով, թե իբր հոգին մեռնում է մարմնի հետ, կամ թե աշխարհը կառավարվում է առանց վորևե նախախնամության, պատահականության մի խաղի միջոցով: Այդ պատճառով ել ուտոպիացիները հավատում են անդրշիրիմային կյանքին, ուր վոճիրը պատժվում է, իսկ առաքինությունը՝ վարձատրվում: Նրանք մարդ անունը չեն տալիս նրան, ով ժխտում է այդ ճշմարտությունները և իր հոգու վսեմ եյությունը հավասար է դասում անասնական մարմնի ստորին դրությանը: Միանգամայն իրավացիորեն, նրանք նման մարդուն զլանում են քաղաքացու կոչումը՝ համոզված լինելով, վոր նա կսկսի վոտքերով ցեխը կոխել բարքերն ու հասարակական հաստատությունները, յեթե միայն յերկյուղը չկասեցնի նրան: Արդարև ո՞վ է տարակուսում, վոր այն անձնավորությունը, վորի միակ սանձն որենքն է, իսկ միակ հույսը՝ մարմինը, չի սկսի ծաղրել

յերկրի ուլունքները, հենց վոր այդ գոհացնի նրա հակումներն ու յերեխայությունը: Ուտոպիացիները այդ նյութապաշտներին (մատերիալիստներին) ամենաչնչին պատիվն իսկ չեն ցուցաբերում. Նրանք այդպիսիներին չեն հավատում վո՛չ հասարակական պաշտոն և վոչ էլ մի կարևոր գործ: Նմաններին, վորպես ստորին և անօգուտ տեսակի եյակների, արհամարհում են, սակայն, հավատարիմ մնալով այն կանոնին, թե վոչ վոքի հավատը իր կամքից կախում չունի, նրանք այդպիսիներին վոչ մի պատժի չեն դատապարտում: Ճիշտ նույնպես էլ հավատը փոխել հարկադրելու համար նրանց վրա վոչ մի ըսպառնալիք չեն գործադրում: Ուտոպիայում կեղծավորությունն արհամարհվում է, իսկ կեղծիքը, վորպես խաբեբայության հարազատ քույր, զզվանքի առարկա յե: Միակ բանը, վոր նմանների հետ կատարում են, այն է, վոր նրանց արգելում են իրենց համոզմունքները հրապարակով արտահայտել, բայց թույլատրում են խոսել խորհող մարդկանց, մանավորապես քահանաների հետ: Այդպիսի մարդկանց մինչև իսկ հրավիրում են նման վիճաբանությունների, այն հույսով, վոր բանականության ձայնի առաջ կփոխվեն նրանց խելագար տեսակետները:

Ուտոպիացիների մեծամասնությունը դավանում է մի սիստեմ, վոր տրամագծորեն հակադրվում է մատերիալիզմին, բայց քանի վոր նրանց կարծիքները վոչ միայն վնասակար չեն, այլ մինչև իսկ համապատասխանում են առողջ դատողությանը, այդ պատճառով էլ նրա տարածումը չեն արգելում:

Վոմանք ընկնելով մյուս ծայրահեղության մեջ, անմահ են համարում վոչ միայն մեր, այլ և բոլոր կենդանիների հոգին, թեև վերջինները թե՛ ըստ ունակությունների և թե՛ ըստ նրանց բաժին ընկած յերջանկության, յետ են մնում մարդուց: Բոլոր ուտոպիացիները, բացառությամբ շատ քչերի, այն համոզման են, վոր մարդուն գերեզմանից հետո անբացատրելի յերջանկություն է սպասում: Այդ պատճառով էլ նրանք սգում են միայն հիվանդների, բայց վոչ յերբեք մեռելների վրա, բացառությամբ այն դեպքի, յերբ մեռնողը կյանքը թողնում է անհանգիստ ու վոչ սիրով: Մահից վախենալը նրանք վատ նշան են համարում. Նրանց թվում է, վոր միայն արտասովոր խղճով անհույս հոգիները կարող են դողալ հավիտենականության առջև, ճիշտ այնպես, յերբ նրանք իրենց պատժի մոտենալը տեսնեն: Բացի այդ, նրանց կարծիքով, աստված տհաճությամբ է իր գիրկն ընդունում այն մարդուն, վորն ուրախ սրտով չի արձագանքում իր կոչին, ու մահը դիմավորում է չուզենալով և նրա դեմ կռվելով: Նման վախճանին ներկա յեղողները մեռնողի հանդեպ սարսափ են զգում. Նրանք

տխուր և անձայն տանում են դիակը և միա՛յն ժամանակ են հողին հանձնում, յերբ կատարում են հանգուցյալի հանդեպ աստծո գթասրտությունը ցած բերելու բոլոր աղոթքները: Դրա հակառակ, վոչ վոք չի մեղադրում այն քաղաքացուն, վորը ուրախ և լի հույսով է մեռնում: Նրա հուղարկավորությանն ուղեկցում են ուրախ յերգեր, նրա հողին հանձնում են աստծուն և ապա լուրջ, բայց առանց տխրության, այրում են նրա մարմինը: Գերեզմանի վրա բարձրացվում է մի կոթող, վորի վրա արձանագրում են հանգուցյալի անունն ու ծառայությունները: Թաղումից հետո, յերբ նրա ընկերները տուն են վերադառնում, զրուցում են հանգուցյալի հատկանիշների ու գործունեյության մասին. Նրանք ավելի հաճախ և ամենից ավելի հաճույքով հիշում են նրա փառավոր վախճանը:

Առաքինի մարդու հիշատակին մատուցված այդ մեծարանքները՝ կոգեցինների կարծիքով, առաքինության խոշոր քաջալերանք է և, բացի այդ, մեռածներին շատ հաճելի մեծարանքի պարտք: Վորովհետև, ուտոպիացիների մեծ մասի կարծիքով, մեռելները թեև անտեսանելի յեն, սակայն նրանք կենդանի մարդկանց այդ խոսակցություններին ներկա յեն: Յերանության գաղափարի հետ վատ կներդաշնակի այն պատկերացումը, յեթե նրանք ազատ չլինեն շարժվել այնտեղ,

վորտեղ նրանց լավ է թվում և, առանց անարդարացի լինելու, կարող եյին նրանց յերախտամոռության մեջ մեղադրել, յեթե նրանք չցանկանային կրկին տեսնել նրանց, վորոնց հետ յերկրի վրա նրանց զոդում եյին բարեկամության և փոխադարձ սիրո կապերը: Բայց դա վոչ մի կերպ լինել չի կարող, վորովհետև սերն ու բարեկամությունը մահից հետո փոխանակ հանգելու, ամենայն հավանականությամբ, բարյաների սրտում մյուս բոլոր ազնիվ հատկությունների նման, միայն աճել կարող են:

Դրա համաձայն, մեռելները խառնվում են ապրողների շրջանին և վկա յեն լինում նրանց գործերին ու խոսակցություններին: Նախնիքների ներկայության այդ հավատը ժողովրդին ներշնչում է ամեն տեսակի հնարավոր ձեռնարկումներ, վորովհետև այդ հավատն ապահովում է դրանց զորավոր պահապանների ոգնությունն ու oժանդակությունը: Բացի այդ, հավատը կանխում է բազմաթիվ ծածուկ չարագործություններ:

Ինչ վերաբերում է գուշակություններին և ապագան քողազերծ անելու սնոտիապաշտական այլ միջոցներին, վոր մյուս ժողովրդները շատ հաճախ ապաստանում են, մեր կոգեցինները դրանք չեն ընդունում և ծիծաղում են դրանց վրա: Նրանք պաշտում են հրաշքները, վոր տեղի յեն ունենում ա-

տանց բնության օրենքների ներգործության և դրանց մեջ տեսնում են աստվածության առկայության ապացույցը:

Ուտոպիացիները մինչև իսկ հավաստում են, վոր իրենց յերկրում մի քանի հրաշքներ են տեղի ունեցել և վոր հասարակական աղոթքն ու զորավոր հավատքը ստեղծել են հրաշքներ, վորոնց միջոցով յերկիրն ազատվել է ամենասարսափելի վտանգներից:

Տիեզերքի զննումը և արարչին մատուցված գովքը նրանք համարում են աստվածահաճո գործ: Միևնույն ժամանակ, նրանց մեջ քաղաքացիների մի դասակարգ կա, վորը կրոնական համոզմունքներով արհամարհում է գիտությունները, ժխտում ամեն կարգի հետազոտություն և հրաժարվում է ամեն տեսակի բավականություններից: Այդ մարդիկ ձգտում են իրենց գործունյա կյանքով և մերձավորի հանդեպ լավ հարաբերությամբ արժանանալ յերկնքին: Վոմանք խնամում են հիվանդներ, ուրիշներ նորոգում են ճանապարհներն ու կամուրջները, մաքրում են ջրանցքները, հարթում գետինը, փողոցները մաքրում են փոշուց և քարերից, խուզում են ծառերն ու սայլակներով քաղաք են փոխադրում փայտ, հացահատիկ, միրգ և գյուղատնտեսական այլ մթերքներ: Նրանք վոչ միայն աշխատում են հօգուտ հասարակության, այլ մինչև իսկ ծառայության են մտնում նաև

մասնավոր մարդկանց մոտ և ստրուկներից ավելի հնազանդ ու յեռանդուն են լինում: Նրանք հոժարակամ և սիրով ստանձնում են ամենից ավելի կեղտոտ, անհաճո ու դժվար աշխատանքները, վորոնցից սարսափով հրաժարվում է մարդկանց մեծ մասը՝ նկատի ունենալով գործի զզվանքն ու նրա դժվարությունները: Նրանք առանց դադարի նվիրվում են աշխատանքի ու դժվարության, վորպեսզի ուրիշների համար հանգիստ և դյուրակեցիկ կյանք ստեղծեն. այդ բոլորի համար նրանք ամենափոքր իսկ շնորհակալություն չեն պահանջում: Նրանք ուրիշ մարդկանց կյանքը չեն դատապարտում, և իրենց կատարած բարությունով չեն պարծենում: Ինչքան շատ նրանք նսեմացնում են իրենց ու ստորանում մինչև ստրուկների աստիճանը, նրանց հանդեպ նույնքան ավելի յե աճում հասարակական հարգանքը: Անձնազոհ մարդկանց այդ դասակարգը բաժանվում է յերկու աղանդի. մեկը հրաժարվում է վոչ միայն կանանց հետ համակեցությունից, այլև մսի գործածումից, իսկ վոմանք էլ կենդանական աշխարհի վոչ մի մթերքով չեն սնվում: Նրանք հրաժարվում են աշխարհիկ բոլոր հաճույքներից և այդպիսիները վտանգաբեր են համարում: Նրանք միայն ձգտում են, վոր աշխատասիրությամբ ու յեռանդով արժանանան ապագա կյանքի ուրախություններին: Այդ ուրախություննե-

ը ճաշակելու հույսը նրանց աչքում և ուժեղ է դարձնում: Մյուսները, վորոնք վոչ պակաս աշխատասեր են, ամուսնանում են՝ հրապուրվելով ամուսնության պարտականություններով և հաճույքներով: Նրանք մտածում են, վոր ի սեր բնության, իրենց և հայրենիքի՝ պարտավոր են յերեխաներ ունենալ: Այդպիսիները բավականություններից չեն խուսափում, ինչքան վոր այդ չի կտրում իրենց աշխատանքից: Նրանք ուտում են չորքոտանի կենդանիների միսը, վորպեսզի ամեն տեսակի աշխատանքներին դիմանալու համար ավելի ուժ ստանան:

Ուտոպիացիներն այս վերջին աղանդն ավելի խելացի, իսկ առաջինն՝ ավելի բարեպաշտ են համարում: Բայց յեթե նրանք, վորոնք ամուրիությունը նախընտրում են ամուսնությունից, աշխատանքը՝ հանգստությունից, ուզենան այս կենցաղավարությունը հիմնել առողջ բանականության վրա, այն դեպքում ուտոպիացիները կարեկցաբար կծիծաղեն այդ բանի վրա: Սակայն ուտոպիացիներն այդ արտասովոր մարդկանց հանդեպ ցուցաբերում են կենդանի հիացմունք ու խոր հարգանք, վորովհետև նրանց զոհաբերության հիմնական պատճառը կրոնն է, իսկ ուտոպիացին կրոնական հարցերում զգուշանում է վորևէ վճիռ կայացնելուց: Այս խստաբարո աղանդավորները տեղական լեզ-

վով իրենց անվանում են պութրեսկներ. այս կոչումը համապատասխանում է վանական հասկացողության:

Ուտոպիական քահանաները շատ բարեպաշտ տղամարդիկ են և այդ պատճառով էլ նրանց թիվը շատ քիչ է. յուրաքանչյուր քաղաքում ընդամենը միայն տասներեք, վոր համապատասխանում է յեկեղեցիների միևնույն թվին: Պատերազմի դեպքում սակայն բացառություն է արվում. այդ ժամանակ յոթ քահանաներ ուղեկցում են բանակին և դրա համար էլ կարիք է լինում յոթ նոր քահանաներ նշանակել: Իսկական քահանաներն արշավանքից վերադառնալուց հետո, նորից ստանձնում են իրենց պաշտոնը: Ոգնականները հերթով հաջորդում են, յերբ քահանաները մեռնում են. իսկ մինչ այդ, նրանք ոգնում են քահանայապետին, քանի վոր քահանաներից մեկը համարվում է գլխավորը:

Ինտրիգներից խուսափելու համար, մյուս պաշտոնյաների նման, քահանաներին ևս գաղտնի քվեարկությամբ ընտրում է ժողովուրդը: Քահանաների կոլեգիան ոծում է նորընծային: Քահանաները նախագահում են կրոնական ժողովներին, հսկում են կրոններին և համարվում են բարքերի դատավոր:

Անպատվություն է համարվում կանչվել քահանայի մոտ՝ նրանից հանդիմանություններ ստանալու համար. վերջինը համարվում

է անկարգ կյանքի նշան: Քահանաները թեև իրավունք ունեն հանդիմանություն և նախազգուշացում անելու, սակայն մեղավորին ձերբակալել ու քրեական տեսակետից նրան հետապնդել կարող են միայն իշխանն ու կառավարությունը: Քահանայի իշխանությունը սահմանափակվում է միայն նրանով, վոր նա անվայել ընթացք ունեցողին կարող է արգելել սրբազան խորհուրդներին հաղորդակից լինել:

Քիչ պատիժներ գոյություն ունեն, վորոնցից ուտոպիացիներն ավելի վախենան, քան բանադրանքից. վերջինս պատվազուրկ է դարձնում, կրոնական հազար ու մի սարսափով վրդովում է և մինչև իսկ անձի ազատության անվտանգության յերաշխիք չի տալիս: Յեթե բանադրվածները չեն շտապում անկեղծ զղջումով վստահեցնել քահանային, այն ժամանակ սենատը ձերբակալում է նրանց և վորպես անաստվածների դատում:

Մանուկների և պատանիների դաստիարակությունը հանձնվում է քահանային, վոր նրանց գերազանցապես սովորեցնում է բարոյականություն և առաքինություն, իսկ հետո միայն՝ գիտություններ: Ուտոպիական ուսուցիչն իր բոլոր ընդունակությունները ու փորձը գործադրում է յերեխայի դեռևս քնքուշ և ընդունակ հոգու մեջ պատվաստելու այն լավ սկզբունքները, վոր պետության

կռվանն են կազմում: Մանուկը յուրացնելով այդ կանոնները, իր ամբողջ կյանքի ընթացքում հավատարիմ է մնում դրանց և հետագայում պետության բարօրության հուսալի հենարան է հանդիսանում: Պետությունները քայքայվում են մոլությունից, իսկ մոլությունը հետևանք է բարոյականության վատ կանոնների:

Քահանաներն ազգաբնակության ամենաառաքինի ընտանիքներից են ընտրում իրենց կանանց: Կանայք նույնպես զրկված չեն քահանայություն անելու հնարավորությունից, պայմանով, վոր այրի լինեն և առաջացած տարիք ունենան:

Վոչ մի պաշտոն չկա, վոր ավելի մեծ հարգանք վայելի, քան քահանայությունը: Այն մեծարանքները, վորոնցով շրջապատում են նրանց, այնքան բարձր են, վոր յերբ նրանցից վորևէ մեկը մեղանչում է, նրան մինչև իսկ պատասխանատվության չեն կանչում, այլ թողնում են աստծո և իր սեփական խղճին: Ուտոպիացիները թույլատրելի չեն համարում մահկանացուի ձեռքով շոշափել այն, վոր ինչպես սրբազան զոհ և վորպես անձեռնմխելի ու առանձնացած՝ նվիրված է աստծո:

Այս սովորույթի պահպանումն ավելի յե հեշտանում նրանով, վոր քահանաների թիվը շատ քիչ է և նրանց ընտրությունը կատարում

են ամենամեծ զգուշությունով: Այդ պատճառով էլ չափազանց հազվադեպ կարող է լինել, որ այն մարդը, որին վստահում են այդպիսի մեծ աստիճան, նկատի չառնելով իր ամբողջ առաքինությունն ու արդարամտությունը, ինչպես և այն, որ նա լավերից լավագույնն է համարվում, այնուամենայնիվ անձնատուր լինի մոլության ու փչացած բարքերի: Յեվ յեթե մինչև անգամ այդպիսի դեպք էլ պատահի (քանի որ մարդկային բնությունն անհուսալի յե), դրանից յերբեք պետության բարօրությունը չի տուժի, քանի որ քահանաների դասակարգն ինքնին շատ մեծ չէ և ոչ մի իշխանությամբ չի օգտվում: Քահանաների թիվը փոքր սահմանելով, ուտոպիացիներն ուզում են պահպանել նրա նշանակությունը, որը հեշտությամբ կարող էր ընկնել, յեթե այդ դասակարգի մեջ շատ անձնավորություններ մտնեյին: Գլխավոր պատճառը սակայն այն է, որ նրանց դժվար է թվում գտնել իսկապես առաքինի այդքան մարդիկ, որոնք կատարեն այն ծառայությունը, որը պահանջում է ավելի, քան սովորական բարոյականությունը:

Ուտոպիական քահանաներն օտար ազգերի կողմից ավելի պակաս չեն գնահատվում: Այդ ճշմարտության պատճառն ու բացատրությունը հետևյալն է.

Կռվի ժամանակ քահանաներն իրենց մի կողմն են պահում, թեև ճակատամարտի դաշտից ոչ հեռու. այնտեղ նրանք պաշտամունքի զգեստներ հագած ծնկաչոք և դեպի յերկինք բարձրացրած ձեռքերով աղոթում են բարձրյալին ամենից առաջ հաշտություն, ապա՝ իրենց յերկրի հաղթանակը, բայց այնպիսի հաղթանակ, որը ոչ մեկ և ոչ էլ մյուս կողմի համար արյունոտ չլինի: Յերբ իրենց համաքաղաքացիները հաղթում են, նրանք խոյանում են ճակատամարտի մեջ ու դադարեցնում են արյունահեղությունը:

Դժբախտը, որ տեսնում է նրանց մոտենալը և կոչում է նրանց, կենդանի յե մնում. ով շոշափում է նրանց յերկար զգեստները, այդպիսին մինչև իսկ ունեցվածքից չի զրկվում: Այդ լավ սովորույթը նրանց արժանիքին այնքան մեծություն է տալիս, հարևան ժողովրդի մեջ այնպիսի հարգանք է ներշնչում, որ նրանց միջամտությունը հաճախ ուտոպիացիների սեփական բարօրության համար ավելի պակաս ծառայություն չի մատուցում, քան թշնամի զորքին: Արդարև, պատահել է, որ ուտոպիական զորքը, կորցնելով ամեն հույս՝ նահանջի ու փախուստի յե դիմել. բայց հենց այն մոմենտին, յերբ թշնամին պատրաստվել է սպանություն ու կողոպուտի նպատակով հետապնդել նրանց, քահանաների միջամտությունն արգելել է

այդ և հաշտությունը կնքվել է ավելի նպաստավոր պայմաններով: Դեռևս չի յեղել այնպիսի բարբարոս ու դաժան ժողովուրդ, վորը չհարգեր ուտոպիական քահանաներին, վորպես անձեռնմխելի և սրբազան կազմակերպության:

Ուտոպիացիներն ամսվա և տարվա առաջին ու վերջին որը տոն են կազմակերպում: Տարին նրանք բաժանում են լուսնի ամիսների և այն հաշվում են արևի պտույտով: Առաջին և վերջին այդ որերն ուտոպիական լեզվով կոչվում են ցենիմեռներ և տրապեմեռներ, վոր մոտավորապես նշանակում է սկզբնական և յեզրափակման տոն:

Ուտոպիայում կարելի յե տեսնել ճոխ կառուցված փառահեղ տաճարներ, վոր իրենց մեծությամբ ի վիճակի յեն տեղավորել ժողովրդի մեծ բազմություն, ինչ վոր՝ տաճարների քչության պատճառով, անհրաժեշտ է: Մինչև իսկ որվա ամենալուսավոր ժամանակ տաճարում տիրում է կիսախավար. այդպիսի կառուցվածքի պատճառը կառուցողների անգիտությունը չէ, այլ արված է դիտմամբ՝ քահանաների խորհրդով: Վորովհետև շատ ուժեղ լույսը ցրում է մտքերը, մինչդեռ թույլ լուսավորությունն ամփոփում է և աղոթքի համապատասխան տրամադրություն է առաջ բերում:

Թեպետ ուտոպիացիները միևնույն կրոնը չեն դավանում, բայց չնայած դրան, այդ

յերկրի պաշտամունքի բոլոր ձևերն իրենց բազմապիսի առանձնահատկությամբ, տարբեր ճանապարհներով ձգտում են մի միակ նպատակի: Այդ նպատակը բնության աստվածացումն է: Դրա համար էլ տաճարում չենք լսի վոչ մի այնպիսի բան, վոր չհամապատասխանի բոլորի դավանանքին: Յուրաքանչյուր վոք իր հավատի առանձին ծիսակատարությունները կատարում է իր ընտանիքի շրջանակում: Հասարակական-կրոնական պաշտամունքն այնպես է կազմակերպված, վոր վոչ մի բանով չի հակասում տնային մասնավոր աստվածապաշտությանը: Տաճարում վոչ մի տեսակ աստվածային նկարներ չկան, վորպեսզի յուրաքանչյուրն ազատ լինի աստվածությունը պատկերացնել իր հավատքին համապատասխանող ձևով: Այնտեղ աստծուն դիմում են միայն Միթրա անունով, վորն արտահայտում է ընդհանրապես աստվածային մեծությունը՝ անկախ նրա էությունից: Ուտոպիայում բոլոր աղոթքներն այնպես են, վոր ամեն վոք կարող է կրկնել, առանց իր կրոնական համոզմունքների դեմ մեղանչելու:

Յեզրափակման տոների որերին ժողովուրդը յերեկոյան և վաղ առավոտյան հավաքվում է տաճարներում: Այնտեղ շնորհակալ են լինում աստծուն այն բարեբարու-

թյունների համար, վոր իրենց յերկրին ցույց է տվել այդ տարվա կամ ամսվա ընթացքում, վորը լրանում է այդ օրը: Մյուս օրը, արդեն սկզբնական տոնին, ժողովուրդը վաղ առավոտից լցվում է տաճարները և յերջանկություն է աղերսում սկսվող տարվա կամ ամսվա համար: Յեզրափակման տոների օրերին՝ կանայք, նախքան տաճար գնալը, ծունկ են չոքում իրենց ամուսինների, իսկ յերեխաներն՝ իրենց ծնողների առաջ: Նրանք խոստովանում են իրենց բոլոր սխալներն ու անփութությունները և ներողություն խնդրում: Ընտանեկան այդ խոստովանության, այդ բարեպաշտ բավարարման միջոցով, իսկույն ցրվում են ատելության ամպերը, վորոնք մթագնում եյին տնային խաղաղությունը, և ապա բոլորը կարող են հանգիստ խղճով ու մաքուր հոգով աստվածապաշտության գնալ: Այս կերպ, ուտոպիացիներն անհանգիստ կլինեյին, յեթե ատելությունն ու վրդովմունքը սրտում՝ յերևային տաճարում: Յերբ գայրույթը կամ խղճի խայթը լցնում է նրանց կուրծքը, նրանք յերբեք չեն համարձակվում տաճարում յերևալ, քանի դեռ չեն մեռել իրենց կիրքն ու չեն մաքրվել դրանցից: Նրանք վախենում են, վոր աստված այդպիսի մեղքի համար վրեժ կլուծի:

Տաճարում տղամարդիկ կանգնում են աջ, կանայք՝ ձախ կողմը: Տեղերը բաշխվում են

այնպես, վոր յերեխաներն ըստ սեռի նստեն ծնողների առջև: Այդ կարգը սահմանված է նրա համար, վոր ծնողները կարողանան հետևել յերեխաների ընթացքին, վորոնց նրանք տանը սովորեցնում և դաստիարակում են: Նրանք հոգ են տանում, վոր յերեխաները մեծերի մեջ գտնվեն, միասին չլինեն ու խաղեր չսկսեն ու այդպիսով չկորցնեն այն ժամանակը, վորի ընթացքում նրանք պետք է նվիրվեն կրոնական պաշտամունքին: Վորովհետև յերկյուղը միայն այդ տարիքում ամենից ավելի իրական է և թերևս առաքինության միակ ճանապարհը:

Ուտոպիացիները պաշտամունքի ժամանակ կենդանիներ չեն զոհում: Նրանք կարծում են, վոր աստծո վողորմածությունը կենդանիներին կյանք է տվել, վորպեսզի նրանք օգտվեն դրանից. արյան և սպանդի տեսքը հաճելի չի լինի:

Ուտոպիացիները տաճարում խունկ և ուրիշ բուրավետ նյութեր են ծխում, ինչպես նաև մեծ քանակությամբ մեղրամոմ են վառում: Նրանք լավ գիտեն, վոր աստվածությունն այդ բաներին պետք չունի, ինչպես և կարիք չունի մարդկանց աղոթքներին, սակայն, չնայած դրան, նրանք աստծուն սիրով մատուցում են յերկրպագության այդ տուրքը: Բացի այդ, հազիվ թե կարիք լինի ասելու, թե ինչպես այդ լույսերի, բուրա-

վետ նյութերի, արարողությունների ազդեցության ներքո մարդ իրեն սրբազան որհնությամբ համակված է զգում և վո՛րպիսի ջերմեռանդությամբ անձնատուր է լինում կրոնական պաշտամունքներին:

Տաճարում ժողովուրդը ամբողջովին սպիտակ է հագնում. քահանան կրում է բազմազան գույնի մի զգեստ, վորը հրաշալի ձև ունի և հիանալի աշխատանքի արդյունք է, թեև զգեստի նյութը շատ թանկագին չէ: Քահանայի վերնազգեստը վոչ վոսկով է հյուսված և վոչ ել քարերով ծածկված: Դա թռչունի փետուրներից մի հյուսվածք է. փետուրներն այնպիսի մեծ արվեստով ու ճաշակով են դասավորված, վոր մինչև անգամ ամենաթանկագին զարդարանքն իսկ այդ հրաշալի աշխատանքին չի հասնի: Բացի այդ, թևերն ու փետուրները, վոր սահմանված կանոնի համաձայն դասավորված են քահանայի զգեստի վրա, կազմում են շատ սիմբոլներ, վորոնք իրենց մեջ խորհուրդներ են պարունակում: Քահանաները խղճմտորեն մեկնաբանում են այդ խորհրդանշանները, վորոնց տեսքն ուտոպիացիներին մշտապես հիշեցնում է աստծո բարերարության, յերախտագիտության մասին, վոր պարտական են նրան և այն պարտականությունների մասին, վոր պետք է նրանք կատարեն միմյանց հանդեպ:

Հենց վոր քահանան իր պաշտոնական

զգեստով հայտնվում է սրբազան վայրի շեմքում, բոլորը մի այնպիսի յերկյուղածությամբ և խոր լռությամբ ընկնում են գետին, վոր այդ տեսարանը հոգին համակում է մի տեսակ դողով, կարծես թե աստված հայտնվի տաճարում: Մի քանի րոպե հետո քահանան մի նշան է տալիս ու ամբողջ բազմությունը վեր է կենում: Ապա հնչում են աստծո փառաբանության յերգեցողությունները, վորոնց միջև յեղած ընդմիջումները լցվում են յերաժշտական սիմֆոնիաներով:

Ուտոպիայում յերաժշտական գործիքները մեծ մասամբ տարբեր են մեզ մոտ յեղածներից: Նրանք ավելի ներդաշնակ են, իսկ մի քանիսը մինչև իսկ չեն կարող համեմատվել մեր ունեցածների հետ: Բայց ինչ վոր ուտոպիական գործիքային և վոկալ յերաժշտության անվիճելի առավելություն է տալիս, այն հանգամանքն է, վոր նրանք հազվագյուտ կատարելությամբ հոգեկան բոլոր տրամադրությունները պատկերում են ու վերարտադրում: Ուտոպիացիները տոնն այնքան ճիշտ են ներդաշնակում, նրանք այնքան կենդանի յեն վերարտադրում աղոթքը, ուրախությունն ու կարեկցությունը, խռովությունը, վիշտն ու զայրույթը, մի խոսքով նրանց մելոդիայի ձևն այնպիսի մեծ հարազատությամբ է արտահայտում ամենախոր

զգացմունքները, որ դրանով ունկնդրի հոգին հուզված, հագեցված ու բոցավառված է զգում իրեն:

Աստվածապաշտության վերջում ժողովուրդն ու քահանան միասին կարդում են հանդիսավոր աղոթքներ, որոնց ձևն այնպես է սահմանված, որ յուրաքանչյուրը կարող է ամբողջական բովանդակությունը իրեն պատշաճեցնել: Այս աղոթքներով նրանք աստծուն ընդունում են որպես աշխարհի արարիչը և պահապանը, շնորհակալ են լինում նրան այն բազմաթիվ բարերարությունների համար, որ նա ցույց է տվել իրենց. մասնավորապես շնորհակալություն են հայտնում, որ նա հատուկ շնորհով նրանց ծնունդ է տվել մի ամենայերջանիկ պետության և կրոնի մեջ, որը նրանց ամենաճշմարիտն է թվում:

Յեթե այդ հավատքը մի մոլորություն լիներ, յեթե գոյություն ունենար մի ավելի լավ, հավիտենականին ավելի հաճելի կառավարություն և աստվածապաշտություն, այն ժամանակ նրանք դրա հայտնագործման համար աստծո շնորհը կաղերսեյին և պատրաստակամություն կհայտնեյին ամեն բանում հետևել նրա կամքին:

Իսկ յեթե, ընդհակառակը, ուտոպիական աստվածապաշտությունը և կառավարությունն ամենակատարյալներն են, ապա նրանք խնդ-

րում են աստծուն, որ նա իրենց տոկունություն ուժ տա մնացյալ մարդկանց էլ յերջանկացնելու միևնույն կրոնական ու հասարակական հաստատություններով, յեթե միայն նա, ըստ իր անքննելի վճիռների, կրոնների այս մեծ տարբերությունների մեջ հաճույք չի գտնում: Ի վերջո նրանք աստվածային բարեգթությանն աղերսում են իրենց թեթև և հանգիստ մահ տալ: Նրանք չեն համարձակվում Յերկնավորից կյանքի յերկարացում կամ կարճացում խնդրել, սակայն, առանց նրան վիրավորելու վախ ունենալու, ասում են, որ ավելի սիրով ամենատանջալից մահով կմիանան նրան, քան թե մինչև իսկ ամենայերջանիկ կյանքով յերկար ժամանակ զրկվեն նրա հովանավորությունից:

Այս աղոթքից հետո—բոլորը նորից ծնկադրում են և մի քանի րոպեյից վեր կենում, որպեսզի ճաշի գնան. օրվա մնացյալ մասը գործադրվում է խաղերի ու զինվորական պարապմունքների համար:

«Յես փորձեցի—շարունակեց Ռաֆայելը—ըստ հնարավորին հարազատ կերպով նկարագրել ձեզ այդ պետության կառուցվածքը, որը յես ոչ միայն ամենալավն եմ համարում, այլ և միակը, որ իրավամբ կարող է կոչվել ա-

դատ պետություն: Ամեն տեղ էլ կան մարդիկ, որոնք խոսելով ընդհանուրի բարորության մասին, աչքի առաջ ունեն միայն իրենց անձնական շահը. մինչդեռ այնտեղ, որտեղ ոչ ոք ոչ մի բանի սեփականատեր չէ, բոլորը լրջորեն զբաղվում են հասարակական գործերով, որովհետև մասնավոր շահն իսկապես միահյուսվում է հասարակական բարորության հետ: Ուրիշ երկրներում ո՞վ չի իմանում, որ անտես առնելով իր սեփական շահերը, նա քաղցից կմեռնի, թեկուզ պետությունն ինչքան էլ ծաղկյալ լինի: Դրա համար էլ այն անխուսափելիությունը, որով նա պետք է նախ իր, ապա իր հայրենիքի, այսինքն իր մերձավորների մասին մտածի:

Դրա հակառակ Ուտոպիայում, որտեղ ամեն ինչ բոլորին է պատկանում, ոչ ոք չի կարող մի բանի պակասություն զգալ, քանի հասարակական շտեմարանները լիքն են. չէ՞ որ պետության կարողությունն այդ երկրում երբեք անարդար չի բաշխվում. այնտեղ չի կարելի տեսնել ոչ աղքատ և ոչ էլ մուրացիկ և թեև ոչ ոք մի բան իր սեփականը չի անվանում, բայց և այնպես բոլորն էլ հարուստ են: Արդարև, երկրի վրա գոյություն ունի՞ ավելի լավ հարստություն, քան այն, որը մեզ թույլ է տալիս զվարթ ու հանդիստ, անհոգ ու անխռով ապրել. կա՞ ավելի լավ վիճակ, քան

կարիք չունենալ դողալու իր գոյության համար, չհոգնել կնոջ անվերջ խնդրանքներից ու գանգատներից, չվախենալ իր որդու համար ոչ մի թշվառությունից, չանհանգստանալ աղջկա օժիտի համար— այլ, ընդհակառակն, ապահով ու անհոգ լինել իր և բոլոր յուրայինների՝ ամուսնու, երեխաների, թոռների, ծոռների մինչև ամենահեռավոր սերունդների գոյության և բարեկեցության համար, որով մի ազնվական կարող է հոխորտալ:

Այդ առավելությունների ուտոպիական պետությունն ընձեռնում է ինչպես հաշմանդամներին, որոնք առաջ աշխատել են, նույնպես էլ առողջ քաղաքացիներին, որոնք դեռևս աշխատունակ են:

Ինձ հաճելի կլիներ, եթե մեկը համարձակվեր այս կարգերի հետ համեմատել մյուս ժողովրդների կարգերը. ինչ ինձ է վերաբերում, գլխովս կերաշխավորեմ, եթե ես մյուս ազգերի մոտ իրավունքի և արդարության ամենաչնչին նշույլը գտնեմ: Մի՞թե արդար է, որ մի ազնվական, մի վոսկերիչ[30]), վաշխառու, մի մարդ, որը կամ ոչինչ և կամ միայն պետության անօգուտ իրեր է պատրաստում—անգործունեության կամ դատարկ զբաղմունքների գրկում հաճելի կյանք վարեն, մինչդեռ որա-

30) Մորի ժամանակ վոսկերիչները միաժամանակ դրամափոխներ և բանկիրներ էին:

վարձվորները, բեռնակիրները, արհեստավորները, հողագործը խոր թշվառության մեջ են ապրում և հազիվ են ամենաանհրաժեշտ սնունդն ստանում. թեև վերջինները յերկար ու ծանր աշխատանքի յեն դատապարտված, վորին գրաստները հազիվ կարող են դիմանալ—այնքան շատ անհրաժեշտ աշխատանքներ, վոր վոչ մի հասարակություն առանց դրանց մի տարի գոյություն ունենալ չի կարող։ Արդարև, գրաստի դրությունը հազար անգամ ավելի լավ է թվում. նա այնքան յերկար չի աշխատում, նրա սնունդը նվազ վատ է և մինչև իսկ իր ճաշակելիքին ավելի համապատասխան. բայց այդ, անասունը չի վախենում իր ապագայից։

Ի՞նչպես է սակայն որավարձվորի վիճակը. մի անպտուղ, անշնորհակալ աշխատանք ըսպառնում է նրան ներկայումս, և թշվառ ծերության հեռանկարը նրան սպառնում է հենց այժմ, քանի վոր ոջական վաստակը չի բավականացնում նրա այսորվա բոլոր կարիքներին։ Այդ պատճառով էլ, ի՞նչպես նա կարող է բարելավել իր վիճակը և ծերության կարիքների համար որական մի բան յետ գցել։

Անարդար ու յերախտամոռ չէ՞ այն հասարակությունը, վորը այդքան շատ բարիքներ է շռայլում նրանց, վորոնց յերևելի յե անվանում, ծույլերին կամ ճոխության առարկաներ արտադրողներին, վոր իրենց գործունեությունը միայն ունայն հաճույքների յեն նվիր-

րում,—մինչդեռ մյուս կողմից կարեկցություն և վոչ էլ հոգացողություն է ցուցաբերում հողագործի, ածխահատի, որավարձվորի, բեռնակրի և ձեռքի աշխատողների նկատմամբ, առանց վորոնց հասարակությունը գոյություն ունենալ չէր կարող։ Իր դաժան յեսականության մեջ, հասարակությունը չարաշահում է նրանց յերիտասարդության ուժը, դրա միջոցով վորքան հնարավոր է շատ աշխատանք ու ոգուտ քամելու համար. բայց հենց վոր տարիքի և հիվանդության ծանրության տակ նրանց ուժերը նվազում են ու նրանք ամեն բանում թուլանում,— մոռանում է նրանց անքուն գիշերները, նրանց բազմաթիվ և կարևոր ծառայություններն ու սովամահությամբ է վարձատրում նրանց։

Դա դեռ բոլորը չէ։ Հարուստներն ամեն որ պակասեցնում են աղքատների վարձքը վոչ միայն ամեն տեսակ խորամանկություններով և խաբեբայություններով, այլև նույն նպատակով որենքներ են հրատարակում։ Մի այդպիսի վրդովեցուցիչ հատուցում նրանց, վորոնք պետության ամենամեծ յերախտագիտությանն են արժանի,— հենց սկզբից անժխտելի անարդարություն է թվում. սակայն հարուստներն այդ անարդարությունը վերածում են իրավական նորմայի՝ որենքի ուժ տալով դրան։

Դրա համար էլ, յես ամենածաղկյալ պետությունների մեջ, վկա յե դրան աստված,

ուրիշ վոչինչ չեմ տեսնում, քան ականավորների դավադրություն, վորոնք պետության վեհանվան և պիտակի տակ անում են այն, ինչ են վոր ուզում են: Դավադիրներն ամեն տեսակի խարերայությունով, բոլոր հնարավոր միջոցներով ձգտում են հասնել հետևյալ կրկնակի նպատակին.

Ամենից առաջ նրանք ուզում են ապահովել ավելի կամ պակաս կասկածելի ճանապարհով ձեռք բերված կարողության անսահմանափակ սեփականությունը. յերկրորդ, նրանք ուզում են հոգուտ իրենց չարաշահել աղքատների թշվառությունն ու նրանց անձը, վորպեսզի հնարավորության չափ ցածր գնով ձեռք բերեն նրանց աշխատանքն ու լարվածությունը:

Յեվ այս խորամանկությունների ու խարերայությունները, վոր հարուստները պետության անունով, հետևապես և աղքատների անունով, սահմանում են,— դառնում են օրենքներ:

Սակայն թեև այս խորամանկները անհագ ընչասիրությամբ իրենց միջև բաժանել են բոլոր բարիքները, վորոնք մի ամբողջ ժողովրդի յերջանկությանը կբավականացնեյին—այնուամենայնիվ շատ հեռու յեն այն նախանձելի վիճակից, վորը վայելում են ուտոպիայինները:

Ուտոպիայում ագահությունն անկարելի յե, վորովհետև այնտեղ փող չի գործածվում: Հոգսերի ինչպիսի հորդառատ աղբյուրներ

գրա շնորհիվ չեն ցամաքեցրել, վոճրագործության վո՜րպիսի առատ հունձք արմատահան չեն արել. ո՞վ չգիտի, վոր խարերայությունը, ավազակությունը, ճնշումները, ժողովրդական ապստամբությունները, գանգատները, խռովությունները, սպանությունները, դավաճանությունները, թունավորումները—ո՞վ չի իմանում, ասում եմ յես—վոր բոլոր այս վոճիրները, վորոնց համար հասարակությունը պատիժներով միշտ վրեժ է լուծում, առանց այդպիսիք վոչնչացնել կարողանալու,— հենց նույն օրը կանհետանային յերկրի յերեսից, յերբ փողը վերանար: Այն ժամանակ կդադարեյին վախը, խռովությունը, հոգսերը, չափազանց լարվածությունները և անքուն գիշերները: Ինքը՝ աղքատությունը, վոր թվում է այդքան կարիք ունի փողի, ինքը՝ աղքատությունը կվերանար փողի հետ միասին: Ահա ձեզ ակնհայտ փաստը:

Յենթադրենք, թե պատահում է մի վատ և անբերրի տարի, վորի ընթացքում մի սարսափելի սով վոչնչացնում է հազարավոր մարդկանց: Յես պնդում եմ, վոր, յեթե այս ընդհանուր կարիքի վախճանին հարուստների ամբարները հետախուզվեն, այնտեղ հացահատիկի անչափելի պաշարներ կհայտաբերվեն: Յեթե այդ պաշարը ճիշտ ժամանակին բաժանվեր սովի և հյուծումի մատնվածների միջև, այն դեպքում այդ դժբախտներից և վո՛չ մեկը

յերկնային խաղաղությունը և կամ հոգու ժլատությունը չեր զգա: Այսպիսով, դուք տեսնում եք, վոր առանց փողի կարելի կլիներ ապահովել յուրաքանչյուրի գոյությունը. փոխուղղյուրը, այդ յերջանիկ գյուտը, վորը մեր առաջ բաց եր անելու յերջանկության դարպասները, անողոք կերպով փակում ե մեր առջևը:

Յես չեմ տարակուսում, վոր իրենք՝ հարուստները, համոզված չեն այս ճշմարտությունների մեջ: Նրանք գիտեն, վոր անսահմանորեն ավելի լավ ե յերբեք վոչ մի բանի կարիք չզգալ, քան թե շրջապատված լինել առատությունով. վոր լավ ե ազատ լինել շատ աղետներից, քան թե բոլոր կողմերից պաշարված՝ մեծ հարստությունով: Յես մինչև իսկ կարծում եմ, վոր մարդկային սեռը վաղուց արդեն ուտոպիական պետության որենքները յուրացրած կլիներ — լինի նա իր սեփական շահերի, թե Քրիստոսի խոսքերին հետևված լինելու համար. չե՞ վոր Փրկչի իմաստությանը չեր կարող հայտնի չլինել այն, վոր մարդկանց համար ամենաօգտակարն ե, և նրա աստվածային բարությունը պետք ե սովորեցներ մարդկանց այն, ինչ վոր նա լավ և կատարյալ ե համարում:

Սակայն հպարտությունը, այդ անսանձ կիրքը, ամեն մի հասարակական վերքի մայրն ու թագուհին, անհաղթելի դիմադրություն ե

հակադրում ժողովուրդների այդ շրջադարձին: Հպարտը յերջանկությունը անձնական հանդստությամբ չի չափում, այլ՝ համաձայն մի ուրիշի տառապանքների մեծության: Հպարտը չեր ցանկանա մինչև իսկ աստված դառնալ, յեթե շուրջը դժբախտներ չմնան, վորոնց նա կարողանա չարչարել ու նահատակել. յեթե յերջանկության փայլը թշվառության արհավիրքի հառաչանքներով այլևս չբարձրանա. յեթե իր հարստության ցուցադրումն աղքատներին այլևս չտանջի և չգրգռի նրանց հուսահատությունը: Հպարտությունը մի թունավոր ոձ ե, վորը սողոսկելով մարդկանց սրտի մեջ՝ իր թույնով կուրացրել ե նրանց և լավագույն կյանքի արահետից հեռու յե մոլորեցրել: Այդ սողունը շատ ու շատ խորն ե կծում, վորպեսզի հեշտությամբ հնարավոր չլինի կրկին թոթափել այն:

Յես բոլոր յերկրներին սրտանց ցանկանում եմ այնպիսի մի կազմակերպություն, վոր յես ձեզ նկարագրեցի: Առնվազն ինձ ուրախացնում ե, վոր ուտոպիացիներն այս դեպքում բացառություն են կազմում և իրենց պետությունն այնպիսի հիմքերի վրա յեն կառուցել, վոր վոչ միայն ամենածաղկյալ վիճակն են ապահովում, այլև, ինչքան մարդկային սուր հայացքը կարող ե թափանցել հավերժականություն:

Փառասիրություն, յերկպառակություն և ուրիշ բոլոր մոլությունների ծիլերը նր-

րանց մաս արմատախիլ են արված: Բացի այդ, պետությունը չի վախենում քաղաքացիական վոչ մի պառակտումից, վորը այնքան շատ պետությունների զորությունն ու բարորությունն ավերել է: Այն ժամանակ, յերբ քաղաքացիների միությունն ապահովում է յերկրի ներսը, հիանալի և աշխույժ հաստատությունները պաշտպանում են յերկիրն արտաքին վտանգներից: Բոլոր հարևան թագավորների նախանձը չի կարող ցնցել կամ անհանգստացնել պետությանը. նրանք արդեն այդ փորձել են, սակայն նրանց փորձերը միշտ ձախողման են յենթարկվել»:

Յերբ Ռաֆայելը վերջացրեց իր պատմությունը, յես հիշեցի ուտոպիացիների որենքները և բարքերի մի խոշոր թիվ, վոր ինձ անհեթեթ եր թվում. դրանց շարքին են պատկանում նրանց պատերազմ վարելու յեղանակը, աստվածապաշտությունը, կրոնը և ուրիշ բազմաթիվ հաստատություններ: Սակայն, ինչ վոր մասնավորապես իմ պատկերացումներին հակասում եր, այն բազան եր, վորի վրա հիմնված է այդ տարորինակ պետությունը: Յես նկատի ունեմ կյանքի և հարստության համայնացումը՝ առանց փողի գործածության: Վորովհետև այս համայնացումը ամբողջովին վոչնչացնում է ամեն տեսակի ա-

նձնաշնորհում և փայլ, յերևելիություն ու արիստոկրատիզմ, իսկ մինչդեռ հասարակական կարծիքի աչքում հենց դրանք են կազմում պետության իսկական զարդը: Սակայն հնայած դրան, յես Ռաֆայելին վոչ մի դիտողություն չարի, վորովհետև գիտեյի, վոր յերկար պատմությունը հոգնեցրել եր նրան: Բացի այդ, յես վստահ չեյի, թե ինչքան համբերությամբ նա կլսեր իմ առարկությունները: Յես հիշեցի, վոր լսել եմ, թե ինչպես նա մի քանի առարկողների վախը խիստ կերպով յերեսներովն եր տվել, վորոնք կարծում են թե տկարամիտ կհամարվեն, յեթե ուրիշների մտածումների դեմ առարկելու մի բան չգտնեն: Դրա համար ել յես գովեցի ուտոպիական հաստատությունները և իր պատմությունը, ապա վերցրի նրա ձեռքը, վորպեսզի ընթրիքի գնանք, ասելով, վոր մենք մի ուրիշ անգամ ազատ ժամանակ կգտնենք այս նյութի մեջ ավելի խորանալու և այդ մասին միմյանց հետ ավելի հանգամանորեն զրուցելու:

Տա աստված, վոր այդ մի որ կատարվի:

Թեև յես մի կողմից չեմ կարող համաձայնվել այն բոլորի հետ, ինչ վոր պատմեց այդ ամենագիտուն և փորձառու մարդը, բայց, մյուս կողմից, սիրով խոստովանում եմ, վոր ուտոպիական պետության մեջ շատ այնպիսի բաներ կան, վոր կարելի

կլիներ ցանկանալ, վոր մեր պետությունները ել ընդօրինակեյին:

Յես դա ավելի ցանկանում եմ, քան թե հույս ունեմ:

ԹՈՄԱՍ ՄՈՐԻ ՆԱՄԱԿԸ ՊԵՏՐ ԵԳԻԴԻՆ *)

Յես ինձ շատ անհարմար դրության մեջ եմ զգում, թանկագին Պետր Եգիդ, վոր իմ գրքույկը Ուտոպիայի պետության մասին, միայն համարյա մի տարի հետո յեմ քեզ ուղարկում, մինչդեռ, ինչպես միանգամայն իրավացիորեն դու կարող ես մտածել, այդպիսի աշխատանքի համար մեկ և կես ամիսն ել բավական կլիներ: Չե՞ վոր քեզ հայտնի յե, վոր այս գիրքը կազմելու համար ինձ հարկավոր չեր վոչ սովորել, վոչ ել առանձին ճիգ գործադրել, յես պետք չունեյի առանձին գլուխների տեղաբաշխման հատուկ պլան հորինել: Ինձ մնում եր միայն ճիշտ հաղորդել մեր համատեղ խոսակցությունը Ռաֆայելի հետ, վորին ինքը պատմեց և բացատրեց ստորև շարադրվածը, բացի այդ, յես

---

*) Այս նամակը վորպես առաջաբան տպագրված է «Ուտոպիա»-յի առաջին հրատարակության մեջ (1516 թ.), վոր ղեկավարել է Պետր Եգիդը:

Ծանոթ. թարգմ.

կարիք չունեյի նույնպես առանձնապես մտահոգվել գրքի նաև արտաքին կողմի մասին, շարադրման պերճախոսության մասին. չէ՞ որ նա ավելի լավ ծանոթ է հունարենին, քան լատիներենին. դրա համար նրա լեզուն չէր էլ կարող շատ գեղեցիկ լինել, սակայն նա չի էլ նախապատրաստվել և չի էլ մտածել դրանից առաջ այն մասին, ինչ որ պատմեց մեզ: Սակայն, որքան յես կարողանում ավելի մոտենալ նրա հասարակ, անշահավետ պատմությանը, յես նույնքան ավելի մոտ կլինեմ ճշմարտությանը:

Յես անկեղծորեն խոստովանում եմ քեզ, իմ բարեկամ Պետր, որ այս բոլորն իմ աշխատությունն այնպես հեշտացրեց, որ ինձ համարյա ոչինչ չէր մնում անել, իսկ չէ՞ որ հակառակ դեպքում հենց շարադրման առարկան և այն տեղաբաշխել կարենալը քիչ ժամանակ չեյին խլի մինչև իսկ այն մարդուց, որը սովոր է գիտնական աշխատանքի:

Բայց յեթե ինձնից պահանջվեր գործը ոչ միայն ճիշտ շարադրել, այլև գեղեցիկ, ապա, հիրավի, ոչ ժամանակը կբավականացներ, ոչ էլ կարողությունը: Սակայն իրերի դրության այս պայմաններում, յերբ աշխատանքի ամենադժվար մասն ինձ չէր վերաբերում, ինձ մնում է միայն շարադրել այն, ինչ որ լսել ենք: Մանավանդ որ մինչև իսկ այս փոքր աշխատանքի ավարտմանն էլ խան-

գարեցին իմ մյուս զբաղմունքներն ու հոգսերը: Դատական գործերն ամեն օր ինձնից ահագին ժամանակ են խլում. մի դատավարության ժամանակ յես ինքս պետք է խոսեմ, մի ուրիշում լսեմ ցուցմունքները և խորհուրդ տամ, յերրորդում պետք է լինում արտահայտել իմ դատավճիռը: Ապա հայտնվում են զանազան մարդիկ, ոմանք վարչական, ուրիշներ մասնավոր գործերով: Յեվ ահա յես, դատարանում կորցնելով համարյա իմ ամբողջ ժամանակը, մնացորդը պետք է այնուամենայնիվ նվիրեմ ընտանիքին: Իսկ ինձ համար, այսինքն իմ գրական զբաղմունքների համար, այլևս ժամանակ չի մնում: Չէ՞ որ տուն վերադառնալով՝ յես պետք է զրուցեմ կնոջս հետ, կատակեմ յերեխաների հետ, խոսեմ ազախնի հետ. այս բոլորը յես համարում եմ իմ պարտականությունը, որ պետք է կատարել. յեթե այդ չանես, ապա քո սեփական տանը կարող ես օտարանալ: Չէ՞ որ մարդ պետք է ձգտի սիրալիր լինել նրանց հետ, որոնց բնությունը, պատահականությունը կամ սեփական ընտրությունը քո կյանքի ուղեկիցներն են դարձրել. անշուշտ այս դեպքում պետք չէ նրանց յերես տալ կամ քո սպասավորների նկատմամբ լինել ստորադրյալի վիճակում: Այս բոլոր գործերով անցնում են օրեր, ամիսներ, տարիներ: Իսկ յե՞րբ պետք է յես գրեմ:

Յես դեռ ուշադրության չառա քունն ու ուտելը, վոր շատերի մոտ միայն նվազ ժամանակ է խլում, քան մինչև իսկ քունը. իսկ սա, իր հերթին խլում է մարդու կես կյանքը: Այդ պատճառով ինձ համար մնում է միայն այն ժամանակը, վոր յես կտրում եմ ուտելուց կամ քնից: Թեև այդ ժամանակը քիչ է, բայց այնուամենայնիվ բավական կլիներ, վորպեսզի վերջացնեյի Ուտոպիան՝ թեկուզ ուշացումով: Յես այն ուղարկեցի քեզ, իմ բարեկամ Պետր, վորպեսզի դու կարդաս և նայես, թե արդյոք յես վորևե բան բաց չե՞մ թողել. թեև յես ընդհանրապես վստահում եմ իմ հիշողության (յեթե յես գոնե այնքան խելացիություն և գիտնականություն ունենայի, վորքան հիշողություն), բայց և այնպես չի կարելի վստահ լինել, վոր յես վոչ մի սխալ կատարած չլինեմ: Ահա, որինակ, իմ վորդին՝ Յոան Կլեմենտը, ինչպես դու հիշում ես այն ժամանակ գտնվում եր մեզ հետ (յես աշխատում եյի նրան վորևե օգտակար բան լսելու հնարավորությունից զրկել. ընդհանրապես հին լեզուներում ունեցած նրա հաջողություններից հետո յես ուժեղ կերպով հենվում եմ նրա խելքի վրա), նա ինձ շատ շփոթեցրեց. յեթե յես չեմ սխալվում, Հիթլոդեն ասաց, վոր Անիդեր գետի կամուրջը Ամաուռոտ քաղաքում 500 քայլ է, իսկ Յոանը հավաստիացնում է, վոր խոսք յեղավ ընդամենը 300 քայլի մասին, այնպես վոր 200

քայլ պետք է հանել: Արդյոք դու չե՞ս հիշում, թե ինչպես պատմեց մեզ. շատ եմ խնդրում քեզ դրա համար. յեթե դու իմ վորդու կողմը կլինես, ապա յես կընդունեմ իմ սխալը, յեթե դու ինքդ ել մոռացած լինես ճիշտ թիվը, ապա բոլորը կթողնես նախկինը, ինչպես յես եմ հիշում: Այս բոլորը յես անում եմ նրա համար, վորպեսզի իմ յերկասիրության մեջ անճիշտ վոչինչ չլինի. թող սխալ լինի, բայց յես չեմ ուզում, վոր այնտեղ սուտ լինի, ավելի լավ է ազնիվ լինել, քան զգուշ: Ի միջի այլոց այս դեպքում կարելի յե նեղ դրությունից դուրս գալ. յերբ տեսնես Ռաֆայելին հարցրու և կամ գրիր նրան: Բացի այդ, նրան պետք է գրել նաև այլ առթիվ— թող նա վճռի մյուս տարակուսանքը:

Չե վոր մեզնից վոչ մեկի մտքով չանցավ հարցնել նրան թե Նոր-Աշխարհի վո՛ր մասում է գտնվում Ուտոպիան, իսկ նա, վորքան հիշում եմ, այդ մասին չխոսեց: Յես վոչինչ չեյի խնայի այդ տեղեկությունների ստանալու համար. չե՞ վոր ինձ համար անհարմար է չիմանալ, թե վո՛ր ծովում է գտնվում այն կղզին, վոր յես այդպես մանրամասն նկարագրում եմ. բացի այդ յես գիտեմ մի քանի անձնավորություններ, վորոնք կցանկանային ուղևորվել այդ կղզին: Դրանց թվում աստվածաբանության մի պատվարժան ուսուցիչ. այս վերջինին չի հրապուրում վոչ սովորական հետա-

քրքրությունը, վոչ էլ նորության պահանջը, այլ այդ կղզում մեր կրոնը տարածելու ցանկությունը, վորի քարոզումն արդեն սկսվել է այնտեղ: Իր նպատակն ավելի լավ իրագործելու համար, նա կցանկանար, վոր մեր արքեպիսկոպոսը նրան Ուտոպիայի յեպիսկոպոս նշանակեր: Այս նպատակին հասնելու համար նա միջոցների առաջ կանգ չի առնում— նա գործի յե դնում բոլոր հնարավոր միջոցները, վոչ թե փառասիրության և հարստության տենչով, այլ միմիայն կրոնական ջերմեռանդությունից:

Այսպես, շատ եմ խնդրում քեզ, թանկագին Պետր, խորհրդակցել Ռաֆայելի հետ անձամբ, յեթե այդ քեզ հաջողի, կամ գրավոր և անել բոլորը, վոր կախված է քեզնից, վորպեսզի գրքում մեղանչումներ չլինեն: Լավ չի՞ լինի արդյոք գիրքը ցույց տալ հենց նրան: Բանի վոր, ո՞վ, բացի նրանից, ավելի լավ կարող է ուղղել սխալները, յեթե այդպիսիք այնտեղ սպրդել են: Դրա համար նրան հարկավոր է միայն թերթել իմ գիրքը, ի միջի այլոց կարելի կլինի նրանից իմանալ, թե արդյոք նա հավանություն տալի՞ս է իմ աշխատության, քանի վոր կարող է պատահել, վոր նա ինքն է պատրաստվել նկարագրել իր ճանապարհորդությունները և կարող է զայրանալ իմ վրա այն պատճառով, վոր յես կանխել եմ իրեն և թուլացրել նորության հետաքրքրականությունը·

լույս ընծայելով «Ուտոպիայի պետությունը», յես չէյի ցանկանա նման բողոքումներ ունենալ: Սակայն, անկեղծ ասած, յես ինքս էլ դեռևս չեմ իմանում, թե արդյոք հրատարակե՞մ այս գիրքը, թե վոչ. մարդկանց ճաշակներն այնքան բազմազան են, յուրաքանչյուր մարդու բնությունն այնքան անհատական, կարծիքներն այնքան ապականված, խորհելու ընդունակությունն այնքան աննշան, վոր մարդիկ, վորոնք ոգտվում են զգայական բոլոր հաճույքներով և բավարարում են իրենց մարմնական պահանջները, թվում է թե ավելի լավ վիճակում են, քան գիտնականները, վորոնք հոգ են տանում, վորպեսզի բոլոր կողմերով ոգտակար և հաճելի գիրք գրեն և հրատարակեն: Բայց, հակառակ նրանց ճիգերին, առաջին կատեգորիայի մարդիկ այնուամենայնիվ դեպի գիրքը վերաբերվում են արհամարհանքով և անշնորհակալությամբ ու չեն գնահատում այն: Մարդկանց մեծամասնությունը անկիրթ է և հեգնում է գիտությունը: Անտաշ մարդուն միայն կարող է հաճույք պատճառել ա՛յն, ինչ կոպիտ է ու վայրենի: Իսկ գիտնական մարդն ընկնում է մյուս ծայրահեղության մեջ. նա անարժան և գռեհիկ է համարում այն բոլորը, վոր ժամանակակից է, կենդանի, վորը գունազարդված չէ գործածությունից վաղուց դուրս յեկած բառերով: Այդպիսին սիրում է միայն հնոտին, նա բավարարվում է իր սեփա-

կան դատողություններով: Մեկը մռայլ է, չի հասկանում կատակներ, նրան գրգռում են ամեն տեսակի զվարճանքներ. մյուսը չի հասկանում վերացական, փոխաբերական վոչ մի բան, վոմանք վախենում են յերգիծանքից, ինչպես ջրավախը սարսափում է ջրից. ուրիշներ հանդես են գալիս վորպես անկայուն մարդիկ, չարունակ փոխում են իրենց դատողությունը և կանգնած ժամանակ ասում են մի բան, իսկ հենց վոր նստեն՝ նրանց մտքում արդեն բոլորովին այլ բան է լինում: Վերջապես, կարելի յե հանդիպել նաև այլ տեսակի ընթերցողների. սրանք նստում են պանդոկներում և, ծծելով թասերից, քննադատում են գրականագետներին՝ դատափետելով նրանց ամենահեղինակավոր տոնով, ծաղրում են նրանց և իրենցից վեր չընդունելով վոչ վոքի, այսպիսով խուսափում են դատաստանից: Յերանի թե նրանք ունենային կարգին մարդու գեթ մի մազ, վորից կարելի լիներ կառչել: Վերջապես կա անշնորհակալ ընթերցողների մի տեսակ էլ, վոր գրքի ընթերցումից ստանում է մեծ հաճույք, բայց այնուամենայնիվ փնթփնթում է հեղինակի հասցեյին և նրան շնորհակալություն չի արտահայտում: Իրենց անշնորհակալությամբ նրանք հիշեցնում են վորովայնապաշտներին, վորոնք տրաքելու աստիճան լափում ու լակում են հյուրատեղում՝ տանտիրոջ մինչև իսկ շնորհակալություն չասելով:

Ահա՛, արի ու այս բոլորից հետո հեղինակ դարձի՛ր, կազմակերպիր խնջույքներ բազմերանգ և ընդհանրապես չար ու ապերախտ հասարակության համար: Բայց և այնպես, թանկագին Պետր, մի՛ գլանա Հիթլոդից իմանալ այն բոլորը, ինչ յես քեզ խնդրում եմ այս նամակում—յես չեմ կարող չխորհրդակցել նրա հետ: Չե՞ վոր յես այս յերկասիրության վրա այնպես թե այնպես աշխատել եմ և յեթե նա դեմ վոչինչ չունի, կուզենայի հրատարակել այն: Յես միայն առաջնորդվում եմ իմ մտերիմների և մանավանդ քո խորհրդով:

Յեղի՛ր առողջ, իմ թանկագին բարեկամ, Պետր Եգիդ. քո հրաշագեղ կնոջ հետ միասին տածիր իմ նկատմամբ միևնույն սերը, ինչպես առաջ, իսկ յես քեզ սիրում եմ ավելի շատ, քան յերբևիցե:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
Հրատարակչության կողմից	III
Թոմաս Մորը և ուտոպիան — Գր. Անդրեասյան	V
Գիրք առաջին	3
Գիրք յերկրորդ	91
Կառավարության մասին	103
Ուտոպիացիների ճանապարհորդությունների մասին	129
Ստրուկների մասին	175
Ռազմական գործի մասին	196
Ուտոպիայի կրոնների մասին	217
Թոմաս Մորի նամակը	255

ՀՀ Ազգային գրադարան
NL0205412

Գինը 1 ռ. 40 կոպ.
Կազմը 60 կոպ.

ՀՍԽՀ
ՊԵՏՀՐԱՏ

Томас Мор
УТОПИЯ
С. Армении Ереван, 1935 г.